Շուկայի գործողության կարևոր սկզբունքներից մեկն է սպառողի գերակայությունն է: Սպառողը շուկայում հանդես է գալիս որպես գնորդ և վաճառողի համեմապությամբ ունի որոշակի առավելություններ: Նախ, սպառողը ինքն է ընդունում ապրանքը կամ ծառայությունը, ոչ մեկը նրան չի կարող պարփառել այլ բան գնելու, մինչդեռ, վաճառողը ազագ չէ կոնկրետ սպառողի կամ գնորդի ընդունության հարցում: Սպառողը վաճառողին կարող է պարփառել նաև իր ճաշակը, սպառման ազգային առանձնահավկությունները, նույնիսկ՝ սպառման վայրը և այլն: Այդ իմաստով, սպառողը կամ գնորդը շուկայում սրբանում է ավելի ակտիվ դեր, որոշակի առավելություններ, հավկապես գերակայություն, որոնց հետ չի կարող հաշվի չնսպել վաճառողը:

Շուկայի գործողության կարևոր սկզբունքներից է ինքնաֆինանսավորման սկզբունքը: Վրդեն ներկայացվել են գնութեսական գործունեության այն բոլոր ազագությունները, որոնք շուկան ներկայացնում է իր սուբյեկտներին: Միաժամանակ, շուկան իր գնութեսական մեխանիզմով պահպանում է այնպիսի կարևոր գործելաձն, ինչպիսին ինքնաֆինանսավորումն է: Շուկան հաշվի է նսպում այն բոլոր ծախսերի հետ, որոնք կարարվում են ապրանքների ու ծառայությունների թողարկման նպատակով, քանի որ դրանց թողարկման համար անհրաժեշտ ուսուրաները (նյութական, աշխատանքային, կապիտալ) գնվել են շուկայում, և դրանց ծախսումով թողարկված արդյունքի վաճառքի գնով սրբացված հասույթը պետք է փոխադրուցի այդ ծախսերը: Սա ինքնաֆինանսավորման սկզբունքի ապահովումն է շուկայի միջոցով: Շուկայում յուրաքանչյուր սուբյեկտ ինքն է իրականացնում իր կողմից կարարվելիք բոլոր ծախսերի ֆինանսավորումը ինչպես սեփական, այնպես էլ փոխառու միջոցներով:

Շուկայական մեխանիզմի գործողության բոլոր սկզբունքները սերպորեն փոխապակցված են և ապահովում են գնութեսական համակարգի նորմալ կենսագործունեությունը:

### **5.3. ՓՈՂԻ ԾԱԳՈՒՄԸ, ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅՆԹՆԵՐԸ**

Փողի ծագումը՝ որպես փոխանակային հարաբերությունների ծևավորման և զարգացման կարևոր պայման, պարբական երևույթ է ու ունի ներքին գրամաբանական կապ: Գոյություն ունի փողի ծագման հետազոտության երկու մոդելներ՝ սուբյեկտիվ և օբյեկտիվ: Սուբյեկտիվ մոդելները դեպքում փողը համարվում է մարդկանց միջև համաձայնության, պայմանավորվածության ար-

դյունք: Այս առումով, հայրնի գրնչեսագեկ Ֆ. Նայեկը փողի ծագման ժամանակաշրջանը բնորոշել է որպես «մարդկային համագործակցության ընդլայնված կարգ»: Պարզ փոխանակության ձևը «բարբերն» է, իսկ ընդլայնված համագործակցության արդյունքում առաջացավ փողը: Օրյեկտիվ մոդելման պարագայում հիմնավորվում է այն, որ փողն ապրանքափոխանակային հարաբերությունների զարգացման արդյունք է: Ապրանքային արդարության զարգացման կարևոր պայման է դառնում փոխանակությունը, որն իր հերթին առաջացնում է մեկ միասնական չափման համակարգի սահմանման անհրաժեշտություն: Այլ կերպ ասած՝ անհրաժեշտ է չափակցել բոլոր ապրանքների արժեքները որոշակի միավորով կամ չափանմուշով: Քանի որ համարժեքությունը փոխանակային հարաբերությունների առանցքն է, ուստի պեսք է սպեղծվեր ապրանքի արժեքը զնահագելու, չափելու միավոր, որը հանդիսացավ **փողը**: Նախքան փողի ի հայր գալը գոյություն են ունեցել դարբեր արժեճաներ, որոնց միջոցով իրականացվել է ապրանքափոխանակությունը: Վրժեճաների զարգացումը և փողի ծագումը կարելի է ներկայացնել որոշակի փուլերով: Այդ փուլերն իրարից դարձագում են փոխանակության զարգացման դրամաբանական հաջորդականությամբ: Առաջին փուլը բնութագրվում է որպես արժեքի պարզ, եզակի կամ պարահական ձև: Փոխանակության այդ փուլում որևէ ապրանք, ժամանակի և դարձության մեջ, պարահականորեն կարող էր փոխանակվել մեկ այլ ապրանքով՝ A=B: Այս հավասարման մեջ A ապրանքը իր արժեքն արդարացնում է մեկ ուրիշ ապրանքի՝ B-ի միջոցով: B ապրանքը A ապրանքի արժեքի արդարայությունն է: Իր արժեքն ուրիշ ապրանքի միջոցով արդարացնում ապրանքը գրնչում է արժեքի հարաբերական ձևի մեջ: Երկրորդ ապրանքը գրնչում է համարժեքային ձևի մեջ: Արժեքի հարաբերական և համարժեքային ձևերը անխօնիորեն կապված են և իրենցից ներկայացնում են արժեքի միևնույն արդարայության հակադիր կողմերը: Ընդ որում, արժեքի հարաբերական ձևը ակտիվ դեր է կապարում, իսկ համարժեքայինը՝ պաշիվ, որովհետք համարժեքը ծառայում է ուրիշ ապրանքի արժեքի արդարացնում համար: Եթե A-ն հավասար է B-ին, նշանակում է՝ A ապրանքի արժեքն իր արդարայությունը սպանում է այլ սպառողական արժեքի՝ B ապրանքի միջոցով, այսինքն՝ համարժեքի դեր կապարող ապրանքի միջոցով: Փաստորեն, ակնհայր է, որ B-ն A-ի համար ծառայում է որպես չափանիշ: Պարահական փոխանակության փուլում համարժեքի կամ արժեքի որոշման չափանիշի դերը չի ամրակցվում որևէ մեկ ապրանքի: Այդ դերը պարահարար կապարում են դարբեր ապրանքներ:

Աշխարհանքի հասարակական բաժանման խորացման հիմքի վրա փոխանակության հետազա զարգացման ընթացքում ավելի ու ավելի մեծ քանակությամբ արդյունքներ էին ներքաշվում փոխանակության մեջ: Այդ փուլում ապրանքները փոխանակվում էին ոչ թե պարահականորեն, այլ դա ավելի կանոնավոր բնույթ էր կրում: A ապրանքը փոխանակվում է ոչ միայն B-ի, այլև C, D և այլ ապրանքների հետ: Փոխանակությունը, փաստորեն, սպանում է հետևյալ գեւքը:

$$A = \begin{cases} B \\ C \\ D \end{cases} \quad (1)$$

Սա նշանակում է, որ համարժեքի դեր կապրարում է ոչ թե մեկ ապրանք (Բ-ն), այլ մի քանի: Փոխանակության այս ձևը, որ ներկայացնում է փոխանակության ասդիճանը, համարվում է արժեքի լրիվ կամ ծավալուն ձևը: Քանի որ A ապրանքը փոխանակվում է մի քանի ապրանքների հետի, ուստի այդ պայմաններում կարևորվում է դրանց միջև ճիշդ քանակական հարաբերակցության սահմանումը, որովհետև, հակառակ դեպքում, կիսախփվի համարժեքայնության սկզբունքը: Վրժեքի լրիվ կամ ծավալուն ձևի պայմաններում արդեն այդ հակասությունը գենասահմանվի է. ապրանքի փոխանակությունը գոյություն ունի ոչ միայն համաձայն թիվ (1) հավասարման, այլ նաև՝ (2) հավասարման.

$$B = \begin{cases} A \\ C \\ D \\ \vdash \omega j \vdash, \end{cases} \quad C = \begin{cases} A \\ B \\ D \\ \vdash \omega j \vdash \end{cases} \quad (2)$$

ինչը նշանակում է, որ այդպիսի խաչածի փոխանակության ժամանակ շաբ դժվար է ճիշդ հարաբերակցություն սահմանել գոարքեր ապրանքների միջև։ Այս հակասությունը ավելի է խորանում փոխանակության հետքազ զարգացման ընթացքում, եթե ապրանքային արտադրության շրջանակներն ավելի ու ավելի են ընդլայնվում։ Վյո խճճվածությունից դուրս գալու համար օրյեկտիվ անհրաժեշտություն է միասնական համարժեքի կամ չափանիշի ձևավորումը։ Բնականաբար, միասնական համարժեքի դեր կարող է կապարել այն միավորը, որը գրնվում է այս հարաբերությունների համակարգում և ենթարկվում է այն նույն կանոններին, ինչ որ՝ փոխանակության մյուս օրյեկտները։ Փաստորեն, վերը նշված հակասությունը հաղթահարելու նպարակով ապրանքների զանգվածից առանձնացվում է մի ապրանք, որը մյուս բոլորի համար դառնում է համարժեք կամ չափման միավոր։ Արժեքի ծավալուն ձևը հետքինելի դառնում է արժեքի համբնյանուր ձև։

$$\begin{matrix} B \\ C \\ D \end{matrix} \Bigg\} = A \quad (3)$$

Բոլոր ապրանքների արժեքը արդեն արգահայպվում է մեկ ապրանքի մեջ, որը դառնում է համընդիանուր ճանաչման օբյեկտ (3): Քանի որ այն համընդիանուր ճանաչում է սպանում բոլորի կողմից, ուստի դառնում է չափման միավոր, որի միջոցով որոշվում են մյուս ապրանքների արժեքները, իրականացվում դարբեր ապրանքների փոխանակությունը: Փաստորեն, ապրանքների անմիջական փոխանակությունը, եթե ապրանքը փոխանակվում է մեկ այլ ապրանքով

(դա կոչվում է նաև բարփեր), փոխարինվում է միջնորդավորված փոխանակությամբ, որպես առանձին օղակ է հանդիսանում ընդհանրական համարժեքը կամ միասնական չափման միավորը (Էլեկտրոնը):

Փոխանակության շրջանակների ընդլայնմանը զուգընթաց, անհրաժեշտություն առաջացավ համընդհանուր համարժեքի կամ միասնական չափման միավորի դերը ամրագրել միայն մեկ ապրանքի: Այդ միակ ապրանքը, որը դարձավ չափմանուշ՝ մյուս ապրանքների արժեքները չափակցելու և միաժամանակ դրաբեր ապառողական արժեք ունեցող ապրանքների փոխանակությունը իրականացնելու համար, կոչվեց **Փող:** Այսպիսով, փողը համընդհանուր համարժեքի ավարփուն ձևն է, ապրանք, որի սպառողական արժեքի հետ սերպաճել է համարժեքային ձևը:

Փոխանակային հարաբերությունների զարգացման ընթացքում փողի դեր են կապարել գործընթացը ապրանքներ: Բայց զարգացման որոշակի փուլում փողի դերը ամրագրվեց ուսկուն: Դա պայմանավորված էր ուսկու մի շարք հավկանիշներով:

1. **Պահպանվածություն:** այն հեշտ է պահպանել, որովհենքն ունի այնպիսի ֆիզիկաքիմիական հավկություններ, որոնց շնորհիվ պահպանում է իր արժեքը գործընթաց պայմաններում:
2. **Բաժանելիություն:** կրելիություն, այսինքն՝ ուսկու ձուլակփորք կարելի է բաժանել գործընթաց՝ ավելի փոքր մասերի, բաժանված յուրաքանչյուր մասը պահպանում է իր արժեքը: Փոքր ծավալի մեջ մեծ արժեք է պարունակում:
3. **Հազվագյուղություն:** Բնության մեջ այն քիչ է, արդյունահանվում է ավելի մեծ դժվարությամբ, ուստի և մյուս ապրանքների համեմապությամբ ունի ավելի մեծ արժեքը: Փոքր քանակի մեջ պարունակում է մեծ արժեքը:

Փողը՝ որպես փոխանակային հարաբերությունների զարգացման արդյունք, իրը լինելու համար ապրանքների չափակցման միջոց, ընդհանրական համարժեքի ավարփուն ձև, զուգակցվում է դրա մի շարք կարևոր գործառույթների ձևավորմամբ, որոնց միջոցով գնդեսական հարաբերություններն ավելի դյուրին և արդյունավել են դառնում: Այսինքն՝ փողի ծագումը միայն միասնական չափման համակարգի սկեղծման անհրաժեշտությամբ չի ավարփվում: Փողը, ձեռք բերելով այդ կարգավիճակը և, փասդորեն, դառնալով ընդունելի բոլորի կողմից, գնդեսական բազմաթիվ փոխհարաբերությունների իրականացումը դարձնում է ավելի շահագետը: Դա հավկապես գետանելի է փոխհարաբերությունների ավելի բարդ ասդիմանում: Բացի դրանից, գնդեսական հարաբերություններում ի հայտ են գալիս բազմաթիվ հակասություններ, որոնց հաղթահարման համար փողը կարևոր դեր է կապարում: Այսպիսով, բացի միասնական չափման միավորի կամ էլեկտրոնի դերից, փողը սկսում է կապարել նաև այլ գործառույթներ: Ըստ վերը նշված դրամաբանության՝ ներկայացնենք, թե այդ գործառույթներից յուրաքանչյուրը գնդեսական ինչ դեր ու նշանակություն ունի:

**1. Արժեքի չափի գործառույթ:** Փողի՝ որպես ընդհանրական համարժեքի ավարփուն ձև կամ միասնական էլեկտրոն ի հայտ գալը կապված է դրա միջոցով գործընթացը ապրանքների արժեքների չափակցման անհրաժեշտության հետ: Այսինքն՝ բոլոր ապրանքների արժեքը չափակցվում է փողի միջոցով, որի հիմքի

վրա էլ փեղի է ունենում նրանց փոխանակությունը: Փողի միջոցով չափվում են նաև եկամբի՝ ծախսի և պարզավորության արժեքները:

**2. Շրջանառության միջոցի գործառույթ:** Փողի՝ շրջանառության միջոցի գործառույթը ի հայր է զալիս այն ժամանակ, երբ փոխանակության անմիջական ձևից անցում է կարարվում միջնորդավորված ձևի: Այսինքն՝ յուրաքանչյուր ապրանքարդարող, իր ապրանքը վաճառելով, ձեռք է բերում փող, իսկ այնուհետև վերջինիս միջոցով գնում է այն ապրանքները, որոնք անհրաժեշտ են իր կարիքները բավարարելու համար: Փաստորեն, գարբեր արդյունքների փոխանակությունը իրականացվում է միջնորդավորված: Այս երևույթը մի կողմից ավելի արդյունավետ է դարձնում փոխանակությունը, իսկ մյուս կողմից՝ սպեկուլում է լրացուցիչ բարդություններ՝ կապված առք ու վաճառքի հնարավոր խզումների առաջացման հետ: Խնդիրն այն է, որ ապրանքի վաճառքը և գնումը կարող է խախվվել ժամանակի և գարածության մեջ: Այսինքն՝ փոխանակության փողային ձևը պարունակում է ապրանքների վաճառքի և գնման խզման հնարավորություն:

**3. Կուբակման միջոցի գործառույթ:** Փողը կարող է ժամանակավորապես դուրս գալ շրջանառությունից՝ նորից վերադառնալու հնարավորությամբ: Փողը հարաբության համընդիանուր մարմնացում է: Փողը կուբակվում է՝ վերածվելով խնայողության, գանձի կամ անշարժ գույքի: Այս գործառույթը այլ կերպ կոչվում է նաև խնայողության միջոցի կամ արժեքի պահպանման միջոցի գործառույթ:

**4. Վճարման միջոցի գործառույթ:** Այս գործառույթի եռության բացահայտումը հնարավորություն է գալիս նախնական պարկերացում կազմելու, թե վերը նշված գննեասական հարաբերություններում առկա դժվարությունները կամ հակասությունները ինչպես են հաղթահարվում փողի այդ գործառույթի միջոցով: Որպես այդպիսի գննեասական հակասություն, իսկ ավելի ճիշգ՝ օրինաչափություն, առկա է այն երևույթը, ըստ որի՝ ժամանակի և գարածության մեջ որևէ արդյունքի արդարության և իրացման գործընթացներն իրար չեն համապատասխանում: Խնդիրն այն է, որ արդարությունը հետքո արդյունքը անմիջապես չի իրացվում, այսինքն՝ փողի չի վերածվում, բայց նրա սեփականագրերը ինչպես արդարական, այնպես էլ անձնական կարիքների բավարարման համար պետք է կարարի բազմաթիվ գնումներ, ինչը պետք է իրականացնի փողի միջոցով, որը կարող է ունենալ միայն որոշակի ժամանակից հետքո: Այս անհամապատասխանության հաղթահարման նպարակով կիրառում է մեկ այլ «հնարք», որը կոչվում է փողի՝ վճարման միջոցի գործառույթ, երբ արդյունքների առքն ու վաճառքը իրականացվում է վճարման հետքածովով: Վճարման միջոցի գործառույթը, փաստորեն, արդեն ներառում է պարտքային փոխարարերություններ: Պարբռային պարբռավորությունների կամ փողի՝ որպես վճարման միջոցի գործառույթը մեծապես նպաստում է գննեասական կապերը ավելի արդյունավետ իրականացնելուն: Փողի՝ որպես վճարման միջոցի գործառույթի հիմքի վրա են ձևավորվել ամբողջ վարկային հարաբերությունները, որոնց նախնական փուլը մուրհակային շրջանառությունն է եղել: Մեկ անձի կողմից մեկ այլ անձի դրվող փողը առաջացնում է պարբռային պարբռագրեր, մուրհակներ, որոնք ունեն իրենց մարման ժամկետը: Քանի որ մուրհակներն ունեն սահմանափակ շրջանառության հնարավորություն, հետքագայում դրանք

փոխարինվում են բանկնուրությունը:

Գոյություն ունեն փողի բազմաթիվ բնորոշումներ և մեկնաբանություններ, մասնավորապես, Ադամ Սմիթը փողը կոչում է «շրջանառության մեծ անիվ», իսկ Փող Սամուելսոնը այն համարում է «շրջանառության քայլուղ», Ֆ. Էնգելսը՝ «ապրանքների ապրանք», որով չափում են բոլոր ապրանքների արժեքները:

«Մոնեփարիզմի» գետության ներկայացուցիչները փողը բնորոշում են որպես «գնագետության ջերմաշափ», իսկ հանրաճանաչ Զ.Մ. Քեյնսը փողը համարում էր «իրացվելի միջոց»: Ժամանակակից ընկալմամբ՝ փողը բացարձակ իրացվելի միջոց է փոխանակության համար: Ոչ մի ապրանք չի կարող ունենալ ավելի մեծ իրացվելիություն, քան փողը: Փողը կրնապում է գործառնական ծախսերը՝ միաժամանակ արագացնելով և հեշտացնելով փոխանակությունը:

## 5.4. ԱՐԺԵՔԻ ՏԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Փոխանակային հարաբերությունների արդյունավելությունը և զարգացումը հիմնված են համարժեքության սկզբունքի վրա, որն իր հերթին պայմանավորված է յուրաքանչյուր ապրանքի չափման և գնահատման անհրաժեշտությամբ: Արժեքի չափման և գնահատման հիմնախնդիրը կարևորվել է մի շարք գնագետագիրական գետությունների կողմից, որոնք գործեր կերպ են բնորոշել արժեքի էռությունը, այն պայմանավորող գործոնները և դերը փոխանակային հարաբերություններում:

Տնտեսագիրության մեջ հայդնի են արժեքի բազմաթիվ գետություններ, որոնք կարելի են բաժանել երկու խմբի:

ա) արժեքի միագործոնային գետություններ, որոնք արժեքի հիմքում դնում են միայն մեկ գործոն,

բ) արժեքի բազմագործոնային գետություններ, որոնք արժեքը համարում են գործեր գործոններ:

Վյժմ ներկայացնենք արժեքի գերաբերյալ հիմնական գետությունները՝ ըստ իրենց ձևավորման պարմական և դրամաբանական հաջորդականության:

Արժեքի հիմնախնդրի հանգուցալուծման առաջին գետությունը կապված է Ա. Սմիթի և Դ. Օկլարդոյի անվան հետո, նրանք դրեցին արժեքի միագործոն աշխարհաբային գետության հիմքը: Ըստ Ա. Սմիթի՝ ապրանքի արժեքը առարկայացած աշխարհանք է: Ըստ նրա՝ բոլոր ապրանքները աշխարհանքի արդյունք են, և Ա ապրանքը Բ ապրանքից ավելի մեծ արժեք ունի, որովհետո նրա վրա ավելի շատ աշխարհանք է կապարվել: Սմիթը նշում է նաև գործեր իրավիճակներ, մասնավոր դեպքեր, որոնք շեղվում են այդ օրինաչափությունից:

Արժեքի աշխարհանքային գետությունը փորձեց զարգացնել Կարլ Մարքսը, որը արժեքի չափման հիմքում դնում էր ոչ թե ուղղակի աշխարհանքը, այլ բարիքի արվադրության համար ծախսաված «հասարակայնորեն անհրաժեշտ աշխարհը»:

Կ. Մարքսը գործերել է հասարակայնորեն անհրաժեշտ աշխարհանքի երկու դրսւորում՝ կոնկրետ և վերացական:

Կոնկրետ աշխափանքը, որն անմիջական արդյունք է սպեղծում, կոնկրետ գործողություններով սպեղծում է որևէ սպառողական արժեք: Իսկ եթե աշխափանքը դիմարկենք որպես բոլոր ապրանքների սպեղծման հիմք՝ անփեսելով կոնկրետ պայմանները, աշխափանքի միջոցները և այլն, ապա գործ կունենանք վերացական աշխափանքի հետ, որն էլ Կ. Մարքսը համարում էր արժեքի կամ փոխանակային արժեքի հիմքը:

Ինչպես Ա. Սմիթը, այնպես էլ Կ. Մարքսը զուծեցին արժեքի հիմնախնդիրը, և արժեքի աշխափանքային գուստությունը լուրջ ճգնաժամ ունեցավ: Ա. Սմիթի մոտ այն դրսերպեց, այսպես կոչված՝ Սմիթի «դոգմայով» և «պարադոքսով», իսկ Կ. Մարքսի մոտ՝ «հասարակայնորեն անհրաժեշտ աշխափաժամանակով» արժեքի չափման սահմանափակությամբ:

Ա. Սմիթը նշում էր, որ բարիքի արփադրության համար անհրաժեշտ են երեք հիմնական գործոններ՝ հող, աշխափանք և կապիտալ, սակայն արժեքի չափման ժամանակ սահմանափակվում էր միայն աշխափանքային ծախսումները հաշվի առնելով: Նա նշում էր, որ յուրաքանչյուր գործոն սպեղծում է համապարփասիան գործոնային եկամուք, համապարփասիանաբար՝ ռենֆա, աշխափավարձ և գուլոս: Ըստ գրամարանության՝ ապրանքի արժեքի մեջ պեսքը է ներառվեն յուրաքանչյուր գործոնի գծով կափարված ծախսերը: Վյո գրամարանությունը հիմնավորել և զարգացրել է հերդասական գուստության ներկայացուցիչ Ժան Բարիսը Սեյը: Ըստ նրա՝ ապրանքի արժեքի մեծությունը հաշվարկելիս անհրաժեշտ է հավասարապես հաշվի առնել բոլոր գործոնների ծախսերը: Ժ. Սեյը առաջադրեց արժեքի բազմագործոնային գուստությունը՝ արժեքը համարելով արփադրության բոլոր գործոնների հանրագումարը: Փաստորեն Ժ. Սեյը արժեքի հաշվարկման և գնահապման ժամանակ կարևորում էր արփադրության գործոնները՝ առաջնայնությունը դրանով առաջարկին: Վյո առումով նա նշում էր, որ «առաջարկն է որոշում պահանջարկը և ըստ առաջարկի է ձևավորվում համապարփասիան պահանջարկը»:

Վրժեքի վերաբերյալ հաջորդ գուստությունը «սահմանային օգբակարության» գուստությունն էր, որը ձևավորվել է 19-րդ դարի երկրորդ կեսին՝ ի հակադրության արժեքի աշխափանքային և բազմագործոնային գուստությունների: Ի հակադրություն Ժ. Սեյի, Զլոնսը, Կ. Մենգերը, Ֆ. Վիզերը և այլք նշում էին, որ արժեքի գնահապման գործում որոշիչ դեր ունի ոչ թե առաջարկը, այլ պահանջարկը: Ըստ Զլոնսի՝ արժեքը ձևավորվում է ոչ թե արփադրության, այլ սպառման գործոնների ազդեցությամբ: Վրժեքը պեսքը է դիմարկել ոչ թե որպես ծախս, այլ որպես օգբակարություն: Ցանկացած ապրանք արժևորում է մարդը՝ ելնելով իր սպառողական նախափանային գուստություններից, եկամգից, սահմանային օգբակարությունից: Միևնույն ապրանքը գործեր մարդկանց համար գործեր արժեք կարող է ունենալ, քանի որ արժեքը գնահապման է սուրյեկտիվություն: Ապրանքի արժեքը, կամ որ նույնն է՝ օգբակարությունը ճշգրիտ հաշվել, չափել հնարավոր չէ, սակայն կարելի է այն գնահապել՝ համեմապելով գործեր ապրանքներ կամ դրանց գործեր համախմբություններ: Օրինակ՝ ապրանքների Ա և Բ համախմբերից յուրաքանչյուրի արժեքը չափել, հաշվել չենք կարող, սակայն կարող ենք համեմապելով ասել, որ, օրինակ, Ա համախումբն ավելի մեծ արժեք կամ օգբակարություն ունի, քան Բ-ն:

Սահմանային օգբակարության դեսությունը բաժանվում է երկու ուղղությունների՝ կարդինալիսպական և օրդինալիսպական: Առաջինները գտնում էին, որ արժեքը կարելի է չափել փողով, և որ գինը արբահայքում է արժեքը, իսկ երկրորդները՝ որ արժեքը հաշվել, չափել հնարավոր չէ, թերևս կարելի է միայն համեմափել ապրանքների համախմբերը:

Արժեքի վերաբերյալ հաջորդ դեսությունը ներկայացրել է հայքնի գնութեսագետ Ալֆրեդ Մարշալը: Մարշալը նշում էր, որ «Միևնույն գինը հարուստի և աղքափի համար բարբեր արժեք կարող է ունենալ, այն աղքափի համար ավելի բարձր է, քան հարուստի համար»: Ա. Մարշալը փորձեց «փոխզիջման» ճանապարհով լուծել արժեքի հիմնախնդիրը: Այսպես, Ժ. Սեյր արժեքի հիմքում դնում էր առաջարկը, իսկ Զևսնար՝ պահանջարկը: Առաջին դեպքում կարևորվում էին արբադրության գործոնները, իսկ երկրորդ դեպքում՝ սպառման: Ա. Մարշալը առաջ քաշեց մի դեսակեպ, ըստ որի՝ արժեքի ծևավորման գործում հավասարապես գործում են և՝ պահանջարկի, և՝ առաջարկի գործոնները: Նա առաջարկը և պահանջարկը նմանեցնում է մկրապի երկու սայրերին, որոնցից յուրաքանչյուրը չի կարող գործել առանց մյուսի: Այսպիսով, ըստ Մարշալի՝ շուկայում արժեքը գոյանում է առաջարկի և պահանջարկի փոխհարաբերությամբ, և երկուսն էլ կարևոր են հավասարակշռված արժեքի, զնի ծևավորման գործում: Առաջարկի զնի և պահանջարկի զնի համադրությամբ ծևավորվում է շուկայական գինը, որ արբահայքում է զնորդի և վաճառողի ցանկությունները հավասարակշռող արժեքը: Մարշալի դեսության համաձայն՝ արժեգոյացման գործում կարճաժամկետ հարվածում կարևորվում են պահանջարկի գործոնները, իսկ երկարաժամկետում՝ առաջարկինը:

Մարշալից և Զևսնարից հետո արժեքի հիմնախնդիրի վերաբերյալ ուսումնասիրությունները դադարեցին ինքենսիվ լինելուց, քանի որ նրանց դեսությունները փվել էին այդ հիմնախնդրին վերաբերող հարցերից մի մասի լիարժեք պարապիսանները: Սակայն հարվածական է, որ 1900 թվականից հետո, ի դեմս Պարեփոյի, սպեղծվեց մի դեսություն, որը հիմնված էր օրդինալիսպական դեսության վրա:

Մինչ նրա ուսումնասիրությունները, այնպիսի գիրքնականներ, ինչպիսիք են Մարշալն ու Զևսնար, գրնում էին, որ դեսականորեն հնարավոր է չափել օգբակարությունը՝ բավականաչափ փաստեր ունենալու դեպքում: Պարեփոն կորականապես մերժեց այս պնդումը և «օգբակարություն» հասկացությունը փոխարինեց «նախընքրությունների սանդղակ» հասկացությամբ:

Սահմանային օգբակարության առաջին լուրջ ընդդիմախոսը Իրվինգ Ֆիշերն էր, որն իր «Մաթեմատիկական ուսումնասիրություններ զների դեսության մեջ» աշխափությունում փորձեց հիմնավորել, որ շուկայական հավասարակշռվածությունը կախված է անբարերության կորերից և ուրիշ ոչ մի բանից, միևնույն ժամանակ ապացուցելով, որ 3 և ավելի բարիքների անբարերության կորերը հնարավոր են, որ լինեն ոչ լիարժեք, այդ պարճառով էլ չի կարելի նպցնել ինչ-որ օգբակարության ֆունկցիա: Այս պնդումն օգբագործվում է նաև Պարեփոյի կողմից, սակայն այս հիմնախնդրում առաջնային չէ նշված պնդման ապացուցումը, այլ առաջնայինն այն է, որ եթե օգբակարության ֆունկցիան բխեցնենք անբարերության կորերից, ապա կունենա անորոշ բովանդակություն:

Պարեպոյի գեսությունը շարունակեցին Զոն Նիքսն ու Վլենը: Նիքսը սահմանային օգբակարության գետությունը բացադրում էր հեփսյալ կերպ. Եթե օգբակարությունը որակապես անորոշ է, ապա նույնը կարելի է ասել նաև սահմանային օգբակարության մասին, սակայն նա այն կարծիքն էր, որ սահմանային օգբակարության գետությունը սահմանային օգբակարության որոշակիության կարիքը չի է զգում: Եթե զգում է, ապա միայն հեփսյալ գետանկյունից: Ենթադրենք՝ գրված է անհապի պահանջմունքների համակարգը, և նա գիրապետում է մի շարք բարիքների, այս դեպքում, սահմանային օգբակարության որոշակիության պայմաններում, մենք կարող ենք իմանալ սպառողի փոխարինման սահմանային նորման ցանկացած 2 բարիքների ընդունության հարցում: Եթե անհապի ձգում է հավասարակշռության մեջ զբնվել, ապա 2 բարիքների միջև փոխարինման սահմանային նրա նորման պեսք է հավասար լինի այդ բարիքների գների հարաբերությանը:

Ընդհանրացնելով կարելի է նշել, որ արժեքի ժամանակակից գետությունները սկզբունքային մի քանի հարցերում հակադրվում են Մարշալի գետությանը: Նակադրության հիմնական էությունն այն է, որ նրանք նույն կերպ չեն ընկալում սահմանային օգբակարության օգբագործումը՝ արժեքը բնորոշելիս:

Արժեքի գետության մեկնաբանության հարցում լուրջ առաջընթաց է ունեցել նաև հայազգի գրնուեսագել Արմեն Ալյանը:

Ըստ Արմեն Ալյանի՝ հասարակական գնակետությունում արժեքը հիմնվում է շուկայի կողմից ի հայր բերված գնահարականների վրա: Եթե արգադրության գործոններն օգբագործվում են այնպես, որ բերում են ավելի քիչ եկամուգ, քան այդ ռեսուրսների օգբագործման մեկ այլ եղանակ կրերեր, ապա ասում են, որ այդպիսի ռեսուրսօգբագործումը չի փոխադրույցում ռեսուրսների արժեքը: Այս հանգամանքից ենելով՝ յուրաքանչյուր սուբյեկտ ձգում է ամենաարդյունավել կերպով օգբագործել իր ռեսուրսները՝ ակնկալելով, որ վարագույն դեպքում իր արգադրանքի շուկայական գինը կհավասարվի իր օգբագործած ռեսուրսների արժեքին: Այդ պայմանով յուրաքանչյուրը կծագի իր ռեսուրսներն օգբագործել համեմապարար ավելի մեծ եկամուգը ապահովող ոլորտներում, որի հեփսեանքով այն ճյուղերից, որդեռ նույնական կիրառվում է այդ ռեսուրսը, դեղի կունենա ռեսուրսների արդարությունավել ճյուղի արգադրանքի առաջարկի մեծացման հեփսեանքով շուկայում կիշնի վերջինիս գնահարականը, այսինքն՝ դեղի կունենա արժեքի անկում:

Այլ կերպ ասած՝ ռեսուրսի արժեքը չի կարող լինել ավելի փոքր, քան նրա գնահարականն է, եթե օգբագործվում է ամենաարդյունավել կերպով:

Անկախ այն բանից, թե ինչպես են օգբագործվում ռեսուրսները, դրանց արժեքը կիմի նույնը, կփոխվի միայն ռեսուրսների օգբագործումից սրացված բարիքի գնահարականը: Եթե ռեսուրսները չօգբագործվեն ամենաարդյունավել կերպով, ապա դրանց գնահարականը փոքր կիմի արժեքից: Այսպես կարող է առաջանալ հարց. կարո՞ն են արդյոք ռեսուրսները բերել մի գնահարական, որը բարձր լինի դրանց արժեքից: Պարասխանը միանշանակ է՝ այն, որովհետո գվայալ պահին ռեսուրսների գնահարականը չի ենթադրում ապագայի որևէ գնահարական: Որևէ բարիքի պահանջարկը ժամանակի որևէ պահի կարող է այնքան գերազանցել առաջարկը, որ բարիքի գնահարականը գերազանցի ռեսուրսների արժեքը:

Տնտեսագիրության դեսուլյան մեջ բարիքի արժեքը վերջինիս լավագույն օգբագործումն է փվյալ պահին՝ որովհեք հաջորդ պահին այդ ճանապարհը կարող է ամենաարդյունավելոր չլինել:

Կարելի է նշել, որ ցանկացած գործոն կարելի է համարել արժեքի բարը միայն այն դեպքում, եթե այն ազդում է լավագույն բարբերակի վրա:

Անցանկայի հարկությունների ավելացումը ենթադրում է փվյալ բարիքի գնահարականի, այլ ոչ թե արժեքի նվազում:

Փաստորեն, արժեքը մերժված լավագույն բարբերակի գնահարականն է, որը կարող է փոփոխությունների ենթարկվել՝ կախված լավագույն բարբերակի ցանկայի և անցանկայի հարկությունների փոփոխություններից:

## 5.5. ՇՈՒԿԱՅԻ ԴԻՄՆԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԸ, ՕԲՅԵԿՏՆԵՐԸ ԵՎ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

Շուկայական մեխանիզմը գործում է որոշակի օբյեկտիվ օրինաչափությունների հիման վրա, որոնք դրսնորվում են որոշակի բարբերի փոխազդեցությամբ: Շուկան ունի իրեն բնորոշ հիմնական բարբերը, որոնք շուկայական հարաբերությունները դարձնում են ավելի ընդգրկուն և խորը, քան պարզ փոխանակության հարաբերություններն են:

Շուկայի հիմնական բարբերն են՝ պահանջարկը, առաջարկը, մրցակցությունը, գինը և գովազդը:

Շուկայական հարաբերությունները գործողության մեջ են մինում և դառնում իրական հարաբերություններ՝ նշված բարբերի միջոցով: Որպես միասնական շուկայական համակարգի բարբեր կողմերի արդահայփություններ՝ նշված բարբերը գրնավում են փոխադարձ կապերի ու պայմանավորվածությունների մեջ:

**Պահանջարկ → Առաջարկ → Մրցակցություն → Գին**

**Պահանջարկը** ապրանքների և ծառայությունների այն քանակն է, որը փվյալ պայմաններում սպառողները կարող են և ցանկանում են իրենց դրամական եկամուտներով գնել շուկայում ծևավորվող գնով, այսինքն՝ պահանջարկը գնողականությունն է, որ կախված է եկամուտներից և գներից: Պեսքը է նշել, որ պահանջարկի մեծությունը պայմանավորված է նաև մի շարք այլ գործոններով՝ սպառողական նախասիրություն, մոդա, սպասումներ և այլն:

**Առաջարկը՝** որպես շուկայի հիմնական բարբերից մեկը, ապրանքների ու ծառայությունների այն քանակն է, որը շուկայում ներկայացվում է վաճառքի փվյալ գնով:

Եթե պահանջարկը ներկայացնում են գնորդները կամ սպառողները, ապա առաջարկը՝ վաճառողները կամ արդարողները: Առաջարկը պայմանավորված է արդարական ծախսերով, հումքի և նյութի գներով, դեմքնողիական առաջնորդությունով, արդարողականությամբ և ապրանքի շուկայական գնով:

Պահանջարկը և առաջարկը փոխկապակցված են և կազմում են շուկայական համակարգի երկու հիմնական կողմերը:

Առաջարկը՝ որպես շուկայի տարր, գոյություն ունի որոշակի պահանջարկի առկայության պայմաններում, և ընդհակառակը: Մեկի փոփոխությունը անդրադառնում է մյուսի վրա:

Պահանջարկի և առաջարկի փոխհարաբերությունը դարձեր կերպ է մեկնաբանվում դնդեսագետների կողմից: Որոշ դնդեսագետներ փորձում են հիմնավորել պահանջարկի առաջնայնությունը, իսկ ոմանք՝ առաջարկինը: Մասնավորապես՝ «մարժինավիսվները» որոշիչ էին համարում պահանջարկը, իսկ «հենքադասականները»՝ առաջարկը:

Նորդասական դպրոցի հիմնադիր Ա. Մարշալը պահանջարկը և առաջարկը համարում է հավասարազոր՝ դրանք նմանեցնելով մկրագի երկու սայրերին:

Տնդեսագիրության մեջ կան դեսություններ, որոնք պահանջարկի և առաջարկի փոխհարաբերությամբ դնդեսական հավասարակշռության հաստափումը թերհավագրությամբ են ընդունում և համարում են դա մասնավոր դեպք: Ինչպիսին ել լինեն դնդեսակետները, միևնույն է, շուկան առաջարկի և պահանջարկի փոխհարաբերությամբ կարգավորվող համակարգ է: Ապրանքի շուկայական արժեքը (գինը) ձևավորվում և փոփոխվում է առաջարկի և պահանջարկի փոխհարաբերությամբ: Մյուս կողմից, շուկայում գործող գինը հավասարակշռություն է սպեղծում առաջարկի և պահանջարկի միջև: Այս առումով շուկայի իրավիճակ ասելով՝ հասկացվում է առաջարկի և պահանջարկի հարաբերակցությունը, որը կարգավորվում կամ հավասարակշռվում է ազար գնագոյացման միջոցով:

**Գինը՝** որպես շուկայի տարր, փաստուն կարգավորիչի դեր է կարգարում առաջարկի և պահանջարկի միջև: Գինը դիտարկվում է ինչպես պահանջարկի, այնպես էլ առաջարկի դեսանկյունից: Պահանջարկի գինը գնորդի կողմից ներկայացվող գինն է, իսկ առաջարկի գինը՝ վաճառողի: Շուկայական գինը սահմանվում է առաջարկի և պահանջարկի հարաբերակցությամբ, որը պայմանավորված է մրցակցությամբ: Ինչ վերաբերում է **մրցակցությանը**, ապա պետք է նշել, որ այն համարվում է շուկայի ինքնակարգավորման առանցքը: Այս առումով, ազար մրցակցությունը բնորոշվում է որպես «անդեսանելի ձեռք», որը կարգավորում է շուկան:

Շուկայական հարաբերությունները ազար դնդեսական մրցակցային հարաբերություններ են: Շուկան բաց համակարգ է, որպես հարաբերությունները, մուգքն ու ելքը կարգավորվում են մրցակցության միջոցով: Այն պահին, եթե շուկայում գերիշխանություն են սպանում մեկ կամ մի քանի սահմանափակ թվով ֆիրմաներ, ձևավորվում է մենաշնորհային իրավիճակ, և շուկան դառնում է փակ համակարգ, քանի որ այնպես մուգքը դժվարանում է, և խախտվում են ազար մրցակցության պայմանները:

Անհնար է պարկերացնել ժամանակակից շուկան առանց **գովազդի**, այսինքն՝ առանց համապարասխան դեղեկարգվության իրացման: Անհրաժեշտ դեղեկարգվությունը կարևոր է դնդեսական արդյունավետության դեսանկյունից, ինչպես վաճառողի, այնպես էլ գնորդի համար:

Վերը ասվածից պետք է եզրակացնել, որ շուկան ապրանքների գնման ու վաճառքի պարզունակ վայր չէ, այլ դնդեսական կապերի ու փոխադարձ ազդեցությունների մի բարդ համակարգ, որում ներգրավվում են հասարակական բո-

լոր սուրբյեկտները՝ վերարդադրության ցանկացած օղակում: Շուկա և շուկայական հարաբերությունների մեջ մրգնելը կապված է հասարակական այս կամ այն պահանջմունքը բավարարելու հետ: Արդադրողը շուկա է մուլտ գործում արդադրական ռեսուրսներ ձեռք բերելու և արդադրվածը իրացնելու, սպառող բնակչությունը՝ նյութական և հոգևոր բարիքներ գնելու, բանկը՝ վարկային ռեսուրսներ ձևավորելու և դրանք վաճառելու, առևտուրականը՝ ապրանքներն իրացնելու, պետությունը՝ պարզեցների միջոցով գնումներ կապարելու, ապրանքներ վաճառելու, ինչպես նաև շուկայի կարգավորմանը մասնակցելու, և այդպես յուրաքանչյուր սուրբյեկտ՝ որոշակի նպատակով: Այս ամենով հասարակության բոլոր սուրբյեկտները կապվում են միմյանց ու ձևավորում այն բարդ համակարգը, որը փնտեսագիրության մեջ անվանվում է շուկա, իսկ ձևավորվող հարաբերությունները՝ շուկայական հարաբերություններ: Նման պայմաններում հասարակական ոչ մի պահանջմունք չի կարող բավարարվել՝ շրջանցելով շուկան և շուկայական հարաբերությունները: Թվում է, թե այդպիսի իրավիճակում գործ ունենք մի քասային կազմավորման հետ, որին ոչինչ կարգավորված չէ: Իրականում ճիշդ հակառակն է. շուկայի տարրերի պահանջարկ, առաջարկ, մրցակցություն, գին և գովազդ փոխադարձ կապերն ու պայմանավորվածությունները դառնում են խաղի որոշակի կանոններ և դրվում շուկայի սուրբյեկտների գործունեության հիմքում: Վռաջին հայացքից կարող է թվականը առաջարկ տալ, թե ապրանքագիրը շուկայում կարող է ապրանքը վաճառել ցանկացած բարձր գնով, բայց գործնականում դա հնարավոր չէ, որովհետիւ շուկայում ապրանքի գինը ձևավորվում է պահանջարկի ու առաջարկի փոխարարերությամբ և մրցակցության ազդեցությամբ: Եեքսապես, շուկան իր տարրերի փոխակապվածության որոշակի կանոններն ունեցող համակարգ է, և եթե սուրբյեկտը չի պահպանում շուկայի խաղի կանոնները, դուրս է մնում այդ միջավայրից:

**Պահանջարկը, առաջարկը, գինը և մրցակցությունը ունեն իրենց կրողները, որոնք հանդես են գալիս շուկայական հարաբերություններում և դառնում շուկայի սուրբյեկտներ: Շուկայական հարաբերությունների և շուկայի սուրբյեկտներ են շուկայական գործարքների անմիջական իրականացնողները կամ կրողները՝ փնային փնտեսագրությունները, ֆիրմաները և պետությունը:**

- Տնային փնտեսությունը մարդկային կապիվալի արդադրության ու վերարդադրության փնտեսական միավոր է, որը ազար ընդունակամբ ձգվում է պահանջմունքների առավելագույն բավարարմանը:
- Ֆիրման փնտեսական միավոր է, որը, օգբագործելով արդադրության գործուները, ապրանքներ է թողարկում և իրացնում, միաժամանակ ձգվում է առավելագույն շահույթի:
- Պետությունը ամբողջական փնտեսական միավոր է, որը ներկայանում է կառավարչական հասպագությունների և համակարգերի գերազանցությունը և ազարական պահանջմունքների անուղղակի լուրջներով ազդում են շուկայի մյուս սուրբյեկտների վրա՝ չսահմանափակելով նրանց ինքնուրույնությունը և ազարական պահանջմունքների առումով՝ շուկայի սուրբյեկտները պատճենաբանում են գնորդների և վաճառողների:

Շուկայում իրականացվող գործարքների առումով՝ շուկայի սուրբյեկտները բաժանվում են գնորդների և վաճառողների:

Տնային փնտեսությունները, ֆիրմաները և պետքությունը փնտեսական հարաբերությունների մեջ են մգնում միմյանց հետ՝ կապված շուկայի օբյեկտների փիրապելման, օգտագործման և առ ու վաճառքի հետ:

Շուկայի փնտեսական օբյեկտներն են՝ ապրանքները, ծառայությունները, արդարության գործոնները, փողը, արժույթը, արժեթղթերը, փեղեկապվությունը, գիտագրեխնիկական նորամուծությունները, արդունագրերը և այլն: Շուկայի օբյեկտներից յուրաքանչյուրը ունի շուկայում հանդես գալու իր առանձնահավաքությունները, սակայն կարևոր այն է, որ դրանց կապակցությամբ շուկայում ծնակորպում են պահանջարկ ու առաջարկ, գնման և վաճառքի իրական շուկայական հարաբերություններ:

## 5.6. ՇՈՒԿԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Շուկան վճռական ազդեցություն է գործում համախառն ներքին արդյունքի արդարության, բաշխման, սպառման և իրացման, հետքեապես փնտեսական գործունեության ամրող ընթացքի վրա: Դրան համապարապիսան՝ վերարգադրության համակարգերում կագարում է որոշակի գործառույթներ: Նշենք դրանցից հիմնականները.

- կարգավորման
- խթանման
- փեղեկապվական
- գնագոյացման
- միջնորդական
- փնտեսության մաքրման
- ինվեգրման և այլն

**Կարգավորման գործառույթ:** Սուբյեկտները, փնտեսական ազագության հիմքի վրա, փոխհարաբերությունների մեջ են մգնում շուկայում, և թվում է, թե շուկան վերածվում է քասուի: Սակայն շուկան ունի մի հզոր լծակ՝ պահանջարկի ու առաջարկի փոխհարաբերությունը և դրա միջոցով ներգործություն ունի զնի վրա, որի ազդեցությամբ շուկայի սուբյեկտների ազագ փոխհարաբերությունները սպանում են կարգավորված բնույթը: Պահանջարկի և առաջարկի փոխհարաբերությունը դառնում է այն ազդանշանը, որի հիման վրա կարգավորվում են նաև հասարակական արդարության չափերը: Եթե պահանջարկը գերազանցում է առաջարկը, դա ազդանշան է, որ արդարությունը պետք է ավելանա՝ շուկայի լրացուցիչ պահանջարկը բավարարելու համար: Խսկ եթե առաջարկն է գերազանցում պահանջարկը, դա վկայում է շուկայի՝ ապրանքներով գերհազեցվածության մասին, և արդարության չափերի կրճագրման ազդանշան է: Շուկան այդ ճանապարհով կապ է սրեղծում հազարավոր արդարողների և սպառողների միջև, ապահովում է փնտեսության հաշվեկշռվածությունը և վերարգադրական անընդհապությունն ու համամասնականությունը: Այդ ամենով շուկան կագարում է պահանջարկի և առաջարկի ու արդարության կարգավորման գործառույթ: Չնայած ժամանակակից շուկայական փնտեսություններում պետքությունը ինչ-որ չափով մասնակցում է արդարության, պահանջարկի և

առաջարկի կարգավորման խնդիրներին, սակայն հիմնական դերը այդ գործում կարարում է շուկան, և ինչպես Ա. Սմիթն է նշել, շուկան ավելի լավ է կարգավորում արտադրությունը, քան ամենակարարյալ պերությունը:

**Խթանման գործառույթ:** Շուկան շահագրգորում է արտադրողներին նվազագույն ծախսերով թողարկել ապրանքներ և սպանալ առավելագույն շահույթ: Բացի այդ, շուկան խթանում է գիտագրեխնիկական նորամուծությունները, որի հիմքի վրա կարարվում է արտադրության ինդենսիվացում և գնդեսության արդյունավելության բարձրացում: Վյու ամենը շուկան իրականացնում է զների օգնությամբ: Գինը այն հզոր լծակն է, որը «պարփակում է» յուրաքանչյուր արդարողի կանոնավոր հետամուգ լինել արդարության նորացմանը, ապրանքների որակի անընդհափ բարելավմանը և շուկայում կայուն դրա ունենալուն: Շուկայի թեկադրանքով՝ աշխագործները շահագրգորված են մշղապես բարձրացնելու իրենց որակավորումը, այսինքն՝ շուկան ներքին խթան է սփեղծում աշխագուժի որակական կազմի բարելավման համար:

**Տեղեկագիրական գործառույթ:** Շուկայի յուրաքանչյուր սուբյեկտ՝ և՝ արդարող, և՝ սպառող, իր գործունեությունը ծավալելու համար կարիք ունի հսկայական դրենեկագիրական՝ ապրանքների որակի, զների, քանակի, գրնվելու վայրի, օգգակար հավկությունների, դրենագիրական պայմանների և ընդհանրապես շուկայի իրավիճակի վերաբերյալ: Վյու բողոքի մասին ճշմարգացի դրենեկագիրական դրա տարբերական ծառայությունների միջոցով: Ժամանակակից պայմաններում դրենեկագիրական դարձել է հասարակական արդարությունը և սպառումը կարգավորելու հզոր միջոց: Շուկայի այդ ծառայության օգնությամբ կանոնավորվում է գնդեսական սուբյեկտների գործունեությունը:

**Գնագոյացման գործառույթ:** Շուկայական գնդեսությունում ապրանքի զնման ու վաճառքի փաստացի ծավալը որոշվում է շուկայական զնով, որը կարգավորվում է պահանջարկի և առաջարկի փոխհարաբերությամբ: Մրցակցային շուկան ծեսավորում է պահանջարկի և առաջարկի հավասարակշռված փոխհարաբերություն, որի հետևանքով ծեսավորված հավասարակշռության գինը այն ուղեցույցն է, որով կողմնորոշվում են գնորդներն ու վաճառողներն իրենց համապատասխան վարքագիր դրսերման ընթացքում: Փաստացի, շուկայական մրցակցությունը ազատ գնագոյացման մեխանիզմի առանցքն է:

**Միջնորդական գործառույթ:** Բավարար զարգացած և ազատ մրցակցության պայմաններում զնորդը հնարավորություն ունի ընդունակություն ապրանքի ծեսնաբուծություն և ընծեռություն ընդունելու ամենահարմար և շահավետ գնորդին: Դրանով անմիջական կապ է սպեղծվում արդարության և սպառման միջև, որին շուկան կարարում է միջնորդական գործառույթ, որն արդարայգում է նաև պահանջարկի և առաջարկի փոխհարաբերությամբ:

**Տնտեսության մաքրման գործառույթ:** Ազատ մրցակցության միջոցով շուկան գնդեսությունը, արդարությունը մաքրում է անկենառնակ, անարդյունավետ արդարողներից և խթանում է հեռանկարային և կենսունակ սուբյեկտների զարգացումը: Վրոյունքում՝ շուկայում դրա են գրնում այն ֆիրմաները, որոնք ավելի լավ են հարմարվում պահանջարկի և առաջարկի փոխհարաբերությանը, այսինքն՝ շուկայի իրավիճակին:

**Ինպեգրման գործառույթ:** Շուկան միավորում է արտադրության ոլորսը և առևտրական միջնորդներին մեկ ընդհանուր գործընթացի մեջ: Առանց շուկայի՝ արտադրությունը չի կարող ծառայել սպառմանը, իսկ սպառումը չի կարող ներազդել արտադրության վրա, որի արդյունքում սպառողը չի կարող բավարարել իր պահանջմունքները:

Բացի վերոնշյալ հիմնական գործառույթներից, շուկան կապարում է նաև մի շարք այլ գործառույթներ, այդ թվում՝ սոցիալական, գնութեսական, շուկայական սուբյեկտների շահերի իրացման և այլն:

Նշված բոլոր գործառույթները փոխկապակցվում են մեկը մյուսի հետ և արդահայգում են գնութեսական այն բոլոր էֆեկտները, որոնք ունի շուկան:

## 5.7. ՇՈՒԿԱՅԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԴԻՄՆԱԿԱՆ ՄՈՏԵՅՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՌ-ՈՒՅՑՎԱԾՔԸ

Շուկայական համակարգն ունի որոշակի կառուցվածք, որը կարելի է ներկայացնել դասակարգման գործեր սկզբունքներից ելեկով: Ընդհանրապես, շուկան ունի շարք բարդ կառուցվածք և այն բնութագրելու համար անհրաժեշտ է ընդունել որոշակի չափանիշներ:

Ներկայացնենք շուկայի կառուցվածքը՝ ըստ դասակարգման գործեր չափանիշների:

1. Շուկայի կառուցվածքը ըստ օբյեկտների բնույթի կարելի է ներկայացնել հետևյալ կազմով.

- սպառողական շուկա,
- արտադրության գործուների շուկա,
- ֆինանսական շուկա,
- գեղեկագործության շուկա,
- նորարարության շուկա,
- անշարժ գույքի շուկա:

Սպառողական շուկան իրենից ներկայացնում է սպառողական ապրանքների առք ու վաճառքի հարաբերություն: Վյու կարելի է բաժանել երկու մասի՝ պարենային ապրանքների շուկա և արդյունարերական ապրանքների շուկա: Վյու շուկան կոչված է բավարարելու մարդկանց ամմիջական պահանջմունքները:

Արտադրության գործուների շուկայում գնվում ու վաճառվում են արդարության գործուները՝ հողը, աշխատանքը, կապիֆալը: Վյու շուկան իր հերթին հանդես է գալիս հողի շուկայի, աշխատանքի շուկայի և կապիֆալի շուկայի ձևերով: Գործունային շուկաների գործածված ձևերը համապատասխան բորսաներն են: Հողի շուկայում գնվում և վաճառվում են գյուղագնդեսական և ոչ գյուղագնդեսական նշանակության հողագործությունների աշխատուժը ներկայացվում է որպես առք ու վաճառքի օբյեկտ:

Իրական կապիֆալի շուկայում շրջանառության օբյեկտ են հանդիսանում արդարական նշանակության առարկաները՝ մեքենաներ, հասրոցներ, գեխնոլոգիաներ, հումք և այլն:

Ֆինանսական շուկան կարելի է բաժանել երկու մասի՝ փողի շուկա և արժեթղթերի շուկա: Ֆինանսական շուկայում փողը դառնում է ապրանք: Վյունքն՝ փողը շուկայում, բացի իր հիմնական գործառույթները կափարելուց, նույնպես դառնում է փոխանակության առարկա: Ֆինանսական շուկայում առք ու վաճառքի առարկա են դառնում փողի բաղադրիչները՝ արժույթը և արժեթղթերը:

Ֆինանսական շուկայի կարևոր գործառնությունների շուկան, որպես գնվում և վաճառվում են զանազան արժեթղթերը: Արժեթղթերի շուկայի կազմակերպված ձևը կոչվում է ֆոնդային բորսա:

Տեղեկաբարձրական շուկայում առք ու վաճառքի առարկա են դառնում գեղեկաբարձրական գործերը, ամսագրերը, թերթերը, գովազդի ձևերը, համակարգչային կրիչները և այն ամենը, ինչը պարունակում է անհրաժեշտ գեղեկություն:

Նորարարական շուկայում ներկայացվում են գիլդանիկական առաջընթացի արդյունքները՝ նորագույն գեղեկայի, գեղենողգիայի նոր կազմակերպական մեթոդների և այնի գեղաքով:

Նորարարական շուկայի կարևոր գործառնությունների շուկան, որպես գնվում և վաճառքի առարկա են դառնում որոշակի գործունեությամբ գրադարձու և որոշ իրավունքներ սպանանելու թույլավորությունները, արդյունագրերը:

Անշարժ գույքի շուկան իրենից ներկայացնում է անշարժ գույքի՝ շենքերի և շինուազների հողագործական առք ու վաճառքի հարաբերություն:

2. Շուկան կարելի է դասակարգել ըստ սուբյեկտների.

- գնորդների,
- վաճառողների,
- պետական հասպատությունների,
- միջնորդների:

3. Ըստ գործառքային հապկանի շուկան լինում է.

- գեղական,
- գործառքանային,
- ազգային,
- համաշխարհային:

4. Ըստ մրցակցության գեղակների՝ շուկաները լինում են.

- կապարյալ մրցակցային,
- ոչ կապարյալ մրցակցային:

5. Ըստ ապրանքաշրջանառության կազմակերպման եղանակների՝ շուկան լինում է.

- մանրածախ,
- մեծածախ:

6. Ըստ օրինականության ասրիմանի՝ շուկան լինում է.

- լեզար կամ օրինական,
- անլեզար կամ սպվերային:

7. Ըստ հասունացման և զարգացման ասրիմանի կարելի է դասակարգել.

- զարգացած,
- թույլ զարգացած,
- ձևավորվող:

8. Ըստ հազեցվածության ասրիճանի՝ շուկան լինում է.

- հավասարակշռված,
- պակասորդային,
- ավելցուկային:

Շուկայի յուրաքանչյուր ենթակառուցվածք կարելի է դասակարգել ըստ առանձնահարքկությունների: Օրինակ՝ արժեթղթերի շուկան լինում է առաջնային և երկրորդային:

Նշված ձևերից յուրաքանչյուրը հասարակական վերաբարության մեջ ունի իր ֆունկցիոնալ դերն ու նշանակությունը:

### **5.7.1. Շուկայական ենթակառուցվածքի ընդհանուր բնութագիրը**

Շուկայի ենթակառուցվածքը երեք հիմնական շուկաների՝ ապրանքային, ֆինանսական և աշխափումի կառուցվածքն է, որն ապահովում է շուկայական հարաբերությունների արդյունավետ գործունեությունը:

1. Ապրանքային շուկայի ենթակառուցվածքը ներառում է ապրանքային բորսաները, մեծածախ և մանրածախ առևտությունները, աճուրդները, դրույտագործությունները:

2. Ֆինանսական շուկայի ենթակառուցվածքը ընդգրկում է ֆոնդային և արժութագիրները, բանկերը, ապահովագրական ընկերությունները:

3. Աշխափումի շուկայի ենթակառուցվածքը ընդգրկում է աշխափումի բորսան, գրաղվածության և կաղությի վերապարբռասպնձան կենսդրունը, աշխափումի միգրացիայի կարգավորումը:

70-ական թվականների կեսերից հասպարվում է գովազդային բիզնեսի ինդուստրիան՝ գովազդային ծառայությունների լայն ցանցով: Իսկ գովազդը դիրքարկում է որպես կառավարման նոր համակարգի դարր, մարքեթինգի բաղկացուցիչ մաս:

Տեղեկաբարվությունը շուկայի վիճակի գնահատման և կանխագետաման համար օգտագործվող գովազդներն են: Ցանկացած ֆիրմա շուկայի առաջարկի և պահանջարկի հարաբերակցության, շահույթի նորմայի, գների մակարդակի վերաբերյալ լիարժեք գովազդային կարիք ունի: Սրացված գովազդների հիման վրա ֆիրման մշակում է իր ռազմավարությունը: Շուկայի ենթակառուցվածքի ժամանակակից փուլին հարուկ է անցումը դարրալուծված գովազդային գովազդությունից դրվագների ավարտական մշակման գովազդային համակարգին:

Առևտության հիմունքներով իրականացվում է կառավարչական խորհրդագլուխություն: Մարքեթինգում են ծառայություններ՝ ապրանքների ու ծառայությունների լիցենզիաների, նորարարությունների հետազոտման համար:

Մարքությունը են նաև իրավաբանական ծառայություններ: Ֆիրմաներն օգտվում են նման ծառայություններից, քանի որ դրանց վճարումն ավելի էժան է, քան սեփական մասնագետի վարձագրումը:

Առևտության կազմակերպման եղանակից կախված՝ դարրերում են.

ա) կանխարկ վաճառք,

- բ) ապարիկ վաճառք,
- գ) անկանխիկ վաճառք,
- դ) հիփոթեքային վաճառք,
- է) բարդեր:

Ըստ իրացման ծավալների՝ փարբերում են մանրածախ և մեծածախ առևտություններ:

Աճուրդը (իրապարակային վաճառք) ապրանքների վաճառքն է՝ գնորդների մրցակցության պայմաններում: Ներքին աճուրդի հետ մեկտեղ, անցկացվում են նաև միջազգային աճուրդներ: Օրինակ՝ Սահմանադրությունը՝ մորթեղենի, Մուսկվայում՝ ցեղային ծիերի, Լոնդոնում՝ արվեստի սպեոծագործությունների աճուրդը:

Տոնավաճառները կանոնավոր կազմակերպված շուկաներ են, որոնք գործում են որոշակի փարածքում, սահմանված ժամկետում: Տարբերվում են ճյուղային, փարածաշրջանային և միջազգային տոնավաճառներ:

Բորսան սպանդարդ ապրանքարեսակների մեծածախ առևտությունների կամ փարադրամի, արժեթղթերի և աշխափումի առք ու վաճառքի շուկա: Բորսաներն այն միջնորդ օղակներն են, որոնք ապահովում են փարբեր արդյունքների իրացումն ըստ դրանց պահանջարկի:

Բորսաներն այս գեսանկյունից յուրահարուկ գեղեկարգվական ծառայություններ են, որոնք նպասգում են փարբեր տնտեսավարող սուբյեկտների միջև անհրաժեշտ փոխհարաբերությունների հասպարմանը: Կախված առևտությունների փոխարժեություն են ապրանքային, ֆոնդային (փարադրամի) և աշխափանքային բորսաներ:

Ապրանքային բորսան նյութական օբյեկտների՝ հումքի, սարքավորումների կազմակերպված շուկա է: Այն բորսաները, որտեղ ներկայացված են փարբեր ապրանքարեսակներ, կոչվում են ունիվերսալ բորսաներ:

Ֆոնդային բորսան արժեթղթերի շուկա է: Արժեթղթերի վաճառքն իրականացվում է աճուրդի սկզբունքով: Ֆոնդային բորսաներում սահմանվում է արժեթղթերի շուկայական գինը, այսինքն՝ դրանց կուրսը:

Աշխափանքի բորսաները իրականացնում են աշխափումի առք ու վաճառք: Դրանք գործադրությունների և աշխափանք փնտրողների միջև միջնորդի դեր են կապարում: Դրանց գործադրություններն են՝ գործազրկների հաշվառումը, նյութական օգնություն կամ նպաստ փրամադրելը, աշխափողների վերադարձնումն կազմակերպումը և այլն:

### **5.7.2. Շուկայի հապվածավորումը**

Շուկան բաղկացած է բազմաթիվ գնորդներից, որոնք փարբեր վերաբերմունք են ցուցաբերում միևնույն ապրանքի (գնի) նկարմամբ: Ելնելով գնորդների փարբերություններից՝ շուկան կարելի է բաժանել փարբեր հարվածների: Շուկայի հապվածավորումը կապարվում է հետևյալ հիմնական հարկանիշ-ներից ելնելով:

1. Աշխարհագրական հարկանիշ. հաշվի են առնվում փարածքը, բնակավայրը, բնակչության խփությունը, կլիման և այլն:

2. Նոգերանական հարկանիշ. հաշվի են առնվում մարդու անհապականությունը, կյանքի պայմանները, հասարակական կարգը, հոգերանական փիզը, անձնական հարկանիշները, աշխարհընկալումը և այլն:
3. Վարքագծային հարկանիշ. ներառում է ճաշակը, նախասիրությունները, սպառողի կարգավիճակը, գնում կարարելու դրդապատճառը, սպառման ինքենսիվությունը, ապրանքի ընկալումը և այլն:
4. Ժողովրդագրական հարկանիշ. հաշվի են առնվում շաբ կարևոր սկզբունքներ, այդ թվում՝ գործիքը, սեռը, ընդունակությունը, մասնագիտությունը, եկամուտները, հավագրքը, ազգությունը և այլն:

Կամառողը (արդարությունը) պետք է կարողանա մշակել այնպիսի մարքեթինգային ծրագիր, որ հաշվի առնի յուրաքանչյուր հարվածի առանձնահարկությունները և պահանջները: Այդպիսի ծրագրերը սրբեղջում են հերթական երեք մակարդակներով:

- Զանգվածային մարքեթինգ. վաճառող ֆիրման օգբում է զանգվածային խթանման միջոցներից, որի ժամանակ կրճատվում են արդադրական ծախսերը և իրացման գինը:
- Նպատակային մարքեթինգ. վաճառողը ընդունում է շուկայի որևէ հարված և ձգբում է նվաճել այն՝ հաշվի առնելով դրվագ հարվածի յուրաքանչյուր հաճախորդի պահանջները:
- Ապրանքագրաբերակման մարքեթինգ. ֆիրմաները արդադրում են մեկերկու առուն ապրանք, սակայն շաբ հարվածների համար: Այս դեպքում թողարկում են միևնույն ապրանք՝ գործիքը ձևավորման, քաշի, ձևի, որակի ու գնի:

## **5.8. ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՄԵԽԱԳՆԻՁՄԻ ԴՐԱԿԱՆ ՈՒԲԱՑԱՍԱԿԱՆ ԴԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ**

Շուկայական համակարգը այլ տնտեսական համակարգի համեմարտ ունի մի շարք առավելություններ և թերություններ: Այլ կերպ ասած՝ շուկայական մեխանիզմը բնութագրվում է մի շարք դրական և բացասական հարկանիշներով:

- Փորձենք առանձնացնել շուկայի դրական կողմերը և առավելությունները.
1. Նախ, կարելի է նշել այն, որ շուկան նպաստում է ռեսուրսների արդյունավետ բաշխմանն ու օգբագործմանը: Տնտեսագիրության գերխնդիրը ռեսուրսների սահմանափակությունն ու սակավությունն է, որի լուծման կարևոր պայմանը ռեսուրսների նկարմամբ խնայողական վարքագիծն է:
  2. Շուկայական մեխանիզմը ապահովում է բարձր տնտեսական աճ և զարգացում: Շուկան խթանման յուրօրինակ համակարգ է ինչպես սպառողի, այնպես էլ արդադրողի գեսանկյունից: Այն նպաստում է աշխարհանքի արդյունավետության բարձրացմանը:
  3. Շուկան նպաստում է կենսամակարդակի բարձրացմանը և կյանքի պայմանների բարելավմանը:

4. Շուկայական մեխանիզմը՝ գործելով մասնավոր սեփականության գերակայության և սեփականության իրավունքի լիակատար իրացման պայմաններում, նպաստում է տրանսակցիոն ծախսերի կրճադրմանը:
5. Շուկան նպաստում է ԳՏԱ-ին և նորարարությանը: Ժամանակակից շուկան շաբ հաճախ բնորոշում են որպես ինտվացիոն գործեսություն:
6. Շուկան վերացնում է ապրանքային դեֆիցիտը և զարգացնում է սպառողական ճաշակը:
7. Շուկան նպաստում է սոցիալ-գործեսական հարաբերությունների զարգացմանը, խորացմանը և ազագությանը: Շուկան նպաստում է մարդկանց ձգումների, նպագրակների և մրգահղացումների իրականացմանը: Ի վերջո, շուկայում արդարությունը և ազագությունը փոխկապակցված են:

Բացի վերոնշյալ առավելություններից, շուկայական համակարգն ունի նաև թերություններ կամ այլ կերպ ասած՝ բացասական կողմեր:

Վյժմ փորձենք ներկայացնել առանձին թերություններ՝ նշելով դրանց դրսևումները:

1. Նախ, որպես շուկայի հիմնական թերություն կարելի է նշել այն, որ այս փեղ հարաբերությունները խիստ նյութականացված են, իսկ հոգևոր արժեքները՝ նսեմացված: Շուկայական հարաբերությունների առանցքը նյութական շահն է, փողը և եկամուտը, որոնք բավանցում են հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորդները: Շուկայում գրեթե ամեն ինչ դառնում է առուծախի առարկա:

2. Շուկայում դրսևորվում է եկամուգների անհավասարաշափ բաշխում, սոցիալական անարդարություն ու սոցիալական բևեռացում: Եկամուգների բաշխման ընթացքում առաջ բերելով անհավասարություն և անդեսելով բաշխման արդարության սկզբունքները՝ շուկան չի ճանաչում աղքադ, անապահով, սոցիալապես անպաշտպան խավին:

3. Շուկայական համակարգում անխուսափելի են գործեսության պարբերաշրջանային դարպանումները, մասնավորապես՝ պարբերաբար կրկնվող ինֆլյացիոն վերելքները, գործազրկության սրացումները, գործեսական անկումները և այլն: Շուկան կարող է «ձախողվել» գաղտնի համաձայնությունների և ոչ ազադ մրցակցության պարբառով:

4. Շուկան չի նպաստում հասարակական բարիքի սփեղծմանը և չի ապահովում բնակչությանը արդարին ոչ ցանկալի ազդեցություններից: Շուկան անդարբեր է հանրային այնպիսի պահանջների բավարարման նկատմամբ, ինչպիսիք են՝ երկրի պաշտպանվածությունը, հասարակական կարգի պահպանումը, ազգային մշակույթի պահպանումը և այլն:

5. Շուկան առաջացնում և խորացնում է բնապահպանական հիմնախնդիրներ: Բնության և շրջակա միջավայրի պահպանության հարցերը դուրս են շուկայի խնդիրների շրջանակից: Այս առումով կարելի է նշել նաև այն, որ շուկան չի լուծում ապրանքների որակի, մաքրության հիմահարցերը բնապահպանական դեսանելյունից:

6. Վերջապես, շուկայական հարաբերությունները հաճախ ուղեկցվում են անօրինական գործողություններով, չարությամբ, խարեւություններով և այլ բա-

ցասական երևույթներով: Այս ամենի դրսեորման ընդհանրական ձևը «սրբերային շուկան» է, որը թեև ոչ օրինական, սակայն գործում է շուկայի օրենքներով:

Շուկայի կարևոր բացթողում է նաև փնտեսության կառավարման մեջ մակրովնիւսական հետանկարային կանխագրեսումների անկարողությունը, որի պարճառով էլ շուկայական փնտեսությունը աչքի է ընկնում անկայունությամբ:

Շուկայական համակարգի բոլոր առավելություններն ու թերությունները համադրելով՝ կարելի է ասել, որ անհրաժեշտ է օգրվել շուկայի առավելություններից և պետք է մեղմել, փոքրացնել թերությունները: Այդ գործում անփոխարինելի դերակարգարություն ունի պետքությունը:

Շուկայի և պետքության զարգացումը արդահայտվում է խառը փնտեսական համակարգի վեսքով: Ժամանակակից շուկայական հարաբերությունների պայմաններում կարևոր է պետքության փնտեսական դերը, որը դրսեորվում է փնտեսության պետքական կարգավորմամբ:

*ÆYùY<sup>3</sup> eii áð U<sup>3</sup> Y N<sup>3</sup> ñó»ñ*

1. Ορπ'νք են շուկայի դասական և ժամանակակից բնորոշումները:
  2. Οրπ'նք են շուկայական գննեսության ձևավորման նախադրյալները:
  3. Οրպ'նք են շուկայի հիմնական փարբերը:
  4. Οրպ'նք են շուկայի գործողության սկզբունքները:
  5. Οրպ'նք են շուկայի գործողության գործառույթները:
  6. Ο՞րն է արժեքի հիմնախնդիրը և ինչպիսի՞ փեսություններ կան:
  7. Ներկայացնել շուկայի կառուցվածքը՝ ըստ դասակարգման փարբեր հավկանիշների:
  8. Οրպ'նք են շուկայի ենթակառուցվածքի փարբերը:
  9. Ի՞նչ է շուկայի հավականականությունը:
  10. Οրպ'նք են շուկայի առավելությունները:
  11. Οրպ'նք են շուկայի ճախողման պագետառները:
  12. Οրպ'նք են շուկայական մեխանիզմի թերությունները:

**ĐCÙÝ³ Ì³ ÝÑ³ ëÌ³ óáôÃlôôÝÝ»ñ**

Շուկայական պնդեսություն	Ինքնաֆինանսավորում
Աշխափանքի հասարակական բաժանում	Սպառողի գերակայություն
Բարփերային փոխանակում	Շուկայի հիմնական տարրեր
Բնափնդեսություն	Շուկայական ենթակառուցվածք
Բազմատեփականություն	Շուկայի հարվածավորում
Ազար զնազդագում	Շուկայի ձախողում

---

## Գ. Լ ՈՒ Խ 6

---

### ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹՅԱԳԻՐԸ

#### 6.1. ԽԱՌ-Ը ՏԻՊԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ: ՇՈՒԿԱՅԻ ԶԱԽՈՂՈՒՄՆԵՐԸ ԵՎ «ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԶԵՌ-ՔԻ» ԹՈՒԱՅՑՈՒՄԸ

Ընդհանուր և սահմանային մոդելումները փոխկապակցված են: Դրա մի արդահայտությունն այն է, որ ընդհանուր հասույթի դաշտում կարելի է հաշվարկել սահմանային հասույթը, իսկ վերջինիս դաշտում միջոցով՝ ընդհանուր հասույթը: Ընդհանուր հասույթը հավասար է արդադրված բոլոր միա-

Վորների սահմանային հասույթների հանրագումարին: Կարարյալ մրցակցային ֆիրմայի համախառն եկամուտը՝  $TR$ , հավասար է արդադրանքի գնի՝  $P$  և դրա իրացման ծավալի՝  $Q$ , արդադրյալին՝  $TR = PxQ$ : Գրաֆիկորեն դրա պակերը առանցքների սկզբնակեպից ենող վերընթաց ուղիղ է, որի թեքության ասրի-ճանը կախված է գնի մակարդակից. ինչքան այն բարձր է, այնքան դա պելի ուղղաձիգ է, և հակառակը:



**Պ Ի ՞ ՞ Ե ՞ ՞ ՞ 10.2. Ֆիրմայի շահույթը մաքսիմալացնող արդադրանքի ծավալի որոշումը «ընդհանուր եկամուտ-ընդհանուր ծախս» մոդելում**


Շահույթի զանգվածի որոշման համար միայն սահմանային ծախսերի վերլուծությունը բավարար չէ. պահանջվում է այն համարել միջին ծախսերի ( $AC$ ) հետ (մինչև վերապահում չարվի, միջին ծախսերի փակ նկատի կառնվեն միջին ընդհանուր ծախսերը՝  $TAC$ ): Միջին ծախսերի և շուկայական գների համադրումը բնութագրում է ֆիրմայի շուկայական դիրքը (գլուխ գույք 10.3) այն առումով, որ ցույց է դարձնում արդադրանքի հաշվով սպացվող շահույթի չափը: Սա նույնպես որոշիչ ցուցանիշ է, սակայն հարկ է նկատի ունենալ, որ ֆիրման նպարակ չի դնում առավելագույնի հասցնել միավոր արդադրանքին բաժին ընկնող շահույթը: Այդպիսի նպարակադրման օրինակը շահույթի ընդհանուր զանգվածն է:



**Պ Ի ՞ ՞ Ե ՞ ՞ ՞ 10.3. Մրցակցային ֆիրմայի շուկայական դիրքի տարրերակները**

Երեք հնարավոր դեպքերից առաջինում (գծապատկեր 10.3-ի ձախ գծապատկերում) ֆիրման չի կարողանում փոխադրուցել նույնիսկ իր նվազագույն միջին ծախսերը, այսինքն՝  $AC > P$ : Այլ հավասար պայմաններում, այդպիսի ֆիրմաները մրցունակ չեն և կարող են արփամդվել դրվագույթում: Ներագայում, եթե այդ շուկայում ֆիրմաների թիվը և արփադրանքը կրճագիր է, գները կրարձրանան, և կապահովվի  $AC = P$  պայմանը: Այն նկարագրում է առավել կայուն շուկայական իրավիճակը, եթե ֆիրման սրբանում է միայն նորմալ շահույթ, այսինքն՝ բացակայում են ինչպես վնասները, այնպես էլ զուրկ շահույթը (մեջքեղի գծապատկեր): Եթրորդ դեպքում, արփադրանքի թողարկման որոշակի միջակայքում՝  $AC < P$ , ֆիրման կարող է սրբանալ զուրկ շահույթ (աչ գծապատկեր): Այս իրավիճակը նույնպես կայուն չէ այն իմաստով, որ զուրկ շահույթի սրբանումը ճյուղ է ներգրավում այլ ֆիրմաների, ինչի արդյունքում արփադրանքի շուկայական առաջարկը մեծանում է, իսկ գները նվազում են: Վյու զործընթացը դեղի է ունենում մինչև  $AC = P$  պայմանի վերահասրագումը, որի դեպքում ճյուղում գործող ֆիրմաները խթան չունեն թողնելու այն, իսկ ուրիշ ֆիրմաներ խթան չունեն ներթափանցելու ճյուղ:

Կարարյալ մրցակցության մոդելում ֆիրմայի հավասարակշռությունն արփահայփում է հետևյալ պայմանով՝  $MC = MR = AC = P$ : Գրաֆիկորեն այն պատկերված է գծապատկեր 10.4-ում: Երկարաժամկեպ շրջանի համար կարելի է հավելել  $LAC = AC$  պայմանը, որպես  $LAC$ -ը երկարաժամկեպում միջին ծախսերն են (դրանց բովանդակության և կորի կառուցման վերաբերյալ ավելի հանգամանորեն ներկայացված է նախորդ թեմայում): Կարճաժամկեպում և երկարաժամկեպում միջին ծախսերի համընկնումը ցույց է տալիս, որ ֆիրման գրել է իր օպտիմալ չափը:




**10.4. Մրցակցային ֆիրմայի երկարաժամկեպ հավասարակշռությունը**

$AC = P$  պայմանը ցույց է տալիս, որ դրվագում դրվագական ռեսուրսների օգտագործման արփադրական արդյունավետությունն օպտիմալ է:  $MC = P$  պայմանը նշանակում է, որ դրվագական ռեսուրսներն օգտագործման այլընդունակների միջև բաշխվել են սպառողների նախափրությունների հաշվառու-

մով: Դա բացադրվում է այն հանգամանքով, որ գինը դիմարկվում է որպես բարիքի սահմանային օգտակարության չափ, որը հավասարվում է սահմանային ծախսին:

Ֆիրմայի սրացած առավելագույն գնութեական շահույթի մեծությունը գրաֆիկորեն պարկերված է գծապատկեր 10.5-ում: Կրած վնասի նվազագույն մեծությունը կարելի է պարկերել համանման մոդելում, միայն թե զնի հորիզոնական ուղիղից վեր տեղադրված  $AC$  կորի նկատառումով (կարպարեք ինքնուրույն):



**Պ Ի Ց Ճ Յ Ի Ռ Ո Ւ Ն 10.5. Ֆիրմայի առավելագույն գնութեական շահույթը կարճաժամկեպում**

Վյն ընկալելու համար պետք է նկատի ունենալ հետևյալ պարզ առնչությունները. Ֆիրմայի ընդհանուր եկամուտը որոշվում է արդադրանքի քանակի և զնի արդադրյալով՝  $TR=P_1 \times q_m$ : Ֆիրմայի ընդհանուր ծախսերը որոշվում են արդադրանքի քանակի և միջին ծախսերի արդադրյալով՝  $TC=Q \times AC$  ( $q_m \times B(q_m)$ ): Ֆիրմայի սրացած շահույթը (վնասը) ընդհանուր եկամուտի և ընդհանուր ծախսերի փարբերությունն է՝  $TR-TC$ : Գծապատկեր 10.5-ում ցույց է դրված զույգ շահույթի հնարավոր առավելագույն մեծությունը: Ուշադրություն պետք է դարձնել  $B$  կերպին, որը բարանցապում է միջին ծախսը՝  $AO$  կամ  $Bq_m$  հարվածները, և միավոր արդադրանքի հաշվով շահույթը օպերիմալ թողարկման դեպքում՝  $P_1A$  կամ  $EB$  հարվածները: Կարճաժամկեպ առաջարկի կորը համընկնում է ֆիրմայի կարճաժամկեպ սահմանային ծախսի կորի այն հարվածին, որը վերև է ընկած կարճաժամկեպ միջին փոփոխուն ծախսերի՝  $AVC$  կորից: Նույն ձևով, երկարաժամկեպ սահմանային ծախսերի կորի հետ այնպես, որպես դա է ընկած կարճաժամկեպ միջին փոփոխուն ծախսերի՝  $AVC$  կորից: Նույն ձևով, երկարաժամկեպ սահմանային ծախսերի կորի հետ այնպես, որպես դա է ընկած կարճաժամկեպ միջին փոփոխուն ծախսերի՝  $AVC$  կորից:

Ֆիրմայի հավանական վարքագիծը վնասների դեպքում առանձին դիմարկման նյութ է: Ամենից առաջ, ֆիրման պետք է նվազագույնի հասցնի վնասի չափը: Այսուհետեւ, հնարավոր են հետևյալ դեպքերը. 1) **Ֆիրման շարունակում է գործունեությունը:** Պարզելու համար, թե ֆիրման երբ է նվազագույնի հասցնում վնասի չափը, անհրաժեշտ է գինը համադրել ինչպես միջին ծախսի, այն-

պես էլ միջին փոփոխուն ծախսի հետ: Եթե գինը ցածր է նվազագույն միջին ծախսից, սակայն միաժամանակ բարձր է նվազագույն միջին փոփոխուն ծախսից, այսինքն՝ **P<ACmin**, **P>AVCmin**, ապա գործունեությունը շարունակելու դեպքում ֆիրմայի ընդհանուր ծախսը կգերազանցի ընդհանուր հասույթը՝ **TC>TR**, սակայն միաժամանակ կփոխհափուցվեն փոփոխուն ծախսերը և հասպարուն ծախսերի մի մասը: Քննարկվող դեպքում, եթե ֆիրման որոշի դադարեցնել իր գործունեությունը, վնասի չափն ավելի մեծ կլինի, քանի որ այն կհամընկնի հասպարուն ծախսերի լրիվ մեծությանը (դադարեցնելով արգադրությունը, ֆիրման շարունակում է հասպարուն ծախսեր կարարել, ըստ որում՝ դրանք ունեն անվերադարձ ծախսերի բնույթ): Ասվածից բխում է, որ **P>AVCmin** պայմանի դեպքում ֆիրմային ավելի ծեռնորու է կարճաժամկետ շրջանում շարունակել արգադրանքի թողարկումը, քան դադարեցնել, որովհետև այդ պարագայում է հաջողվում առավելապես նվազեցնել վնասները: Վյո դեպքի պայմանը կարելի է արգահայքել նաև այսպես. **TR>VC**, այսինքն՝ ֆիրմային նպագակահարմար է գործունեության շարունակումը, եթե դրա շնորհիվ սպացվող նկամութը գերազանցում է փոփոխական ռեսուրսների ծախսերը: **2) Եթե P=AVCmin**, ապա ֆիրմայի համար փարբերություն չկա գործունեությունը շարունակելու կամ դադարեցնելու վճիռների միջև: **3) Ֆիրման դադարեցնում է արգադրական գործունեությունը, եթե P<AVCmin**, այսինքն՝ գինն անբավարար է նույնիսկ նվազագույն միջին փոփոխուն ծախսերը փոփոխափուցելու համար: Երկարաժամկետ շրջանի առումով այս հարցը դիպարկելիս կարելի է նշել, որ եթե գինը ցածր է միջին ծախսից, ապա ճյուղում գործող ֆիրմային ծեռնորու է շուկայից ելքը, քան արգադրելը: Իսկ շուկայում չգրնվող ֆիրմային ծեռնորու է դրսում մնալը, քան մուտքը շուկա: **P<LRACmin** գների դեպքում՝ շուկա առաջարկված քանակը կհավասարվի 0-ի:

#### **10.1.5. Մրցակցային հավասարակշռության որոշումը**

Մրցակցային շուկայի հավասարակշռությունը գրնելու ելակեպն այն է, որ վաճառողներն ու գնորդները այսպես գին ընդունողներ են, ուստի նրանց վարքը կարելի է նկարագրել համապատասխանաբար առաջարկի ու պահանջարկի կորերով: Դրանից հետո հավասարակշռության շուկայական գնի և հավասարակշիռ քանակի որոշումը դժվար չէ: Սակայն այդ շուկայական գինը և քանակը գրնելու համար օգտագործվում են շուկայական պահանջարկի և առաջարկի կորերը: Մինչդեռ գին ընդունող ֆիրմայի վերլուծությունը վերաբերում էր դրա **անհավասկան** պահանջարկի և առաջարկի կորերին: Ուստի հարց է առաջնում իսկ ինչպես կառուցել ֆիրմաների շուկայական պահանջարկի և առաջարկի կորերը:

Ֆիրմաների կարծ- և երկարաժամկետ վարքերի միջև կան եական դարբերություններ: Կարճ ժամկետում նոր ֆիրմաներ չեն կարող մուտք գործել շուկա, քանի որ նրանք չեն կարող ծեռք բերել պահանջվող հասպարուն ռեսուրսները: Շերլսաբար, կարճ ժամկետում շուկայական կորերի ուրվագծումը պարզապես կպահանջի հանրագումարել շուկայում արդեն գրնվող անհավական ֆիրմաների առաջարկի և պահանջարկի կորերը: Սակայն երկարաժամկետում նոր

Փիրմաներ կարող են մփնել շուկա և գոյություն ունեցող որոշ Փիրմաներ այնպեղից կարող են դուրս գալ: Դրա հետևանքով, ճյուղում Փիրմաների քանակը երկարաժամկեպում երաշխավորված է: Փիրմաների քանակն ինքնին որոշվում է որպես հավասարակշռության մի մաս: Այս էական գործերության պարագաները կարծիք կարծիք երկար ժամանակահարկածները քննարկվում են առանձին:

**Կարճաժամկեպ շրջան:** Մրցակցային հավասարակշռությունը կարծ ժամկեպում դիմարկելու համար նախ անհրաժեշտ է կառուցել շուկայական առաջարկի կորը՝ Փիրմաների անհարական առաջարկի կորերից: Առանձին Փիրմայի կարճաժամկեպ առաջարկի կորը նրա սահմանային ծախսի կորի այն հարվածն է, որն ավելի բարձր կամ վեր է տեղադրված նրա միջին փոփոխուն ծախսերի կորից: Դա բխում է գործեր շուկայական գների դեպքում MC=MR=P պայմանի կամ կանոնի կիրառումից:

Ֆիրմաների շուկայական առաջարկի կորը սրբանալու համար հանրազումարփում են կարճաժամկեպում հասրափուն քանակով առանձին Փիրմաների՝ առաջարկի կորերը (ճյուղի բոլոր Փիրմաների սահմանային ծախսերի կորերի հորիզոնական գումարը՝ միջին փոփոխուն ծախսը գերազանցող հարվածների կարգաձրով): Գրաֆիկորեն դա պարկերվում է համապարասխան կորերի հորիզոնական տեղաշարժով դեպի աշ: Այս գործողությամբ որոշվում է, թե գործող գործերը գների դեպքում որքան է կազմում արդադրանքի **ընդհանուր քանակը**, որը ցանկանում են առաջարկել Փիրմաները:

**Շուկայական պահանջարկը:** Այն ենթադրությունը, որ գնորդները գին ընդունող են, թույլ է գալիս նրանց հավաքական վարքն արդահայրել շուկայական պահանջարկի կորով: Դա նույնական կարգավորում է անհարական պահանջարկի կորերի հորիզոնական հանրագումարման միջոցով:

**Շուկայական հավասարակշռություն:** Շուկայական առաջարկի և պահանջարկի կորերը սրբանալու հետո կարելի է տեսնել, թե շուկայական գինն ինչպես է դրանք բերում հավասարակշռության: Զանի որ շուկայի բոլոր մասնակիցները գին ընդունող են, ապա մրցակցային շուկան հավասարակշռության մեջ է, եթե գործակած գերակշռող շուկայական գնի դեպքում ա) գնորդներն ընդուրում են գնումների, իսկ վաճառողները՝ թողարկման օպդիմալ մակարդակը, թե առաջարկողները կամենում են արդադրել այնքան, որքան գնորդները ցանկանում են գնել, և գնորդները կամենում են գնել այնքան, որքան առաջարկողները որոշում են արդադրել: Նավասարակշռության գնի դեպքում արդադրանքի պահանջվող քանակը հավասար է առաջարկված քանակին: Ներքում կամ չկամ ազդակ՝ գնի բարձրացման կամ նվազման համար:

**Երկարաժամկեպ շրջան:** Երկար ժամանակաշրջանում շուկա կարող են մուգք գործել նոր Փիրմաներ և արդադրել գործող Փիրմաներից: Դրա հետևանքով կարծ և երկարաժամկեպ հավասարակշռությունները կարող են փարթերվել: Մրցակցային շուկայի երկարաժամկեպ հավասարակշռության քննարկումը սկսվում է **շուկայական առաջարկի կորի** կառուցումով՝ շուկայում բոլոր արդադրողների առաջարկի կորերը հանրագումարելով: Եթե մուգքը շուկա լիներ արգելափակված, ապա դա դյուրին կլիներ, քանի որ առաջարկողների թվաքանակը կլիներ անփոփոխ: Զանի որ կարարյալ մրցակցային շուկայում մուգքն ազար է, ապա երկարաժամկեպ շուկայական առաջարկի կորի ուրվա-

գծումը դժվարանում է: ճյուղում ֆիրմաների թվաքանակը պայմանավորված է լինում ֆիրմաների արձագանքով զների փոփոխմանը: Այսպես, երկար ժամանակաշրջանում ֆիրման կարող է համակցել բոլոր այն ռեսուրսները, որոնք պահանջվում են շուկա մրգնելու համար, իսկ ոչ շահութաբեր ֆիրմաները կարող են դադարեցնել իրենց գործունեությունը փվյալ ճյուղում: Ենքևաբար, յուրաքանչյուր ֆիրմա կայացնում է երկարաժամկետ որոշում՝ գործել թե չգործել այդ շուկայում: Տվյալ զնի դեպքում արդադրանքի շուկայական առաջարկի ծավալը որոշելու համար պետք է իմանալ՝ այն ֆիրմաների քանակը, որոնք նախընդունել են լինել շուկայում, բ) շուկայում գործող յուրաքանչյուր ֆիրմայի առաջարկած քանակը:

Գին ընդունող ֆիրմայի առաջարկի կորի դրական մասը նրա սահմանային ծախսի կորի այն հարվածն է, որ գինվում է միջին ծախսի կորից վեր: Եթե գինը փվյալ քանակի համար գերազանցում է միջին ծախսը, ապա ֆիրման վասրակում է զուր շահույթ: Այդ գինը նոր ֆիրմաների կներգրավի ճյուղ՝ վնասական շահույթ վասրակելու հետանկարով: Նոր ֆիրմաների մուտքը առաջարկի ընդհանուր ծավալը մեծացնում է: Քանի դեռ գինը ենթադրվում է անփոփոխ, նոր ֆիրմաների շարունակվող մուտքը, ինչպես նաև գործող ֆիրմաների կողմից գործունեության մասշտաբի ընդլայնումը կհանգեցնեն այն բանին, **որ այդ զնի պայմաններում** ֆիրմաները կկամենան առաջարկել ավելի շատ, քան սպառողները կպահանջեն: Սակայն երբ մուտքն ազար է՝ ֆիրման կարող է վասրակել զուր շահույթ՝ մուտքը գործելով շուկա: Այդ հնարավորությունը գրավում է նոր ֆիրմաներին՝ մուտքը գործել ճյուղ՝ մեծացնելով շուկայական առաջարկը, ինչը կհանգեցնի զների իշեցմանը մինչև միջին ծախսերի մակարդակը: Այս բոլորի հետևանքով ֆիրմաները երկարաժամկեպում զուր շահույթ չեն սպանա: Վեսաների դեպքում դեղի կունենա ֆիրմաների արդարությունը, որի արդյունքում առաջարկը կնվազի այնքան ժամանակ, մինչև որ ապրանքի զները կփոխարժուած միջին ծախսերը:

Ինչպես նշվել է, երկարաժամկեպ միջին ծախսերի նվազագույնից ցածր բոլոր զների դեպքում ամեն մի ֆիրմայի կողմից առաջարկված երկարաժամկեպ քանակը կլինի 0, հետևաբար նույնը կվերաբերի նաև շուկայում առաջարկվող ընդհանուր քանակին: Մյուս հնարավոր դեպքը զնի և երկարաժամկեպ միջին ծախսերի նվազագույնի հավասարությունն է: Այս պարագայում շուկայում գրնվող ֆիրման մաքսիմալացնում է իր շահույթը՝ արդադրելով համապատասխան քանակ, որի դեպքում **MC=MR**: Գնի և արդադրանքի այդ համակցության դեպքում միջին եկամուտը հավասարվում է միջին ծախսին, և ֆիրման վասրակում է զրոյական վնասական շահույթ: Այդպիսի ֆիրմայի համար միևնույնն է գրնվել շուկայում, թե նրանից դուրս: Այսպիսով, երկարաժամկեպ շուկայական առաջարկի կորը հորիզոնական ուղիղ է զնի այն մակարդակում, որը հավասար է երկարաժամկեպ միջին ծախսերի նվազագույնին: Երկարաժամկեպում առաջարկի կորը, հասրավուն ծախսերով ճյուղի համար, բացարձակապես առաձգական է, իսկ աճող ծախսերով ճյուղի համար՝ վերընթաց:

## **10.2. ԳՆԵՐԸ ԵՎ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԾԱՎԱԼԸ ՈՉ ԿԱՏԱՐՅԱԸ ՄՐՅԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈԴԵԼՆԵՐՈՒՄ**

### **10.2.1. Արդարանքի ծավալը և գնագոյացումը զուր մոնոպոլիայի (մենաշնորհի) պայմաններում: Մոնոպոլիայի էռլեյոնը և բնորոշ գծերը**

Կարարյալ մրցակցության հայեցակարգի քննարկումից պարզ դարձավ, որ իրականում անհնարին է դրա բոլոր պայմանների լիարժեք ապահովումը: Այդ իմաստով, կարարյալ մրցակցության մոդելը կարելի է դիմուլ որպես մասնավոր դեպք, որն ունի բացառիկ բնույթ: Սակայն նման դափողությունը վերաբերում է ոչ միայն կարարյալ մրցակցությանը, այլև զուր մոնոպոլիային: Տարբերությունն այն է, որ զուր մոնոպոլիան կարարյալ մրցակցությանը հակադիր շուկայական կառուցվածք է: Այսպիսով, իրական մրցակցային մոդելների գերակշիռ մասն ընկած է կարարյալ մրցակցության և զուր մոնոպոլիայի միջակայքում: Ընդ որում, մոնոպոլիսարական մրցակցությունն ավելի մորթիկ է կարարյալ մրցակցությանը, իսկ օլիգոպոլիան (խմբաշնորհը՝ մոնոպոլիային: Նախ ներկայացնենք մոնոպոլիայի մոդելը:

**Զուր մոնոպոլիայի դեպքում արդարող և վաճառող Փիրման միակն է,** այն ներկայացնում է տվյալ ճյուղը (Փիրման և ճյուղը համընկնում են), փաստորեն չունի ուղղակի մրցակիցներ և վերահսկում է տվյալ արդարանքի շուկայական ամբողջ առաջարկը: Սրամից հետևում է, որ արդարանքի առաջարկը՝ ճյուղի և Փիրմայի կողմանցով, ինչպես նաև ճյուղի և Փիրմայի արդարանքի նկարմամբ պահանջարկը նույնպես համընկնում են: **Այսպիսով, մոնոպոլիայի շուկայական կառուցվածքում փոխգործակցում են եզակի արդարողը և մեծաթիվ սպառողները:** Մոնոպոլիան որպես Փիրմայի գիշա դիմուրկելու մորթեցմանը ավելի շափ համապատասխանում է խոշոր չափի ընկերությունը, որն առաջարկ է որևէ ճյուղում և դրա շնորհիվ հանգուցային դիրք ունի ամբողջ գնաբեռության մեջ: Սակայն դա չի նշանակում, որ ամեն մի խոշոր ընկերություն մոնոպոլիա է (եթե այդպիսի ընկերության շուկայական մասնաբաժինը մեծ չէ, ապա չի կարող մոնոպոլիա համարվել), կամ՝ ոչ խոշոր ընկերությունը չի կարող մոնոպոլիա լինել (կարող է, եթե ապահովում է շուկայական առաջարկի գերակշիռ մասը): Ներկա արարար, եական է ոչ այնքան Փիրմայի չափն ինքնին, որքան նրա չափը շուկայական առաջարկի նկարմամբ: Այդ իմաստով՝ մոնոպոլիան դիմուրկում է նաև որպես գնաբեռության վարքագծի գեսակ, որին բնորոշ է թելադրանքային բնույթը՝ վաճառքի պայմանների կանխորոշման համար:

**Զուր մոնոպոլիայի մյուս կարևոր հավելանիշը համասեռ և, որպես կանոն, կենսականորեն անհրաժեշտ, հաճախ լիարժեք փոխարինիչներ չունեցող բարիքների թողարկումն է կամ մարդակարարումը:** Այդպիսիք են, օրինակ, ջուրը, էլեկտրաէներգիան, բնական գազը, հեռախոսակավոր և այլն: Ինչպես նշում էր Զուր Օռբինստոնը, մոնոպոլիա նշանակում է սուսկ այն, որ առանձին արդարողողի արդարանքը, որպես կանոն, պետք է զգալիորեն փարանջապահ լինի փոխարինիչ ապրանքներից: Այս իրողությունը մոնոպոլիզմի աղբյուր

է, քանի որ սպառողական ընդունությունը վերածում է կոչք երկընդունությունից՝ հրաժարվել փոխարիքի օգտագործումից, բավարարվել ոչ լիարժեք փոխարինիչներով (հաճախ դա դժվար, նույնիսկ անհնար է անել) կամ հարմարվել արդարողություն թեկադրանքին: Վերջինս դառնում է սպառողին պարփակող գրեթե միակ «ընդունությունը»: **Նշանակած հարաբերություններն անհրաժեշտ ու բավարար են մոնոպոլիայի նախնական բնորոշման համար. մոնոպոլիան այնպիսի ճյուղ է, որը ներկայացնում է միակ արդարողը կամ վաճառողը, և որի եզակի արդարությունը ցունի լիարժեք փոխարինիչներ:** Իհարկե, միակ արդարող/վաճառող նախադրյալն իրականում գրեթե անհնար է ապահովել, քանի որ միշտ կարելի է գրնել որոշ փոխարինիչներ՝ թեկուզ ոչ լիարժեք:

**Չուփ մոնոպոլիային բնորոշ է ծանրակշիռ ազդեցությունը գների վրա:** Այն գին որոնող կամ որոշող շուկայական կառուցվածք է: Գին որոշող են համարվում բնակչության վճիռներ կայացնող այն սուրյեկտիվները, որոնք գիտակցում են, որ վաճառվող կամ գնվող քանակի վերաբերյալ իրենց կարգարած ընդունությունը ներգործում է գների վրա: *Միաժամանակ՝ մոնոպոլիայի պայմաններում սպառողները հանդես են զալիս իրու գին ընդունողներ՝ միայնակցից անկախ, շիստագործակցիված վարքով:* Արդարանքի փաստացի իրացումը հիմնականում կախված է մոնոպոլիայի սահմանած գնից՝ այլ բարիքների գներից ուղղակիորեն կախված չէ: Այս հանգամանքը շուկայական իշխանության հիմնական բաղադրիչներից է, ըստ որում՝ զույգ մոնոպոլիան շուկայական իշխանության ծայրահեղ դեպքն է: *Իսկ շուկայական իշխանություն է համարվում այն իրադրությունը, երբ մեկ կամ մի քանի ֆիրմա էապէս ազդում են իրենց արդարությունը՝ գների վրա, և նոր ֆիրմաներ մուտք չեն գործում այդ ճյուղը՝ արձագանքելով բնակչության շահույթի առկայությանը:*

Շուկայական իշխանության գոյության չափանիշներից մեկն է այն է, որ ֆիրման կամ ֆիրմաները կարող են զույգ շահույթ արանալ անզամ երկարաժամկետ հարգածում, ընդ որում՝ 1) առանց նոր մրցակիցներ ներգրավելու, քանի որ առկա են նոր ֆիրմաների մուտքի կոչք սահմանափակումներ, 2) առանց արդարություն բարեկավման, 3) առանց արդարության ծախսերի կրճագման: **Շերլիսաբար,** շուկայական իշխանությունը մեկ կամ մի քանի ֆիրմայի հնարավություն է փալիս սահմանելու ավելի բարձր գին, քան կլիներ մրցակցային հավասարակշռության գինը:

**Չուփ մոնոպոլիան բնութագրվում է նաև մուտքի մեծ արգելքներով, որոնց հաղթահարումը հաճախ անհնարին է:** **Նման դեպքերում ասում են, որ շուկայի մուտքը արգելափակված է,** այսինքն՝ նոր առաջարկողների համար անհնարին է մուտք գործել շուկա՝ ողջամիգ, հիմնավորված ծախսերով: Բանն այն է, որ կարծածամկետում անհաղթահարելի մուտքի արգելքները երկարաժամկետում կարող են թուլացվել անուղղակի մրցակցությամբ, այսինքն՝ դառնալ հաղթահարելի: Այդ իմաստով, մենաշնորհի առաջացնան աղբյուր է համարվում նախ այն իրողությունը, որ գործունեության որոշ ոլորդներում «ծախսարդյունավերության» չափանիշի առումով նպարակահարմար չէ շուկայի սպասարկումը մեկից ավելի առաջարկողների կողմից: Որպես օրինակ կարող է ծառայել մեկից ավելի ջրագծերի, հաղորդակցության գծերի, խողովակաշարերի

անցկացման ակնհայր աննպարակահարմարությունը: Այսպիսի դեպքերում երկարաժամկետ շրջանում միջին ծախսերի հնարավոր նվազագույն մակարդակն ապահովում է միայն երբ բարիքի կամ ծառայության ամբողջ շուկան սպասարկվում է մեկ արդարության (վաճառողի) կողմից:

Նոր ֆիրմաների՝ շուկա մուգրի սահմանափակումները համարվում են շուկայական իշխանության կարևոր նախադրյալ: Մուգրի արգելվները սահմանափակում են շուկայում գործող և նախկինում ամրապնդված ֆիրմաների հետ նորեկ ֆիրմայի հավասարագոր մրցակցության հնարավորությունը: Մուգրի արգելվ ասելով հասկանում ենք որևէ պայման, որը նոր ֆիրմաներին խանգարում է մուգր գործել վվյալ ճյուղ՝ այնպես արդեն գործող ֆիրմաների համեմագ նույն կամ նույնիսկ ավելի ցածր ծախսային պայմաններով: Մուգրի արգելվների հարցի հրաժարականությունը կախված է նրանից, թե որքանով է հնարավոր կամ անհնարին դրանց հաղթահարումը: Մուգրի արգելվները բարձրանույթ են և կարող են լինել՝

▪ **գնութեական՝ նյութական, ֆինանսական արգելվներ,** որոնք կապված են պահանջվող հիմնական կապիքայի մեծ չափերի, համապարախան գենինողգիաների կիրառման բարդության, մասշրաբի բարձր էֆեկտի, թանկարժեք գովազդի անհրաժեշտության և այլ գործոնների հետ,

▪ **իրավական (լեզար) արգելվներ՝** արգունագրեր, հեղինակային իրավունքներ, գործունեության պարփակիր թույլափուլություն, որևէ անհրաժեշտ, հարկապես չվերարդարվող ռեսուրսի պաշարների նկարմամբ բացառիկ սեփականության իրավունքներ, ուստի վվյալ ռեսուրսի անմատչելիություն,

▪ **անլեզար արգելվներ՝** գործող ֆիրմաների կողմից անբարեխիղճ մրցակցության զանազան ձևերի կիրառում:

Նշված արգելվների մի մասն ըստ քնույթի համարվում է «բնական», մյուս մասը՝ արհեստական: Լինում են նաև կազմակերպական, գեղեկարգվական, արդարին գնութեական, քաղաքական, գուական, ժամանակավոր և այլ արգելվներ:

Այսպիսով, մոնոպոլիան որոշում է կամ հնարավորություն ունի ընդունուելու իր արդարանքի գինը և կարող է շահույթ սպանալ առանց մրցակիցներ ներգրավելու: Մոնոպոլիայի բնորոշ գծերի այս քննարկումից հետևում է, որ դրանք մոնոպոլիսար ֆիրմային մղում են համապարախան գնութեական վարքագծի: Անհրաժեշտ է ավելի հանգամանորեն անդրադառնալ դրա դրսևումներին, դրդապարճառներին, հետևանքներին ու կարգավորման մեթոդներին:

#### **10.2.2. Մոնոպոլիայի վարքագիծն արդարանքի ծավալի և գնի որոշման հարցում: Ֆիրմայի հավասարակշռությունը և զուր շահույթը մոնոպոլիայի դեպքում**

Վրաբարանքի թողարկման ծավալի և գնի մակարդակի վերաբերյալ գնութեական որոշումների ընդունումն ավելի բարդ խնդիր է մոնոպոլիայի, քան կարարյալ մրցակցության պայմաններում: Եթե մրցակցային ֆիրման գին ընդունող է և խնդիր ունի միայն որոշելու իր արդարանքի քանակը շուկայի սահմանած գնի պարագայում (վերիշենք, որ մրցակցային ֆիրմայի կողմից


համեմատաբար շար կամ քիչ արփադրելն ու վաճառելը չի ներգործում արփադրանքի հավասարակշիռ զնի վրա, իսկ այդ գինը որոշում է շուկան), ապա մոնոպոլիսով ֆիրման խնդիր ունի որոնելու ու ընդունելու իր արփադրանքի և՝ ծավալը, և՝ գինը, որոնց դեպքում կարանա առավելագույն շահույթ: Ըստ որում, արփադրանքի քանակը, որը մոնոպոլիան նախարեսում է վաճառել, ազդում է դրա զնի վրա: Ներկա արփար, որոշելով արփադրանքի ծավալը, մոնոպոլիսովը որոշում է նաև համապատասխան գինը: Չնայած շուկայական իշխանությանը՝ մոնոպոլիան չի կարող կամայականորեն սահմանել կամ բարձրացնել իր արփադրանքի գինը, քանի որ այդ շուկայական իշխանությունն անսահմանափակ չէ, այլ սահմանափակված է պահանջարկի օրենքի գործողությամբ և իրական պահանջարկի պայմաններով: Բացի այդ, գինը ճիշդ գեղեկարգություն է բարձր սպառողի համար բարիքի լրացուցիչ միավորի արժեքի մասին՝ անկախ այն բանից, վաճառողը գին ընդունող է, թե մոնոպոլիսով:

Մոնոպոլիայի դեպքում պահանջարկի օրենքը գործում է. եթե մոնոպոլիսովը բարձրացնի գինը, ապա միաժամանակ նա չի կարող սպառողներին թելադրել նաև պահանջարկի մեծությունը: Դա անկախ է մոնոպոլիսովի ազդեցությունից: Անոյ զների պարագայում մոնոպոլիսովը կիրացնի ավելի քիչ արփադրանք, իսկ եթե նա ցանկանում է մեծացնել վաճառքի ծավալը, ապա հարկադրված է որոշ չափով նվազեցնել գինը: Մոնոպոլիսովը որոնում է այնպիսի գին, որն առավելագույնի կիացնի համախառն շահույթը: Սա է նրա գլխավոր նպատակը և ոչ թե պարզապես առավելագույն զնի սահմանումը՝ միավոր արփադրանքի հաշվով ամենամեծ շահույթի սրբացումը: Մոնոպոլիսովի արփադրանքի պահանջարկը թեև առածգական չէ, սակայն գործնականում չի կարող լինել բացարձակապես ոչ առածգական: Ուստի իր զնային քաղաքականության մեջ մոնոպոլիսովը սահմանափակված է ինչպես սպառողների վճարունակ պահանջարկի մեծությամբ, այնպես էլ փոխարինիչ ապրանքների նախընդունության հնարավոր վարքով: Այդ առունուվ պարզաբանված է այն կանխադրույթը, որի համաձայն՝ զնորդները լիարժեք իրագել են մոնոպոլիսովի սահմանած զնի, նրա ապրանքի ընութագրերի, ինչպես նաև մարզելի այլընդունակությունների մասին:

Եթե մրցակցային ֆիրմայի հավասարակշռության պայմաններից մեկը սահմանային եկամֆի և զնի հավասարությունն է  $MR=P$  (այսինքն՝ գրաֆիկորեն համընկնում են պահանջարկի և սահմանային եկամֆի հորիզոնական ուղիղները), ապա մոնոպոլիայի դեպքում սահմանային եկամուպը փոքր է գնից՝  $MR < P$ , նշված ուղիղներն արդեն չեն համընկնում, այլ երկարվում են՝ ունենալով բացասական թերում (գլեն գծապարկեր 10.6): Դա բացարձություն է այն հանգամանքով, որ ավելի շար իրացնելու համար պահանջվում է զնի որոշակի իշեցում, ըստ որում՝ այդ նվազած գինը վերաբերում է ոչ միայն արփադրանքի սահմանային միավորին, այլև բոլոր նախորդ միավորներին: Այս դեպքում պահանջարկի օրենքի և պահանջարկի զնի մասին է մոնոպոլիային բնորոշ է բացասական թեքվածություն ունեցող պահանջարկի սովորական կոր:


Մոնոպոլիայի պայմաններում ֆիրման իր արփադրանքի ծավալը որոշելու համար նույնպես առաջնորդվում է սահմանային սկզբունքով, այսինքն՝ շահույթն առավելագույնի հասցնելու նպատակով ֆիրման թողարկում է ար-

Վերիիշենք, որ սահմանային եկամուպը ցոյց է տալիս ընդհանուր եկամփի այն փոփոխությունը, որը կապված է արդադրողի կողմից վաճառչած արդադրանքի՝ մեկ միավորով փոփոխության հետ: Քննարկվող դեպքում սահմանային եկամուպն արդահայքում է արդադրանքի լրացուցիչ միավորի վաճառքից մոնուպոլիսարի սրբացած մասնավոր օգուպը: Քանի դեռ  $MR > MC$ , ապա մոնուպոլիսը Փիրմային ձեռնվոր է արդադրանքի քանակի ավելացումը, և դա նպաստում է շահույթի աճին: Խոչ եթե  $MR < MC$ , ապա ձեռնվոր կինի արդադրանքի քանակի կրճագումը, որը նույնապես կնպաստի շահույթի աճին, կամ՝ վնասի առկայության դեպքում՝ դրա նվազեցմանը: Մոնուպոլիսի առանձնահագություններից և դրա քննադադրության պարզապես մերից մեկն այն է, որ արդադրանքի հավասարակշիռ քանակն ավելի փոքր է, քան կարող էր լինել մրցակցային հավասարակշրության պարագայում:



**¶Í³ à³ i Í»ñ 10.6.** Զուր մոնոպոլիայի կողմից պնդեսական շահույթը  
մաքսիմալացնող արդարութանքի ծավալի և զնի որոշումը

Ասվածից հետևում է, որ ֆիրման է կեպում կթողարկի  $MR=MC$  պայմանին համապատասխան գույքի արդադրանք: Գինը սահմանվում է որպես այդ քանակի իրացման առավելագույն՝ պահանջարկի գին՝  $P_c$ : գույք քանակը և  $P_c$  գինը փոխկապված են պահանջարկի կորի (d) Կ կետով: Թողարկման և գնի այդ գույքակցումով ֆիրման սրբանում է գնաբեսական շահույթ՝ սպառագծված ուղանկյան՝  $NP_{cKL}$  մակերեսի չափով, որի մի կողմը արդադրանքի քանակն է, մյուսը՝ միավոր արդադրանքի շահույթը՝  $NP_c$ , կամ  $KL$ : Նկարում դրանք պահանջարկում են նաև որպես ընդհանուր հասույթի և ընդհանուր ծախսի գործություն՝ դա համապատասխանաբար  $OP_cKq_c$  և  $ONLq_c$  ուղանկյունների մակերեսների գործությունն է: Ընդհանուր հասույթի և ընդհանուր ծախսի ուղանկի մոդելում ներկայացված է գծապարկեր 10.7-ում:



**ՊԼՅԱՅԻ Ի ՇՐՋՈՒԹՅՈՒՆ 10.7. Զույգ մոնոպոլիայի կրողմից տնտեսական շահույթը մաքսիմալացնող արդադրանքի ծավալի որոշումը**

Ա և Բ կերպերն անվնասաբերության կերպեր են, որպես  $TR=TC$ : Մինչև Ա կերպը և Բ կերպից հետո՝ համապարփական քանակի թողարկման դեպքում, զործունեությունը վնասաբեր է, քանի որ  $TC > TR$ : Շահույթաբեր թողարկումն ընկած է Ա և Բ կերպերի միջակայքում, որպես բոլոր քանակների համար՝  $TR > TC$ : Սակայն առավելագույն շահույթը համապարփականում է  $TR$  և  $TC$  կորերի միջև ուղղահայցով ամենամեծ հետապորությանը՝ FG հարվածին: **Գծապարփերը ցույց է տալիս նաև առավելագույն շահույթի և առավելագույն ընդհանուր հասույթի պարբերությունը:** Մոնոպոլիստի բուն նպակակն առավելագույն շահույթի սպացումն է: Դա դեղին է ունենում  $q'$  քանակի դեպքում, եթե ընդհանուր հասույթը դեռևս չի հասել  $Q_m$  բարձրակերպին՝ ավելի մեծ  $q_m$  թողարկումով: Վերջին դեպքում, թեև ընդհանուր հասույթն առավելագույնն է, սակայն շահույթի զանգվածն ավելի փոքր է: F և G կերպերով անցնող  $TR$  և  $TC$  կորերի զուգահեռ շղշափողները ցույց են տալիս սահմանային եկամուրի և սահմանային ծախսի հավասար մեծության պայմանը:

Կարարյալ մրցակցության և մոնոպոլիայի մոդելների միջև կա նաև հետքայի էական պարբերությունը: Կարարյալ մրցակցության դեպքում գինն արդարացնում է ինչպես արդադրողի, այնպես էլ սպառողի սպացած սահմանային օգույքը, որը երկուսի համար նույնն է: Իսկ մոնոպոլիայի դեպքում գինն արդահայքում կամ չափում է միայն սպառողի սպացած սահմանային օգույքը, եթե նա զնում է բարիքի լրացուցիչ միավոր: Սակայն գինը չի չափում արդադրանքի լրացուցիչ միավորի վաճառքից մոնոպոլիստի սահմանային օգույքը: Մինչդեռ, մոնոպոլիստ ֆիրմայի՝ լրացուցիչ վաճառված բարիքի միավորից սպացած սահմանային օգույքը արդահայքում է սահմանային եկամուրի մեծությամբ: Այսպեսից պարզ է, որ արդադրանքի որևէ սահմանային միավորի զնումն ավելի շատ սահմանային օգույք է բերում սպառողին, քան դրա թողարկումն ու վաճառքը՝ արդադրողին: Խոսքն առայժմ միայն մասնավոր սահմանային օգույքի մասին է: Հարկ է ընդգծել, որ բոլոր տնտեսական սուբյեկտները իրենց որևէ ընդությամբ և դինամիկայով: Այս չափանիշն ընդհանուր է նաև կարարյալ մրցակցության և մոնոպոլիայի մոդելների միջև կա նաև հետքայի էական պարբերությունը:

թյան և մոնոպոլիայի սուբյեկտների համար: Նեփևաբար, արդադրանքի թողարկման ծավալի վերաբերյալ որոշում ընդունելիս մոնոպոլիստը բարիքի լրացուցիչ միավորը կարծեքավորի ավելի քիչ, քան գնորդը: Այլ խոսքով՝ **մոնոպոլիստի սահմանային օգուտը բարիքի (ծառայության) լրացուցիչ միավորի իրացումից ավելի փոքր է, քան այդ միավորի գնումից սպառողի սահմանային օգուտը:**

Մոնոպոլիայի վերլուծությունը կարող է ավելի ակնառու լինել, եթե ներկայացնենք թվային կոնկրետ օրինակով:

**Թ-ՊՂԱՐԿՈՒՄԸ, ԳՆԵՐԸ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՄԵՐԸ  
ՄՈՆՈՊՈԼԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ  
(առավելագույն շահույթի որոշման պայմանական օրինակ)**


Քանակը	Գինը	Ընդհանուր եկամուքը	Սահմանային եկամուքը	Սահմանային ծախսը	Ընդհանուր ծախսը	Շահույթը
Q (1)	P (2)	TR (3)	MR (4)	MC (5)	TC (6)	Pf (7)
1	20	20	20	10	10	10
2	19	38	18	10	20	18
3	18	54	16	10	30	24
4	17	68	14	10	40	28
5	16	80	12	10	50	30
6	15	90	10	10	60	30
7	14	98	8	10	70	28
8	13	104	6	10	80	24
9	12	108	4	10	90	18
10	11	110	2	10	100	10

Ներկայացված պայմանական դրվագները հիմնված են մոնոպոլիայի արդարանքի նկարմամբ պահանջարկի և սահմանային ծախսերի ցուցանիշների վրա: Վերիիշենք, որ եթե գրված են արդարանքի գինն ու քանակը որևէ ժամանակահարվածի կորուստով, ապա ընդհանուր եկամուքը որոշվում է դրանց արդարանքի վերաբերյալ, այսինքն՝ **TR=PxQ**: Սահմանային եկամուքն ընդհանուր եկամուքի փոփոխությունն է՝ կապված արդարանքի իրացման՝ մեկ միավորով փոփոխության հետ, այսինքն՝ **MR=TR<sub>n</sub>-TR<sub>n-1</sub>**: Սահմանային եկամուքը նվազում է արդարանքի քանակական աճին զուգընթաց: Սահմանային ծախսն ընդհանուր ծախսի այն փոփոխությունն է, որը կապված է արդարանքի՝ մեկ միավորով ավելացման հետ՝ **MC=TC<sub>n</sub>-TC<sub>n-1</sub>**: Եթե գրված է սահմանային ծախսը, ապա ընդհանուր ծախսն իրենից կներկայացնի հաջորդական սահմանային ծախսերի գումարը: Շահույթը որոշվում է ընդհանուր եկամուքի և ընդհանուր ծախսի գարբերությամբ, այսինքն **Pf=TR-TC**:

Սահմանային սկզբունքի համաձայն՝ մոնոպոլիստին ամենամեծ շահույթը ապահովող արդարանքի քանակը որոշելու համար անհրաժեշտ է հաշվի առնել ծախսերը: Սահմանային սկզբունքին հեփեւելը նշանակում է, որ շահույթը

կիասնի առավելագույնի, եթե սահմանային եկամուքը հավասարվի սահմանային ծախսին: Բերված օրինակում ենթադրվում է, որ սահմանային ծախսը հասպարուն է և յուրաքանչյուր միավորի համար կազմում է 10: Վերիշելով, որ սահմանային եկամուքը նվազում է արդադրանքի աճին զուգընթաց, և հաշվի առնելով, որ սահմանային ծախսը անփոփոխ մեծություն է, պարզ կդառնա, որ դրանք կուղղորդվեն դեպի հավասարություն արդադրանքի աճին զուգընթաց: Այդուսակից երևում է, որ, դիցուք, 3 միավոր արդադրանքի դեպքում սահմանային եկամուքը գերազանցում է սահմանային ծախսը 6 միավորով՝ 16-10: Մեկ միավորով արդադրանքի ավելացումը կմեծացնի ընդհանուր եկամուքը 14-ով՝ 68-54, իսկ ընդհանուր ծախսը՝ 10-ով՝ 40-30: Արդյունքում շահույթը կմեծանա 4 միավորով՝ 14-10: Ներևաբար, եթե  $MR > MC$ , ապա մոնոպոլիստը կմեծացնի արդադրանքի ծավալը մինչև  $MR = MC$ :

Արդադրանքի 7-րդ միավորի պարագայում սահմանային եկամուքը՝ 8, փոքր է սահմանային ծախսից՝ 10, ուստի մեկ միավորով արդադրանքի կրճագումը կմեծացնի շահույթը 2 միավորով: Ներևաբար, եթե  $MR < MC$ , ապա նպագակահարմար է արդադրանքի ծավալի որոշակի կրճագումը:  $MR = MC$  պայմանն ապահովում է 6 միավոր արդադրանքի դեպքում, եթե սպացվում է առավելագույն շահույթը՝ 30 միավոր: Պեսքը է հսկակ սահմանազարել շահույթի մաքսիմալացումը ընդհանուր եկամուքի մաքսիմալացումից: Դրանց գործերությունն արդացողված է նաև այդուսակում. այսպես, շահույթն առավելագույնի հասցնող արդադրանքի քանակի հետագա մեծացման դեպքում ընդհանուր եկամուքը կարող է միաժամանակ աճել, սակայն դա արդեն ուղեկցվում է շահույթի նվազումով:



**Պ Ի Յ Ճ Յ Շ Ո Ւ Ր Ա Յ Ի Խ Ա Վ Ա Ս Ա Ր Ա Կ Շ Ռ Ո Ւ Թ Ե Յ Ո Ւ Ն Բ՝  $Q_m$ ,  $P_m$ ,  
և մրցակցային հավասարակշռությունը՝  $Q_p$ ,  $P_p$**

Ներկայացված թվային օրինակի հիման վրա մոնոպոլիայի կողմից շահույթի մաքսիմալացման պրոցեսը և հավասարակշռությունը բացարձելու համար դա կարելի է ներկայացնել նաև գրաֆիկական եղանակով: Այն համարում է պահանջարկի, սահմանային եկամուքի և սահմանային ծախսի կորերը: Սահմա-

**նային ծախսի հասպարուն լինելու ենթադրության դեպքում դրա գրաֆիկը հորիզոնական ուղիղ է:** Սահմանային եկամփի կորը, որը մոնոպոլիստի սահմանային օգուտի կորն է, ընկած է պահանջարկի կորից ներքև, որն էլ գնորդների սահմանային օգուտի կորն է: Այլ խոսքով, սահմանային եկամփի կորը գրավում է միջնագծի դիրք ուղղահայաց առանցքի և պահանջարկի կորի միջև, այսինքն՝ կիսում է հորիզոնական առանցքի համապատասխան՝ 0D հարվածը: Ներևուարար նաև՝  $P_p E_m = E_m E_p$ :

Սահմանային սկզբունքի համաձայն՝ մոնոպոլիստը նախապարփռություն է փայխ արգադրանքի  $Q_m$  ծավալին, քանի որ այդ դեպքում է **MR=MC**: Միաժամանակ, մոնոպոլիստը սահմանում է փվալ քանակը վաճառելու հնարավոր ամենաբարձր գինը՝  $P_m$ -ը: Ենթադրենք՝ գրաֆիկում պարկերված  $MC$ -ն ցույց է փայխ մրցակցային դարձած ճյուղի սահմանային ծախսը: Դա նշանակում է, որ մոնոպոլիստի սահմանային ծախսի կորը մրցակցային ճյուղի համար կլինի առաջարկի կոր: Այդ դեպքում արգադրողի համար ընդունելի նվազագույն գինը՝ առաջարկի գինը, նրա արգադրանքի առաջին միավորի համար կլիներ սահմանային ծախս՝  $MC$ -ի կամ  $P_p$ -ի չափով: Նվազագույն գինը նույնը կլիներ նաև արգադրանքի մյուս բոլոր միավորների համար: Այդ նվազագույն գինը կանխորոշում է սահմանային ծախսի կորը: Եթե այս մենաշնորհային ճյուղը դառնար մրցակցային, ապա հավասարակշռության գինը կլիներ  $P_p$ , արգադրանքի հավասարակշռ քանակը՝  $Q_p$ , իսկ դրամական շահույթը կիսավասարվեր գրոյի: Մոնոպոլիստը կրճագում է արգադրանքի ծավալը դրա մրցակցային մակարդակի համեմագ՝  $Q_m Q_p$  չափով, իսկ դրա միջոցով գինը բարձրացնում է մրցակցային գնի նվազմամբ՝  $P_p$ -ից մինչև  $P_m$ : Այդ իրողություններն արգացողում են մոնոպոլիայի հարուցած դրամական անարդյունավելությունը: Մոնոպոլիստի գույք շահույթը զծապարկեր 10.8-ում  $P_p P_m A E_m$  ուղղանկյան մակերեսն է: Կրճագում արգադրանքի ծավալը և բարձրացնելով գինը՝ մոնոպոլիստը ճեղքվածք է առաջացնում ապրանքի պահանջարկի գնի և առաջարկի գնի միջև: Պահանջարկի գինն արգահայտում է սպառողների սահմանային օգուտը կամ բարիքի ևս մեկ միավորի արժեքը, իսկ առաջարկի գինը՝ բարիքի արգադրության սահմանային ծախսերը կամ մյուս ապրանքների այն միավորների արժեքը, որոնք «զոհաբերվել» են այն արգադրելու համար, այլ խոսքով՝ այլընդունակային ծախսերը: Քննարկվող դեպքում պահանջարկի գինը ավելի բարձր է, քան առաջարկի գինը, այսինքն՝ առկա է պոտենցիալ օգուտ առևտրից, սակայն վերջինս դեղի չի ունեցել, և այդ օգուտը չի իրացվել: Ներևուարար, մոնոպոլիայի պայմաններում արգադրանքի ծավալը զծում է արդյունավելու արգադրանքի մակարդակին, որի դեպքում սահմանային սոցիալական օգուտը հավասարվում է սահմանային սոցիալական ծախսին՝ **MSB=MSC**:

Նկարագրվածի հակադիր պարկերն է մրցակցության պայմաններում: Այսինքն սպառողների և արգադրողների սահմանային օգուտները հավասար են, իսկ վերջինն էլ, իր հերթին, համարժեք է սահմանային այլընդունակային ծախսին՝  $MOC$ : Սրանից հետևում է, որ ապրանքի լրացուցիչ միավորի արժեքը հավասարվում է այն արգադրելու այլընդունակային ծախսին: Սպառողները և արգադրողներն իրականացնում են պոտենցիալ օգուտ պարունակող բոլոր գործարքները, քանի որ հավասարակշռության դեպքում գինը չափում է ինչպես


լրացուցիչ միավորի արժեքը, այնպես էլ այդ նույն միավորի արգաղրության ծախսերը: Այլ խոսքով՝ պահանջարկի գինը հավասարվում է առաջարկի գնին:

Գծապարկեր 10.8-ը պարզորոշ ցույց է տալիս, որ քանի դեռ  $MR > MC$ , այսինքն՝  $MR$ -ի գրաֆիկն ավելի վեր կամ բարձր է գեղադրված  $MC$ -ի նկարմամբ, ապա արգաղրանքի ավելացումը մինչև  $Q_m$  կմեծացնի նաև շահույթը: Նաև առակ դեպքում, եթե  $MR < MC$ , շահույթը կմեծանա արգաղրանքի կրճարման շնորհիվ՝ նույնպես մինչև  $Q_m$ : Նվազարար, մոնուպոլիսարի համար դավար դեպքում շահույթն առավելացույնի հասցնող արգաղրանքի ծավալը՝  $Q_m$ , որոշվում է  $E_m$  կետից հջոնդ ուղղահայցով:

Ընդունված իր կողմից թողարկվող արգաղրանքի կրնկրեափ ծավալը՝ մոնուպոլիսար ֆիրման դրանով իսկ ընդունվում է նաև վաճառքի կրնկրեափ գինը, եթե գրված են պահանջարկի և ծախսի պայմանները: Արգաղրանքի գովազ քանակը մոնուպոլիսայի կողմից վաճառքում է հնարավոր առավելացույն՝ պահանջարկի գնով: Դա համապատասխանում է արգաղրանքի այդ ծավալի կետից ելնող ուղղահայցի՝ պահանջարկի կորին հարման A կետին համարժեք  $P_m$  գնին: Դրանից բարձր գնի սահմանումը շահավեափ չի ինի մոնուպոլիսայի համար, քանի որ կիանգեցնի վաճառքող արգաղրանքի քանակի և սրացվող շահույթի կրճարման: Առհասարակ, գների բարձրացման միջոցով շահույթի մեծացման վարքագիծը մոնուպոլիսան կարող է դրսնորել ոչ միշտ և միայն սահմանափակ միջակայքում: Վերջինս շաղկապվում է նաև պահանջարկի առածզականության (էլաստիկության) հայեցակարգի հետք. պահանջարկի ուղղի գործեր հարվածներն ունեն գործեր առածզականություն: Մոնուպոլիսարը կձգի խուսափել իր պահանջարկի կորի ոչ առածզական հարվածից, որդեռ  $MR < 0$  (գեն գծապարկեր 10.9): Պահանջարկի կորի այդ հարվածում գների բարձրացումը ձեռնորու է մոնուպոլիսային, քանի որ նրա ընդհանուր հասույթը մեծանում է: Մյուս կողմից, պահանջարկի կորի առածզական հարվածի մի մասում մոնուպոլիսային ձեռնորու կարող է լինել գների իշեցումը, քանի որ դա նույնպես մեծացնում է ընդհանուր հասույթը: Վերջնական որոշումը բխում է առավելացույն շահույթի կանոնից, որն իրականացվում է պահանջարկի կորի միայն առածզական հարվածում:

Առածզական պահանջարկի գիրույթում ( $E_d > 1$ ) սահմանային եկամուգը թեև ասքիճանաբար նվազում է, բայց մնում է դրական մեծություն: Այդ նույն գիրույթում ընդհանուր եկամուգն աճում է:  $E_d = 1$  կետին համապատասխան քանակի դեպքում  $MR = 0$ , միաժամանակ՝  $TR - q$  հասնում է իր բարձրակետին  $Q_m$  կետում (գեն գծապարկեր 10.7):

Ի գործերություն մրցակցային ֆիրմայի, մոնուպոլիսար ֆիրման կարող է գնակեսական շահույթ սրանալ հավասարակշռության վիճակում: Դրա պայմանը կարելի է արգահայքել այսպես՝  $MC = MR < AC < P$ : Դա նշանակում է, որ մոնուպոլիսը վերահսկում է իր արգաղրանքի ծավալը և որոնում է շահույթը մաքսիմալացնող գին, որը սահմանվում է արգաղրանքի այն ծավալին համապատասխան, եթե  $MR = MC$ : Միաժամանակ՝ գինը գերազանցում է սահմանային ծախսը, ինչը վկայում է ռեսուրսների անարդյունավեափ օգտագործման մասին:



**¶ Ի՞՞ ա՞ և ի Շ»Ռ 10.9. Պահանջարկի և սահմանային եկամուքի դինամիկան ոչ կարայալ մրցակցության պայմաններում**

Մոնոպոլիայի կարևոր գծերից մեկն այն է, որ զույգ շահույթը ունի բավականին կայուն բնույթ: Այդ իմաստով, կարճաժամկետ և երկարաժամկետ շրջանների փարբերակումը կորցնում է էական դերը, եթե մուտքի բարձր արգելվները փակում են նոր մրցակից ֆիրմաների ներթափանցումն այդ ճյուղ: Այդ ձևով գնական շահույթի սրացման համար մոնոպոլիան ենթարկվում է քննադարության: Սակայն նաև համարվում է, որ մոնոպոլիայի շահույթը զույգ կորուսպ չէ գնական շահույթի համար, այլ եկամուքի ակամա փոխանցում սպառողներից մոնոպոլիստին: Իրականում, մոնոպոլիան զույգ շահույթի մշտական երաշխիք չունի, իսկ ոչ բարկոր կառավարումով, բարձր ծախսերով մոնոպոլիան թույլ պահանջարկի դեպքում կարող է շահութաբեր զինել:

### 10.2.3. Կորուսպները ոչ կարայալ մրցակցության պայմաններում

Մոնոպոլիստի և մրցակցային ֆիրմայի ծախսերը կարող են փարբեր լինել: Մասշտաբի էֆեկտը կարող է ապահովել ավելի ցածր միջին ծախսեր մոնոպոլիստի համար, ինչն անմարդելի է մրցակցային ֆիրմաներին: Սակայն մոնոպոլիստները կարող են զգալի ծախսեր կարարել պետքության դրամադրած արդյունությունները պահպանելու համար, բացի այդ՝ ռեսուրսների առավել էժան համակցումով արդարիթմու ունակությամբ նրանք հիմնականում զիջում են մրցակից ֆիրմաներին: Մոնոպոլիայի դեպքում կան ծախսերի վրա հակադիր ուղղությամբ ազդող գործոններ: Ծախսերը նվազեցնող գործոնների խումբը ներառում է արդարության խոշոր մասշտաբով պայմանավորված դրական էֆեկտը, ինչպիսիք են՝ հաստափուն ծախսերի գնական դինամիկան, մարքեթինգի շնորհիվ գնական դինամիկան և այլն: Ծախսերի մեծացում հարուցող գործոններից են՝ նորամուծությունների և ռիսկի նկարմամբ խթանների թուլացումը, կառավարչական ապարատի ուժացումը, բյուրոկրատիկայի մարքեթինգի շնորհիվ գնական դինամիկան և այլն: Միևնույն իրողությունը կարող է փարամիտվող հետքեանքների հանգեցնել այսպես, մոնոպոլիստը մրցակցային ֆիրմայի համեմատ ծանրալշիռ առավելություն ունի գիրաբեխնիկական զարգացման ֆինանսական ռեսուրսների առումով, սակայն դրա իրականացման խթանները միշտ չեն, որ ուժեղ են:

**Մոնոպոլիայի առկայության, դրա հարուցած՝ ռեսուրսների անարդյունավելք փեղաբաշխման հետևանքով մեծանում է եկամուգների և հարսդության անհավասարությունը, նվազում է բնակչության կենսամակարդակը:** Քննարկումից պարզ դարձավ, որ կապարյալ մրցակցության համեմադրությամբ ոչ կապարյալ մրցակցության, հավկապես մոնոպոլիայի պայմաններում արդարանքի թողարկման ծավալի կրճագման և գների բարձրացման հետևանքով էական փոփոխություն է կրում սպառողի ավելցուկը. 1) այն զգալի չափով նվազում է՝ արդարակայքելով սպառողների բարեկեցության կրճագումը, 2) սպառողի ավելցուկի նշանակալից մասը փոխակերպվում է մոնոպոլիայի դրսեսական շահույթի, 3) մնացած մասը ներառվում է գույք կորսարի մեջ՝ ոչ որի բաժին չհասնելով:


**Արդարողի ավելցուկը նրա սպացած ընդհանուր եկամուգն է հանած արդարանքի արդարության ընդհանուր այլընքրանքային ծախսը:** Տվյալ քանակի սահմանային միավորի համար այն հավասար է շուկայական զնի և առաջարկի զնի փարբերությանը: Այն գույք շահումի կամ օգուփի մեծություն է, որ արդարակայքում է փոխանակային գործարքի շահավետության ասդիմանն արդարողի համար: Արդարողի ավելցուկը գրաֆիկորեն պարկերվում է այն փիրույթով, որը պարփակված է ներքինից՝ առաջարկի կորուկ, վերևից՝ հավասարակշիռ զնի ուղղով, ծախսից՝ ուղղահայաց առանցքով: Ասվածի հիման վրա փորձեք դա կապարել ինքնուրույն:

**Սպառողի ավելցուկն ապրանքի սպառումից սպացվող ընդհանուր օգուփի (փողով արդարակայքած) և դրա համար ընդհանուր վճարման գարբերություն է:** Այն գույք շահումի կամ օգուփի մեծություն է, որ արդարակայքում է փոխանակային գործարքի շահավետության ասդիմանը սպառողի համար: Սպառողների և արդարողների ավելցուկների միազգումար մեծությունը՝ ընդհանուր ավելցուկը, ցույց է դաշտում կամ օգուփը հասարակության համար: Դրա՝ դեսականորեն հնարավոր առավելագույն մեծությունն իրացվում է կապարյալ մրցակցության պայմաններում շուկայական հավասարակշռության դեպքում՝ ապահովելով դրսեսական արդյունավետության ամենաբարձր մակարդակը:

**Նշված իրավիճակում թողարկվում է արդարանքի սոցիալապես արդյունավելք քանակը:** Դրան հասնելու ընթացքում գուգակցվում են մասնավոր արդարողների սպացած շահույթի մեծացումը և հասարակության սպացած գույք օգուփի մեծացումը: Ոչ կապարյալ մրցակցության պայմաններում, որպես կանոն, արդարանքի փասբացի թողարկումը պակաս է դրա սոցիալապես արդյունավելք քանակից: Այդ դեպքում ավելի փոքր են ինչպես ընդհանուր օգուփը, այնպես էլ ընդհանուր ծախսը, սակայն օգուփի կրճագման չափը գերազանցում է ծախսի նվազման չափը: Դրանց գարբերությունը ցույց է դաշտում մրցակցային ընդհանուր ավելցուկի կամ հասարակության գույք օգուփի նվազած մասը:

Ոչ կապարյալ մրցակցության, հավկապես մոնոպոլիայի պայմաններում կորուսպների զնահագման մոփեցումը շաղկապվում է նախնառաջ դրսեսական արդյունավետության կորսարի չափանիշին: Մոնոպոլիսոր մրցակցային հավասարակշիռ քանակից պակաս է արդարությունը միաժամանակ ընդդեկու ավելի բարձր զին: Արդարանքի թողարկումը կրճագելու պարճառով դեղի է

ունենում ընդհանուր օգուփի նվազում: Վերջինիս մի մասը միաժամանակ ներկայացնում է սպառողների ծախսերի և արդադրողների ծախսերի համապատասխան կրճագումը (սահմանային ծախսերի հասքագում լինելու ենթադրությամբ): Այս դեպքում, եթե ուսուրաները լիարժեք հավկացվեն օգուգործման այլ գարբերակների, ապա զույգ օգուփի կորուսպ գրեղի չի ունենա: Ընդհանուր օգուփի նվազման մյուս մասը հենց մոնոպոլիայի պարճառած կորուսպն է: Այն սպառողի ավելցուկի այնպիսի կորուսպ է, որը չի փոխադրուցվում ուրիշ բնագավառներում արդադրանքի թողարկման մեծացումից սպառողի ավելցուկի աճով: **Զույգ, լիիվ** («մեռյալ բեռ») կորուսպը մրցակցային ընդհանուր ավելցուկի այն մասն է, որը կորցնում են սպառողները՝ գծապարկեր 10.10-ի ALE եռանկյան մակերեսի չափով (ինչպես նաև արդադրողները՝ սահմանային ծախսերի վերընթաց կորի դեպքում BLE եռանկյան մակերեսի չափով), սակայն չի փոխակերպում մոնոպոլիայի շահույթի: Այդ մասը՝ ABE (ALE+BLE) պարկերի մակերեսի չափով, ուսուրաների թերբեղաբաշխման պարճառով պարզապես անհետանում է, որպես պոտենցիալ օգուփ՝ չի իրացվում և ոչ չի սպառում: Այն կոչվում է նաև սոցիալական զույգ կորուսպ, որը սոցիալական ծախսի գերազանցումն է սոցիալական օգուփից՝ արդադրության որոշ բնագավառի կորպածքով:



**¶ 10.10. Զույգ կորուսպը ոչ կարարյալ մրցակցության պայմաններում**

Նշված կորուսպը գրեղի է ունենում այն պարճառով, որ մոնոպոլիսիփի գործունեության ոլորփում ուսուրաների ընթացիկ արժեքն ավելի բարձր է, քան դրանց արժեքն օգուգործման այլ գարբերակների դեպքում:

Մոնոպոլիայի զույգ կորսփի գնահարման մոդելեցումներից մեկը դրա հարաբերական մեծությունն է **ԾԱՀ-ի նկարմամբ**: ԱՍՄ-ում դրա կազմում է մոդավորապես 0,5-2%: Մյուս մոդելեցման համաձայն՝ դրա գարբերական մեծությունն այդ երկրում մեկ անգամ հաշվով գնահարփում է 100-500 դոլար՝ մեծամասամբ շիամարվելով խոշոր կորուսպ: Գրականության մեջ նշվում են հետևյալ պարճառները, որոնց շնորհիվ կորուսպն ավելի մեծ չէ:

- արդարին (օգարերկրյա) մրցակցության ուժեղացումը,

- նոր գիտելիքները, գիտական նորոգիաները և արդարագրեսակները,
- մրցակցության ինդենսիվացումը երկրում ապակարգավորման արդյունքում,
- նոր ֆիրմաների մուտքի կամ պուրենցիալ մրցակցության սպառնալիքը, որ չափավորում է զնի բարձրացման կարողությունը՝ կրծագեղով զուրկությունը: Փորձագիտական վերլուծության որոշ արդյունքների համաձայն՝ այդ կարևոր գործոնի բացակայության դեպքում կորուսպը կլիներ կրկնապարիկ ավելի:

#### **10.2.4. Մոնոպոլիան և գնային խորականությունը, դրա գիտակները**

Գնային խորականությունը տարբեր գործներին միևնույն որակի բարիքի միաժամանակյա վաճառքն է տարբեր զներով, երբ դա հիմնավորված կամ արդարացված չէ բարիքի արդարության և փոխադրման տարբեր ծախսերով: Գնային խորականություն կարարում են մենաշնորհային իշխանություն ունեցող ֆիրմաները: Գնային խորականության նպարակն արդարողություն/վաճառողի կողմից սպառողի ավելցուկի լրիվ կամ մասնակի յուրացումն է: Դրա շնորհիվ մոնոպոլիան կարող է առավելագույնի հասցնել իր սպացած շահույթը:

Առանձնացվում են գնային խորականության երեք գիտակ՝ առաջին, երկրորդ և երրորդ ասպիճանի: Առաջին ասպիճանի կամ կարարյալ գնային խորականության դեպքում մոնոպոլիստին հաջողվում է յուրացնել և շահույթի փոխարկել սպառողի ամբողջ ավելցուկը: Դա գեղի է ունենում ապրանքի յուրաքանչյուր միավորը պահանջարկի զնով, այսինքն՝ հնարավոր առավելագույն զնով վաճառելու շնորհիկ: Այս դեպքում սահմանային եկամուքի և պահանջարկի կորերը համընկնում են, իսկ սահմանային եկամուքը մեծանում է՝ հասնելով ու հավասարվելով զնին՝ **MR=Px**: Տեսականորեն այս պարզ մոփեցումը խիստ դժվար է գործնական կիրառման առումով: Տիմնական պարբերությունը կապվում է տարբեր գործների համար ընդունելի պահանջարկի զնի կոնկրետ մակարդակի իմացության գեղեկարգվական բարդության հետ: Այս գիտակի կիրառման օրինակ կարող են լինել բժիշկների, փաստաբանների կողմից հաճախորդներին առաջարկվող տարբեր զները:

Երկրորդ ասպիճանի գնային խորականությունը կապված է գնվող քանակից կախված՝ բարիքի զների տարբերակման հետ: Գնային քաղաքականության այս մոփեցման իրականացման գործիքը մեծաքանակ զնումների դեպքում գնային զեղչերի դրամադրումն է: Երրորդ ասպիճանի գնային խորականության նախապայմանը շուկայի հարվածավորումն է՝ գործների տարաբաժանումն առանձին խմբերի, մասերի (սեզմենսիների)՝ կախված նրանց մոփիվացիայից և այլ բնորոշ ցուցանիշներից, մասնավորապես՝ պահանջարկի տարբեր առաջականության հիման վրա զնորդների խմբավորումը և մեկուսացված շուկաների միջև ապրանքի (ծառայության) գեղաշարժի կամ վերավաճառքի հնարավորության բացառումը: Տվյալ դեպքում, ցածր առաջականությամբ հարվածում սահմանվում են բարձր զներ, իսկ բարձր առաջականությամբ հարվածում ցածր զներ: Տարբերակված զների փոխարեն միջինացված միասնական զնի

սահմանման դեպքում վաճառքների ծավալը ավելի փոքր կլինի: Դա նշանակում է, որ խփրական գները կարող են օգտագործվել արդարությունն ընդլայնելու համար՝ դրանով ապահովելով արդարության մասշտաբից գնովեսումներ: Բացի այդ, կարող են մեծանալ փոխանակային գործարքների ընդհանուր օգուտները՝ նվազեցնելով բաշխման անարդյունավետության չափերը: Գնային խփրականությունը կարող է կիրառվել նաև ըստ ժամանակի չափանիշի՝ սեզոնային և այլ խսպառ վաճառքների ձևով՝ նոյնակերպ նպաստելով առաջարկի և պահանջարկի մեծության աճին: Գնային խփրականություն հաճախ կիրառում են կոմունալ ծառայություններ մասնակությունը ֆիրմաներ՝ ավելի բարձր սակագներ սահմանելով կազմակերպությունների համար՝ անհար սպառողների համեմատությամբ:

Շուկայի հարվածավորումը կարող է լինել նաև՝ ա) աշխարհագրական, եթե այն կափարվում է ըստ երկրի վարչադրամակային գործարքների՝ մարզեր, շրջաններ, քաղաքներ և այլն, բ) դեմոքրատիական (ժողովրդագրական), եթե հիմնվում է սերի, գործիքի, ընդունակի չափի, ազգության վրա, գ) հոգեբանական, եթե կափարվում է անձի փիպերի, գույալ սոցիալական շերտին պարկանելու, զբաղմունքի դրասակի, կյանքի ոճի ու կենսակերպի հավելանիշներով, դ) վարքագծային, եթե խմբերի բաժանումը կախված է գնորդների կրթության (գիտելիքների) և եկամուտի մակարդակից, ապրանքի և դրա օգտագործման նկարմամբ ռեակցիայի բնույթից:

#### **10.2.5. Գերիշխող շուկայական դիրքի գնահավման ձևերը: Լեռների և ճերֆինդալի ինդեքսները (համաթվերը)**

Շուկան կարող է բնութագրվել նաև եզակի կամ մի քանի խոշոր ֆիրմաների գործադրությամբ, որը պայմանավորված է լինում նախևառաջ մոնոպոլիայի գործակներով: Առանձնացվում են մոնոպոլիայի հետևյալ գործակները. բաց մոնոպոլիա, փակ մոնոպոլիա, բնական մոնոպոլիա: Եթե ֆիրման շուկա է վաճառահանում նոր արդարագույն գործարկելով միջակցությունից պաշտպանության հարուստ միջոցառումներ, ապա դա բաց մոնոպոլիա է: Փակ մոնոպոլիային բնորոշ է պաշտպանության այնպիսի միջոցների կիրառումը, ինչպիսիք են՝ գիրական հայտնագործության գրանցումը, հետինակային իրավունքի ամրագրումը և իրացումը: Բնական մոնոպոլիայի դեպքում ֆիրման գործում է այնպիսի ճյուղում, որքեղ առավելագույն արդյունավետությունը ձեռք է բերվում միայն արդարագույն գործում, որը բավարարում է շուկայական պահանջարկը լրիվ չափով:

Շուկայում գերակշռության ասդիմանի բնութագրման համար օգտագործվում է շուկայի կենդանացում (կոնցենտրացիա) հասկացությունը: Այն արժահայտում է շուկայում մեկ կամ մի քանի խոշոր ֆիրմաների շուկայական իշխանության ասպիճանը: Տարբերում ենք կենդանացման բացարձակ և հարաբերական ձևերը: Բացարձակ կենդանացումն առնչվում է ֆիրմաների թվաքանակին՝ անկախ դրանց հարաբերական մեծությունից: Զանակապես այն չափում է կենդանացման գործակցի միջոցով, որը ցույց է տալիս գույալ ճյուղի վաճառքների ծավալում առավել խոշոր 3, 4, 6, 8 կամ 10 ֆիրմաների գործակա-

բար կշիռը (մասնաբաժինը): Կենդրոնացման գործակիցն ունի որոշ թերություններ: Այն շուկայում ֆիրմայի ազդեցության ճշգրիտ ցուցանիշ չէ, քանի որ կարող է անփեսվել պիրապես ֆիրմաների թվաքանակի հանգամանքը. այսպես, եթե ճյուղում գերակշռում է մեկ խոշորագույն ֆիրմա՝ ճյուղային վաճառքի մեջ 80%-ով և չորս ֆիրմաներ՝ 20-ական %-ով, ապա կսփացվի նույն գործակիցը:

Գրականության մեջ նշվում են նաև կենդրոնացման գործակցի այլ թերություններ: Այսպես, անհրաժեշտ է գործակցի մեծությունը ճշգրիտ գովազդ ճյուղում արդարին մրցակցության և վաճառքների ընդհանուր ծավալում ներմուծման բաղադրիչի հաշվառումնով: Կենդրոնացման գործակիցը չի արգացուցում նաև շուկա մուտքի պայմանները, հարկապես արգելվների բնույթը: Մուտքի ցածր արգելվների դեպքում նույնիսկ փորբարձիկ արգադրողներով շուկան կարող է լինել մրցակցային: Բացի այդ, գործակիցն անփեսում է շուկաներում փոխարինող ապրանքների առկայության և գարբերակման ասդիմանի ազդեցությունը: Այս գործոններն եաւես բարեկավում են մրցակցային միջավայրը: Ներկայարար, շուկայի կենդրոնացման գործակիցը պետք է կիրառել այլ բնութագրերի հետ համադրելով:

Տնտեսական մեխանիզմի կառուցվածքային օդակ է նաև **արդարության կառավարումը**: Կառավարումը լայն իմաստով ընդգրկում է էլեկտրոնային զարգացման մեխանիզմը, գնագոյացման համակարգը, ֆինանսավարկային լծակները և այլն:

---

զիրակցորեն ներգործելու ամբողջ համակարգը, իսկ ներ իմաստով կառավարումը փնտեսավարման մեխանիզմի ենթահամակարգ է: Կառավարման ենթահամակարգը ներառում է արդադրության կառավարման ձևերն ու մեթոդները, կառավարման կազմակերպական կառուցվածքը, փնտեսական կապերի կազմակերպման ձևերը և այլն: Աշխաբանքի բաժանման խորացման հետևանքով արդադրության կառավարումը առանձնանում է որպես գործունեության ուրույն գետակ: Կառավարման անհրաժեշտությունը պայմանավորված է արդադրության գործընթացի հասարակական բնույթով: Կ. Մարքսը նշել է, որ ցանկացած հասարակական, համարեղ աշխաբանք կառավարվելու կարիք է զգում, որի շնորհիվ համաձայնեցվում է անհարական աշխաբողների գործունեությունը. «Եթե առանձին ջութակահար ինքն է կառավարում իրեն, ապա նվազախումբը դիրիժորի կարիք է զգում»:

Կառավարումը նոր նշանակություն ու բովանդակություն ձեռք բերեց բաժնեկիրական ընկերությունների առաջացման հետևանքով, որը հանգեցրեց կառավարման գործառույթի փարանջապմանը սեփականությունից: Այս գործընթացը հետքագայում բնութագրվեց որպես «կառավարչական հեղափոխություն», իսկ կառավարումն սպացավ «մենեօմենթ» զիրական անվանումը: Մենեօմենթը գրեական և գործնական գիրելիքների համակարգ է արդադրության կառավարման սկզբունքների, մեթոդների, եղանակների ու ձևերի մասին: Ժամանակակից շուկայի պայմաններու մենեօմենթը համարվում է արդադրության միկրոլարգավորման համակարգի կարևոր փարրը: Այդպիսին է նաև մարքեթինգը: Մարքեթինգը շուկայի հետքագրման ու նրա կազմակերպման, կարգավորման եղանակների ու ձևերի ամբողջությունն է: Մարքեթինգը զիրություն է շուկայավարության մասին:

Արդադրության կառավարումը բնութագրվում է որոշակի սկզբունքներով ու մեթոդներով: Կառավարման կարևոր սկզբունքներն են՝ նպագակառողպածությունը, ճկունությունը և օպերատիվությունը, դեմոկրատիայի և ցենտրալիզմի, միանձնյա և կողեզրական դեկավարման, ճյուղային և փարածքային կառավարման գործակումը: Արդադրության կառավարման գործընթացը հիմնված է վարչահրամայական, դրական կառավարման մեթոդների վրա: Կենդրուածված պլանային կառավարման համակարգին առավել բնորոշ էր կառավարման վարչահրամայական մեթոդը, իսկ շուկայական փնտեսավարման մեխանիզմն առավելապես հիմնված է կառավարման դրական կառավարման և սոցիալ-հոգեբանական մեթոդների կիրառության վրա:

Ժամանակակից շուկայական փնտեսավարման պայմաններում միկրոպնիտեսական կարգավորման մեխանիզմը դրսևորվում է ֆիրմայի գործունեության շուկայական և զիրակցական կարգավորման ձևերով: Շուկայական կարգավորման մեխանիզմն ունի փարերային բնույթ և հիմնված է պահանջարկի, առաջարկի, գնագոյացման և մրցակցության գործոնների վրա: Մակրոկարգավորման շուկայական մեխանիզմը գործակցում է զիրակցական կարգավորման հետ, որը դրսևորվում է ֆիրմայի դրական կառավարման մեջ: Միկրոպնիտեսական կարգավորմանը ֆիրմայի մակարդակով դրսևորվում է նրա ռազմավարության մշակմամբ, մենեօմենթի և մարքեթինգային գործունեությամբ: Ֆիրմայի գործունեության

---

---

կարգավորումն իրականացվում է նաև պետական կարգավորման համակարգի միջոցով, որն արդահայրվում է պետությունից փրամադրվող ֆինանսական օգնությամբ, դրա համար հարկերի գանձմամբ, պետական հակամոնոպոլային քաղաքականությամբ, գների պետական կարգավորմամբ և այլն:

## 14.9. ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՌԻՄԿԸ ԵՎ ԱՊԱՇՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ոիսկը լայն հասկացություն է և բնորոշ է մարդկային գործունեության բազմաթիվ բնագավառներին, այդ թվում և ծեռնարկագրիրական գործունեությանը, որն ընդունված է անվանել **փնտեսական ռիսկ**: Ոիսկի գործոնն ավելի է կարևորվում շուկայական գործեսության պայմաններում, որպես գործեսական զարգացմանն առավելապես բնորոշ է անորոշությունը, որը բխում է բոլոր գործեսավարողների գործունեության ազարությունից: Ոիսկը գործեսական զարգացման գործընթացի և հետևանքների անորոշությունն ու անկանխարեւությունն է, վենաս և կորուսփներ ունենալու հնարավորության հավանականության ասպարանը: Ոիսկ ասելով հասկանում ենք այն իրավիճակը, երբ իմանալով յուրաքանչյուր մասնակի երևոյթի հավանականության ելքը, այնուամենայնիվ, հնարավոր չէ ճշգրիտ կանխարեւել վերջնական արդյունքը: Տնտեսական ռիսկը կապարած ներդրումներն են կամ է ունեցած ակդիվները կորցնելու հնարավոր վիրանգի ասպիրանը:

Տնտեսական ռիսկը շուկայական գործեսության պայմաններում կապված է գլխավորապես շուկայի անորոշության, շուկայական գործեկապվությանը ոչ լրիվ գիրապետելու, շուկայական իրավիճակի անկայունության և դրա վրա ազդող ներքին ու արդարին գործոնների առկայության հետ: Անորոշությունը, ի գործերություն ռիսկի, առաջանում է շուկայական իրավիճակի այն փոփոխություններից ու իրադարձություններից, որոնք բավականին դժվար է կանխարեւել և որոնց հավանականությունը հնարավոր չէ գնահատել: Տնտեսական ռիսկի և անորոշության հիմնախնդիրը գործեսագիրության մեջ երկար ժամանակ թերագնահապելի է: Դասական գործեսագիրությունը գրնում էր, որ շուկայական գործեսությունը ինքնակարգավորվող համակարգ է և անդեւ ռիսկը, այն համարում էր արդարին գործոն: XX դարի առաջին կեսի նորդասական գործեսագիրության շապ ներկայացնություններ կամածանքով էին վերաբերվում գործունեության այն բոլոր ոլորդներին, որպես ռիսկի գործոնը և անորոշությունը ակնհայտ դեր էին խաղում: Մասնավորապես արժեթղթերի շուկայում բորսայական գործունեությունը նմանեցնում էին թղթախաղի կամ էլ վիճակախաղի հետ: Եվ միայն 1940-ական թթ. գործեսական ռիսկը և անորոշությունը ընդունվեց որպես ծեռնարկագրիրական գործունեության անհուսափելի ուղեկից և լուրջ հետազոտություններ կապարվեցին այդ ուղղությամբ:

Ամերիկացի գործեսագերներ Ջ. Նեյմանը և Օ. Մորգենշփեյնը իրագրակեցին «Խաղերի գետական գործեսությունը և գործեսական վարքագիծը» գիրքը, որպես ֆիրմայի շահույթի և անհապի օգտակարության մաքսիմալացման հիմնախնդիրը հետազոտվում է ռիսկի գործոնի և անորոշության հաշվառմամբ: «Նեյման-Մոր-

---

գենշտեյնի» գետավայան համաձայն անհարք ընդունում է միայն այն այլընդուները, որոնք բարիքների առավելագույն օգտակարություն են ապահովում, իսկ ֆիրմաներն ընդունում են այն այլընդուները, որոնք ներդրումներից առավելագույն շահույթ սպանալու ավելի մեծ հավանականություն են գրալիս:

Տնտեսական ռիսկի և անորոշության հիմնախնդրի հետազուրման գործում մեծ ներդրում են ունեցել ամերիկացի գնդեսագետներ Կ. Էրրոուն, Գ. Մարկովիցը, Ֆ. Նայփը և ուրիշներ, որոնք տնտեսական ռիսկը համարեցին ձեռնարկադիրական գործունեության հիմնական հարկանիշներից մեկը: Ռիսկի գործուն ավելի է կարևորվում փոխարվական կամ վարկային հարաբերությունների պայմաններում, քանի որ ձեռներեցը պետք է ոչ միայն իր սեփական կապիֆալի եկամֆարերությունն ապահովի, այլև դոկումենտով հանդերձ հետ վերադարձնի փոխառու կապիֆալը:

Վյափիսով, տնտեսական ռիսկը վնասներ կրելու կամ էլ նախագետաված եկամուգները չսպանալու հավանականությունն է: Տնտեսական գործունեության ոլորտում ռիսկը կարարում է վերլուծական, նորարարական և խթանիչ գործառույթներ: Վերլուծական գործառույթը արդարացնում է նրանով, որ ռիսկի առկայության պայմաններում ձեռներեցը որոշակի գնդեսական վերլուծություն է կարարում և ճգփում գպնել, ընդունել առավել շահավետ և նվազագույն ռիսկային լուծումներ: Նորարարական գործառույթը արդարացնում է նրանով, որ գնդեսական ռիսկը փոքրացնելու համար ձեռներեցն ընդունում է ոչ ավանդական որոշումներ (վերջինս իր հերթին կարող է ռիսկի նոր աղբյուր լինել): Խթանիչ գործառույթը դրսերվում է նրանով, որ նպաստում է ձեռներեցի սրեղծագործական ունակությունների զարգացմանն ու հարսկացմանը, ուստիրսների խնայողաբար և առավել արդյունավետ օգտագործմանը:

Տարբերվում են գնդեսական ռիսկերի գործեր գետակներ, որոնցից հիմնականներն են՝ արդարականը, առևտրայինը, ֆինանսականը, բանկայինը, ներդրումայինը: Արդարական ռիսկը կապված է արդարության ծավալների, նյութական ու աշխատանքային ծախսերի փոփոխության, խորան, անորակ արդարանքի առաջացման, գարերային աղեքների հետևանքով ունեցվածքի կորսարի, արդարական վթարների, չնախագետաված պարապուրդների, ունեցվածքի գողացման և այնի հետ: Առևտրային ռիսկը առաջանում է արդարված ապրանքների իրացման և ելակերպային ռեսուրսների զննան գործընթացում, որոնք կապված են զների ոչ շահավետ փոփոխության, շրջանառության ժամանակ ապրանքների կորսարի, շրջանառության ծախսերի չնախագետաված բարձրացման հետ: Ֆինանսական ռիսկը կապված է անվճարունակ, անբարեխիղճ գործընկեր-ֆիրմաների հետ, արժույթի և արժեթղթերի կուրսի անբարենպաստ փոփոխությունների հետ: Բանկային ռիսկը կապված է վրամադրված վարկերը հետ չսպանալու, ներդրված ավանդներն ու դեպոզիտները կորցնելու, դոկումենտույթի չկանխագետաված փոփոխությունների հետ: Ներդրումային ռիսկը արդարացնում է կարարված կապիֆալ ներդրումները ժամանակին և նախագետաված չափերով չհարդուցվելու, սպասվելիք արդյունքները չսպանալու (հարկապես գիրահերազգործական, երկրարանական-հետախուզական ոլորտում, գյուղագրնադեսության մեջ), բարձր արժեգրկման հետևանքով դրանք արժեգրկվելու ձևերով:

---

**Տնտեսական ռիսկի մեծությունը** փողի այն քանակն է, որը կորսվել է կամ կարող է կորսվել ռիսկային գնդեսական գործունեության ընթացքում: Այս դեպքում անհրաժեշտություն է առաջանում գնահատել ռիսկի մեծությունը: Ռիսկը գնահատելու, չափելու համար կիրառվում են գորբեր մեթոդներ, ինչպիսիք են՝ վիճակագրական, փորձագիրական, հաշվարկա-վերլուծական մեթոդները: Վիճակագրական մեթոդի էությունն այն է, որ ուսումնասիրվում են անցյալում դեղի ունեցած նույնագիր կորուսպները և դրա հիման վրա արկարկման (էքսպույացիոն) եղանակով կանխարեսումներ են կապարում ապագայի համար: Փորձագիրական մեթոդի դեպքում հիմք են ընդունվում այդ դորքի մասնագետների և փորձառու ձեռներեցների կարծիքները: Հաշվարկա-վերլուծական մեթոդը հիմնված է գնդեսա-մաթեմատիկական հաշվարկների, գնդեսական վերլուծության, ծրագրավորման և գրաֆիկական եղանակների վրա:

Տնտեսավարման պրակտիկայում կիրառվում են գնդեսական կամ ձեռնարկագիրական ռիսկի մեղմացման և դրանից կորուսպները փոքրացնելու այնպիսի հիմնական ուղիներ ու եղանակներ, ինչպիսիք են ապահովագրությունը, ռիսկային ծրագրերի մշակման մեջ փորձառու մասնագետների և խորիրդագուների ներգրավումը, հարակից հիմնախնդիրների խորը վերլուծությունը, միջոցների պահեստավորումը (ռեզերվացումը) չնախարեսաված ծախսերը ծածկելու համար, շուկայական իրավիճակի զարգացման միջումների կանխարեսումը, դեղեկագրվության հավաքագրումն ու մշակումը:

**Ապահովագրությունը** գնդեսական ռիսկի փոքրացման ավանդական եղանակն է: Ապահովագրությունը մի գործընթաց է, որը ապահովագրվողին հնարավորություն է գրախս մեծ կորուսպների ռիսկը փոխանակել անհամեմատ փոքրով: Այլ կերպ ասած՝ գնդեսավարողները գոհարերում են իրենց ընթացիկ սպառնան կամ էլ եկանքի մի մասը, որպեսզի խուսափեն ապագայի ավելի մեծ հավանական կորուսպներից: Որպես կանոն, ռիսկի ուղղակի ապահովագրումը իրականացվում է ապահովագրական ձեռներեցությամբ գրադադար կազմակերպությունների կողմից: Ռիսկի ապահովագրությունը կապարվում է ոչ միայն ապահովագրական ընկերությունների, կազմակերպությունների կողմից, այլև գործունեության ռիսկային ոլորտներում գործող գնդեսավարողների կողմից իրականացվող այնպիսի միջոցառումների շնորհիվ, ինչպիսիք են ռիսկերի միավորումը, ռիսկի բաշխումը և դիվերսիֆիկացումը:

Ապահովագրվածության հավելանշից ելնելով գորբերում են ապահովագրվող, չափահովագրվող և ընդունելի ռիսկեր: **Ապահովագրվող ռիսկը** նշանակում է, որ ապահովագրական ընկերությունը վճարում է ձեռնարկագիրոջը ռիսկի համար, որի չափը կարող է հավասար լինել հնարավոր վնասին: Այս դեպքում ապահովագրման արժեքը, որը ներառվում է ֆիրմայի ծախսերի մեջ, չի գերազանցում ապահովագրական վճարին, որը դրվում է ապահովագրական ընկերության կողմից: Ապահովագրվող ռիսկի մյուս գորբերակն այն է, որ ապահովագրվողը ձգում է ամբողջովին փոխարքուցել հնարավոր ֆինանսական կորուսպները:

**Չափահովագրվող ռիսկը** հնարավոր կորուսպների ռիսկն է: Ներկայումս չափահովագրվող ռիսկը հարաբերական նշանակություն ունի, որովհետև այն ըստ էության «ապահովագրվում է» ֆյուչերսային գործարքների, հեջավորման և

---

---

շուկայական գործարքների այլ դրսակներով:

Ընդունելի ռիսկը սեփական կապիտալի մեծության և առավելագույն հնարավոր կորուսկների այնպիսի հարաբերակցություն է, որի թույլագրելի մեծությունը փոքր չէ 3-ից:

Գործնականում դնդանական ռիսկը փոքրացնելու կամ այն ապահովագրելու եղանակներից է **ռիսկի միավորումը**, որի դեպքում ռիսկը բաժանվում է մի քանի մասնակիցների միջև և, հետևաբար, դնդանական անհաջողության դեպքում կորուսկները, յուրաքանչյուրին բաժին ընկնող ռիսկի մեծությունը փոքրանում է: Այս մեթոդի հիման վրա ձևավորվում են գարբեր կուեկտիվ հիմնադրամներ, փոխօգնության դրամարկեր: Սովորական ապահովագրական ընկերությունների գործունեությունը նույնպես հիմնված է ռիսկի միավորման եղանակի վրա, քանի որ մեծ քանակության դնդանավարողներ, մուծելով ապահովագրական վճարներ, միավորում են ռիսկը, իսկ ապահովագրական դեպքերը ոչ մեծ փոկու են կազմում և փոխհագուցվում են ընկերության ընդհանուր դրամարկելից:

**Ռիսկի բաշխումն** ապահովագրության մի եղանակ է, որը կիրառվում է հավանական խոշոր վնասի դեպքում, եթե մեկ ապահովագրական ընկերություն ամբողջովին ընդունակ չէ իր վրա վերցնել ապահովագրական պարբավորությունները: Օրինակ՝ ֆիրման հրդեհից ապահովագրելու համար չի կարող այդ մեծ ծավալի ռիսկը միավորել, ուստի դիմում է խոշոր ապահովագրական ասոցիացիայի, և ռիսկը բաշխվում է նրա կազմի մեջ մինող ընկերությունների միջև:

**Ֆիվերսիֆիկացիան** ռիսկի ապահովագրության կամ փոքրացման այնպիսի եղանակ է, որի դեպքում դնդանավարող կազմակերպություններն իրենց ֆինանսական միջոցները ներդնում են գործունեության գարբեր ոլորներում, որպեսզի որևէ ոլորքում կրած կորուսկները հնարավորինս փոխհագուցեն այլ ոլորքներից: Վրասրացիան դիվերսիֆիկացման կամ բազմադեսակացման գարածված եղանակ է գարբեր բաժնեփիրական ընկերությունների բաժնեփուլում:

## **14.10. ՇԱՆՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ. ԴՐԱ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

Տնդանական գործության մեջ դնդանական ռեսուրսներից կամ արդարադարձության գործուներից սրացվող եկամուսներն ընդունված է անվանել **գործոնային եկամուսներ**: Վրասրացիան գործուների սեփականագրերը սրանում են եկամուսների իրենց բաժինը, որոնք դրսևորվում են որոշակի ձևերով: Առավել ընդհանուր մոփեցմամբ աշխարհանքային ռեսուրսների գործոնային եկամուսը աշխարհավարձն է, հողի և առհասարակ բնական ռեսուրսների գործոնային եկամուսը՝ ռենդան, կապիտալի գործոնային եկամուսը՝ փոկուր (որպես դրամական կապիտալի սեփականագրերի եկամուս), և շահույթը (որպես իրական կապիտալի սեփականագրերի եկամուս): Իսկ ձեռնարկագիրա-

---

կան ընդունակությունների գործոնային եկամուքը ձեռնարկագիրական եկամուքն է կամ ձեռնարկագիրական շահույթը: Սակայն իրական գնդեսական կյանքում, հավաքես ֆիրմաներում, դժվար է սահմանազագել այս գործոնային եկամուքների տեսակները, առավել ևս, որ դրանք հաճախ համագրեղվում են արդարանքի վաճառքից սպացվող եկամուքների մեջ: Այս բարդությունը կապված է ձեռնարկագիրական եկամուքը որոշելու հետ:

Ձեռնարկագիրական ընդունակությունը, որպես գնդեսական ռեսուրս կամ արդարացնելու գործոն, ունի իր յուրահագույկ վարձագրությունը, որն ընդունված է անվանել **ձեռնարկագիրական եկամուք:** Իրական գնդեսական կյանքում, գնդեսավարման պրակտիկայում, դժվար է առանձնացնել ձեռնարկագիրական եկամուքը, այնուհանդերձ, այն վերացական հասկացություն չէ: Ձեռնարկագիրական եկամուքն այն վարձագրությունն է, որը ձեռներեցն սպանում է գնդեսական ռեսուրսները միավորելու և օգգագործելու իր կազմակերպական աշխատանքի համար, այդ ռեսուրսներն օգգագործելուց հնարավոր վնասներ կրելու ռիսկի, գնդեսական նախաձեռնության, նորարարության, շուկայի մոնոպոլ գիրապետության համար: Տնտեսագիրության տեսության մեջ ընդունված է ձեռներեցի եկամուքը բաժանել երկու մասի, որոնք նորմալ շահույթի և գնդեսական շահույթի հիմքն են համարվում:

Ձեռնարկագիրական շահույթը ըստ էության ձեռներեցության ընդունակության գործոնային եկամուքն է, առանց որի ձեռնարկագիրական գործունեությունը անխնապ է դառնում: Ինչպես նշել է Յո. Շումանի «Առանց զարգացման չկա ձեռնարկագիրական շահույթ, իսկ առանց վերջինիս չի լինում զարգացում»: Ֆիրմայի եկամուքներից ձեռնարկագիրական շահույթի սահմանազարման բարդությունը պայմանավորված է ձեռնարկագիրական գործունեության հերթական աշխատանքություններով.

- ա) ձեռնարկագիրական ընդունակությունը որպես գործոն, ի պարբերություն կապիրալի և հողի, տեսանելի ու շոշափելի չէ,
- բ) ձեռնարկագիրական շահույթը չենք կարող մեկնարանել որպես յուրահագույկ հավասարակշռված գին, ինչպես որ դա կարարվում էր աշխատանքի, կապիրալի և հողի շուկաների պարագայում:

Այդ պատճառով գնդեսագետները ձգում են շահույթի բնույթը բացագրել յուրագիպ ձևով՝ առանձնացնելով երկու հիմնական տեսակերպ<sup>1</sup>.

- ա) շահույթը մեկնարանվում է որպես ձեռներեցության ընդունակության գործոնի սահմանային արդյունք կամ եկամուք,
- բ) շահույթը ներկայացվում է որպես մնացորդային եկամուք, որը մնում է արդարության մյուս գործոնները փոխադրությունը հետո:

Պառաջին տեսակերպի ներկայացուցիչները (մասնավորապես անզիացի գնդեսագետ Ալ. Մարշալը) ձեռնարկագիրական ընդունակության գործոնային եկամուք են համարում նորմալ շահույթը: Դրան հակադրվելով՝ շվեդ գնդեսագետը Կ. Վիկսելլը գիտում է, որ արդարացնելու գործոնը՝ ձեռներեցությունը, ճշգրիք քանակական որոշման ենթակա չէ: Անզիացի գնդեսագետ Է. Էջուրուրի կարծիքով ձեռներեցությունը չի համապարասիանում միագրիպու-

<sup>1</sup> Ст. История экономических учений, под ред. В.АВТОНОМОВА, М., 2001, т.2 299.

թյան չափանիշին, հեգլսաբար հնարավորություն չի պալիս ձեռներեցության գործոնի նկարմամբ կիրառել սահմանային արդադրողականության սկզբունքը:

Երկրորդ փեսակեպի ներկայացուցիչները զույգ շահույթը դիմում են որպես մնացորդային եկամուտ, որն ավելցուկ է այլընդունքային ծախսերի նկապմամբ, և մնացորդ է, որն առաջանում է իրական արդադրական ծախսերը վճարելուց հետո: Այս եկամուտը ձեռներեցն սպանում է իր յուրահապուկ ձեռնարկագիրական գործառույթը կապարելու համար: Վերջինս իր բնույթով դարձերվում է ռեսուրսների սեփականագիրոց գործառույթներից, որը եկամուտ է սպանում գրուստի (ռենդրայի) գիտաքով և մենենցերի կառավարչական գործառույթից, որի համար եկամուտը նա հաշվարկում է աշխատավարձի ձևով: Այս գրեսակեպի համաձայն կապիտալի գործոնային եկամուտը գրուստի համապատասխան շահույթը: Այս իմաստով ձեռնարկագիրական շահույթը զույգ կամ մաքուր շահույթն է կամ նորմալ շահույթը գերազանցող դնդնեական շահույթը:

Զետնարկապիրական կամ դնդեսական շահույթը, ըստ փարբեր հեղինակների դնդեսակեպների, կապված է ձեռնարկապիրական գործունեության որևէ հարկանիշի հետ: Ըստ անզիացի դնդեսագետի Ռ.Կանդիլյոնի, ամերիկացիներ Հ.Թյուննի, Ֆ.Նայքի՝ ձեռնարկապիրությունը ոխակի և անորոշության բնոյի կրումն է, որը պետք է փոխհարուցվի շահույթով: Ըստ Փրանսիացի դնդեսագետի Ժ.-Բ.Սեյի՝ ձեռնարկապիրությունը արփադրության գործոնների կոռոդինացիան է, իսկ շահույթը՝ դրա արդյունքը: Ըստ ավստրիացի դնդեսագետի Յո.Շումանիպերի՝ ձեռնարկապիրական շահույթը նորարարության արդյունք է, իսկ ավստրիացի գիտնական Ի.Կիրցները համարում է, որ ձեռնարկապիրական շահույթը սպեկուլարիկ գործարքների արդյունքում ձևավորված եկամուտն է:

Շահույթ՝ որպես եկամուսք, դիվարկվում է լայն և նեղ իմաստներով: Լայն իմաստով այն համախառն եկամբի՝ ծախսերին գերազանցող մասն է: Շահույթը ըստ էության գործոնային գույք եկամուսքների ամբողջությունն է, քանի որ ֆիրմայի արդարանքի իրացումից սպացվող եկամուսքը գերազանցապես ծախսվում է արդարության գործոնների դիմաց վճարելու համար: Այն դեպքում, եթե ֆիրման օգտագործում է իր սեփական գննութեալկան ռեսուրսները, ապա դրանից սպացվող եկամուսքն ամբողջությամբ ներկայանում է որպես ֆիրմայի շահույթ: Նեղ իմաստով շահույթը իրական կապիկալից, որպես արդարության գործոնի, սպացվող եկամուսքն է: Եթե խոսվում է ֆիրմայի կամ ձեռնարկության շահույթի մասին, ապա շահույթը հասկացվում է լայն իմաստով, որը կոմպլեքսային ցուցանիշ է և արդացոլում է ֆիրմայի գննութեալկան գործունեության արդյունքները:

Ծահույթի վնասական բռվանդակությունը, դերն ու նշանակությունը արդարացնելու մասին պատճենագիրը պահպանվում է ՀՀ օրենսդրության մեջ՝ առաջարկված կազմությունների միջոցով (հաշվարկային, խթանման, բաշխման և ֆինանսական):

**Նաշվարկային գործառվայրային** է ուղյունն այն է, որ շահույթը ֆիրմայի գործունեության պնդեսական արդյունավետությունն ու եկամֆարերությունը զնահափելու կարևոր ցուցանիշներից մեկն է համարվում: Նաշվարկային գործառվայրունքը արդարադարձում է շահույթի զանգվածի և նորմայի ցուցանիշներով: Շա-

---

հույյթի զանգվածը նրա բացարձարկ մեծությունն է, որը որոշելու համար ֆիրմայի համախառն հասույթից հանում ենք համախառն ծախսերը: Միավոր արդարանքից սրացվող շահույթը որոշելու համար շուկայական գնից հանում ենք միջին ծախսերը: Շահույթի զանգվածը դեռևս ամբողջական պարկերացում չի տալիս ֆիրմայի գործունեության փնտեսական արդյունավետության նասին, որովհետև պետք է հաշվի առնվի նաև, թե շահույթը ինչպիսի ռեսուրսային ծախսերով ու ջանքերով է սրացվել: Դրա համար անհրաժեշտ է հաշվարկել շահույթի նորման կամ շահութաբերության մակարդակը և սրացված շահույթը չափակցել կապարված ծախսերի հերթ: Շահույթի նորման կամ ֆիրմայի շահութաբերությունը գնահապես է երկու եղանակով: Մի դեպքում շահույթը հարաբերում ենք ներդրված կապիտալի արժեքին, որը ցույց է տալիս, թե ներդրված յուրաքանչյուր միավոր կապիտալից որքան շահույթը է սրացվում, կամ ավանսավորված կապիտալը տարեկան քանի դոկումենտ է մեծանում նոր սպեշալիզացած արժեքի հաշվին: Մյուս դեպքում շահույթի նորման որոշելու համար շահույթը հարաբերում ենք կապարված ծախսերին, որը բնութագրում է ֆիրմայի ընթացիկ շահութաբերությունն ըստ փաստացի ծախսերի և ըստ արդարապեսակների:

Չեզոնարկապիրական գործունեության նպատակը շահույթի մաքսիմալացումն է, որի ուղիներն են՝ վաճառքի կամ իրացման ծավալների մեծացումը, արդարաբերության ծախսերի կրճագումը, շուկայական գնի բարձրացումը, աշխատանքի արդարադարձականության բարձրացումը, կապիտալի փնտեսական շրջապատճենի արագացումը:

**Խթանման գործառության** էությունն այն է, որ շահույթ սրանալու ձգումը ինքնին շահագրգում է ծերներեցին դրա առավելագույն մակարդակն ապահովելու համար: Այս առնչությամբ Կ.Մարքսը նշում է, որ շահույթի բացակայության դեպքում կապիտալը գրնվում է մերյալ վիճակում, 5% շահութաբերության պարագայում կապիտալը կենդանության նշաններ է ցույց տալիս, 10%-ի դեպքում աշխուժանում է, 20%-ի դեպքում դառնում է հանդուգն, իսկ 300%-ի դեպքում կապիտալը ոչ մի ոճիրի առջև կանգ չի առնում, միայն թե հասնի դրան: Շահույթի շահադրիչ գործառությունն արդարայի պատճենը է նրանով, որ ոչ կապարյալ մրցակցության պայմաններում, եթե կարևորվում է ոչ գնային մրցակցությունը, յուրաքանչյուր ֆիրմա ձգում է կապարելագործել արդարաբերության վեհանիկան ու վեհանողական, դրանով իսկ կրճագել արդարաբերության ծախսերն ու մեծացնել շահույթը: Այս իմաստով առավելագույն շահույթի ձգումը նպաստում է գիրաբեկնիկական առաջընթացին և երկրի փնտեսական զարգացմանը: Ժամանակակից փնտեսագիրության մեջ երթեմն որպես ֆիրմայի գլխավոր նպարակ է ներկայացվում ոչ թե շահույթի, այլ վաճառքների կամ իրացման ծավալների մաքսիմալացումը, որը մասշտարի էֆեկտի հիման վրա, ի վերջո, դարձյալ հանգեցնում է շահույթի զանգվածի մեծացմանը:

**Բաշխիչ գործառության** էությունը արդարայի պատճենը է նրանով, որ շահույթի նորմաների ճյուղային բարբերությունները և շահույթի միջին նորմայի ձևավորման ընդհանուր միջուկը հանգեցնում է կապիտալների միջնուղային դեղաբաշխմանը: Ցուրաքանչյուրը ձգում է իր կապիտալը ներդնել բարձր շահութաբերությամբ ոլորդներում, և այդ միջնուղային մրցակցության արդյունքում

---

Ճանաչում է շահույթի միջին կամ հասարակական նորման: Շահույթի բաշխիչ գործառույթը արգահայտվում է նաև նրանով, որ դրա շնորհիվ գեղի է ունենում ռեսուրսների արդյունավետ բաշխման ընդունությունը դրանց այլընդունքային կիրառման եղանակների միջև:

**Ֆինանսավորման** կամ **կրաքակման** գործառության համաձայն շահույթը պետք է հնարավորություն դա հետագայում ընդլայնելու ֆիրմայի գործունեությունը՝ արդարության չափագծերը մեծացնելու կամ ընդլայնված վերաբարդություն իրականացնելու համար: Սա նշանակում է, որ շահույթից պետք է կապարվեն որոշակի խնայողություններ, կուտակումներ, այսինքն՝ դրա մի մասը կապիտալացվելով պետք է կրկին ներդրվի արդարության մեջ՝ լրացնեցիչ գործուների ներգրավման և պեխնիկական վերազինման նպարակով: Շահույթի հաշվին գործող կապիտալի չափերի մեծացումը շահույթի ծավալն ավելացնելու նյութական նախադրյալ է: Այլ կերպ ասած՝ շահույթը պետք է նպաստի ֆիրմայի գործունեության ինքնաֆինանսավորմանը, որը շուկայական դրվեսավարման կարևոր սկզբունքներից է:

#### **14.11. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԱՌՈՒՅԹԸ ԵՎ ԴՐԱ ԱՂԲՅՈՒՄՆԵՐԸ**

Շահույթը բանակալան իմաստով ֆիրմայի համախառն եկամփի և համախառն ծախքերի գարբերությունն է: Նամախառն եկամուքը ֆիրմայի սպացած դրամական հասույթն է, որն առաջանում է ինչպես պարրասպի արդարանքի և ծառայությունների իրացումից, այնպես էլ արքայիրացումային գործունեությունից՝ դեպոզիտների դիմաց սպացվող գորկուներից, շահաբաժններից, վարձավճարներից, սպացվող գորգանքներից, իիմնական միջոցների լուծարման գումարներից և այլն: Շահույթը հաշվարկելու առաջին բաղադրիչ՝ համախառն եկամուքի որոշման ժամանակ էական բարդություն չի առաջանում, մինչդեռ մյուս բաղադրիչ՝ համախառն ծախսերի հետ կապված որոշակի դժվարություններ առաջանում են, քանի որ դրանք դրսւուրվում են գարբեր ձևերով:

Ծահույթը որոշելով համար անիրածեցիր է ֆիրմայի վնաբեսական ծախսերի մեջ սահմանազարել արդարին և ներքին ծախսերը, ըստ այդմ էլ ձևավորվում է հաշվապահական և վնաբեսական շահույթը: Արդարին ծախսերը բացահայր, ակնհայր ծախսեր են, որոնց համար ֆիրման վճարում է մարդակարարներին, որոնք և ձևակերպվում են հաշվապահական փաստաթյութերում: Ներքին ծախսերը թաքնված, քողարկված ծախսերն են. դրանք կապված են ֆիրմայի սեփական ռեսուրսների օգբագործման հետ, որոնց դիմաց ֆիրման չի վճարում և որպես ծախս՝ հաշվապահական ձևակերպում չեն սպանում:

Սակայն վնասագիրության վեառությունը գփնում է, որ վնասական ծախսերի մեջ պետք է մինեն արդադրության բոլոր գործոնների ծառայությունների արժեքը, անկախ նրանից՝ դրանք զնվել են շուկայից, և ֆիրման վճարել է դրանց դիմաց, թե՛ ֆիրմայի սեփականությունն են, և դրանց դիմաց չի վճարվել: Օգրագրութելով սեփական ռեասուրսները (սեփական կապիտալը, հողը, ձեռներության ընդունակությունները, աշխատանքը)` ֆիրման կամ դրանց սեփականագրերերը բացահայտ ծախսեր չեն կրում, և դրանք հանդես են զայխ որպես

---

զվարված կամ քողարկված ծախսեր: Սակայն, ըստ Էության, դրանք նույնպես ծախսեր են և համարվում են որպես այլընդունակային ծախսեր կամ չօգտագործված, բաց թողնված հնարավորությունների ծախսեր: Այլ կերպ ասած՝ եթե ֆիրման կամ ձեռներեցը իր սեփական ռեսուրսներուն օգտագործեր այլընդունակային փարբերականերով (կապիկալը դրվեր բանկում, հիմնական միջոցները փրկեն վարձակալության), ապա հնարավորություն կունենար եկամուտ սրանալ փոկոսի, վարձավճարի փեսքով: Բայց քանի որ այդպիսի այլընդունակային եկամուտներ սրանալու հնարավորությունները բաց են թողնվել, ապա չսրացված եկամուտները հարաբերական իմաստով ծախս են համարվում և պեսք է ներառվեն դնդեսական ծախսերի մեջ ու հաշվի առնվեն գույք շահույթը հաշվարկելիս:

Տնտեսական ծախսերի այս փարագեսակներից կախված՝ ժամանակակից դնդեսագիրության մեջ փարբերվում են հաշվապահական շահույթ, նորմալ շահույթ, դնդեսական շահույթ հասկացությունները: Հաշվապահական շահույթը ֆիրմայի այն եկամուտն է, որը գոյանում է համախառն եկամուտից արդարին ակնհայր ծախսերը հանելուց հետո: Տնտեսական շահույթն այն եկամուտն է, որը գոյանում է համախառն եկամուտից հանելով ոչ միայն արդարին, այլև ներքին ծախսերը: Նորմալ շահույթը ժամանակակից դնդեսագիրության մեջ ներկայացվում է որպես դնդեսական ծախսերի փարբ, այն նվազագույն եկամուտը, որը ֆիրման կարող էր սրանալ, եթե իր սեփական ռեսուրսներուն օգտագործեր այլընդունակային փարբերակներով: Նորմալ շահույթը կամ, այսպես կոչված գոյական շահույթը այն նվազագույն եկամուտն է, որն ապահովում է ձեռներեցի գրծունեությունը դրվալ ոլորգում: Այն ձեռներեցի երաշխավորված եկամուտն է: Զրոյական շահույթ է կոչվում ոչ թե այն պարբառով, որ ձեռներեցը կամ ֆիրման շահույթը չի սրանում, այլ այն, որ շահույթն այնքան է, որ առնվազն այդքան եկամուտ կարացվեր, եթե սեփական ռեսուրսները կիրառվեին այլընդունակային փարբերակով, մասնավորապես, կապիկալը դրվեր բանկում և դոկու թերերը: Առավելագույն շահույթի ծգրումը նշանակում է հենց նորմալ շահույթը գերազանցող եկամուտի կամ գերշահույթի սրացումը, որն էլ հենց դնդեսական շահույթն է:

Տնտեսական ծախսերի, հաշվապահական, նորմալ և դնդեսական շահույթների փոխկապվածությունը կարելի է ներկայացնել ֆիրմայի համախառն եկամուտի կառուցվածքի գծապարկերով (գծապարկեր 14.2)<sup>2</sup>:


Տնտեսական շահույթն ըստ Էության նորմալ շահույթը գերազանցող եկամուտն է կամ գերշահույթը, որը ձեռներեցը յուրացնում է որպես ձեռնարկագիրական եկամուտ: Տնտեսական շահույթը ձեռներեցի գույք կամ մաքուր շահույթն է, որը գոյանում է սեփական կապիկալի դիմաց փոկորս հանելուց հետո:

Տնտեսական շահույթի աղբյուրները պարզաբանելու համար հարկավոր է ձեռներեցի գրծունեությունը փարբերել մենեջերի, իրավաբանի, ինժեների և ֆիրմայի այլ մասնագետների գործունեությունից, որոնք իրենց աշխատանքի դիմաց աշխատավարձ են սրանում: Եթե նորմալ շահույթը ձեռներեցի երաշխավորված եկամուտն է կամ նրա յուրահարկուկ աշխատավարձը, ապա դնդեսա-

<sup>2</sup> Стру Экономическая теория, под ред. Н.И.Базылева. Минск, 1998, № 238:

կան շահույթը հանդես է գալիս որպես ձեռներեցության ընդունակության գործոնային եկամուտ և այլ կերպ կոչվում է նաև ձեռնարկագիրական շահույթ:

### ՖԻՐՄԱՅԻ ՇԱՄԱՆԱՌԻ ԵԿԱՄՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



**¶ 1<sup>3</sup> ձ ա 3 ՛ Շ » 14.2.**

Տնտեսական շահույթի առաջացման աղբյուրները բացահայտելու համար անհրաժեշտ է վնասատությունը դիմարկել կայուն (սպաֆիկ) և շարժման (դիմամիկ) վիճակներում: **Տնտեսության սպաֆիկ (կայուն) վիճակը** բնութագրվում է նրանով, որ գոյություն ունեն ազատ մրցակցություն, կապիտալի ազատ միջուղային փեղաշարժեր, փեղեկաբություն սպանալու մարքելիություն, արդարության փեխնիկագրեխնողիքական մակարդակի կայունություն, սպառողների պահանջմունքների և նախասիրությունների գրեթե անփոփոխ վիճակ: Այլ կերպ ասած՝ սպաֆիկ վնասատությունը միանձամայն կանխագետների ու ենթադրելի է, և դրա վնասական անորոշությունն ու ռիսկը նվազագույնի են հասցված: Նման պայմաններում վնասական շահույթը վերանում է, և ձեռներեցը կառավարչական աշխատանքի դիմաց պարզապես աշխատավարձ է սպառում, որովհետո կագրարում է այն աշխատանքները, ինչ որ մյուսները:

**Տնտեսության դիմամիկ** (շարժման) վիճակը բնութագրվում է շուկայական պահանջարկի ու առաջարկի մեծությունը որոշող գործոնների և շուկայական իրավիճակի անընդհանուր փոփոխությամբ, վնասական անորոշության և ռիսկի գործոնի ուղեկցությամբ, հետևաբար այս պայմաններում է, որ պեզք է դրսերվեն ձեռներեցության ընդունակությունները: Ոչ կագրայալ մրցակցության պայմաններում սպացվող լրացնության կամուրջը կամուրջը ուղարկում է նորմալ շահույթը, վերագրվում է հենց ձեռներեցի յուրահագույկ ընդունակություն-

---

ների գործադրմանը: Այլ կերպ ասած՝ փնտեսական շահույթը դրսևորվում է հենց շարժնթաց փնտեսության պայմաններում, որքեզ ձեռներեցն այնպիսի գործունեություն է ծավալում, որն առանձնահագույկ է, բարբերվում է մյուսների գործունեություններից, որն էլ նրան ձեռնարկագրիական շահույթ սրանալու հնարավորություն է ընձեռում: Վյսպիտով, կարելի է ասել, որ փնտեսական շահույթը ձեռներեցի եկամուգի մի մասն է: Ձեռներեցը՝ որպես արդադրության կազմակերպիչ, դրա դիմաց աշխատավարձ է սրանում: Եթե նա դպյակ ֆիրմայում ունի ներդրված կապիտալ, ապա եկամուգ է սրանում գոլոսի, շահարաժնի գերազանցությունը: Իսկ եթե նա կարողանում է շուկայի անորոշության պայմաններում լրացնել եկամուգ բերել ֆիրմային, ապա դա կիամարվի ձեռներեցի վասրակը կամ ձեռնարկագրիական շահույթը: Շուկայի անորոշության և բարձր փնտեսական ռիսկի պայմաններում շապ է կարևորվում ձեռներեցի գործունեությունը, որն իր մեջ ամփոփում է արդադրության կազմակերպիչ, կառավարչի, առևտրականի, շուկայագետի, ֆինանսիստի, մյուսների հավկանիշները, հավկանիշներ, որոնցով օժգված են կապիտալի բոլոր սեփականագրերերը, հեքուարար գերադասելի է ունենալ նման կարգի մի կառավարչի, որը կկարողանա կողմնորոշվել շուկայական անորոշության մեջ և «փնտեսական նավը» անվնաս ու անհրաժեշտ «ավարով» կամ եկամբով դուրս կը երի ալեկոն օվկիանոսից:

Տնտեսական զարգացման մեջ ձեռներեցի դերի նշանավոր դեսարաններից մեկը՝ Ի.Շումագերգերը, նշել է, որ փնտեսական շահույթը պայմանավորված է գլխավորակես ձեռներեցի նորարարությամբ և արդադրության գործուների նոր կոնքինացիայով, որոնք դրսևորվում են հեքուայլ կերպ:

- ա) նոր, սպառողներին դեռևս անհայր բարիքների սրեղծումը կամ եղածի որակական նոր հավկանիշներով բարբերակի սրեղծումը,
- բ) արդադրության նոր եղանակների ու մեթոդների ներդրումը,
- գ) իրացման նոր շուկաների ներթափանցումն ու յուրացումը,
- դ) հումքի և կիսաֆարբիկագների նոր աղբյուրների ձեռքբերումը,
- ե) շուկայական փոփոխակող իրավիճակներում ֆիրմայի մենաշնորհային դիրքի ապահովումը կամ մրցակից ֆիրմաների մենաշնորհային դիրքի հաղթահարումն ու վերացումը:

Փառ այսպիսի նորարարական հավկանիշների շնորհիվ է, որ ձեռնարկագրիական գործունեությունը հանդես է գալիս որպես արդադրության յուրահագույկ գործոն, իսկ փնտեսական շահույթը՝ որպես դրա արդյունք, որը դրսևորվում է շարժնթաց փնտեսության պայմաններում: Նորմալ շահույթը բնորոշ է կայուն փնտեսությանն ու ազադ մրցակցության շուկային: Սակայն կայուն փնտեսություն, որպես այդպիսին, իրականում գոյություն չունի, քանի որ այն միշտ գրնվում է զարգացման գործընթացում՝ փոփոխակում է բնակչությունը, առաջանում են նոր պահանջներ, բացահայտվում հումքի և էներգիայի նոր աղբյուրներ, զարգանում են գիրությունն ու գերինիկան, փնտեսական գեղեկագվությունը դառնում է դժվարամագքելի: Այլ կերպ ասած՝ ցանկացած շուկայական իրավիճակ բնորոշագրվում է անորոշությամբ և մենաշնորհացման վրանգներով: Տնտեսական ռիսկն էլ այդ անորոշության մեջ ներթափացելն է և շահելու կամ տանու տալու հարաբերակցությունը գնահատելու ունակությունը: Շուկայի անորոշությունը, փնտեսական ռիսկն ու մենաշնորհը հաղթահարելու

---

ընդունակությունն էլ հենց գնդեսական շահույթի աղբյուր է: Տնդեսական շահույթի առաջացումն ընդհանուր առմամբ պայմանավորված է հերքևալ հանգամանքներով.

- ա) գնդեսական շահույթը հագույց է ձեռներեցի կողմից չափահովագրված ռիսկերն իր վրա վերցնելու դիմաց,
- բ) գնդեսական շահույթը համարվում է որպես վարձահագույց՝ նորարարություններ ներդնողությամար,
- գ) գնդեսական շահույթի աղբյուր է նաև շուկայում մենաշնորհային դիրք նվաճելու գործունեությունը, որն ինքնին գերշահույթ սպանալու նախադրյալ է:

---

### **ԱՅՆ Ե՞՛ ԱՌ ՍՎ ՏՎ ԻՆ ԻՆ»Ռ**

1. Ի՞նչ է ձեռնարկագիրական գործունեությունը:
2. Ո՞վ է առաջին անգամ կարևորել «ձեռներեցության ընդունակություն» գործոնը:
3. Ինչպիսի՞ փոխկապվածություն ունի ձեռնարկագիրական գործունեության և գործարարության (բիզնեսի) միջև:
4. Որո՞նք են ձեռներեցի փնտեսական կերպարի բնորոշ գծերը:
5. Որո՞նք են ձեռնարկագիրական գործունեության փեսակները:
6. Որո՞նք են ձեռնարկագիրական գործունեության ձևերը:
7. Կարո՞ղ է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունը եկամուտ սպանալ:
8. Որո՞նք են ազար ձեռնարկագիրական գործունեության նախադրյալները:
9. Ի՞նչ է բաժնեգիրական ընկերությունը: Թվարկել դրա առավելությունները:
10. Որո՞նք են փոքր գործարարության (բիզնեսի) բնորոշ գծերը:
11. Ի՞նչ է հաշվապահական շահույթը:
12. Ի՞նչ է նորմալ կամ զրոյական շահույթը:
13. Որո՞նք են փնտեսական շահույթի աղբյուրները:
14. Ի՞նչ է ձեռնարկագիրական եկամուգը:
15. Ի՞նչ է փնտեսական ռիսկը:
16. Ի՞նչ եղանակներով է հնարավոր մեղմացնել փնտեսական ռիսկը:

### **ԹՉՈՒՅՑ Ի՞Յ ՏՎ Ե՞Մ օԱՌԱՆՇԾՎ»Ռ**

Ֆիրմայի նորդասական փեսությունը

Ֆիրմայի ինսպիրուցիոնալ  
փեսությունը

Ֆիրմա

Կազմակերպություն

Ձեռնարկություն

Անհար ձեռներեց

Գործընկերություն

Բաժնեգիրական ընկերություն  
(կրթագիրացիա)

Բազմագույնականի  
(դիվերսիֆիկացիա)

Տնտեսական ռիսկ

Ապահովագրություն

Տնտեսական շահույթ

Ձեռնարկագիրական շահույթ

Նորմալ, զրոյական շահույթ

Սահմանափակ պարասխանագրվությամբ ընկերություն

Տնտեսական ընկերակցություն

Լիակագրար փնտեսական ընկերակցություն

Կոմանդիգրային ընկերակցություն

Վրաստական կոռպերագիվ

Սպառողական կոռպերագիվ

Միաբարր ձեռնարկություն

Հասարակական և կրոնական  
կազմակերպություններ

Դիմադրամներ (Փոնդեր)

Կայուն և շարժմանտաց փնտեսություն



---

## ԳԼՈՒԽ 15

---

### ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԴԻՄՆԱԽՆԴԻՐԸ

#### 15.1. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԴԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Եկամուտների բաշխման հիմնախնդիրը կարևորվել է փնտեսագիրության գրեթե բոլոր ուղղությունների կողմից, քանի որ փնտեսագիրությունն ի սկզբանե, դասական բնորոշմամբ, համարվել է գիրություն հարաբությունն ավելացնելու և այն բաշխելու եղանակների մասին: Ժամանակակից փնտեսագիրության մեջ փնտեսության զարգացման երեք համընդհանուր խնդիրներից մեկը՝ «Ում համար արդարութեղ»-ը, վերաբերում է արդարութած բարիքների, եկամուտների բաշխման հիմնախնդրին: Եկամուտների բաշխումը սոցիալական քաղաքականության կարևոր բաղադրիչներից մեկն է: Նեղ իմաստով այն պետության ու կառավարության այն միջոցառումներն են, որոնք ուղղված են հասարակության եկամուտների բաշխմանն ու վերաբաշխմանը:

Բաշխման հարաբերությունները փնտեսական հարաբերությունների համակարգի կարևոր օղակներից են՝ արդարության, փոխանակության և սպառման հարաբերությունների հետ մեկտեղ: Բաշխումը միջանկյալ, կապակցող օղակ է բարիքների արդարության և սպառման միջև: Բաշխման հարաբերությունների բնույթը, եղանակներն ու ձևերը պայմանավորված են նրանով, թե ինչպիսին են փիրապերող սեփականության հարաբերությունները և, դրանցով պայմանավորված՝ բուն արդարության մեջ ձևավորվող փնտեսական հարաբերությունները: Բաշխման հարաբերությունները, կախված լինելով արդարության հարաբերություններից, պասսիվ դերում չեն. դրանք ակդիվորեն կարող են ներգործել արդարության հարաբերությունների վրա: Եկամուտների բաշխման սկզբունքները, եղանակներն ու ձևերը կարող են խթանել, արագացնել արդարության զարգացումը, բարձրացնել փնտեսական արդյունավետությունը և մեծացնել վերջնական արդյունքները, եթե դրանք նպաստում են աշխատողների փնտեսական շահերի խթանմանն ու նյութական շահադրդմանը: Դեռևս XX դարի սկզբներին ամերիկացի հայփնի գործարար Ն. Ֆորդը իր ֆիրմաներում 50%-ով բարձրացրեց աշխատավարձը, որի արդյունքում աշխատանքի արդարողականությունը բարձրացավ կրկնակի: Այլ դեպքում, եթե եկամուտները բաշխվում են անարդարացի և աշխատողներին չեն շահադրդում, ապա աշխատանքի խթանները մարտւմ են, և արդարության զարգացումը դանդադում է:

---

Բաշխման հարաբերությունները գնդեսագիրության մեջ դիրքարկվում են լայն և ներ իմաստներով: *Լայն իմաստով* բաշխում ասելով հասկանում ենք արդարության ռեսուրսների և աշխափումի բաշխումը հասարակական արդարության տարրեր ոլորտների ու ճյուղերի միջև, *ներ իմաստով՝* կենսամիջոցների բաշխումը հասարակության անդամների միջև, որի արդյունքում ձևավորվում են նրանց եկամուտները: Դա նախ դրամական եկամուտների բաշխումն է, որը հասարակության յուրաքանչյուր անդամի հնարավորություն է գրալիս՝ ձեռք բերելու անհրաժեշտ կենսամիջոցներ: Եկամուտների բաշխումը ցույց է գրալիս, թե սպեղծված «հասարակական կարկանդակը» ինչպես և ինչ սկզբունքներով է բաշխվում հասարակության անդամների միջև: Այսինքն իմադիրը հասարակական արդյունքն արդարացի բաշխելու մեջ չէ, այլ այն, որ այդ բաշխումը կապարվի՝ նպաստելով հասարակական արդյունքի հետագա մեծացմանը:

Բաշխման հարաբերությունները ածանցյալ հարաբերություններ են արդարության և դրանց հիմքը հանդիսացող սեփականության հարաբերություններից: Այս հանգամանքից ելնելով գնդեսագիրության մեջ ձևավորվել է այն գետակեփը, թե եկամուտների բաշխումը դրսորվում է գործոնային եկամուտների ձևավորմամբ, այսինքն՝ արդարության յուրաքանչյուր գործոնի սեփականափեր «հասարակական կարկանդակից» բաժին է սպանում այն չափով, որքափով մասնակցել է նրա սպեղծմանը: Այլ կերպ ասած՝ գետի է ունենում եկամուտների գործառական (ֆունկցիոնալ) բաշխում, որի հետևանքով ձևավորվում են գործոնային եկամուտները՝ աշխատավարձը, գործուքը, ռենդանը, շահույթը՝ որպես աշխատանքի, կապիտալի, բնական ռեսուրսների ու ծեռներեցության ընդունակությունների սահմանային արդարողականության արդյունք: Այսուհետեւ գետի է ունենում եկամուտների անհարական կամ անձնավորված բաշխումը հասարակության անդամների միջև, անկախ նրանից, թե նրանք արդարության որ գործոնի սեփականափեր են: Եկամուտների գործառական և անհարական բաշխումը հարաբերական նշանակություն ունի, որովհետև արդարության գործոնները իրականում ներթափանցում են միմյանց մեջ, և մարդկանց սոցիալական կարգավիճակը հնարավոր չէ հսկակորեն սահմանել: Այսպես, օրինակ, եթե աշխատունակ բնակչության 90%-ը վարձու աշխատող է, ապա սեփականափերեր են գրեթե 50%-ը: Սոցիալական կարգավիճակի գործերակումն արդահայրվում է նրանով, որ վարձու աշխատողները կարող են լինել նաև բաժնեպոմսերի, պարտագումների, անշարժ գույքի սեփականափեր, ունենալ իրենց բիզնեսը և աշխատավարձից բացի եկամուտներ սպանալ շահարածնի, գորկոսի, ռենդանը և շահույթի ձևով:

Եկամուտների գործառական բաշխման հետևանքով ձևավորվում են սկզբնական, առաջնային եկամուտները, որից հետո դրանց վերաբաշխման արդյունքում ձևավորվում են անհարական կամ անձնավորված եկամուտները, և հասարակության յուրաքանչյուր անդամ «հասարակական կարկանդակից» սպանում է իր բաժինը: Վերջինս կախված է ոչ միայն հասարակական արդյունքի մեծությունից, այլև նրանից, թե ինչ սկզբունքներով է բաշխվում հասարակական արդյունքը: Ժամանակակից շուկայական հարաբերությունների պայմաններում եկամուտների բաշխումն իրականացվում է ըստ արդարության գործոնների սեփականության և դրանց սահմանային արդարողականության:

---

Եկամուտների վերաբաշխման և անհարական եկամուտների ձևավորման գործում իր կարգավորիչ գործառույթըն է կիրառում պետքությունը: Եկամուտների վերաբաշխման պետքական քաղաքականության շնորհիվ իրականացվում է հասարակական արդյունքի այնպիսի վերաբաշխում, որպեսզի ապահովվեն հասարակության յուրաքանչյուր անդամի նվազագույն կենսապայմանները:

## **15.2. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՆ ՈՒ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ**

Բնակչության եկամուտների ձևավորման աղբյուրները պայմանավորված են նրանով, թե ինչպիսին է բաշխման հարաբերությունների բնույթը, և ինչ սկզբունքներով է իրականացվում հասարակական արդյունքի կամ «ազգային կարկանդակի» բաշխումը: Բնակչության եկամուտների ձևավորումը պետքության սոցիալական քաղաքականության կարևոր ուղղություններից մեկն է: «Եկամուտ» հասկացությունը բավականին լայն իմաստ ունի. նախ՝ այն ներկայացնում է փնտեսական գործունեության արդյունքների դրամական արդահայփությունը, ապա դիմարկվում է նաև որպես արքադրված արքադրանքի արժեքի գերազանցում արքադրության ծախսերին: Եկամուտ հասկացությունը կիրառվում է նաև որպես արքադրված բարիքների արժեքի մեջ յուրաքանչյուր սոցիալական խմբի կամ առանձին անհատի կարարած ներդրման բաժին կամ փոխհարդարություն:

Բնակչության եկամուտների մակարդակը նրանց կենսապայմանների կարևոր բարձրիքներից մեկն է, քանի որ դրանով են պայմանավորված անհատի նյութական և հոգևոր կյանքի հնարավորությունները՝ կենսական պահանջմունքների բավարարումը, կրթության սպացումը, առողջության պահպանումը, հանգիստը և այլն:

Հասարակության եկամուտների մակարդակը պայմանավորված է ոչ միայն աշխատավարձի չափերով, այլ նաև հարկերի մակարդակով, ապրանքների ու ծառայությունների մանրածախ գների շարժընթացով: Այս իմաստով բնակչության եկամուտների մակարդակն ու շարժընթացը գնահատելու համար փնտեսագիրության մեջ փարբերական գործում են անվանական, գնօրինվող և իրական եկամուտներ հասկացությունները:

**Անվանական** եկամուտը փողի այն քանակն է, որն անհապր սպանում է որոշակի ժամանակահարվածում իր աշխատանքային գործունեության արդյունքում կամ այլ աղբյուրներից:

**Տնօրինվող** եկամուտն անվանական եկամուտի այն մասն է, որը կարող է օգտագործվել անձնական սպառման և խնայողություններ կարարելու համար: Տնօրինվող եկամուտը գոյանում է անվանական եկամուտի հարկերի և պարբառի վճարումների գումարը հանելուց հետո:

**Իրական** եկամուտը ապրանքների ու ծառայությունների այն քանակն է, որը հնարավոր է ձեռք բերել գնօրինվող եկամուտի գների փույլ մակարդակի և դրանց փոփոխության պայմաններում:

Բնակչության եկամուտների ձևավորման հիմնախնդրի առնչությամբ գոյու-

---

---

թյուն ունեն առանձին գրեսակեփներ, ըստ որոնց եկամուգների ձևավորման աղբյուրներ են դիբարկվում.

- ա) գործոնային եկամուգները,
- բ) պեպության սոցիալական օգնության ծրագրերով սպացվող եկամուգները,
- գ) Փինանսական համակարգից սպացվող դրամական եկամուգները:

Գործոնային եկամուգներ ձևավորվում են եկամուգների գործառութային բաշխման արդյունքում և դրսորվում են աշխատավարձի, գործուի, ռենգային եկամուգների, շահույթի գեներով։ Այլ կերպ ասած՝ արդադրության յուրաքանչյուր գործոնի սեփականարեր ազգային եկամարդից մասնաբաժին է սպանում իր ներդրմանը համապարախան՝ պվյալ գործոնի սահմանային արդադրողականության սկզբունքի հիման վրա։ Այսպիսով, ձևավորվում են հասարակության առաջնային եկամուգները։ Այնուհետև եկամուգների վերաբաշխման շնորհիվ, որի լծակներ են պեպության սոցիալական քաղաքականությունը, հարկերը և սոցիալական դրանսֆերվուները, ձևավորվում են հասարակության անդամների անհապական (անձնական) եկամուգները։ Սոցիալական քաղաքականությունը եկամուգների բաշխման այնպիսի եղանակների ու սկզբունքների կիրառում է, որոնց օգնությամբ մեղմացվում են եկամուգների անհավասարությունները, ապահովվում աշխատանքի նկարմամբ նյութական շահագրգորությունն ու հասարակության անդամների նվազագույն կենսապայմանները։ Նարկերի միջոցով պեպությունը պեպական բյուջե է մուրքագրում ազգային եկամարդի որոշակի մասը, որպեսզի այն օգբագործի հասարակության սոցիալական զարգացման ծրագրերն իրագործելու համար։ Սոցիալական դրանսֆերվուները նույնական եկամուգների վերաբաշխման լծակ են, քանի որ դրանց շնորհիվ հասարակության անդամները ձեռք են բերում նվազագույն կենսապահովման միջոցներ։

Պեպության սոցիալական օգնության ծրագրերի միջոցով եկամուգները, որոնք այլ կերպ կոչվում են սոցիալական դրանսֆերվուներ, ներառում են այն վճարումները, որոնք կառավարության կողմից դրվում են անհապույց կամ ապագայում անուղղակի հարուց սպանալու ակնկալիքով։ Սոցիալական դրանսֆերվուների ձևով առաջացող եկամուգներն են. բնակչության կենսաթոշակային ապահովումը, ժամանակավոր անաշխատունակության համար վճարումները, նպասգների վճարումը երեխաների խնամքի, բժշկական սպասարկման, անապահով ընդունակություններին, գործազրկության համար և այլն։ Անհրաժեշտ է նկագի ունենալ մի կարևոր հանգամանք. բնակչության եկամուգներում դրանսֆերվային վճարումների գրեսակարար կշռի և աշխատավարձի հարաբերակցությունը կարևոր դեր է խաղում անհարդի գրնդեսական վարքագծի և նրա աշխատանքային շահադրդիչների ձևավորման գործում։

Ֆինանսական հանակարգից սպացվող բնակչության դրամական եկամուգները հանդես են զալիս պեպական ապահովագրական վճարումների, վարկերի դրամադրման, բանկային ավանդների գործուների, բաժնեգործուների շահաբաժնի, պարբագրումների գործուների, գրանցումների շահումների, մասնավոր ապահովագրական վճարումների և այլ ձևերով։

Բնակչության եկամուգների ձևավորման աղբյուրները մեկնաբանելու մյուս գրեսակեփի համաձայն առանձնացվում են եկամուգների երկու խմբեր՝ կախ-

---

ված դրանց առաջացման բնույթից.

ա) աշխագրանքային եկամուտներ:

բ) ոչ աշխագրանքային եկամուտներ:

Աշխագրանքային են այն եկամուտները, որոնց առաջացումն անմիջականորեն կապված է մարդու աշխագրանքային գործունեության հետ: Ոչ աշխագրանքային են համարվում այն եկամուտները, որոնց սպացումը կվյալ պահին կապված չէ մարդու աշխագրանքային գործունեության հետ: Աշխագրանքային եկամուտները հանդես են զայխ աշխագրավարձի, ձեռնարկագիրական գործունեությունից սպացվող եկամուտների ձևերով: Ոչ աշխագրանքային են սեփականությունից կամ ունեցվածքից սպացվող եկամուտները, ինչպիսիք են վարձակալական վճարը, ռենտան, գույքը, շահաբաժնը, ինչպես նաև սոցիալական գրանսֆերպները, օգնությունները, ժառանգությունը, նվիրագությունը, շահումները և այլն:

Առանձին դեպքերում անաշխագ են համարվում նաև անօրինական ճանապարհով, անկեզա բիզնեսով, կաշառքով, գողությամբ, կոռուպցիայի և ֆինանսական խարդախություններով ձեռք բերված եկամուտները: Սակայն դրանք հարկավոր է սահմանազարդել արդարացիորեն սպացվող ոչ աշխագրանքային բնույթի եկամուտներից՝ գույքը, շահաբաժնը և այլն, որովհետք դրանք ի վերջո ապահովվում են նախկին աշխագրանքային գործունեությամբ վասրակած և խնայողության վերածված եկամուտներից:

Բնակչության եկամուտների մեկ այլ դասակարգմամբ առանձնացվում են հետևյալ խմբերը.

1. Եկամուտներ գրաղվածությունից (աշխագրավարձ, ձեռնարկագիրական գործունեությունից եկամուտներ):
2. Եկամուտներ ինքնազբաղվածությունից (ազագ գրաղմունքի վեր մարդիկ, ֆերմերներ (զյուղացիներ), այլ անհագ ձեռներեցներ և առևտրականներ):
3. Եկամուտներ սեփականությունից (ռենտային եկամուտներ, գույքը, շահաբաժնի):
4. Տրանսֆերպային եկամուտներ (ընթացիկ գրանսֆերպներ, ֆիրմաների բարեգործություններ, պետրական նպաստներ և այլ վճարներ):

Բնակչության եկամուտները բնութագրվում են որոշակի կառուցվածքով: Եկամուտների կառուցվածքը ցույց է տալիս, թե եկամուտի յուրաքանչյուր գրեսակ եկամուտների ընդհանուր ծավալում ինչպիսի տեսակարար կշիռ ունի: Ըստ Ազգային վիճակագրության ծառայության՝ Հայաստանում բնակչության դրամական եկամուտներն ունեն հետևյալ կառուցվածքը.

- ա) Վարձու աշխագրողների աշխագրանքի վարձագրությունը՝ 34,5%,
- բ) սոցիալական գրանսֆերպները՝ 7,1%,
- գ) մուգրեր ֆինանսական համակարգից, եկամուտներ սեփականությունից, ձեռնարկագիրական գործունեությունից՝ 38,9%,
- դ) մուգրեր գրանսֆեր վաճառքից՝ 19,5%:

Զարգացած երկներում բնակչության եկամուտների կառուցվածքում 70%-ից ավելին կազմում է աշխագրավարձի բաժինը: Նախկին սոցիալիստական

---

հասարակարգում աշխափավարձի բաժինը նույնպես գրեթե այդքան էր, սակայն շուկայական դնդանությանն անցման ժամանակաշրջանում այն բավականին պակասեց: Եկամուտների կառուցվածքում այսպիսի եական փոփոխությունը բացարձում է հետևյալ հանգամանքներով.

1. Անցումային ժամանակաշրջանում դնդանության ճշգրիտագույն իրավիճակի հետևյանքով շաբաթ ձեռնարկություններ չեն աշխափում կամ աշխափում էին թերթեռնված, գործազրկությունը մեծ չափերի էր, որն է անդրադարձավ աշխափավարձի ոչ միայն բացարձակ մեծության, այլև դեսակարար կշռի վրա:
2. Շուկայական հարաբերությունների ծևափորմանը գուգընթաց առաջացան եկամուտների նոր դեսակներ, ինչպիսիք են շահարաժինը, ռենտագին եկամուտները, ձեռնարկադրամական գործունեությունից եկամուտները, որի հետևյանքով աշխափավարձի բաժինը բնակչության ընդհանուր եկամուտների մեջ փոքրացավ:

Անցումային ժամանակաշրջանում զգայինը կրճարվեց նաև սոցիալական դրանսֆերֆինների դեսակարար կշռը, որը նախկին դնդանության 25%-ից իջել է մինչև 7,1%-ի: Այս կառուցվածքային փոփոխությունը պայմանավորված էր նրանով, որ մի կողմից՝ բավականին կրճարվեցին կենսաթոշակների, նպաստների չափերը, մյուս կողմից՝ շուկայական հարաբերությունները ներթափանցեցին առողջապահության, կրթության և նախկին անվճար ծառայությունների շաբաթորդին, այդ պատճառով կրճարվեց սոցիալական դրանսֆերֆինների բաժինը բնակչության եկամուտների մեջ:

Տարկ է նշել, որ Հայաստանում բնակչության եկամուտների կառուցվածքում առանձնահարուկ դեր են խաղում արքերկրներից սպացվող անձնական դրանսֆերինները (հարազարդներից, քարեկամներից, ընկերներից), որոնք մուգավոր հաշվարկներով կազմում են 1,2 մլրդ դրամ, որը գրեթե հավասար է հանրապետության ներկայիս պետական բյուջեին:

### **15.3. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՆՎԱՎԱՍՐՈՒԹՅՈՒՆԸ** **ԵՎ ԳՆԱՎԱՏՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ**

Եկամուտների անհավասարությունը բնորոշ է բոլոր դնդանության համակարգերին: Եկամուտների վերաբաշխման շուկայական մեխանիզմը, անգամ կենսորունացված պլանային կարգավորումը չեն կարող վերացնել եկամուտների անհավասարությունը: Ներկայական եկամուտների անհավասարությունը շուկայական դնդանության զարգացման ներքին օրինաչափությունն է:

Եկամուտների անհավասարությունը չպետք է դիմում որպես սոցիալական արդարության սկզբունքի խախուսում (խնդրին կանդրադառնանք հաջորդ ենթավերնագրում), այլ պետք է ընդունել որպես ՌՍԱ -ի սպեհման համար կարգաված ներդրման դրաբերությունների արդյունք և որպես դնդանության զարգացումն ու խթանումն ապահովելու ամերաժեղություն: Այդուհանդերձ, հասարակության անդամների եկամուտների անհավասարության մեջմումը ցանկացած

---

պետքության սոցիալական խնդիրներից է, որպեսզի եկամուգների վերաբաշխման դաշտեր լծակների օգնությամբ կրճադրվի հարուստների և աղքադների եկամբային ճեղքվածքը:

Տասարակության եկամուգների անհավասարությունն ունի իր օրյեկտիվ հիմքերը և պայմանավորված է որոշակի գործոններով, որոնք ներկայացվում են հետևյալ խմբերով.

**1. Աշխատանքային ընդունակությունների դարբերությունները:** Մարդիկ ի ձնե միմյանցից դարբերվում են իրենց ֆիզիկական, հոգևոր, մտավոր ու քանական աշխատանքային ընդունակություններով ու կարողություններով, հետքաբար այլ հավասար պայմաններում անխուսափելի են նաև նրանց վասպակների դարբերությունները:

**2. Կրթական մակարդակի դարբերությունները:** Մարդիկ իրենց կրթության և մասնագիտական պատրաստվածության մակարդակներով բավականին դարբեր են միմյանցից, հետքաբար դարբեր են լինում նաև նրանց վասպակները: Այլ կերպ ասած՝ մարդկային կապիտալում կարարվող ներդրումն ինքնին լրացուցիչ եկամբայի աղբյուր է: Առավել ևս, որ հասարակության մեջ գոյություն ունեն մի շարք մասնագիտություններ (բժիշկ, իրավաբան, ֆինանսիսագործ-գնումնագետ, մենեջեր, համակարգչային գործությունների մասնագետ և այլն), որոնց դիրքապես բարձր վարկանիշի և մեծ վասպակի երաշխիք է:


**3. Մասնագիտական ճաշակը և ռիսկը:** Մարդիկ, որոնք պատրաստվակամորեն կարարում են ծանր, հոգնեցուցիչ, արգաժամյա, լարված, ոչ հարգի աշխատանքներ, բնականաբար ավելի բարձր աշխատավարձ են սպանում: Որոշ մարդիկ են, ծգբեկով բարձր եկամուգների, դիմում են գնդեսական ռիսկի՝ իրենց ֆինանսական միջոցները կիրառում են բիզնեսի որևէ բնագավառում:

**4. Տեխականության դիրքապեսում:** Ֆիզիկական, դրամական, ֆինանսական կապիտալը վնօրինողները, որպես սեփականագեր եկամուգ են սպանում ռենտրային, գործուսային, շահութաբաժնային եկամուգների ձևերով: Շուկայական գնդեսության պայմաններում հարկադաս սեփականությունից սպացվող եկամուգներն են որոշում գնային գնդեսությունների վիճակը եկամուգների բուրգի վերին մասում: Եվ այն փաստը, որ «հարսպությունն է ծնում հարսպություն», ավելի է ուժեղացնում եկամուգների անհավասար բաշխվածությունը:

**5. Հաջողակությունը և բախսը,** որոնք անսպասելի շահումների, հարսպության և ունեցվածքի դեր են դարձնում ոմանց:

**6. Ընդունիքների կազմի ու կառուցվածքի դարբերությունները:** Կան բազմանդամ ընդունիքներ, որպես ապրում են հաշմանդամներ, ծերեր. դրանց շնչային եկամուգը բնականաբար փոքր է լինում: Այս հանգամանքից ենելով, եթե անգամ բոլորը հավասար աշխատավարձ սպանան, միևնույն է, եկամուգների հավասարություն չի ապահովվի:

Ինչպես գետնում ենք, հասարակության եկամուգների դարբերության պատճառներն ու գործոնները բազմաթիվ ու բազմաբնույթ են, այնպես որ, եթե հասարակության անդամների համար ապահովվեն հավասար «մեկնարկային պայմաններ», ապա միևնույն է, նրանց եկամբային անհավասարությունը չի վերանա: Խնդիրն այն է, որ հնարավորինս մեղմացվի եկամուգների դարբերակ-



**Պ Ի ՞ ՞ Տ Ի ՞ ՞ Ա 15.1. Լորենցի կորը:**

Լորենցի կորը հիմնված է կուպակային (կումուլյատիվ) բաժինների հաշվարկման վրա, այսինքն՝ այդ բաժինները սպանում ենք հաջորդը նախորդին գումարելով: OE գիծը բնութագրում է բնակչության եկամուտների բացարձակ հավասար բաշխվածությունը, այսինքն՝ բնակչության 20%-ին բաժին է ընկել եկամուտների 20%-ը, 40%-ին՝ 40%-ը և այլն: OFE ուղիղ անկյունը բնութագրում է եկամուտների բացարձակ անհավասարությունը: OACDE կորը, որը Լորենցի կորն է, բնութագրում է բանկչության եկամուտների անհավասար բաշխվածությունը. օրինակ, բնակչության 60%-ին բաժին է ընկել եկամուտների 30%-ը: Որքան կորը հեռու է OE գծից, այնքան եկամուտներն անհավասար են բաշխված, որքան կորը մոտ լինի OE գծին, նույնքան եկամուտները հավասարաչափ են բաշխված:

---

Լորենցի կորը կառուցվում է առանց հարկերը վճարելու և դրանսֆերվներն սպանալու: Նարկերը վճարելուց հետո նրա ճկվածությունը փոքրանում և մոդենում է ՕԵ գծին, իսկ դրանսֆերվները սպանալուց հետո կորն էլ ավելի է մոդենում եկամուտների հավասար բաշխվածության գծին: Օրինակ, ԱՄՆ-ում պետական դրանսֆերվային վճարները կազմում են ամենացածր եկամուտներ ունեցող մարդկանց խմբի եկամուտների մոդավորապես 75%-ը: Լորենցի կորը կառուցելիս հաշվի են առնվում նաև սեփականությունից, ձեռնարկագիրական գործունեությունից, աշխատանքից սպացվող եկամուտները: Վերջիններս պարզ են, որ Լորենցի կորը կրեղաշարժեն դեպի աջ՝ խորացնելով եկամուտների անհավասար բաշխվածությունը: Լորենցի կորը ցոյց է դալիս, թե հասարակական արդյունքի բաշխումը երկրում որքան է անհամաշաբ: Ըստ մասնավոր գնահատումների՝ ԱՄՆ-ում 400 ընդունակություն են ՌԱՀ-ի մոդավորապես 10%-ը, Ռուսասփառում 40 ընդունակություն՝ ՌԱՀ-ի 16%-ը, Դայասփառում 44 ընդունակություն՝ ՌԱՀ-ի 55%-ը<sup>1</sup>:

Եկամուտների անհավասար բաշխվածությունը Լորենցի կորագծի միջոցով՝ գնահապելիս համեմապահում են նաև **բվինսփիլային գործակիցները**, այսինքն՝ բարձր եկամուտներ ունեցող 20% բնակչության եկամուտները համեմապահում են ցածր եկամուտներով բնակչության 20%-ի եկամուտների հետ:

Եկամուտների բաշխման անհավասարությունը գնահապահում է նաև **դեցիլային գործակիցներով**, այսինքն՝ բանկչությունը բաժանվում է 10 խմբերի՝ յուրաքանչյուրում 10% բնակչությամբ: Այնուհետև 10% բարձր եկամուտներ ունեցող խմբի եկամուտները համեմապահում են ցածր եկամուտներ ունեցող 10% բնակչության եկամուտների հետ: Օրինակ, Շվեյցարիայում բարձր և ցածր եկամուտներ ունեցող բնակչության 10%-ի եկամուտների հարաբերակցությունը նախքան հարկեր վճարելն ու դրանսֆերվներն սպանալը կազմում է 100:1, իսկ հարկերը վճարելուց և դրանսֆերվներն սպանալուց հետո՝ 4:1:

Եկամուտների պարբերակավածությունը գնահապելու համար դնութեսագիրության մեջ կիրառվում է նաև **Զինիի գործակիցը**<sup>1</sup> (ի պարիվ իդալացի գնահապելու Կորրադո Զինի), որը անմիջականորեն կապված է Լորենցի կորագծի հետ: Այս դեպքում Լորենցի կորի և եկամուտների բացարձակ հավասար բաշխվածության **ՕԵ** գծի միջև ընկած մակերեսը, որը նշանակվում է **T** պառով, բաժանում ենք **OFE** եռանկյան մակերեսի վրա: Այսինքն՝ Զինիի գործակիցը (**G**) որոշվում է հետևյալ կերպ:

$$G = \frac{T}{OFE} :$$

Այս գործակիցը գրնվում է 0-ից 1 միջակայքում՝  $0 \leq G \leq 1$ :

Որքան գործակիցը մոդենում է 1-ի, այնքան եկամուտների անհավասարությունը խորանում է: Զարգացած երկրներում Զինիի գործակիցը 0,25-0,35 է: Զարգացող երկրներում այն գերազանցում է 0,5-ից:

---

<sup>1</sup>Տես «Իրավունք», թիվ 45, հունիս, 2007:

---

## **15.4. ԱՂՋԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ**

Եկամուտների անհավասար բաշխվածությունը հասարակության մեջ հանգեցնում է սոցիալական շերպավորման՝ ունևորների, չունեուրների և հարուսափների խավերի առաջացմանը, որի արդյունքում աղքափությունը դառնում է հասարակության բնորոշ հարլկանիշներից մեկը: Ժամանակին թոմաս Մալթուպը աղքափության պարբառ կապում էր բնակչության թվաքանակի աճի և կենսամիջոցների արդարության գրեմատների անհամապարախսանության հետ: Կարլ Մարքսը աղքափության պարբառ համարել է մասնավոր սեփականությունը և ձեռնարկագործերի շահույթի ու վարձու բանվորների աշխափավարձի անհամաշափի հարաբերակցությունը: Շուկայական հարաբերությունների պայմաններում եկամուտների բաշխման գործոնային սկզբունքը եկամուտների անհավասարությանն ու աղքափությանը բայիս է բնականոն բնույթը:

**Աղքափությունը** հասարակության մի մասի սոցիալ-գոնդեսական այնպիսի վիճակն է, որի դեպքում բնակչության որոշակի խավեր չունեն փվյալ հասարակության նորմաներով սահմանված նվազագույն գոյամիջոցներ: Աղքափությունը գոյություն ունի բոլոր երկրներում, սակայն դա հարաբերական է: Զարգացած երկրներում աղքափության մակարդակը կարող է մեկ այլ երկրում հարսփության և ճնշության չափանիշ համարվել: Օրինակ, ԱՄՆ-ում աղքափության մակարդակը ընդամենքի հաշվով (4 անձից բաղկացած) գնահափում է փարեկան 14.000 դոլար: Այս չափանիշով ԱՄՆ-ի բնակչության 13%-ը աղքափ է համարվում: Մինչդեռ այլ երկրներում դա կարող է դիմուլե բարեկեցության բարձր մակարդակ: Բնակչության աղքափությունը բնութագովում է ոչ միայն անվանական եկամուտի նվազագույն մեծությամբ, այլև եկամուտների սպառման կամ սպառողական ծախսերի կառուցվածքով: Զարգացած երկրներում ընդունված է աղքափ համարել այն ընդամենքներին, որոնք իրենց դրամական եկամուտի 1/3-ից ավելին են ծախսում սննդամթերքի ձեռքբերման համար:

Աղքափությունը գնահափում է նաև իրական աշխափավարձի մակարդակով կամ զնողունակությամբ: Առանձին դեպքերում կարող են կիրառվել նաև աղքափության գնահափման այլ չափանիշներ: Այսպես, Գերմանիայում ընդունված է «աղքափ» համարել այն մարդկանց, ովքեր շարաթը գոնե մեկ անգամ զարեցրափուն չեն հաճախում: Այս դեպքում խոսքը վերաբերում է ոչ այնքան նյութական ապահովածությանը, որքան հոգսեր չունենալուն և ազափ ժամանակը նպագակահարմար օգտագործելուն: Աղքափության մակարդակը գնահափում է նաև բնակչության եկամուտների բնեռացվածության կամ կենսդրության ասդիճանով:

«Դ»-ում աղքափության հիմնախնդիրն ավելի սրվեց հարլկապես 1990-ական թվականներին, երբ նախկին խորհրդային հանրապետություններն անցում էին կարառում շուկայական գննութեական հարաբերությունների: Մեր հանրապետությունում բնակչության աղքափությունը հասավ բարձր մակարդակի, որի պարբառներից էր նաև գննութեական շրջափակումը, վառելիքաէներգետիկ ճգնաժամը, պատերազմական իրավիճակը, դրամական բարեփոխումը, սեփականաշնորհման գործընթացի թերությունները և այլն, և այլն:

---

**Աղքափության մակարդակը կամ շեմը գնահավելու համար կիրառվում են մի շաբթ ցուցանիշներ:**

**Աղքափության բացարձակ գիծը** կյանքի նվազագույն մակարդակն է, որը որոշվում է մարդու նվազագույն կենսաբանական պահանջմունքների հիմնան վրա և ընդգրկում է մարդու առաջնահերթ պահանջմունքները բավարարելու համար անհրաժեշտ ապրանքների ու ծառայությունների հավաքածուն՝ *սպառողական զամբյուղ:*

**Կենսանվազագույնը** անհրաժեշտ կալորիականություն ապահովող սննդամթերքի բնեղեն հավաքածուն է, ինչպես նաև ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների ծախսերը, հարկերն ու պարփառիր վճարները, որոնք նախարեսված են ցածր եկամուտներով ընդունակությունների համար: Կենսանվազագույնն ընդգրկում է 35 պարենային ապրանքներ (2300 կ/կալ օրական) և 79 ոչ պարենային ապրանքներ: Կենսանվազագույնը հաճախ անվանվում է նաև *աղքափության զիծ:*

**Աղքափության հարաբերական գիծը** ցույց է տալիս, թե որքան արժե նվազագույն սպառողական զամբյուղը (աղքափության գիծը) միջին աշխափավարձի նկարմամբ: Օրինակ, Ռուսաստանում աղքափության բացարձակ գիծը կազմում է միջին աշխափավարձի 40%-ը, Եվրոմիության երկրներում՝ 50%-ը, Հայաստանում՝ 30%-ը:

**Աղքափության փարածվածությունը** ցույց է տալիս աղքագր բնակչության թվաքանակը կամ տեսակարար կշիռը:

**Աղքափության խորությունը** ցույց է տալիս աղքագր ընդունակությունից: Աղքափության խորությունը ցույց է տալիս աղքագր ընդունակությունից:

**Նվազագույն սպառողական բյուջեն** ապրանքների և ծառայությունների նվազագույն ծավալն է, որն անհրաժեշտ է մարդու նորմալ կենսագործունեության համար: Նվազագույն սպառողական բյուջեն Ռուսաստանում կազմված է 200 ապրանքներից ու ծառայություններից, որոնց 80-ը սննդամթերք է: Նվազագույն սպառողական բյուջեն ունի հետևյալ կառուցվածքը՝ սննդամթերք՝ 45%, ոչ պարենային ապրանքներ՝ 39%, ծառայություններ՝ 13%, հարկեր և գուրքեր՝ 3%:

**Ուղիղնալ սպառողական բյուջեն** ներկայացնում է ապրանքների, ծառայությունների, ոչ պարենային ապրանքների՝ գիտականորեն հիմնավորված նորմաներին համապարասիստ ծավալը, որոնք անհրաժեշտ են մարդու ռացիոնալ պահանջմունքները բավարարելու համար: Ծախսերի կառուցվածքով ռացիոնալ սպառողական բյուջեն փարբերվում է նվազագույն բյուջեից. նրանում սննդամթերքի ծախսերի բաժինն էապես քիչ է՝ 30%, ոչ պարենային ապրանքներին՝ 47%, բոլոր ծառայություններին՝ 23%:

Բնակչության շերտավորումը ըստ եկամուտների՝ կախված կենսանվազագույնից և նվազագույն սպառողական զամբյուղից, հնարավորություն է տալիս առանձնացնել նյութական ապահովածության փարբեր մակարդակներ ունեցող մարդկանց հետևյալ խմբերը.

- ա) «աղքագր» ընդունակություն, որոնց շնչային եկամուտը ցածր կամ հավասար է կենսանվազագույնին,
- բ) «անապահով» ընդունակություն, որոնց շնչային եկամուտը գրեթե 0 է կենսանվազագույնի և նվազագույն սպառողական բյուջեի միջակայքում,

- 
- գ) «ապահով» ընդանիքներ, որոնց շնչային եկամուքը գրնվում է նվազագույն սպառողական բյուջեի և ռացիոնալ սպառողական բյուջեի միջև,
  - դ) «հարուսափ» ընդանիքներ, որոնց շնչային եկամուքը բարձր է ռացիոնալ սպառողական բյուջեից:

Վղբագրությունը հասարակության համար բացասական երևույթ է ոչ միայն բնակչության, այլև սոցիալ-հոգեբանական առումով: Ամենաընդհանուր բնութագրմամբ՝ «աղքաբությունը որոշակի կենսական նվազագույնի ապահովման անկարողությունն է»: Սակայն աղքաբությունը բնութագրվում է ոչ միայն նյութական, այլ նաև ոչ նյութական չափանիշներով: Նյութական աղքաբությունը բնորոշվում է եկամուտների և սպառնան անբավարար մակարդակով, իսկ ոչ նյութական աղքաբությունը հիմնականում բնութագրվում է մարդու սոցիալական անպաշտպանվածությամբ ու մերժվածությամբ: Վղբագին գանցում ու մորահոգում է ոչ միայն նյութական կարիքը, այլև սոցիալ-հոգեբանական ընկանականությունը, ոչ լիարժեքությունն ու մերժվածությունը: Այս առումով գեղին է հիշել դարերի խորքի եկող ասպավածանշային այն միգրը, որ «հարուսափությունը շատ բարեկամներ կավելցնե, բայց աղքաբը իր բարեկամնեն կը լրիվի»:

Ներկայում Հայաստանում աղքաբության մակարդակը գնահավում է մորավորապես 42%-ի: Վղբագրության մակարդակը երբեմն գնահավում է օրական 1 ՎՄՌ դոլարից պակաս եկամուտ ունեցող բնակչության թվաքանակով, ըստ որի՝ այն կազմում է մորավորապես 25%: Վղբագրության իրական և համեմատարար լիարժեք ցուցանիշ կարելի է համարել մեկ շնչի հաշվով ամսական 20 հազ. դրամը, որը մորավորապես հավասար է գնողունակության համարժեքության գործակցով (3,38)<sup>7</sup> վերահաշվարկված օրական 4 ՎՄՌ դոլարին: Վերը նշված 20 հազ. դրամ ցուցանիշը, ի դեպ, պարահական թիվ չէ և մորավորապես համեմատելի է խորհրդային գործակություն ունեցող աղքաբության գծի հետ, ըստ որի՝ մինչև շուկայական հարաբերություններին անցնելը Հայաստանում աղքաբությունը կազմել է 20%: Ըստ ՀՀ առողջապահության նախարարության հաշվարկների՝ ներկայում Հայաստանում նվազագույն սպառողական բյուջեն 31,6 հազ. դրամ է, իսկ 2008 թ. նվազագույն աշխատավարձի նախարարությունը՝ 25 հազ. և միջին կենսապեշուակի 21 հազ. դրամը բավականին հեռու են դրանից: Հայաստանում աղքաբության մակարդակի բարձրացումը պայմանավորված էր շուկայական հարաբերություններին անցման գործընթացներով, որի արդյունքում խիստ կրճաբվեցին ՇԱՀ-ի ծավալները, մեծացավ եկամուտների բաշխման անհավասարությունը, որոնք հանգեցրին սոցիալական լարվածության ուժեղացմանը: Կենդրունացված պլանային գնութետությունից շուկայականին անցման շրջանում պեսությունն ըստ երթյան դուրս է գալիս գնականության ոլորտից՝ իրեն վերապահելով գլխավորապես հարկերի միջոցով եկամուտները վերաբաշխելու գործառույթ, որի անարդյունավետ իրականացման արդյունքում այն չի կարողանում անհրաժեշտ միջոցներ կենդրունացնել իր ձեռքում և իրագործել անընդհափ ավելացող սոցիալական ծրագրերը:

Մեր հանրապետությունում աղքաբությունը բնութագրվում է ինչպես բնակչության մեկ շնչի հաշվով ՇԱՀ-ի ծավալով, որը մոտ 10 անգամ ցածր է զարգացած երկրների մակարդակից, այնպես էլ եկամուտների թվաքանակությունը աղքաբությունը կազմում է մոտ 10 անգամ աղքաբությունը:

---

փիճանով, որը գրեթե 2 անգամ գերազանցում է զարգացած երկրների ցուցանիշը և 5 անգամ՝ նախկին խորհրդային ժամանակաշրջանինը։ Աղքափության հաղթահարման ռազմավարական ծրագրով նախարարությունը է, որ միայն 2015 թ. հնարավոր կլինի ունենալ խորհրդային շրջանին բնորոշ եկամուտների բնեուացում և սոցիալական լարվածության համեմատաբար ցածր մակարդակ՝ 19,7% աղքափություն։

Եկամուտների անհավասարություն և բնեուացում գոյություն ունի գրեթե բոլոր, այդ թվում և զարգացած երկրներում։ Աշխարհում եկամուտների քաշիման անհավասարությամբ ազդի են ընկնում հարկապես Լաբինական Ամերիկայի երկրները, որոնց ցուցանիշները համեմատելի են մեր հանրապետության ցուցանիշների հետ։ Օրինակ, Բրազիլիայում, ինչպես և Հայաստանում, ամենահարուստ 20% բնակչության գործելկան եկամուտները 32 անգամ գերազանցում են 20% ամենաղքաք բնակչության եկամուտները։ Տարկ է նշել, որ որոշ զարգացած երկրներում (մասնավորապես՝ ԱՄՆ-ում) եկամուտների բնեուացումը հիմնականում պայմանավորված է ոչ թե ծայրահեղ աղքափների, այլ ծայրահեղ հարուստների առկայությամբ։

Շուկայական գնութեառության պայմաններում պետքության կարևոր խնդիրներից է եկամուտների վերաբաշխումը, որի իրականացման կարևոր լծակը հարկային քաղաքականությունն է։ Որքան բարձր լինի հարկային դրույքաչափերը (մինչև որոշակի սահմանագիծը), այնքան մեծ կլինեն պետքական բյուջեի եկամուտները և պետքության կողմից իրականացվող սոցիալական ծրագրերի իրագործման հնարավորությունները։ Սակայն որպեսզի հարկերն ունենան իրական վերաբաշխութական գործառություն, դրանք պետք է ոչ միայն հնարավորին չափ շար, այլև ճիշդ և նպաստակատողված ձևով հավաքել։

Հայաստանում պետքական բյուջեի հարկային մուտքերի մեծ մասը բաժին է ընկնում անուղղակի հարկերին, որոնք իրենց բնույթով սպառողական հարկեր են, քանի որ ներառված լինելով ապրանքների զների մեջ, ըստ էության, վճարվում են սպառողների կողմից։ Մեր հանրապետության բնակչության գերակշռող մասը փաստորեն սոցիալական անապահով սպառողներ են, հերթևարար իրենց եկամբի մեծ մասը ծախսելով (սպառելով)՝ նրանք դրանով իսկ եկամբի նկամմամբ ավելի մեծ փոկոսի հարկեր են վճարում, քան հարուստները, որոնք իրենց մեծ ծավալի եկամբի զգալի մասը խնայում են և այդ չափով սպառողական կամ անուղղակի հարկեր չեն վճարում։ Բացի դրանից, որքան մեծ լինեն անուղղակի հարկերը, այնքան անապահով աղքաք խավերը սփիպված են պետքության կողմից սոցիալական գրանսֆերվների ձևով հարկացված եկամուտների ավելի մեծ մասը կրկին «վերաբարձնել» պետքությանը։ Այդ երկու հանգամանքներից ենելով, կարծում ենք, հարկերի վերաբաշխութական գործառությը իրական դարձնելու համար, անհրաժեշտության դեպքում, պետք է մեծացնել ուղղակի հարկերի, մասնավորապես՝ եկամբահարկի և շահույթահարկի դրույքաչափերը, որոնք հիմնականում վճարվում են բնակչության առավել ապահովված խավերի կողմից։

Եկամուտների հարկային վերաբաշխման արդյունավերության վրա բացասարար է անդրադառնում նաև սպվերային գնութեառության առկայությունը, որի պարճառով հարկերի և ՌԱԳ-ի հարաբերակցությունը զգալիորեն փոքրանում է՝

---

---

ներուժի հնարավոր հարաբերակցության համեմաք: Այսպես, Հայաստանում գործող հարկային դրույքաչափերը ենթադրում են, որ հարկերի և ՇՆԱ-ի հարաբերակցությունը 2006 թ. պետք է կազմեր առնվազն 24-25%, սակայն իրականում կազմել է 16,5%, այսինքն՝ որոշ դրսագրություններ դուրս են մնացել հարկային դաշտից, կամ է նրանց նկազմամբ լիարժեքորեն չի կիրառվել հարկային օրենսդրությունը: Նշանակում է՝ հասարակությունը ամեն դարի կորցնում է ՇՆԱ-ի առնվազն 7%-ը պետքական բյուջեում հավաքագրելու և երկրի սոցիալ-դրսագրության զարգացման կարիքներին հավկացնելու հնարավորությունը:

Հայաստանում, ինչպես նաև աղքաբության բարձր մակարդակ ունեցող այլ երկրներում, աղքաբության հաղթահարման գործում կարևոր դեր կարող է խաղալ արքերկրներից սպացված օժանդակության նպաստակային և առավել արդյունավել օգտագործումը: Ներկայում Հայաստանը աղքաբության հաղթահարման համար բավականին մեծ ծավալի արդարքին օժանդակություն սպացող երկրներից մեկն է: Այդ օժանդակության ծավալը ներկայումս կազմում է ՇՆԱ-ի գրեթե 11%-ը (այն դեպքում, եթե զարգացող երկրների միջին ցուցանիշը ընդամենը 0,8% է), որը մեր հանրապետության մեկ բնակչի հաշվով դարեկան կազմում է 54,7 ԱՄՆ դոլար (զարգացող երկրներում այդ միջինը 9,5 ԱՄՆ դոլար է): Եթե արքերկրների օժանդակությունը և միջազգային վարկերը չնպաստեն ձեռնարկությունների վերագործարկմանը, նոր աշխատավեղերի սրեղծմանը և ՇՆԱ-ի իրական ծավալների ու աճի գենալի մեծացմանը, ապա արդարքին պետքական պարզքը կ'ավելի կիսրացնի աղքաբությունը և կհանգեցնի նոր պրոլետարիատի: Ներկայում Հայաստանի արդարքին պետքական պարզքը 1,2 մլրդ ԱՄՆ դոլար է, որը կազմում է ՇՆԱ-ի մոտ 40%-ը: Այս արդարքին պարզքի դիմաց վճարվող գուկոսները հետագայում կազմելու են մոտ 100 մլն ԱՄՆ դոլոր, որը մասնավորապես հավասար է ընդունելիան նպաստների գծով վճարվող գումարներին:

Վյոր Հայաստանում կենսագործվում է «Աղքաբության հաղթահարման ռազմավարական ծրագիր» (ԱՌՈ-Ծ), որը նախադասում է 2015 թ. աղքաբության մակարդակն էապես կրծագել և հասցնել 19,7%-ի: Նախադասում է կրծագել եկամուտների անհավասարությունը, որը հիմնականում կապվում է պետքության կողմից իրականացվող եկամուտային քաղաքականության հետ, որի արդյունքում նվազագույն աշխատավարձը կհամապատասխանեցվի 2015 թ. աղքաբության պարենային գծին, կենսաթոշակները կհասցվեն 27 հազ. դրամի, ընդունելիան նպաստները՝ 20 հազ. դրամի, միջին աշխատավարձը՝ 70 հազ. դրամի: Կարեղծվեն 248 հազ. աշխատավեղեր, և զգալիորեն կկրծագվի գործազրկության մակարդակը: Աղքաբության հաղթահարման ծրագիրը ենթադրում է պետքության հարկային եկամուտների ավելացում ոչ միայն լրացուցիչ ներդրումների, այլև հարկային եկամուտների զգալիորեն ավելացման հաշվին: Նախադասում է 2015 թ. «հարկային բեռը» հասցնել 22,6%-ի՝ ներկայիս 16,5%-ի փոխարեն, և միաժամանակ պայքարել սրբագրային դրսագրության ու կոռուպցիայի դեմ:

---

---

## 15.5. ՍՈՅԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վրդարությունն ամենալայն իմաստով ազնվություն է, անաշառություն ու անկողմնակալություն: Եթե արդարությունը դիմարկենք բարեկեցության գետաւթյան գետանկյունից, ապա արդարացի պետք է համարել այնպիսի բաշխումը, որը համապատասխանում է երկու պայմանների:

ա) մի կողմից՝ բաշխումը պետք է լինի իրավահավասար, երբ հասարակության ոչ մի սուբյեկտ մեկ այլ անձի ապրանքային հավաքածուն չի գերադասում իր սեփական ապրանքային հավաքածուից,

բ) մյուս կողմից՝ բաշխումը պետք է լինի արդյունավետ ըստ Պարեսրպոյի, այսինքն՝ եթե բարձրացվի հասարակության մի անդամի բարեկեցությունը, ապա սրբազնական ապրանքային հավաքածուից:

Վրդարությունն ընդհանրապես հասարակական կարեգորիա է, որը կարող է ունենալ պարմական, ազգային, իրավաքաղաքական, բարոյահոգերանական, սոցիալ-լրնարկական և այլ դրանուրումներ, որոնք կախված են հիմնախնդիրների ընդգրկման շրջանակներից ու դրանք իրականացնելու պայմաններից: Սոցիալ-լրնարկական արդարությունը հիմք է դառնում արդարության բոլոր դրանուրումների համար՝ առաջ մղելով մարդու կենսագործունեությունն ապահովելու նյութական պայմանների սպեկուլար և բարիքների արդարացի բաշխման անհրաժեշտությունը: Քանի որ ցանկացած հասարակարգում արդարության վերջնական նպարակը հասարակության պահանջմունքների բավարարումն ու մարդկանց սոցիալական զարգացման համար անհրաժեշտ պայմանների սպեկուլումն է, ուստի «սոցիալական արդարություն» հասկացությունն արդարություն է հասարակության կենսագործունեության գրեթե բոլոր ոլորդներն ու պայմանները:

Տնտեսագիրության մեջ սոցիալական արդարության հիմնախնդիրն առավելապես կապվում է հասարակության եկամուտների բաշխման սկզբունքների հետ: Վրդարությունը գլխավորապես արդարայրում է բոլոր մարդկանց կենսամիջոցների և իրավունքների օգտագործման հավասարությունը: Եկամուտների հավասարեցումը, շաբերի կարծիքով, մարմնավորում է սոցիալական արդարությունը և արդարայրում նրա բովանդակությունը: «Հավասարությունը» ինքնին փիլիսոփայական կարեգորիա է և կապված է մեկ այլ կարեգորիայի՝ «արդարության» հետ: Մական եթե հավասարությունը կարելի է զնահագույն գնահատել գնահատելու մեջ (օրինակ, եկամուտներից օգտվելու բոլորի իրավահավասարությունը): Մասնավոր սեփականության և լրնարկական, գույքային անհավասարության առաջացմամբ սոցիալական արդարությունն սկսեց տարբերվել հավասարությունից՝ ներառելով նաև մարդկանց դիրքի ու դրության տարբերությունները նրանց արժանիքներին համապատասխան:

Սոցիալական արդարությունն ունի փարբեր մեկնաբանումներ, ինչը վկայում է այդ կարեգորիայի բազմակողմանիության մասին: Մեր կարծիքով, բնավ պարփառիք չէ արդարության փարբեր դրսուրումները համակցել, ամբողջացնել մեկ ընդհանուր գաղափարի մեջ: Ընդհակառակը, դրա փարբեր մեկնաբա-

---

նումների, ձևերի, դրսնորումների ճանաչումն ու կիրառումը առավել նպարակասաց կդարձնեն հիմնախնդրի ուսումնափրությունը և կնպաստեն արդարության էության համակողմանի բացահայփմանը:

Վրդարության հիմնախնդրին առաջին անգամ անդրադարձել է Արիստոփելը: Նա արդարությունը բաժանել է հավասարարականի և բաշխողականի՝ արդարության հարուկ գեսակ համարելով փոխհարուցումը կամ վարձափրությունը, որը պետք է եղնի բաշխման համամասնականության սկզբունքից<sup>2</sup>: Եւրագայում արդարության՝ հավասարության և համամասնականության (ըստ արժանիքների) այսպիսի սահմանազարդումը պահպանվել է հասարակության գործերու ողջ պարմության ընթացքում:

Վրդարությունն ունի պարմական բնույթ և պայմանավորված է մարդկանց կյանքի կոնկրետ պայմաններով: Մարդկանց հարաբերություններն արդարացի կարելի է համարել այն դեպքում միայն, եթե դրանք համապարասիստում են պարմական անհրաժեշտությանը և մարդու կյանքի պայմանների սփեղծման գործնական հնարավորություններին՝ բխելով փվյալ պարմական դարաշրջանի բնույթից: Սոցիալական արդարությունը վնասատության ոլորտում վնասատական հարաբերությունների համակարգի և, գլխավորապես, բաշխման հարաբերությունների համապարասիստությունն է փվյալ հասարակարգում փիրապերող պարկերացումներին ու շահերին: Վրդարությունն առավել ընդհանուր բնութագրությամբ հասկացվում է որպես ազնվություն ու անաշառություն բարիքների բաշխման ժամանակ:

Հասարակության զարգացման տարրեր դարաշրջաններում բարիքների բաշխումն արդարացի է համարվել այնպիսի չափանիշների առկայության դեպքում, ինչպիսիք են ի ծնե կարգավիճակը (արիստոկրաֆ, ազար պերեյ, սպրուկ), ունեցվածքը (սեփականապեր, պրոլետար կամ ունեցուրկ), աշխատավանքը (աշխատողների համար), շնչերի քանակը (զյուղացիական համայնքում) և այլն:

Տնտեսագիրության մեջ հայդնի են սոցիալական արդարության և եկամուգների արդարացի բաշխման գետայթյուններ, սկզբունքներ կամ հայեցակարգեր<sup>3</sup>, որոնք կարելի են երևայացնել հետևյալ համառոր բնութագրումներով.

1. Հավասարարական (էգալիբրարիստական) կամ հավասարապաշտական սկզբունքը ենթադրում է եկամուգների, բարիքների հավասար բաշխում հասարակության անդամների միջև, որոնք միապեսակ ներդրում և արժանիքներ ունեն այդ բարիքների սփեղծման գործում: Այս սկզբունքը, մարդասիրական լինելով հանդերձ, բացասաբար է ազդում աշխատանքի խթանների վրա:

2. Օգրապաշտական (ուղիղարիստական) սկզբունքի համաձայն արդարացի է համարվում եկամուգների այնպիսի բաշխումը, որի դեպքում մաքսիմալացվում է հասարակական բարեկեցությունը կամ հասարակության բոլոր անդամների կողմից ծեռք բերվող ընդհանուր օգրակարությունը: Այս դեպքում եկամուգների վերաբաշխման հիմքում դրվում է նվազող սահմանային օգրակարության գաղափարը, և ենթադրվում է, որ լրացուցիչ դոլարը (եկամուգը)

<sup>2</sup> Տե՛ս Փիլոսոփական էնցիկլոպեդիկ տարբերակ, Մ., 1989, էջ 623:

<sup>3</sup> Տե՛ս Կոմարական տեսության տեսությունները, մաս 1, էջ 542-547:

---

աղքադին ավելի շաբ լրացուցիչ օգտակարություն է պարզեցնել, քան հարուստին:

3. Լիբերալիստական (քարեհոգապաշտական) կամ ռոուլյան մոդերնան համաձայն արդարացի է համարվում եկամուտների այնպիսի բաշխումը, որը մաքսիմալացնում է հասարակության ամենանապահով անդամների բարեկեցությունը: Այս մոդերնում արդարացնում է եկամուտների անհավասարությունը և մերժում հավասարական բաշխումը, քանի որ այն թուլացնում է աշխատանքի խթանումը:

4. Լիբերարիանիզմի փեսությունը, ի տարրերություն ուղիղիպարիզմի և լիբերալիզմի, որոնց համաձայն հասարակական հարստությունը կարելի է վերաբաշխել սոցիալական որոշակի նպատակներ իրականացնելու համար, ենթադրում է, որ պետքությունը արդարություն հասպատելու նպատակով իրավունք չունի անհապներից վերցնել նրանց եկամուտի մի մասը և վերաբաշխել մյուսներին: Ըստ լիբերարիանիզմի՝ պետքության պարտականությունները ոչ թե եկամուտներ վերաբաշխելը, այլ անօրինական ճանապարհով դրանց սպացմանը խոչընդողենքն ու պարժամշացներ կիրառելն է, բոլորի համար ինքնադրասորման հավասար հնարավորություններ սպեղծելը: Կառավարության գլխավոր խնդիրը այն է, որ մարդիկ հնարավորություն ունենան պահպանելու այն ամենը, ինչը վասկակել են<sup>4</sup>: Այս կապակցությամբ պեկորդ չէ հիշել, որ անգիտացի վնասավագեկ Արամ Ամիրը, բացառելով պետքության միջամբությունը շուկայական տնտեսության գործունեությանը, նրա կարևոր խնդիրներից էր համարում հասարակության յուրաքանչյուր անդամի հնարավորին չափ պաշտպանումը անարդարությունից<sup>5</sup>:

5. Եկամուտների բաշխման սոցիալիստական եղանակը հիմնված էր «Յուրաքանչյուրին՝ ըստ աշխատանքի քանակի ու որակի» սկզբունքի վրա, իսկ ապագա կոմունիստական հասարակարգում ենթադրվում էր կիրառել «Յուրաքանչյուրից՝ ըստ ընդունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ պահանջմունքների» բաշխման սկզբունքը: Արդարության սոցիալիստական ըմբռնումը հիմնված է արդարության միջոցների համաժողովրդական սեփականության և հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձագրության սկզբունքի վրա: Նարկ է նշել, որ ըստ պահանջմունքների բաշխման ենթադրյալ սկզբունքը բացարձակ հավասարություն նույնպես չէր կարող ապահովել, որովհետք մարդիկ դարձեր մակարդակի պահանջմունքներով ու ճաշակով են օժբված: Մյուս կողմից էլ ռեսուրսների սահմանափակության և պահանջմունքների անսահմանափակության հիմնախնդրի առկայության պայմաններում հնարավոր չէ գործնականում իրագործել «Յուրաքանչյուրին՝ ըստ պահանջմունքների» սկզբունքը:

6. Եկամուտների շուկայական բաշխման սկզբունքի համաձայն արդարացի է եկամուտների այնպիսի բաշխումը, որը հիմնված է ազար շուկայական գների, արդարության գործուների, պահանջարկի ու առաջարկի մրցակցային մեխանիզմի վրա և ենթադրում է արդարության յուրաքանչյուր գործոնի սեփականափիրոջ եկամուտի համապատասխանությունը վավար գործոնից սպացվող սահմանային արդյունքին: Այս դեպքում եկամուտների անհավասարության խորա-

<sup>4</sup> Տե՛ս Լ. Տյոռօ, Բարեհ կապականության մասին, 1999, էջ 195:

<sup>5</sup> Տե՛ս Ա. Սմիտ, Առաջնային տնտեսության մասին, 1962, էջ 259:

---

ցումը դառնում է անխուսափելի: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ զուր շուկայական կարգավորումը զուգակցվում է եկամուտների՝ հաճախ չարդարացված վարբերարկմամբ (դիֆերենցմամբ), որը կախված է ոչ միայն ներդրված աշխատանքից ու կապիտալից, աշխատողի տաղանդից, այլև շուկայական անորոշությունից ու տնտեսական ենթակառուցվածքից:

7. Սոցիալական արդարության ժամանակակից ըմբռնումներից են նաև հասարակության սոցիալական համերաշխության ապահովումը (Շվեդիայում), սոցիալական աջակցության համակարգի իրազործումը (արևմտյան երկրներում) և այլն: Ըստ այս ըմբռնումների՝ պարբադիր են հասարակության բոլոր անդամների սոցիալական ապահովածության նվազագույն մակարդակը և աղքաբության սահմանից ոչ ցածր եկամուտ սպանալու երաշխիքը: Այս պարագայում անհավասարության և, մասնավորապես, աղքաբության խորացումը կարող է հանգեցնել հասարակության մեջ բռնությունների և հանցագործությունների մակարդակի աճին: Պարզ է, որ միջին կենսամակարդակ ունեցող քաղաքացին իրեն բարեկեցիկ կզար, եթե իրականացվեն աղքաբության և անհավասարության մեջմացմանն ուղղված միջոցառումներ:

Եկամուտների անհավասարությունը բնորոշ է բոլոր տնտեսական համակարգերին, որն արքահայրվում է բնակչության մեկ շնչին ընկնող եկամուտների մակարդակների վարբերություններով: Եկամուտների բաշխման շուկայական մեխանիզմը ընդունակ չէ ոչ միայն ամբողջությամբ ապահովել սոցիալական արդարությունը, այլև ավելի է խորացնում բնակչության եկամուտների անհավասարությունը:

Ըստ ամերիկացի գնդեսագետ Զ. Նելքրայջի՝ սոցիալիզմն էլ արդեն չի կարելի ընդունել որպես օրինակելի մոդել ոչ միայն արդար հասարակության, այլև պարզապես գրավիչ հասարակության համար, մյուս կողմից՝ կապիտալիզմն էլ իր դասական փեաքով այդպիսին չէ<sup>6</sup>:

Դա ակնհայփորեն դրսնորվում է հավրապես անցումային փուլում գրնվող երկրներում: Եթե սոցիալական արդարությունը գնահատելու լինենք հասարակության եկամուտների անհավասարաչափ բաշխվածության ասդիճանով, ապա ակնհայպ է, որ շուկան և սոցիալական արդարությունն անհամապեղելի են: Շուկայական մեխանիզմը նպարակադրված է ոչ այնքան սոցիալական խնդիրների, որքան զուր տնտեսական բնույթի խնդիրների լուծմանը. այն է՝ ինչպես բաշխել և օգգագործել սահմանափակ ռեսուրսները, որպեսզի ձեռք բերվեն հասարակության համար անհրաժեշտ առավելագույն բարիքներ: Եթե ընդունենք, որ հասարակական հարստության կարևորագույն աղբյուրը աշխատանքն է, ապա ակնհայպ է, որ բարիքների բաշխումը պետք է իրականացվի այդ հարստությունը սպեղծող յուրաքանչյուրի ավանդին համապատասխան: Սակայն այս սկզբունքի իրազորման համար բոլորը նախապես պետք է ունենան հավասար մեկնարկային հնարավորություններ, քանի որ հնարավորությունների հավասարությունը առաջնային է եկամուտների հավասարության համեմափ, որը ապահովել գործնականում գրեթե հնարավոր չէ: Այլ կերպ ասած՝ ըստ աշխատանքի բաշխումը նույնպես անխուսափելի է դարձնում եկամուտների անհավասարությունը:

<sup>6</sup> Տե՛ս Հ. Գելիբերտ, Справедливое общество. Гуманитарный взгляд, М., 1999, № 229:

---

թի անհավասարությունը: Սոցիալական արդարությունն այս դեպքում ոչ թե հավասար եկամուտներ սրբանալն է, այլ հավասար աշխատանքի և հավասար ավանդի դիմաց հավասար վարձագրությունը: Ուագի խնդիրն այն է, որ այդ անհավասարությունը չափազանց մեծ չլինի:

## **15.6. ՍՈՅԻՎԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՒՏՐԱՆՔԸ**

Ժամանակակից գնդեսակարգի պայմաններում եկամուտների բաշխման շուկայական մեխանիզմը գուգակցվում է եկամուտների պետական կարգավորման հետ: Վերջինս պետության սոցիալական քաղաքականության բաղկացուցիչ մասն է և արդահայտվում է պետական բյուջեի միջոցով եկամուտների վրա ներգրածման ու սոցիալական դրանսֆերվների դրամադրման մեխանիզմի ձևով: Եկամուտների պետական քաղաքականության մեջ կարևորվում է հարկային մեխանիզմը, որի շնորհիվ ազգային եկամուտի որոշ մասը բարձր եկամուտներ ունեցող բնակչության խավից անցնում է ցածր եկամուտներ ունեցող խավին: Եկամուտների այսպիսի վերաբաշխման հետ կապված՝ գնդեսագիրության մեջ առաջացել է, այսպես կոչված՝ սոցիալական արդարության և գնդեսական արդյունավետության երկրնդրանքի խնդիրը: Դա պայմանավորված է նրանով, որ եկամուտների հավասարեցման և հասարակության սոցիալական բնեղացումը մեղմելու մեծ ճգփումը կարող է հանգեցնել գնդեսական արդյունավետության անկման ու կորուսփների:

Եկամուտների վերաբաշխման և հավասարեցման կողմնակիցները դրա անհրաժեշտությունը հիմնավորում են նրանով, որ այն նպաստում է սպառողի կարիքների բավարարումը մաքսիմալացնելու և սահմանային օգրակարությունը առավելացնելի հասցնելու խնդրի լուծմանը: Եկամուտների հավասարության հակառակորդների հիմնական առարկությունն այն է, որ այդ նպագակով պետության վարած հարկաբյուջեպային և սոցիալական քաղաքականությունը թուլացնում է արդարողական աշխատանքի նկարմամբ խթանները, նվազեցնում գնդեսական արդյունավետությունը, որի հեփսնանքով երկրի գնդեսությունը կարող է հայդնվել սրբագրացնելու վիճակում: Եկամուտների վերաբաշխմանն ու սոցիալական պաշտպանվածությանն ուղղված միջոցառումները թուլացնում են հասարակության գործարար ակդրիվությունը, որն ուղեկցվում է գնդեսական արդյունավետության անկմամբ, քանի որ անհմասք է դառնում արդյունավետ աշխատել թե՛ աղքատի և թե՛ հարուստի համար: Աղքադը մրածում է միևնույն է, հասարակությունը սոցիալական նպաստների միջոցով «կացակցի իրեն», իսկ հարուստը մրածում է՝ միևնույն է, իր եկամուտի մի մասը «ձեռքից խելու են»: Եկամուտների բաշխման շուկայական մեխանիզմը, որը դրանում է եկամուտների անհավասարության առաջացմանը, միաժամանակ նպաստում է գնդեսական արդյունավետության բարձրացմանը և բաշխվող հասարակական արդյունքի ծավալի մեծացմանը: Այլ կերպ ասած՝ հասարակական հարսդրության բաշխման եղանակը էապես ազդում է համախառն արդյունքի չափերի վրա:

Վյապիսով, կարելի է եզրակացնել, որ սոցիալական արդարության և գնդեսական արդյունավետության երկրնդրանքն արդահայտվում է եկամուտների

---

հավասար և անհավասար բաշխման միջև ընդունակությամբ, որն էլ ի վերջո բանում է «անարդյունավետ սոցիալական արդարության» և «անարդար գնդեսական արդյունավերության» միջև ընդունակությանը:

Սոցիալական արդարության և գնդեսական արդյունավերության հակասականությունն արբահայպվում է նաև նրանով, որ բավականին կորուսֆներ են լինում հենց եկամուտների վերաբաշխման ընթացքում: Նարուսփներից դեպի աղքադներ եկամուտների վերաբաշխման գործնականությունը առաջացած կորուսփները ամերիկացի գնդեսագետ Վալդեր Օուքենի կողմից համեմադրվել է սոցիալական օգնության «ծակ դույլից» գեղի ունեցող արբահոսքի հետ: Սոցիալական օգնության համար նախագետաված միջոցների կորուսփները ըստ Օուքենի կապված է կառավարման ապարատի բյուրոկրատական համակարգի հետ, քանի որ սոցիալական նպաստների մի մասը անցնում է գարբեր հարկային և սոցիալական ծառայությունների կառավարչների, խորհրդադրությունների և աշխատավայրների գույքանը: Օուքենի հաշվարկներով սոցիալական օգնության «ծակ դույլից» կորուսփները կամ արբահոսքը բնութագրվում է նրանով, որ ունետք բաղաքացիներից վերցված 1 դոլարից 70 ցենսքը կորզում է աղքադներին հանձնելու ընթացքում, և ընդամենը 30 ցենսքն է ծառայում իր նպարակին<sup>7</sup>:

Եթե ընդունենք, որ այս գույալները չափազանցված են, ապա միևնույն է, սոցիալական նպաստների բաշխման ժամանակ թեկուզ 30%-ի կորուսփ գեղի ունենա, և օգնությունները հասցեափիրոցը չհասնեն, դա կվկայի եկամուտների հավասարեցման կամ սոցիալական արդարության «բարձր գնի» մասին:

Օուքենի «ծակ դույլից» գեղի ունեցող արբահոսքի պարբառով առաջացած կորուսփների ծավալները պայմանավորված են նաև նրանով, որ սոցիալական գրանսֆերպները մեծացնելու նպատակով հարկերի բարձրացումը հանգեցնում է լեզաւ հարվածում աշխարհների առաջարկի զգալի կրճագրմանը և նրա արբահոսքին դեպի «սպվերային հարված»՝ փորձելով խուասիել հարկերը վճարելուց, որը և փոքրացնում է սոցիալական ծրագրերի համար անհրաժեշտ գումարները հավաքելու երաշխիքները:

Սոցիալական արդարության և գնդեսական արդյունավերության հակասություններից է նաև այն, որ աղքադության դեմ պայքարի արդյունքում այդ դասի մարդկանց թվաքանակը կարող է ավելանալ՝ պայմանավորված նրանով, որ սոցիալական գրանսֆերպներ սպանալու ձգուումը փոխում է մարդկանց վարքագիծն ու հոգեբանությունը, և տարբեր կեղծիքների շնորհիվ հնարավոր է, որ ուներներից շատերը փիրանան դրանց: Սպացվում է, որ «գրանսֆերպների նպատակը հենց գրանսֆերին է» և ոչ թե աշխարհների խթանումն ու ներդրումների ընդլայնումը: Մոցիալական գրանսֆերպները երբեմն հանգեցնում են ընդունակությամբ քայքայմանը, թերարժեք ընդունակությամբ ավելացմանը, արբանական երեխաներով ընդունակությամբ շաբացմանը, քանի որ սոցիալական ծրագրերը հիմնականում ուղղված են նման ընդունակությամբ օժանդակելուն: Արբերկրներում ընդունված է կիրառել «աղքադության մշակույթ» հասկացությունը, ըստ որի՝ շատերն են ձգուում չքավորի կարգավիճակին, և այն դառնում է ապրելակերպ և փոխանցվում է սերնդից սերունդ:

<sup>7</sup> Ст. Курс экономической теории, под ред. М.Н. Чепуриной, М., 2002, т. 555:

---

Ընդհանուր առմամբ, տնտեսական արդյունավելությունը հակասում է սոցիալական արդարությանը այնպիսի դեպքերում, ինչպիսին է ռեսուրսների վերաբաշխումն ի օգույք չունեորների, համընդհանուր զբաղվածության ապահովումը, Էկոլոգիական խնդիրների լուծումը և այլն: Տնտեսական արդյունավելության և սոցիալական արդարության միջև հակասությունը, ըստ Էռլայան, իրենից ներկայացնում է որպես արդարության և սպառման միջև հակասության արդացոլում:

Սոցիալական հակասությունները մեղմացնելու հետ կապված ժամանակակից պայմաններում կիրառվում է «սոցիալ-տնտեսական արդյունավելություն» հասկացությունը, որն իր բովանդակությամբ ավելի լայն է և ընդգրկում է այնպիսի կարեգորիաներ, ինչպիսիք են «սոցիալական ծախքերը» (շրջակա միջավայրի աղբույնը, իշխանությունները) և «սոցիալական բարիքները» (առողջությունը, կրթությունը, գիտական ներուժը):

Համաշխարհային փորձը վկայում է, որ տնտեսական արդյունավելությունը, որը նպագրակաղրված է «հասարակական կարկանդակի» (ազգային եկամֆի) մեծացմանը, լավագույն արդյունքներ է քայլս շուկայական տնտեսական համակարգի պայմաններում: Վերջինս իր հերթին ուժեղացնում է հասարակության սոցիալական գործությունը, և սոցիալական արդարությունն իրականացվում է զիավորապես եկամուտների պետական քաղաքականության միջոցով, որը սահմանափակում է շուկայական տնտեսության մեխանիզմների գործերային գործողությունները: Անցումային դնդանական պայմաններում որոշակի միջոցառումներ են իրականացվում եկամուտների հավասարեցման, սոցիալական երաշխիքների սրբեցնման, բնակչության բոլոր խավերի համար հավասար մեկնարկային պայմաններ ապահովելու ուղղությամբ: Սակայն սոցիալական արդարության խնդրի լուծումը դժվարանում է «հասարակական կարկանդակի» բավականին համեստ չափերի պարզաբնույթ, որը կաշկանդում է վերաբաշխողական գործընթացները:

Վյափիսով, ինչպես եկամուտների խորը անհավասարությունն է խաթարում հասարակության սոցիալական կայունությունը, այնպես էլ եկամուտների մեխանիկական հավասարեցում՝ դնդանական արդյունավելությունը, աշխատանքի խթաններն ու գործարարությունը: Սոցիալական արդարության համար հասարակությունը արիապված է վճարել արդյունավելության նվազմամբ, հետևաբար և պետությունը պետք է ձգվի վարել այնպիսի սոցիալական քաղաքականություն, որպեսզի այդ հակասությունը հասցվի նվազագույնի:

Շուկայական դնդանական կարևոր սկզբունքներից է դնդանական արդյունավելության և սոցիալական արդարության չափանիշների ձևուն գուգակցումը: Հասարակությունը սոցիալական արդարության կարող է ձգվել միայն բարձր դնդանական արդյունքների հիման վրա, հետևաբար որպես շուկայական դնդանական վերջնական նվազագույնի սոցիալական արդարությունը:

---

## 15.7. ՇԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԸ

Եկամուգների բաշխման ու վերաբաշխման շնորհիվ ձևավորվում են ինչպես հասարակության ամբողջական, այնպես էլ նրա յուրաքանչյուր անդամի եկամուգները, որոնք գնդեսական բարեկեցության ցուցանիշներ են: Բարեկեցությունն ընդհանուր առմամբ կյանքի համար անհրաժեշտ բարիքներով մարդու բավարարվածությունն է: Տնտեսական բարեկեցությունն ունի քանակական և որակական որոշակիություն: Բարեկեցության քանակական բնորոշիչն է հենց կենսամակարդակն է:

Եկամուգների բաշխումը պետք է կարարվի այնպիսի սկզբունքներով ու եղանակներով, որպեսզի առավելագույնս նպաստի հասարակության բարեկեցության բարձրացմանը, որն իր քանակական դրսորումն է սրանում բնակչության կենսամակարդակի բարձրացման մեջ: Տնտեսագիրության մեջ բարեկեցության գնահապման համար գոյություն ունեն փարբեր չափանիշներ: Հսկ **Ա. Պիգուի<sup>2</sup>** մարդու բարեկեցությունը գնահապման է բարիքի օգբակարությամբ, սակայն գործնականում գրեթե անհնար է դրա որոշելը, որովհետև նույն բարիքը փարբեր անհապմների համար կարող է ունենալ փարբեր օգբակարություն: Բարեկեցության գնահապման **Վ. Պարեպոյի** չափանիշը անհապի արժեքային նախապարզությունն է, ըստ որի՝ յուրաքանչյուր մարդ ընդունակ է բոլորից լավ գնահապել իր սեփական բարեկեցությունը: Այլ կերպ ասած՝ առանձին մարդկանց բարեկեցության մակարդակներն անհամադրելի են, հետևաբար հասարակական բարեկեցությունը չի կարող որոշվել գումարման եղանակով, և այն հասարակության բոլոր անդամների «երջանկությունների» գումարը չէ: Հսկ Պարեպոյի՝ ռեսուրսների ցանկացած գումարը, որը կառաջացնի բարիքներ արդադրելու և բաշխելու փոփոխություն, կյանքի բարելավում է համարվում, եթե, իհարկե, ումանց բարեկեցության բարձրացումը չի վնասում մյուսներին: **Ն. Կալդորը** և **Զ. Տիքոսը** գրում են, որ բարեկեցությունը բարձրանում է, և եթե նրանք, ովքեր շահում են, իրենց եկամուգները բարձր են գնահապում գումաների կրած վնասներից: Հսկ **Ա. Քերզոսնի<sup>3</sup>** հասարակական բարեկեցության գնահապման համակարգը պետք է մշակվի գնդեսագետների, օրենսդիրների և գործադիր մարմինների կողմից, որի հիման վրա կկառուցվեն անդադրերության կորեր, որոնք կարգացնեն հասարակական բարեկեցությունը:

Հասարակական բարեկեցության քանակական չափանիշը **կենսամակարդակն** է, որը բնութագրում է բնակչության կյանքի սոցիալ-գնդեսական պայմանները և նրա պահանջմունքների բավարարվածության ասդիճանը: Հասարակական արդադրության արդյունքներն իրացվում են սոցիալական ոլորդում, ուստի կենսամակարդակի նյութական հիմք են սպեհծված բարիքներն ու դրանց բաշխման արդյունքում ձևավորված եկամուգները: Բնակչության կենսամակարդակի հիմք են նաև նրա իրական եկամուգները, որոնք ձևավորվում են եկամուգների բաշխման ու վերաբաշխման արդյունքում: Իրական եկամուգները բնութագրում են, թե մարդիկ որքանով կարող են բավարարել իրենց պահանջմունքները նյութական, հոգևոր բարիքներով և անհրաժեշտ ծառայություններով:

Կենսամակարդակ կափեգորիան կողմնորոշված է պահանջմունքների բավարարվածության ասդիճանի այնպիսի գնահատմանը, որը ենթակա է ուղղակի քանակական չափման (որամական կամ բնեղեն միավորներով): Կենսամակարդակը բնութագրում է ինչպես կենսական բարիքներով բնակչության ապահովածությունը, այնպես էլ որոշակի բարիքներով մարդկանց պահանջմունքների բավարարվածության ասդիճանը: Այլ կերպ ասած՝ կենսամակարդակի ներուժի հնարավոր ասդիճանը բնութագրվում է սպեղծված հասարակական արդյունքի, բարիքների ծավալով, իսկ կենսամակարդակի իրական հնարավոր ասդիճանը բնութագրվում է բնակչության իրական եկամուտներով, որը նրա վճարունակ պահանջմունքների բավարարման նախադրյալն է:

Բնակչության կենսամակարդակը բնութագրվում է բազմաթիվ ցուցանիշներով: Ըստ ՄԱԿ-ի մեթոդոլոգիայի՝ բնակչության կենսամակարդակը գնահատելու համար առաջարկվում է հիմնվել ներքոհիշյալ 12 խումբ ցուցանիշների վրա.

1. Ծնելիությունը, մահացությունը և ժողովրդագրական այլ ցուցանիշներ:
2. Կյանքի սանիդարակիցինիկ պայմանները:
3. Պարենային ապրանքների սպառումը:
4. Բնակարանային պայմանները:
5. Կրթությունը և մշակույթը:
6. Աշխատանքի պայմանները և զբաղվածությունը:
7. Բնակչության եկամուտներն ու ծախսերը:
8. Կյանքի արժեքը և սպառողական գները:
9. Տրանսպորտային միջոցները:
10. Տանգարի կազմակերպումը:
11. Սոցիալական ապահովությունը:
12. Մարդու ազատությունը:

Կենսամակարդակը բնութագրող այս հիմնական ցուցանիշներից բացի առանձնացվում են նաև մի շարք գեղեկարգական ցուցանիշներ, ինչպիսիք են բնակչության մեկ շնչին ընկնող ՌԱՀ-ի և ազգային եկամֆի ցուցանիշը, սպառման ծավալը բնակչության մեկ շնչի հաշվով: Այս ցուցանիշները, ըստ ՄԱԿ-ի փորձագետների, ավելի շատ գեղեկարգական են, քանի որ ազգային գրադարանների համադրման դժվարությունները հնարավորություն չեն գրավիս գրադրեր երկրներում դրանք դարձնել չափակցելի: Սակայն վերջին շրջանում ազգային գրադարանների կուրսի գնահատումը՝ զնողունակության պարիգենքի հիման վրա, հնարավորություն է գրավիս հնարավորինս հաղթահարել այդ դժվարությունը և բնակչության մեկ շնչին ընկնող ՌԱՀ-ի ծավալը համարել կենսամակարդակը բնութագրող հիմնական դրվեսական ցուցանիշներից մեկը:

Կենսամակարդակի գնահատումը քանակական ցուցանիշներով կամ բացառապես դրվեսական մոդելմամբ, ունի որոշակի թերություններ, քանի որ ամբողջովին և իրական ծեսով չի բնութագրում բնակչության կյանքի պայմանները: Պահանջմունքների բավարարման որակական չափանիշները բնութագրելու համար կենսամակարդակի ցուցանիշին գուգընթաց կիրառվում է նաև **կյանքի որակ** կափեգորիան: Կյանքի որակը նյութական և հոգևոր պահանջմունքների բավարարման ասդիճանի այնպիսի գնահատում է, որը ենթակա չէ ուղղակի քանակական չափման և պահանջում է անուղղակի քանակական գնահատման

---

բարդ եղանակների կիրառում՝ բարբեր քվալիմեփրիական (որակը որոշող) սանդղակների հիման վրա: Դրանց են վերաբերում աշխափանքային ժամանակի բովանդակայնության և ազար ժամանակի գնահապումը, դրանցով բավարարված լինելը, աշխափանքի և կենցաղի հարմարավետության նակարդակը, հագուստի որակը և մոդայնությունը, սննդի որակը և սննդի ընդունման պայմանները, բնակարանի, բնակավայրի և շրջակա միջավայրի, սոցիալական ինսուֆիլուսների գործունեության որակը գիտելիքների, հաղորդակցման, հասարակական-քաղակական ակդիվության որակական մակարդակները:

Բնակչության կենսամակարդակի գնահապումը ժամանակակից գնադեսագիրության մեջ կարարվում է նաև **գույք գնդեսական բարեկեցության** հայեցակետից ենելով: Զույգ գնդեսական բարեկեցությունը գնահապելու համար ՇԱՀ-ն հաշվարկվում է հաշվի առնելով նաև գնային գնդեսության ոլորտում սրեղծված արդաշուկայական բարիքների արժեքը, շրջակա միջավայրի պահպանման ծախսերը և ազար ժամանակը: ՇԱՀ-ի մեջ այս չհաշվառված բաղադրիչների ներառումը կարևոր նշանակություն ունի կենսամակարդակի գնահապման համար, սակայն բոլոր դեպքերում գույք գնդեսական բարեկեցության ցուցանիշը պայմանական ու հաշվարկային բնույթ է կրում և պաշտոնապես չի ընդունվում վիճակագրության մեջ:

Կենսամակարդակը բնութագրելիս հարակից կիրառվում է նաև **ապրելակերպ** հասկացությունը: Վարելակերպ կարեգորիան առավելապես ներկայացնում է մարդու ոչ միայն սոցիալ – գնդեսական, այլև սոցիալ – հոգեբանական, ազգային, բնապատմական միջավայրը և դրանցով պայմանավորված բազմաթիվ խնդիրներ, մարդու կյանքի ու աշխափանքի պայմաններն ու եղանակները:

Ժամանակակից գնդեսագիրության մեջ բնակչության կենսամակարդակը բնութագրող առավել ընդունելի ցուցանիշը **մարդկային զարգացման համարիվը**, որը հաշվարկվում է ՄԱԿ-ի կողմից և պարբերաբար հրապարակվելով, բնութագրում է ոչ միայն երկրների սոցիալ-գնդեսական զարգացման մակարդակները, այլև բնակչության կենսամակարդակը: Մարդկային զարգացման կամ հասարակական զարգացման համարիվը գնահապում է երեք հիմնական ցուցանիշների միջին համաթվերի հիման վրա.

- ա) ՇԱՀ-ի ծավալը բնակչության մեկ շնչի հաշվով,
- բ) բնակչության կյանքի միջին գնուղությունը,
- գ) կրթության և առողջապահության մակարդակը:

Մարդկային զարգացման համարիվը, որը գործում է 0-1 միջավայրում, փաստորեն բնութագրում է բնակչության կյանքի գնդեսական ու սոցիալական պայմանների աճրողջությունը: Կյանքի միջին գնուղության ցուցանիշն ինքնին կարող է կենսամակարդակի ամփոփությունը: Կյանքի միջին գնուղության ցուցանիշն ինքնին կարող է կենսամակարդակի ամփոփ ցուցանիշ համարիվ, քանի որ արկացում է մարդկանց կյանքի ու աշխափանքի պայմանները, նյութական ու հոգևոր բարիքներով ապահովածությունը, շրջակա միջավայրի բարենպաստությունը և, ընդհանրապես, վկայում է բարեկեցիկ ու անհոգ կյանքի մասին:

---

## **15.8. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԱՇԽՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՏԵՅՈՒՄՆԵՐԸ**

Տարերային շուկայական մեխանիզմն իր բնույթով կարող է հանգեցնել գոնդեսության խորը անկումների, խրոնիկական գործազրկության և աղքափության մեծ ծավալների: Այս հիմքի վրա XX դարի 40-50-ական թվականներին շաբ երկրներում պաշտոնապես ընդունվեց «Բարեկեցության պետություն» հիմնադրույթը, որը անհրաժեշտ էր համարում հասարակության աղքափ խավերի սոցիալական պաշտպանության լայն միջոցառումների անհրաժեշտությունը: Եթե բնակչության սոցիալական պաշտպանվածության համակարգը արևմտյան երկրներում գործում էր դեռևս XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին, ապա ԱՍԴ-ում այն արմագրավորվեց միայն XX դարի 30-ական թվականների կեսերին: «Բարեկեցության պետություն» ծրագիրը ներառում է ինչպես սոցիալական ապահովագրության ծրագրերը, որոնք վերաբերում են բնակչության բոլոր խավերին, այնպես էլ առավել ապահով ընդունիքների եկամուտների ապահովման միջոցառումների համակարգին (ծերության, իշխանության ապահովությունը, գործազրկության նպաստը, ոչ լիարժեք ընդունիքների երեխաներին, անաշխափունակներին պետական օգնությունը՝ ներառյալ պարենային, կրտոններով, բնակարանով ապահովումը և այլ սոցիալական ծառայությունները): «Բարեկեցության պետություն» ծրագրում կարևոր նշանակություն է փրկում բրանսֆերվագներին, այսինքն՝ եկամուտի մի մասի անհապույց փոխանցումը մեկ այլ անձի: Տրանսֆերվագները ծևավորվում են հարկային համակարգի միջոցով բարձր եկամուտներ ունեցող անձանց եկամուտի մի մասը պետական բյուջե հավաքագրելու և հօգուտ անապահով անձանց վերաբաշխելու ծևով:

«Բարեկեցության պետություն» համակարգի գործունեությունը որոշակի բարդությունների է հանգեցնում, որն արգահայտվում է հետևյալ հանգամանքներով:

- ա) բարձրանում է պետական բյուջեի սոցիալական ծանրաբեռնվածությունը, և մեծանում է բյուջեի պակասուրդը,
- բ) թուլանում են բնակչության աղքափ խավերի աշխափանք փնտրելու խթանները, որովհետև սոցիալական օգնության համակարգը չուներ մարդկանց համար անբարենպաստ է դարձնում աշխափանք փնտրելը:

Պարենային կրտոնները, միայնակ մայրերի նպաստը, գործազրկության նպաստը սպասվելիք աշխափանքից ոչ պակաս մեծություն են կազմում, ուստի չաշխափելն ավելի ձեռնպու է դարնում: Այս երևոյթի կապակցությամբ փնդեսագերներն առաջարկել են կիրառել բացասական եկամդրահարկի համակարգը (ԲԵՆ), որը աղքափ ընդունիքներին փրամադրվող դրամական աջակցության միասնական համակարգ է և կարող է փոխարինել նախկին սոցիալական բրանսֆերվագների համակարգին:

**Բացասական եկամդրահարկի Էռլեյունն** այն է, որ սոցիալական նպաստի երաշխափության նվազագույն գումար է վճարվում բոլոր նրանց, ում եկամուտը հավասար է զրոյի, այսինքն՝ բացի նպաստից, այլ եկամուտ չունեն: Սոցիալական ապահովության համակարգը կարարելագործելու նպարակով զարգացած երկրներում ծևավորվել է երկու հիմնական մոդելում:

---

ա) բացասական (նեգատիվ) եկամֆահարկը,

բ) աշխարհանքային գործունեությանն անցնելու խթանումը:

Եթե պողիփիվ կամ սովորական եկամֆահարկի դեպքում բարձր եկամուգներ ունեցող ընդանիքներն են «սուբսիդավորում» կառավարությանը, ապա նեգատիվ եկամֆահարկի դեպքում կառավարությունն է սուբսիդավորում այն ընդանիքներին, որոնց եկամուգը ցածր է որոշակի մակարդակից:

Բայց երբ մարդն աշխարհանքի է գեղավորվել, և նրա եկամուգը սկսում է աճել, ապա սոցիալական նպաստը պետք է կրծարել աշխարհավարձի նկարմամբ որոշակի գործակցով, այսինքն՝ երաշխավորված նպաստի գումարը պակասեցվում է այդ չափով: Դա կարող ենք բացադրել հետևյալ օրինակով. Ենթադրենք բացասական եկամֆահարկի դրույքը 50% է, և նպաստառուն 1200 դոլար երաշխավորված նպաստից բացի աշխարհանքի դիմաց 400 դոլար վարձագրություն է սպացել: Այս դեպքում 400 դոլար վարձագրության նկարմամբ կիրառվում է 50% եկամֆահարկ ( $400 \times 0,5 = 200$ ), և այդ 200 դոլարը հանվում է 1200 դոլար նպաստից: Սրացվում է, որ բացասական եկամֆահարկի համակարգը կիրառելով՝ ընդանիքի ընդհանուր վասպակը կկազմի 1400 դոլար (400 դոլար աշխարհավարձ և 1000 դոլար նպաստ): Եթե աշխարհանքային գործունեությունից եկամուգը 2400 դոլար է կազմել, ապա նպաստառուն գրկվում է 1200 դոլար բազային նպաստից, իսկ եթե աշխարհանքային վասպակը 2800 դոլար է կազմում, ապա բացասական եկամֆահարկը կկազմի 2000 դոլար ( $2800 \times 0,5 = 1400$  դոլար,  $1200 - 1400 = -200$  դոլար), իսկ ընդհանուր վասպակը կկազմի 2600 դոլար ( $2800 - 200$ ): Այս դեպքում արդեն բացասական եկամֆահարկը վիճակին վերաբերություն է սովորական եկամֆահարկով:

Սոցիալական աջակցության համակարգի կիրառման դեպքում խնդիր է առաջանալ, թե ինչպես պահպանել աշխարհանքի նկարմամբ խթանները: Եթե նպաստի իշեցման գործակիցը չափազանց բարձր լինի, ապա աղքադ քաղաքացուն ձեռնվոր կիրառելու արդարացնականացնելու աշխավանք չփնտրել: Ընդհանուր առմամբ ընդանիքները գործեր կերպ են արձագանքում բացասական եկամֆահարկին՝ կախված այն հանգամանքից, թե որքան է երաշխավորված նվազագույն նպաստի չափը, աշխարհանքային վասպակի մեծությունը և նպաստի իշեցման գործակիցը: Վերջինս, ըստ էության, հանդես է գալիս որպես բացասական սահմանային հարկադրույթ, կամ նպաստի կրծարման գործակից:

Բացասական եկամֆահարկը կարող է արդյունավետ լինել հետևյալ պահանջները բավարարելու դեպքում.

ա) պետք է ավելի շատ ընդանիքներ դուրս բերի աղքադության վիճակից,

բ) պետք է բավականին խթաններ ապահովի աշխարհանքային գործունեության համար,

գ) այս ծրագրերի «արժեքը» պետք է չափավոր լինի և չհանգեցնի պետքական բյուջեի սոցիալական լարվածությանը:

Դժվար չէ նկարել, որ այս խնդիրները հակասում են միմյանց, հետևաբար հեշտ խնդիր չէ այնպիսի մեխանիզմի մշակումը, որը կրծարի աղքադությունը, միաժամանակ խթանի աշխարհանքը և էժան նստի պետքության վրա:

---

---

Վերը բերված պայմանական օրինակից էլ է երևում, որ բացասական եկամֆահարկը այնքան էլ չի խթանում աշխափանքը, հետևաբար վերջին շրջանում զարգացած երկրներում մեծ նշանակություն է դրվում աշխափանքային գործունեության անցնելու խթանման ծրագրերին, որոնք այլ կերպ անվանվում են «Նպաստից դեպի աշխափանք» ծրագրեր: Այս ծրագրերի նպագրակն է հիմնականում փոփոխություններ կարարել երեխաներ ունեցող ոչ լիարժեք ընդանիքներին նպաստներ դրամադրելու ծրագրում: Դրանով նախափեսվում է նպաստել կրթությանը, պրոֆեսիոնալ պարրապարվածությանը, աշխափանքի գեղագործություն: Աշխափանքով և կրթությամբ զբաղվող նպաստառուներին դրվում են սուբսիդիաներ՝ երեխաների և դրանապորդային ծախսերի համար:

### **ԱՅն Ե՞ւ ած Մ՞ Տ՞ Ո՞»՛՛**

1. Ինչպես կզնահագրեք բաշխման հարաբերությունների գեղը և դերը դրստեսական հարաբերությունների համակարգում:
2. Որո՞նք են եկամուգների բաշխման լծակները:
3. Սոցիալական արդյունավետության ի՞նչ դեսություններ գոյություն ունեն:
4. Որո՞նք են հասարակության եկամուգների անհավասարության պարագաները:
5. Ինչո՞ւ են հակասություններ առաջանում դրստեսական արդյունավետության և սոցիալական արդարության միջև:
6. Ի՞նչ ենք հասկանում եկամուգների կառուցվածք ասելով, և ինչպիսին է այն ՀՀ-ում:
7. Արդյոք բոլո՞ր երկրներում գոյություն ունի աղքաբություն:
8. Ինչո՞վ է սոցիալական կենսանվազագույնը գարբերվում ֆիզիոլոգիական նվազագույնից:
9. Դեպի ո՞ր կողմ է շարժվում Լորենցի կորագիծը սոցիալական դրանսֆերվները վճարելուց հետո:
10. Ի՞նչ նպագրակով է կիրառվում բացասական եկամֆահարկը:
11. Ո՞րն է եկամուգների քաղաքականության նպագրակը:
12. Ինչի՞ հետևանքով է իրականացվում բնակչության եկամուգների համաթվավորումը:
13. Որո՞նք են ՀՀ աղքաբության հաղթահարման ռազմավարական ծրագրի հիմնական դրույթները:
14. Ինչպիսի՞ ցուցանիշներով է գնահագրվում կենսամակարդակը:

---

### **ԹՉՈՒՅՑ Ի՞Յ ԿԱՅ Ե՞Լ ՕԱԾԱՌԱԾՈՒՅՑ»**

Բաշխման հարաբերություններ  
Եկամուտների գործառություն և  
անհարական բաշխում  
Պետքության սոցիալական  
քաղաքականություն  
Օգրակարությունը և արդյունա-  
վելությունը ըստ Դարենքոի  
Սոցիալական արդարություն  
Էզալիփարիզմ  
Ուփիլիփարիզմ  
Ոռուլայան կոնցեպցիա  
Հասարակական բարեկեցության  
ռոռուլայան գործառույթ  
Եկամուտների բաշխման  
շուկայական կոնցեպցիա  
Աշխատանքային եկամուտներ  
Լորենցի կորագիծ  
Զինիի գործակից

Գների մակարդակի փոփոխությունը երկրում ազդում է ամբողջական պահանջարկի ծավալի կամ ամբողջական ծախսերի մակարդակի վրա, և այդ փոփոխությունը գեղի է ունենում ամբողջական պահանջարկի կորի երկայնքով կարարվող գեղաշարժերով: Այսինքն՝ կորի դիրքը մնում է անփոփոխ, և նրա ցանկացած կեզրը բնութագրում է անվանական **ԴՆԱ**-ի մեծությունը, որը որոշվում է իրական **ԴՆԱ**-ի և դեֆլյացորի (գների մակարդակի) արդարությալով:

Ամբողջական պահանջարկի վրա ազդում են նաև **ոչ գնային գործոնները**, որոնց ազդեցության հեփևանքով **AD** կորագիծը գեղաշարժվում է դեպի աջ կամ ձախ, որը համապարսկանաբար նշանակում է ամբողջական պահանջարկի մեծացում և փոքրացում:

Ամբողջական պահանջարկի վրա ազդող գնային և ոչ գնային գործոնների ազդեցությունը կարող ենք ներկայացնել հեփևայլ գծապարկերի գերազությամբ:



**Պ Յ Ա Յ Ի Շ »Ռ 17.4.2. Ամբողջական պահանջարկի փոփոխությունը:**

Ամբողջական պահանջարկի վրա ոչ գնային բնույթի գործոնների ազդեցությունը գեղի է ունենում ամբողջական պահանջարկի բաղադրիչների՝ սպառողական ծախսերի, ներդրումային ծախսերի, պետական գնումների, զուգ արդարանման ծավալների փոփոխության հեփևանքով<sup>5</sup>: Սպառողական ծախսերի փոփոխությունը գեղի է ունենում ոչ գնային բնույթի հեփևայլ գործոնների ազդեցությամբ.

- ա) սպառողի բարեկեցության փոփոխությունը,
- բ) սպառողի սպասումները կամ կանխագետումները՝ կապված ապագայում սրացվելիք իրական եկամուգների հետ,

<sup>5</sup> Տե՛ս **Կ.Մակկոնոլի, Ս.Բոլո**, Էկոնոմիկս, Մ., 1992, մասն 1, էջ. 177-180:

- զ) սպառողի սպառողական վարկի մարման պարփակորությունների չափը,  
դ) եկամբահարկի դրույքաշափերի փոփոխությունը:

Ներդրումային ծախսերի փոփոխության վրա ազդող ոչ գնային գործոններն են՝

- ա) Վոկոսադրույթի փոփոխությունը,  
բ) Ներդրումներից սպասվելիք շահույթի չափերը,  
գ) Փիրմաններից գանձվող հարկերի մեծությունը,  
դ) նոր փեխնողաների ներդրումը,

Ե) արդադրական հզորությունների առավել լրիվ օգտագործում:

Պերական սպառման ծախսերի կամ գնումների փոփոխության վրա ազդող ոչ գնային գործոններն են՝

- ա) հարկաբյուջենքային քաղաքականությունը,  
բ) դժվարացնելու համար առաջարկագիրը:


Զուր արդահանման փոփոխության վրա ազդող ոչ գնային գործոններն են՝

- ա) արդերկըներում ազգային եկամֆի ծավալների փոփոխությունը,

բ) ազգային դարադրամի փոխարժեքի փոփոխությունը այլ դարադրամների նկատմամբ:

**Ամրողական առաջարկը** երկրում սպելդված ապրանքների ու ծառայությունների ընդհանուր քանակն է, որը կարող է առաջարկվել սպառողներին զների փարբեր մակարդակների պայմաններում: Ամրողական առաջարկը (AS) փաստորեն համախառն ներքին (ազգային) արդյունքն է, իսկ առանձին դեպքում՝ ազգային եկամուտը: Ժամանակակից գննուածիվության մեջ ամրողական առաջարկի արժեքային ծավալը ներկայացվում է ազգային եկամուտի ցուցանիշի միջոցով, քանի որ վերջինս արդահայրում է նոր սպելդված արժեքի գործեկան ծավալը, որը կարող է օգրագործվել վերջնական սպառման և կուրակման նպարակով:

Ամբողջական առաջարկի կորագիծը գործառութային (ֆունկցիոնալ) կապ է արդարադատում զների մակարդակի և իրական ՌԱՀ-ի միջև՝ AS=f(P): Ամբողջական պահանջարկի կորագիծը յուրահապուկ փեսք ունի և ներկայացվում է հետևյալ կերպ:



**¶Í³ á³ i Í»ñ 17.4.3.** Ամբողջական առաջարկի կորագիծը:


Ինչպես նկարում ենք, ամբողջական առաջարկի կորագիծը բաղկացած է երեք հարվածներից՝ պայմանավորված նրանով, որ փնտեսագիրության դարբեր ուղղությունները յուրահարուկ չափանիշներ են դրել դրա կառուցման հիմքում: Ամբողջական առաջարկի կորագիծի և հորիզոնական կամ քեյնսյան հարված, II-ը՝ միջանկյալ հարված, III-ը՝ դասական հարված: Վյափիսի սահմանազարդումը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով:

- ամբողջական առաջարկը դարբեր փնտեսագիրական ուղղությունների կողմից դիմում է դարբեր գևողության (կարճաժամկետ, երկարաժամկետ) ժամանակահարվածում,
- ամբողջական առաջարկի շարժնթացը (դիմաշիկան) քննարկվում է գրադադության դարբեր մակարդակներում (ոչ լրիվ գրադադության, լրիվ գրադադությանը մոտ և լրիվ գրադադության),
- խնդիրը դիմում է գների ոչ միաբեսակ մակարդակներում:

Վյափիսի չափանիշներից կախված՝ ամբողջական առաջարկի կորագիծն ընդունում է վերը բերված դեսքը (փե՞ս զծապարկեր 17.4.3.): Նորիզոնական կամ քեյնսյան հարվածում արդադրության աճը դրեղի է ունենում ոչ լրիվ գրադադության և գների անփոփոխ մակարդակի պայմաններում:

Երկրորդ կամ միջանկյալ հարվածում հասարակական արդյունքի ծավալը մեծանում է գների չափավոր բարձրացման և գրեթե լրիվ գրադադության պայմաններում: Երրորդ կամ դասական հարվածում փնտեսությունը հասնում է իր արդադրական հնարավորությունների ներուժի մակարդակին, և հասարակական արդյունքի հետագա անվանական աճը դրեղի է ունենում գների մակարդակի բարձրացման հետևանքով, իսկ ՏՍԱ-ի իրական ծավալը մնում է նույնը:

Ամբողջական առաջարկի, ինչպես և ամբողջական պահանջարկի վրա ազդում են ոչ զնային գործոններ, որոնք ամբողջական առաջարկի կորը դեղաշարժում են դեպի աջ ու ձախ՝ համապարպականաբար մեծացնելով ու փոքրացնելով ամբողջական առաջարկը:



**ՊԼՇ Ձ Յ Ի»Ռ 17.4.4.** Ամբողջական առաջարկի փոփոխությունը:

Ամբողջական առաջարկի վրա ազդող ոչ գնային գործոններն են<sup>6</sup>.

1. Արդարական ռեսուրսների գների փոփոխությունները՝


- ա) ներքին ռեսուրսների առկայությունը,
- բ) ներմուծվող ռեսուրսների գները,
- գ) դիրքապեսությունը շուկայում:

2. Արդարողականության փոփոխությունները:

3. Իրավական նորմերի կամ պետության քաղաքականության փոփոխությունները՝

- ա) հարկերը ֆիրմաներից և սուբյեկտները,
- բ) փնտեսության պետական կարգավորումը:

Ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի փոխարարելության հիմնան վրա ձևավորվում է **մակրոպնդեսական հավասարակշռության AD-AS մոդելը**: Այն երկրի ազգային բնափեսության այնպիսի վիճակ է, երբ նրա բոլոր ոլորդները, արդարության ճյուղերն ու կառույցները զարգանում են համաշափ, և գործության բոլոր շուկաները գրնվում են հավասարակշռված վիճակում: Մակրոպնդեսական հավասարակշռությունն արվահայպում է ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի կորագծերի հարման միջոցով: Քանի որ ամբողջական առաջարկի կորագիծը բաղկացած է փոխադարձորեն կապված երեք հարկածներից, ուստի մակրոպնդեսական հավասարակշռությունը դրսևորվում է նույնպես երեք իրավիճակներով՝ կախված նրանից, թե ամբողջական պահանջարկի կորը որ հարկածում է հարում առաջարկի կորը: Ընդհանուր դրսեալ հավասարակշռության «ամբողջական պահանջարկ - ամբողջական առաջարկ» մոդելը դրսևորվում է հետևյալ պարզեցով:



**ՊԼ ա ՞ ի Ռ 17.4.5. Մակրոպնդեսական հավասարակշռության «AD-AS» մոդելը:**

<sup>6</sup> Տե՛ս Կ.Մակոնել, Ս.Բրօ, նշվ. աշխ., էջ 182-185:

---

Ինչպես նկարում ենք, մակրոփնտեսական հավասարակշռության «AD-AS» մոդելը ենթադրում է ընդհանուր գնութեսական հավասարակշռության դրսուրման երեք դեպքեր.

- ա) հավասարակշռությունը ոչ լրիվ գրաղվածության, գների կայունության և հասարակական արդյունքի աճի պայմաններում ( $E_1$ ),
- բ) հավասարակշռությունը գրեթե լրիվ գրաղվածության կամ լրիվ գրաղվածությանը մոտ իրավիճակում և գների բարձրացման ու հասարակական արդյունքի աճի պայմաններում ( $E_2$ ),
- գ) հավասարակշռությունը լրիվ գրաղվածության իրավիճակում հասարակական արդյունքի ծավալի կայունության և գների բարձրացման պայմաններում ( $E_3$ ):

Մակրոփնտեսական հավասարակշռությունը ամբողջական առաջարկի կողի քեյնսյան և միջանկյալ հարվածներում ձևավորվում է կարճաժի ժամանակահավածում, իսկ դասական հարվածում՝ երկարաժամկեպում:

Ինչպես նկարում ենք, «AD-AS» մոդելը ենթադրում է, որ մակրոփնտեսական հավասարակշռությունը կարող է ձևավորվել նաև ոչ լրիվ գրաղվածության պայմաններում:  $E_1$  կերպում հավասարակշռությունը ձևավորվում է քեյնսյան իրավիճակային (եքսպրեմալ) հարվածում,  $E_2$ -ում՝ քեյնսյան նորմալ հարվածում: Քեյնսի ներդրումը մակրոփնտեսական հավասարակշռության մեջ հարկադարձ այն է, որ նա գնութեանորեն իհմնավորել է ընդհանուր գնութեսական հավասարակշռության ձևավորման հնարավորությունը ոչ լրիվ գրաղվածության պայմաններում:

Մակրոփնտեսական հավասարակշռությունը, ինչպես նշել ենք, կարող է լինել վերականգնվող և չվերականգնվող: Վերականգնվողի էւթյունն այն է, որ հավասարակշռությունը խախովվելուց հետո կարող է կրկին վերականգնվել, և գնութեսության մեջ ձևավորվել նախկին հավասարակշռության վիճակը: Հավասարակշռության խախովումը կարող է դեղի ունենալ ինչպես AD-ի, այնպես էլ AS-ի՝ ոչ համաչափ և ոչ նույն ուղղությամբ փոփոխության հերթականությունը:

AD-ի և AS-ի միջև հավասարակշռության խախովումն ունի իր վերականգնման եղանակները: Այսպես՝

ա) եթե  $AD > AS$ -ից, ապա հավասարակշռության նման խախովումը կարող է վերականգնվել ապրանքների ու ծառայությունների գների բարձրացման և արդարանքի ծավալի ավելացման միջոցով,

բ) եթե  $AD < AS$ -ից, ապա հավասարակշռությունը կարող է վերականգնվել արդարության ծավալների կրճագման և ապրանքների ու ծառայությունների գների հջեցնան շնորհիվ:

Ինչպես գնութեսում ենք, մակրոփնտեսական հավասարակշռությունը կարող է խախովվել ինչպես ամբողջական պահանջարկի բարձրացման, այնպես էլ փոքրացման հերթականությունից: Ամբողջական պահանջարկի բարձրացման դեպքում մեծանում է ամբողջական առաջարկը, և բարձրանում է գների մակարդակը: Մակրոփնտեսական հավասարակշռությունը ձևավորվում է մի նոր մակարդակում, որը կարող է գնութեսական բնույթ կրել՝ կախված ամբողջական պահանջարկի նոր փոփոխությունից: Սակայն ամբողջական պահանջարկի կրճագման դեպքում մակրոփնտեսական հավասարակշռության նախկին վիճակի վերականգնման

---

(գների նախկին մակարդակին վերադարձի) վրա ազդում է մի յուրահափուկ գործոն, որն ընդունված է անվանել «արգելանիվի էֆեկտ»: Վերջինիս գործողությունը նմանեցվում է արգելանիվի մեխանիզմի հետ, որը պարզվում է միայն առաջ (հետ չի պարզվում): «Արգելանիվի էֆեկտը» արդարայիշվում է նրանով, որ մակրոբնիքնեսական հավասարակշռության խախումը ամբողջական պահանջարկի մեծացման հետևանքով հանգեցնում է գների բարձրացմանը, սակայն ամբողջական պահանջարկի փոքրացումից հետո գների իջեցումը կանխվում է, և նոր հավասարակշռությունը ձևավորվում է բարձրացված գների մակարդակում: Այլ կերպ ասած՝ AD-ի և AS-ի միջև խախում հավասարակշռությունը վերականգնվում է նոր իրավիճակում, որը պահպանում է գների բարձրացված մակարդակը:

Ժամանակակից գնաբեսագիրության մեջ գների բարձրացված մակարդակի չիշնելու, չնվազելու միգումը բացարրվում է աշխարավարձի ոչ առածզականությամբ: Աշխարավարձը արդարության ծախսերի զգալի մասն է, և նրա փոփոխությունը էական ազդեցություն է ունենում գների մակարդակի վրա: Գների չնվազելու միգումը ամբողջական պահանջարկի կրճարման պարագայում բացարրվում է նրանով, որ աշխարավարձի կրճարմանը հակադրվում են արհմիությունները, որոնք աշխարանքի շուկայում մենաշնորհային ամուր դիրք ունեն: Մյուս կողմից՝ աշխարավարձի իջեցումը կարող է բացասարար անդրադառնալ աշխարանքային կոլեկտիվի բարոյահոգեբանական մթնոլորդի վրա, հանգեցնել աշխարողների արդարությունը, որակյալ կադրերի կորսարի և աշխարանքի արդարողականության նվազմանը:

Այլ կերպ ասած՝ մակրոբնիքնեսական հավասարակշռության խախումը, որը կապված է ամբողջական պահանջարկը ամբողջական առաջարկին գերազանցելու հետ, հանգեցնում է գների ընդհանուր մակարդակի բարձրացմանը, որի հետևանքով աշխարավարձը նոյնպես բարձրանում է, որպեսզի պահպանի իր նախկին գնողունակությունը կամ իրական աշխարավարձի մակարդակը: Սակայն երբ կրճարվում է ամբողջական պահանջարկը, գների իջեցում դեղի չի ունենում՝ կապված աշխարավարձի իշնելու միգում չունենալու հետ, և այդ հետընթացի արգելակումն է նմանեցվում արգելանիվի մեխանիզմի հետ:


## 17.5. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԱՎԱՍԱՐԱԿԵՇՈՌԻԹՅԱՆ ՔԵՅՆԱՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Ընդհանուր գնաբեսական հավասարակշռության քեյնայան գրեսությունն ունի որոշ առանձնահարկություններ, որոնք պայմանավորված են հետևյալ դրույթներով.

- ընդհանուր գնաբեսական հավասարակշռությունը հնարավոր է նաև ոչ լրիվ գրադաժության պայմաններում,
- առկա է գների ոչ առածզականություն,
- խնայողությունները ֆունկցիա (գործառույթ) են համարվում եկամֆից: Արդարության ազգային եկամուքը որոշվում է որպես  $Y=C+S$ , իսկ օգտագործ-

ված ազգային եկամուպը՝  $Y=C+i$ , այս դեպքում  $C+i=C+S$ , որից հեփենում է, որ  $i=S$ : Այս հավասարումն էլ համարվում է հենց մակրոպնիբեսական հավասարակշռության պայմանը:

Ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի դասական մոդելի հետ մեկտեղ դիմումը է նաև «եկամուպներ-ծախսեր» քեյնայան մոդելը, որը այլ կերպ կոչվում է նաև «քեյնայան խաչ»: Այն ունի հեփենյալ գրաֆիկական պարբերը.




**Ճ 3 Տ Ի Շ» 17.5.1. «Քեյնայան խաչ»:**

Ե0-ն ցույց է փայլս ազգային պնդեսության այնպիսի հավասարակշռությունը, երբ ազգային եկամուպը հավասար է սպառողական ծախսերին, իսկ խնայողությունը՝  $S=0$ , այսինքն՝ բնութագրվում է պնդեսության լճացման (սպազմացիայի) վիճակը: Վվելացնելով մասնավոր ներդրումները ( $Y=C+i$ ), ինչպես նաև գումարելով պերական ծախսերը ( $Y=C+i+G$ ), ազգային պնդեսությունը կակսի ձգել լրիվ գրադադարության վիճակի (F), իրավիճակ, որը կարող է առաջանալ նաև մուլտիպլիկատորի էֆեկտի ազդեցությամբ:

Լճացման վիճակում պնդեսության սպառման սահմանային հակումը, ըստ Քեյնսի, բարձր չէ, և պահանջարկը չի հասել արդյունավետ պահանջարկի մեծությանը: Արդյունավետ պահանջարկը, ըստ Քեյնսի՝ այն ամբողջական պահանջարկն է, որը համապարսախանում է ամբողջական առաջարկին: Այս դեպքում արդյունավետ պահանջարկը, որը գուգակցվում է լրիվ գրադադարությամբ, մասնակի դեպք է: «Քեյնայան հեղափոխությունը» պնդեսագիրության մեջ այն է, որ ոչ լրիվ գրադադարության պայմանմերում դեսականորեն հիմնավորվել է հավասարակշռության հնարավորության դրույթը: «Քեյնայան խաչը» ցույց է փայլս, որ պնդեսական համակարգը հավասարակշռության վիճակում է գրնվում, երբ պլանային ծախսերը հավասար են ազգային արդյունքին: Ամբողջական ծախսերի գծապարկերն սպառման համար անհրաժեշտ է միավորել սպառման և ներդրումների գծապարկերը: Այդ կորի հագումը  $45^{\circ}$  գծի հետ բնութագրում է այն միակ հավասարակշռությունը, երբ ամբողջական ծախսերը հավասար են ազգային եկամուպին (գլուխ գծապարկեր 17.5.2.):

Հնդիանուր տնտեսական հավասարակշռության քեյնայան գումարության մյուս մոդելումը հիմնված է «խնայողություն – ներդրում» մոդելի վրա, որը բար է ուժյան լրացուցիչ մեթոդ է, որը հնարավորություն է ընձեռում հասարակական արդյունքի հավասարակշռությունը որոշել այն դեպքում, եթե տնային տնտեսությունների խնայողությունների գումարը հավասար է պլանավորված ներդրումներին:



¶ Ի՞ ձ ա՞ ի Շ» 17.5.2. «Խնայողություն-ներդրում» մոդելը:

Ե-ն ցույց է տալիս հավասարակշռության կերպ, որպես տնային տնտեսությունների խնայողությունները հավասարվում են ձեռնարկավերերի ներդրումներին: Սա էլ հենց հանգեցնում է գույք ազգային արդարանքի սպառման և ներդրումների հավասարակշռությանը, այսինքն՝ խնայողությունների «արդահոսքը» ամբողջովին փոխարփուցվում է ներդրումներով:

Այս մոդելի էությունն այն է, որ եկամֆի մի մասը, որն սպացվել է արդարանքի դաշտում գույքի արդարանքունից, տնային տնտեսությունները կարող են խնայել, այսինքն՝ խնայողությունների «եկամուգներ-ծախսեր» ընդհանուր հոսքից դուրսհանում: Այս կապակցությամբ սպառումը կարող է չհասնել արդարանքի գույք ազգային արդյունքի մակարդակին, և հավասարակշռությունը կխսխսվի: Սպառման «կորսարի» կամ խնայողության «արդահոսքի» փոխարփուցումը կարող է կապարվել ներդրումների շնորհիվ:

Եթե խնայողությունները գերազանցեն ներդրումներին, ապա սպառման և վերջիններիս գումարը փոքր կլինի գույք ազգային արդյունքից, իսկ եթե ներդրումները մեծ լինեն խնայողություններից, ապա սպառման և ներդրումների գումարը մեծ կլինի գույք ազգային արդյունքից, և նրա մակարդակը ցածր կլինի հավասարակշռվածից:

Տնտեսական հավասարակշռության քեյնայան մոդելում անհրաժեշտ է գարբերել պլանավորված և փաստացի ներդրումներ ու խնայողություններ հասկացությունները: Փաստացի ներդրումները ներառում են պլանավորված և չպահանավորված ներդրումները: Չպահանավորվածները իրականացվում են ապրանքանյութական պաշարների գեսքով, որոնք կարգավորիչ փարք են խնայողությունների և պլանավորված ներդրումների անհավասարակշռությունը վերականգնելու համար: Փաստացի ներդրումներն ըստ էության խնայողություններն են:

---

Պլանային ներդրումները փաստացիից գործերվում են ապրանքանյութական պաշարների չափով: Փաստացի ներդրումները հավասար են պլանավորված ներդրումներին: Վարանքանյութական պաշարները հաշվեկշռային դեր են խաղում, և դրանց փոփոխությունը հանգեցնում է եկամֆի հավասարակշռված մակարդակին, որի պայմաններում էլ խնայողությունները համապատասխանում են ներդրումներին:

Ի գործերություն դասական գնումնագիրության, Քեյնար գնումնական հավասարակշռության խնդիրը լուծելիս հիմք ընդունեց հետևյալ ելակեպային դրույթները, որոնց համաձայն՝

- խնայողությունները գործառություն են ոչ թե գործուի նորմայից, այլ եկամֆից,
- զները, այդ թվում և աշխարհավարձը ճկուն չեն, այլ ֆիքսված են,
- AD և AS-ի հավասարակշռության կերպով բնորոշ է արդյունավետ պահանջարկը,
- ապրանքների շուկան արմադական դեր է խաղում,
- պահանջարկի և առաջարկի հավասարակշռումը գեղի է ունենում ոչ թե զների բարձրացնան կամ իշեցման արդյունքում, այլ ապրանքանյութական պաշարների փոփոխության հետևանքով:

Ընդհանուր գնումնական հավասարակշռության քեյնայան և նորդասական մոդելումների գործերությունները հետևյալն են.

1. Դասական մոդելը անհնարին է համարում որևէ գուական գործագրելությունը և գործում է, որ զների ու գործուի նորմայի ճկուն կողմնորոշման շնորհիվ վերականգնվում է խախտված հավասարակշռությունը:

Քեյնայան մոդելում ներդրումների (ինվեստիցիաների) (i), խնայողությունների (S) հավասարակշռությունը կարող է գեղի ունենալ նաև ոչ լրիվ զբաղվածության պայմաններում:

2. Դասական մոդելը ենթադրում է զների ճկուն մեխանիզմի գոյությունը, որը օրգանապես բնորոշ է շուկային: Քեյնար կասկածի է ենթարկում այդ ենթադրությունը և գիտում, որ ձեռնարկաբերերը իրենց արգադրանքի նկատմամբ պահանջարկի կրծագման դեպքում ոչ թե իշեցնում են զները, այլ կրծագում արգադրությունն ու աշխարհագեղերը, հետևաբար «անգուստական» շուկայական մեխանիզմը չի կարող ապահովել կայուն, լրիվ զբաղվածություն:

3. Խնայողություններն առաջին հերթին գործառություն (ֆունկցիա) են եկամֆից և ոչ այնքան գործուի նորմայից:


Վսպիսով, ըստ քեյնայան գործության՝ ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի ընդհանուր գնումնական հավասարակշռությունը պահանջում է պահպանել խնայողությունների և ներդրումների ծավանների հավասարությունը, որը բավականին բարդ խնդիր է. այն կախված է գործուներից՝ եկամֆից և գործուի նորմայից:

## 17.6. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ԵՎ ԴՐԱՄՄԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒԹՅՈՒՆԸ


Հնդիանուր գնդեսական հավասարակշռությունը գնդեսության ապրանքային և փողային հարվածներում մանրամասնորեն վերլուծել է անզիացի գնդեսագետ Զոն Շիբը «Արժեք և կապիկալ» (1939) աշխարության մեջ: Որպես հավասարակշռության վերլուծության գործիք նա առաջարկել է «IS-LM» մոդելը: IS-ը նշանակում է «ներդրումներ - խնայողություններ», որը վերաբերում է գնդեսության ապրանքային կամ իրական հարվածին, իսկ LM-ը՝ լիկվիդայնություն, իրացվելիություն-փող, L-ը փողի նկարմամբ պահանջարկն է, M-ը՝ փողի առաջարկը:

Այս մոդելը, որը միավորում է գնդեսության իրական և փողային հարվածները, հերացողվել է նաև ամերիկացի գնդեսագետ Էլվին Նանսենի կողմից, և այս պարզառով երբեմն կոչվում է «Շիբ-Նանսենի մոդել»: Մոդելի առաջին մասը (IS) նպագակ ունի արդացողել հավասարակշռության պայմաններն ապրանքային շուկայում, իսկ երկրորդ մասը (LM)՝ փողի շուկայում: Ապրանքների շուկայում հավասարակշռության պայման է ներդրումների և խնայողությունների հավասարությունը, իսկ դրամական շուկայում՝ փողի նկարմամբ պահանջարկի և առաջարկի հավասարությունը:

Տնդեսության ապրանքային և փողային հարվածները գրնվում են փոխներգործության մեջ, և մեկում կարարված փոփոխությունները որոշակի փեղաշարժեր են առաջացնում մյուսում: Երկու շուկաներում էլ հավասարակշռությունը միաժամանակ որոշվում է գորկոսի նորմայով և եկամովի մակարդակով, այսինքն՝ երկու դեպքում էլ նշված պարամետրերը նույն ազդեցությամբ են գործում: Անհրաժեշտ է նշել, որ գնդեսագիրության մեջ կիրառվող շարժ մոդելների նման «IS-LM» մոդելը նույնպես իրեալական չէ և եկամոված է որոշակի ենթադրությունների վրա, որոնք այլ պարագայում կփոխեն մոդելի իրական նշանակությունը: Ենթադրվում է գների անփոփոխություն, կարճ ժամանակահարված, խնայողությունների և ներդրումների հավասարություն, փողի պահանջարկի ու առաջարկի համապարասխանություն: IS և LM կորերեն ըստ Շիբի ունեն հետևյալ գծապարփերը.




**ՊՐԵՍ ԱՅ Ի ՌԵՆ 17.6.1. IS կորը:**



**ՊՐԵՍ ԱՅ Ի ՌԵՆ 17.6.2. LM կորը:**

Ինչպես գենում ենք, IS և LM կորերի դիրքերը պայմանավորված են գործառքայի (r) և եկամուտի ծավալի (Y) փոփոխություններով, սակայն դրանք գործեր կերպ են ազդում ապրանքային և փողային շուկաների հավասարակշռության վրա, որից էլ կախված՝ փոփոխություն է առաջանում գնութեառայի երկու հարաբեկացությունների հավասարակշռության մեջ:

IS կորն արդահայքում է ապրանքային շուկայի հավասարակշռությունը, որպես ներդրումները հակադարձ կախվածության մեջ են գրնվում գոլոսով նորմայից: Օրինակ, գոլոսուից ցածր նորմայի դեպքում ներդրումները կամեն, ըստ այդմ՝ համապատասխանաբար կմեծանա եկամուքը (Y), որոշակիորեն կամեն նաև խնայողությունները (S), իսկ գոլոսուի նորման կազմի հջոնել, որպեսզի խթանի խնայողությունների վերածմանը ներդրումների: Արա հետևանքով է IS կորն արացիսների առանցքի նկարմամբ վարընթաց դիրք է գրավում: LM կորը հավասարակշռություն է արդահայքում փողի շուկայում, այս դեպքում փողի նկարմամբ պահանջարկը հջնում է, և քանի որ գոլոսուի նորման հարկ է, որ հարմարվի այդ պահանջարկին, ուստի պվյալ փոփոխությունը որոշակի հավասարակշռություն է ապահովելու փողի պահանջարկի ու առաջարկի միջև: Եթե գոլոսուի նորման սահմանվում է չափազանց բարձր, փողի գերերը նախընդունում են ձեռք բերել արժեթղթեր, և LM կորը բարձրանում է դեպի վեր: Ներազայում գոլոսուի նորման ընկնում է, և նորից ձևավորվում է հավասարակշռությունը:



¶ *I<sup>s</sup> à<sup>s</sup> i I»ñ 17.6.3.* iS-LM կորեղը:

Տնտեսության իրական և դրամական հարվածների հավասարակշռությունը դրսենորվում է IS և LM կորերի հապումով: Այն ըստ Էության կրկնակի հավասարակշռություն է արգահայտում մի կողմից խնայողությունների և ներդրումների միջև, մյուս կողմից՝ փողի պահանջարկի և առաջարկի միջև: Այս պիսի հավասարակշռությունը կայուն բնույթ չի կրում, քանի որ գոլոսի նորմայի և եկամֆի փոփոխություններից կախված գեղաշարժ է գեղի ունենում IS և LM կորերի դիրքերում: Օրինակ, ենթադրենք վնասական իրավիճակը երկրում պահանջել է մեծացնել պենական ծախսերը, որոնք բազմարկիչի (նույիփիպիկացիոն) էֆեկտով մեծացնում են ազգային եկամուգը: Վերջինս մեծացնում է փողի պահանջարկը, և ավտոմ է բարձրանալ փողի առաջարկը՝ հանգեցնելով

---

Այժմ դիբարկենք LM կորի գրեղաշարժը փողի առաջարկի ազդեցության հետևանքով: Ենթադրենք փողի առաջարկը մեծացել ու գերազանցել է պահանջարկին, որը հանգեցրել է գոլկոսադրույթի իջեցմանը: Հավասարակշռության նոր դիրքը դրամական շուկայում ձեռք կրերվի ավելի ցածր գոլկոսադրույթի դեպքում, որի հետևանքով LM կորը կրեղաշարժվի դեպի աջ և կգրավի LM<sub>1</sub> դիրքը: Տոկոսադրույթի իջեցման հետևանքով ապրանքային շուկայում ձեռներեցները կակտեն ավելացնել ներդրումները, որոնք կհանգեցնեն ամբողջական ծախսերի աճին և ազգային եկամֆի ավելացմանն ու հավասարակշռության վերականգնմանը:

Վյապիսով, խթանող դրամավարկային քաղաքականությունը հանգեցրեց գնդեսության իրական և դրամական հարվածների նոր հավասարակշռության ձևավորմանը, որը բնութագրվում է ցածր գոլկոսադրույթով ու ազգային եկամֆի ավելի մեծ ծավալով: Փողի առաջարկի կրծագման դեպքում ամեն ինչ գրեղի կունենա հակառակ կարգով: Սակայն ֆիսքալ (հարկաբյուջեփային) քաղաքականության ջաղաքովները, հակադրվելով մոնեպարհստներին, վերը նշված էֆեկտը երբեմն աննշան են համարում գոլկոսադրույթի նվազագույնին մոտ մակարդակի պայմաններում, որը հանգեցնում է «իրացվելիության ծուղակի» առաջացմանը, եթե IS կորը LM կորի հետ հապվում է հորիզոնական հարվածում:

## 17.7. ՄԱԿՐՈՏԵԽԱԿԱՆ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՌԻԹՅԱՆ «ԾԱԽՄԵՐ-ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ» ՄՈԴԵԼԸ

Տնտեսական հավասարակշռության գետակումների մեջ յուրահագուկ գրեղ է զբաղեցնում «ծախսեր - թողարկում» մոդելը: Այն մշակվել և առաջադրվել է ամերիկացի գնդեսագետ Վ. Լենվիլի կողմից և կոչվում է նաև միջնորդային հաշվեկշռի մոդել: Այս մոդելն իրենից ներկայացնում է ընդհանուր գնդեսական հավասարակշռության գետակում՝ գնդեսության դարբեր ճյուղերի միջև փոխկապվածությունները բացահայտելու նպարակով: Մոդելը, փասդրեն, արդարանքի արդարության և բաշխման (սպառման) միջնորդային հաշվեկշռի յուրահագուկ սխեմա է, որը կազմած է չորս հարվածներից: **Առաջին** հարվածում ներկայացված են արդարանքի արդարության վրա կա-

գարված նյութական ծախսերի ցուցանիշները, **Երկրորդում** վերջնական արդարանքի ցուցանիշները, որոնք բնութագրում են դրա օգտագործումը անձնական սպառման, կուրսակման, պետական գնումների և արդարանման նպարակներով, **Երրորդում** գրվում են ավելացված արժեքի ցուցանիշները (աշխարհավարձ, շահույթ, հարկեր), **չորրորդ** հավաճառում ներկայացված են զուր ազգային արդյունքի վերաբաշխման ցուցանիշները:

Միջնորդային հաշվեկշռի «ծախսեր-թողարկում» մոդելի կիրառումը հնարավորություն է ընձեռում բացահայտելու ոչ միայն գնութեառաջան գրաբեր ճյուղերի քանակական փոխկապվածությունները, այլև կանխագիծների գնութեառաջան գաղացման հնարավորություններն ու գեմաները: Մոդելի յուրացումը դյուրին դարձնելու համար կարելի է կիրառել «ծախսեր-թողարկում» մոդելի պարզեցված գարբերակը (գլուխուակ 17.7.1):

**Ընդհանուր գնութեական հավասարակշռությունը** կապված է երկրի ամբողջ գնութեառաջան՝ որպես շուկաների ու գների միջև փոխկապված համակարգի գործունեության հետ: Տարբեր շուկաների միջև հավասարակշռությունը կարելի է արդարայիտել երկմոդելային համակարգով՝ դիմարկելով ռեսուրսների և արդյունքների շուկաների միջև փոխարարելությունները, որպես գնութեառությունը ներկայացվում է երկու հավաճաներով՝ արդարող և ապառող, որոնք ընդգրկում են 5 արդարող և ապառող ճյուղեր: Ցուրաքանչյուր արդարող ճյուղի արդարանքը բաշխվում է կ' իր ներսում, կ' մյուս ճյուղերում: Օրինակ, մեքենաշինական հավաճածի 200 միավոր արդարանքից 40 միավորը սպառվում է մեքանագործության ճյուղում, 25-ը՝ հենց իր ներսում, 35-ը՝ վառելիքային ճյուղում, 75-ը՝ գյուղագնութեառաջան մեջ, 25-ը՝ գնային գնութեառություններում: Նույն կերպ պարզվում է, որ յուրաքանչյուր ուղղահայաց սյուն ցույց է փալիս յուրաքանչյուր արդարող ճյուղի արդարանքի այն քանակը, որն օգտագործվում է որպես ռեսուրս 5 սպառող ճյուղերում:

### Հ 17.7.1.

#### «ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ» ՊԱՐՁԵՑՎԱԾ ՄՈԴԵԼԸ

	Սպառող կամ օգտագործող ճյուղեր					
	1 Մերժադարձ	2 Մերժենա	3 Վառելիք	4 Գյուղագնության	5 Տնային գնություն	6 Արդարության ընդհանուր ծախսեր
Մերժադարձ	10	65	10	5	10	100
Մերժենաներ	40	25	35	75	25	200
Վառելիք	15	5	5	5	20	50
Գյուղագնութեառաջան	15	10	50	50	525	650
Աշխատ. (գնային գնությ.)	100	200	100	550	50	1000

Օրինակ, 2-րդ սյունը ցույց է փալիս, որ 200 միավոր մեքենաներ արդարելու համար որպես ռեսուրս անհրաժեշտ է 65 միավոր մեքան, 25 միավոր մեքենա, 5 միավոր վառելիք, 10 միավոր գյուղագնութեական արդարանք և

---

200 միավոր աշխաբանք: Այսպիսով, այյուսակը հսկակ պարկերում է պնդեալության գործերը հապածների կամ ճյուղերի փոխկապվածության բնույթը: Ցանկացած հապած կամ ճյուղ օգտագործում է այլ ճյուղերի արգադրանքը, ինչպես նաև սեփական արգադրանքի մի մասը որպես ռեսուրս: Միևնույն ժամանակ դժվար ճյուղի արգադրանքը այլ ճյուղերի համար ռեսուրս է: Այսինքն՝ եթե մեքենաշինության արգադրանքի 40 միավորը որպես ռեսուրս սպառվում է մերադագործության ճյուղում, ապա մերադագործության արգադրանքի 65 միավորը որպես ռեսուրս օգտագործվում է մեքենաշինության մեջ:

Վյո մոդելը հնարավորություն է պայիս հաշվարկել, թե որևէ ճյուղում արգադրանքի ծավալի ավելացումը որքան լրացուցիչ ռեսուրսներ է պահանջում այլ ճյուղերից: Օրինակ, որպեսզի մեքենաների արգադրությունն ավելացնենք ևս 20 միավորով կամ 10%-ով, ապա լրացուցիչ կապահանջվի մերադի 6,5 միավոր, մեքենաների՝ 2,5 միավոր, վառելիքի՝ 0,5 միավոր, գյուղագնդեսական արգադրանքի՝ 1 միավոր և աշխաբանքային ռեսուրսների՝ 20 միավոր:

Տնտեսության յուրաքանչյուր հապած կամ ճյուղ, որը լրացուցիչ ռեսուրս պետք է դրամադրի մեքենաշինությանը, բնականաբար, պետք է ընդլայնի իր արգադրությունը, որն էլ իր հերթին լրացուցիչ ռեսուրսներ է պահանջելու այլ ճյուղերից: Օրինակ, եթե մեքենաների քանակն ավելացվի 20 միավորով, և դրա համար հարկավոր է 6,5 միավոր (կամ 6,5%) լրացուցիչ մերադ, ապա մերադի արգադրության համար կապահանջվեն ևս 6,5 % անհրաժեշտ ռեսուրսներ (1-ին սյունակ): Նույն կերպ 0,5 լրացուցիչ միավորով ավելանալու դեպքում վառելիքի արգադրության համար անհրաժեշտ ռեսուրսները (3-րդ սյունակ) կավելանան 1%-ով և այլն:

Ինչպես նկարում ենք, «ծախսեր-արդյունքներ» մոդելն ունի միջազգային հաշվեկշռի գենք, որի պահպանումն ինքնին ընդհանուր դնդեսական հավասարակշռության ապահովման նախադրյալ է, քանի որ հնարավորություն է պայիս կանխագետներ այն քանակական համեմատությունների փոփոխությունները, որոնք ապագայում կառաջանան դնդեսական ոլորդի որևէ արգադրության ծավալների փոփոխությունից:

Տնտեսական հավասարակշռության Լեռնայի դնդեսության յուրահապեկությունն այն է, որ նա փորձեց ընդհանուր հավասարակշռությունը բխեցնել մասնակի հավասարակշռությունների առկայությունից, որոնք ձևավորվում են երկրի դնդեսության գործերի միջև: «Ծախսեր-արդյունքներ» մոդելն ըստ էության ընկած է հասարակական արդյունքի միջազգային հաշվեկշռի հիմքում և կարևոր դեր է խաղում ընդհանուր դնդեսական ու միջազգային համամասնությունների վերլուծության գործում:

---

---

### **Թ<sup>3</sup> ՌԾ»Ռ ՑՅԱՅ<sup>3</sup> ԷՒ ԱԾ Մ<sup>3</sup> ՅՆ<sup>3</sup> Մ<sup>3</sup> Ռ**

1. Որո՞նք են փնտեսական հավասարակշռության դասական գրեսության գաղափարական դրույթները:
2. Ո՞րն է ընդհանուր փնտեսական հավասարակշռության Վալրասի մոդելի էությունը:
3. Որո՞նք են ընդհանուր և մասնակի փնտեսական հավասարակշռության գաղափարները:
4. Որո՞նք են ամբողջական պահանջարկի վրա ազդող ոչգնային գործոնները:
5. Որո՞նք են ամբողջական առաջարկի վրա ազդող ոչգնային գործոնները:
6. Ի՞նչ հավաքածներից է բաղկացած ամբողջական առաջարկի կորը:
7. Ինչո՞ւ են փարբերվում ընդհանուր փնտեսական հավասարակշռության քեյնայան և նորդասական մոդելումները:
8. Ինչո՞ւ է արփահայպվում ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի փոխհարաբերությունը «AD-AS» մոդելում:
9. Բացագրել, թե ինչպես է սահմանվում հավասարակշռությունը ապրանքային և դրամական շուկաներում ըստ «IS-LM» մոդելի:
10. Ո՞րն է «քեյնայան խաչի» էությունը:
11. Ո՞րն է ներդրումների և խնայողությունների հավասարակշռության քեյնայան գրեսության բովանդակությունը:
12. Ո՞վ է «ծախսեր-արդյունքներ» մոդելի հեղինակը, և ո՞րն է դրա էությունը:

### **ԹՅԱՅ<sup>3</sup> Ի<sup>3</sup> ՅՆ<sup>3</sup> ԷՒ<sup>3</sup> օԱՌԱՆՇԾՅ»Ռ**

Մակրոփնտեսական  
հավասարակշռություն

Մակրոփնտեսական հավասարա-  
կշռության դասական գրեսություն

Սեյի օրենք

Գների ճկունություն

Գների կոշփություն

Ամբողջական պահանջարկ

Ամբողջական առաջարկ

«AD-AS» մոդել

Վալրասի մոդել

Տոկոսադրույթի էֆեկտ

Նարարկության էֆեկտ

Արփաքին գնումների էֆեկտ

Արգելանիվի էֆեկտ

«IS-LM» մոդել

«Քեյնայան խաչ» մոդել

«Ծախսեր-արդյունքներ» մոդել

## ԳԼՈՒԽ 18

### ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՏԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

#### 18.1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԷՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Տնտեսական աճը բարդ ու բազմակողմանի գնդեսական երևույթ է ոչ միայն գնդեսագիրության գետության համար, այն նաև գնդեսական քաղաքականության կարևոր հիմնախնդիրներից է: Տնտեսական աճը երկրի գնդեսության զարգացման ամփոփ բնութագրին է, որը պայմանավորված է ոչ միայն արդարական ռեսուրսներով, քաղաքականությամբ, օրենսդրությամբ, այլև բազմաթիվ հոգերանական ու սոցիալական գործոններով: Տնտեսական աճի բազմագործոնային բնույթը նկատի ունենալով՝ գնդեսագիրական մտքի նշանավոր գետարան Բ. Մելիքմենը նշել է. «Տնտեսական աճի համընդիանուր գետության մշակումը գրեթե անհրագործելի խնդիր է»<sup>1</sup>: Այդուհանդերձ, գնդեսական աճի վերաբերյալ ձևավորվել են բարբեր գետություններ, մշակվել գնդեսական շարժընթացի որոշակի մոդելներ, որոնք հնարավորություն են ընձեռում բազմակողմանիորեն ուսումնասիրել գնդեսական աճի հիմնախնդիրները, այն պայմանավորող գործոնները, քանակական ու որակական չափորոշիչները: Ցանկացած գնդեսական համակարգում գնդեսական աճը հասարակական արդյունքի ընդլայնված վերաբարերության դրսորման ձևն է: Տնտեսական աճի հիմնախնդիրի հետազոտման կարևորությունը պայմանավորված է ոչ միայն հասարակական վերաբարերության օրինաչփություններն ավելի խորությամբ պարզաբանելու և գնդեսավարման պրակտիկայում կոնկրետացնելու անհրաժեշտությամբ, այլև շուկայական գնդեսության մեխանիզմի հետ ունեցած անմիջական կապով:

Տնտեսական աճը յուրաքանչյուր պետքության կողմից դիմում է որպես կարևոր գնդեսական ու քաղաքական նպատակ, հասարակության բարգավաճման և նրա բարեկեցության բարձրացման նյութական հիմք: Այս հասարակական արդյունքի քանակական մեծացումն ու որակական կափարելագործումն է, որը հնարավորություն է դրախտ ընդլայնել երկրի գնդեսության հնարավորությունները հասարակության պահանջմունքներն առավելագույն չափով բավարարելու համար: Տնտեսական աճ ապահովող գնդեսությունն ավելի մեծ հնարավորություններ ունի նոր սոցիալական ծրագրեր իրականացնելու, աղքադության և շրջակա միջավայրի խնդիրները լուծելու ուղղությամբ՝ առանց գոյություն ունեցող սպառման ընդհանուր մակարդակը նվազեցնելու և ներդրումների ծավալները կրծագելու: Տնտեսական աճը սերպորեն կապված է նաև զբաղվածության հիմնախնդիրի հետ: Եթե զբաղվածության գետությունը խնդիր է

<sup>1</sup> Ст. Курс экономической теории, под ред. Чепурине М.Н., М., 2004, т. 606:

---

դնում, թե ինչ է անհրաժեշտ, որպեսզի գոյություն ունեցող արքադրական հզորություններն օգբագործվեն լրիվ, ապա դնդեսական աճի դեսության հիմնական նպագակն այն է, թե ինչպես կարելի է մեծացնել արքադրական հզորությունների և հասարակական արդյունքի ծավալը լրիվ զբաղվածության պայմաններում: Եթերված փափարկները հիմք են փախս եգրակացնելու, որ դնդեսական աճը նշանավորվում է նրանով, որ նպագում է արքադրական ռեսուրսների սահմանափակության և հասարակության պահանջմունքների անսահմանափակության հիմնախնդրի լուծմանը:

Տնդեսական աճի ապահովումը պետքության համար ոչ միայն կարևոր դնդեսական նշանակություն ունի, այլև հետապնդում է քաղաքական նպագակ: Տնդեսական աճի պարամետրերը, դրանց շարժընթացը լայնորեն օգբագործվում են բնութագրելու ու գնահատելու համար ոչ միայն ազգային դնդեսության զարգացումը, այլև դնդեսության պետքական կարգավորման արդյունավելությունը: Երկրի բնակչությունը սովորաբար պետքության և կառավարության սոցիալ-դնդեսական քաղաքականությունը գնահատում է՝ հիմնվելով դնդեսական աճի և կենսամակարդակի շարժընթացի ցուցանիշների վրա: Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ պառամենդապական ու նախազահական ընդունակությունը ժամանակ թեկնածուներն իրենց քաղաքական ծրագրերում մշկապես հեշեցնում են երկրի դնդեսության հետագա աճն ապահովելու անհրաժեշտությունը և ներկայացնում անելիքներն այդ ուղղությամբ: Վերջին ժամանակաշրջանում Արևելյան Եվրոպայում և նախկին Խորհրդային Միությունում փեղի ունեցած հեղաշրջումները հիմնականում պայմանավորված էին լճացման և արևմտյան երկրների համեմապությամբ դնդեսական աճի ավելի դանդաղ տեմպեր ունենալու հանգամանքով: Այսպիսով, դնդեսական աճը երկրի հեռանկարային զարգացման և նրա դնդեսական քարգավաճման առավել կարևոր գործոնն է, որը դնդեսական ու քաղաքական նշանակություն ունի պետքության համար, կենսական նշանակություն՝ երկրի բնակչության համար:

Տնդեսական աճը հասարակական արքադրության ընդլայնումն է և հասարակական արդյունքի քանակական ցուցանիշների ավելացումը: Տնդեսական աճը երկրի դնդեսական զարգացման քաղացուցիչ մասն է և անմիջականորեն արքահայտվում է հասարակական արդյունքի ու նրա արքադրության գործուների քանակական ավելացման և որակական կարգարելագործման որոշակի շարժընթացով: Տնդեսական աճը ընդլայնված վերարդադրության հավելանիշն ու օրինաչափությունն է: Տնդեսական աճին, որպես վերարդադրական կարգորիայի, բնորոշ են որոշակի գծեր ու հավելանիշներ. այն հավաքական, ընդհանրացնող կարգորիա է, որն արքահայտում է հասարակության դնդեսական առաջընթացի քանակական ու որակական կողմերը, նաև հասարակական վերարդադրության կարգորիա է, որն արքահայտում է մակրոդնդեսական մակարդակի դնդեսական հարաբերություններ ու գործընթացներ:

Ինչպես նշեցինք, դնդեսական աճը ընդլայնված վերարդադրության կարևոր հավելանիշն ու օրինաչափությունն է, հետևաբար դրա դնդեսակը որոշվում է իրենց ընդլայնված վերարդադրության բնույթով: Դրան համապարախան՝ փարբերում են դնդեսական աճի էքսպենսիվ և ինֆենսիվ փիպերը:

**Էքսպենսիվ** (փարածուն) **դնդեսական աճն** ապահովում է արքադրու-

---

թյան գործոնների՝ աշխափանքի, կապիկալի, հողի քանակական կամ ծավալային ավելացման հաշվին: Այն արդահայրվում է, այսպես կոչված՝ «արդադրության դաշտի ընդլայնմամբ», այսինքն՝ արդադրության գործընթացի մեջ են ներգրավվում լրացուցիչ աշխափողներ, հողագործածություններ, կապիկալ ներդրումներ, բնական ռեսուրսներ, որոնք հանգեցնում են արդադրության չափագծերի (մասշտաբների) ընդլայնմանն ու հասարակական արդյունքի մեծացմանը: Էքսպլենսիվ գննութեական աճի դեպքում ենթադրվում է արդադրության գործոնների քանակական ավելացում, որը պեղի է ունենում նախկին գործությունների վրա:

**Ինքենակվ** (լարված) **փնտեսական աճը** բնութագրվում է առավել կարարելագործված արդադրության գործոնների կիրառմամբ և դրանց ինքենակվ ու արդյունավելու օգդագործմամբ: Վյո դեպքում արդադրության ծավալաչափերի ընդլայնումը ապահովվում է նորագույն փեխնիկայի կիրառման, աշխարհողների որակավորումը բարձրացնելու, արդադրության կազմակերպման ձևերն ու մեթոդները կարարելագործելու շնորհիվ:

Տնտեսական աճի էքսպենսիվ և ինֆենսիվ գործակներն առանձին-առանձին կարելի է դիմարկել միայն գրեալկանորթեն, քանզի իրականում դրանք միմյանցից անկախ գոյություն չունեն: Դրանք արդահայքվում են գրեալկան աճի էքսպենսիվ և ինֆենսիվ գործոնների վիլյադարձ կապի գույքով:

Տնտեսական աճը զնահափում է ազգային պնդեալթյան վերջնական արդյունքների՝ իրական ՌԱ-ի շարժով: Տնտեսական աճի չափումը կամ զնահափումն ընդունված է կարարել երկու եղանակով.

- ա) համախառն ներքին (ազգային) արդյունքի իրական ծավալի մեծացումը որոշակի ժամանակահավածում,  
բ) համախառն ներքին (ազգային) արդյունքի իրական ծավալի աճը բնակչության մեջ շնչի հաշվով:

Տնտեսական աճը գնահատելու այս եղանակները փոխադարձաբար կապված են և կիրառվում են որոշակի հետազողական ու վերլուծական խնդիրներից ենելով: Եթե առաջին եղանակը բնութագրում է երկրի պնդեսական ներուժը, նրա արդարադարձական հնարավորությունները, ապա երկրորդ եղանակը կիրառվում է բնակչության կենսամակարդակն առանձին երկրներում գնահատելու և միմյանց հետ համեմատելու համար: Օրինակ, Հնդկասպանի համախառն ազգային արդյունքը գրեթե 70%-ով գերազանցում է Շվեյցարիայի համախառն ազգային արդյունքը, սակայն բնակչության կենսամակարդակով Հնդկասպանը Շվեյցարիայից հետք է մնում ավելի քան 60 անգամ: Տնտեսական աճի գնահատման երկու եղանակների դեպքում էլ այն չափվում է դաշտեկան աճի դեմքերով: Վերջինս որոշելու համար համախառն ներքին արդյունքի փաստացի ծավալը բաժանում ենք նախորդ կամ բազիսային ժամանակաշրջանի ծավալի վրա՝ արդարադարձելով փոկուսներով: Գործնականում պնդեսական աճի դեմքը գնահատվում է դաշտեկան հավելածի դեմքով (Y), որը որոշելու համար համախառն ներքին արդյունքի հավելածը բաժանում ենք բազիսային ժամանակաշրջանի ծավալի վրա՝ արդարադարձաբար փոկուսներով:

$$Y = \frac{Y_t - Y_{t-1}}{Y_{t-1}} \times 100\% = \frac{\Delta Y_t}{Y_{t-1}} \times 100\% \text{ կամ } Y = \frac{Y_t}{Y_{t-1}} \times 100\% - 100\%,$$

որպես՝

$Y_t$ -ն իրական ՌԱՀ-ի ծավալն է դիբարկվող ժամանակահարվածում,  
 $Y_{t-1}$ -ը՝ ՌԱՀ-ի իրական ծավալը նախորդ ժամանակահարվածում:

Միջին դարեկան հավելածի տեսալը ( $\bar{Y}$ ) որոշվում է հետևյալ կերպ.

$$\bar{Y} = \sqrt[n]{\frac{Y_t}{Y_{t-1}} - 1} \times 100\%,$$

որպես՝

$Y_t$  –ն վերջին դարված ՌԱՀ-ի ծավալն է,

$Y_{t-1}$  –ը՝ բազմային դարված ՌԱՀ-ն,

$n$ -ը՝ դարիների թիվը:

Տնտեսական աճի ցուցանիշը միշտ չէ, որ դրական մեծությամբ է արդարացրվում. եթե փաստացի դարում ՌԱՀ-ն վերարդարվել է նախորդ դարված նույն ծավալի չափով, ապա դա վկայում է **գրանցական** դրսեալական աճի մասին, իսկ եթե հասարակական արդյունքը վերարդարվում է ոչ ամբողջովին, այլ մասնակիորեն, ապա առկա է **բացասական** աճ: Վերջինս բնորդշ է հարկապես երկրի դրսեալական աճի մասին, անկումային իրավիճակներին: Այլ կերպ ասած՝ դրսեալական աճի տեսալը պայմանավորված է հասարակական արդյունքի վերարդարության բնույթով (ընդայնված, պարզ և կրծարված կամ ոչ լիարժեք):

Ներկայումս առավել բնույթագրական է դրսեալական աճի գնահարման երկրորդ եղանակը: Այս դրսեալական աճը ազգային դրսեալական այնպիսի զարգացումն է, որի դեպքում համախառն ներքին արդյունքի մեծացման տեսալը գերազանցում են բնակչության աճի տեսալը: Սա հնարավորություն է դաշտական աճը գնահարել բնակչության կենսամակարդարության բարձրացման դրսեալական մեջ դրսեալական աճի հիմնական նպաստակն ու չափանիշը ընդունված է համարել բնակչության պահանջմունքների առավել լրիվ բավարարումն ու կենսամակարդարության բարձրացումը: Այս չափանիշից ելնելով՝ դրսեալական աճի դարբեր նպաստակներ են դրսեալական և մակրո-դրսեալական մակարդակներում: Միկրոդրսեալական մակարդակում դրսեալական աճի նպաստակը առավելագույն շահույթ ապահովելու ձգումը դիբարկվեր որպես հասարակության հիմնական խնդիր: Այս դեպքում, ըստ էության, դրսեալական մեջ դրսեալական աճի համար առավել առավելագույն շահույթ ապահովություն է: Սակայն ի՞նչ դեղի կունենար, եթե բոլոր ֆիրմաների առավելագույն շահույթ ապահովելու ձգումը դիբարկվեր որպես հասարակության հիմնական խնդիր: Այս դեպքում, ըստ էության, դրսեալական մեջ դրսեալական աճի համար առավել առավելագույն շահույթ ապահովություն է: Միկրոդրսեալական մակարդակներում դրսեալական աճի նպաստակը առավելագույն շահույթ ապահովություն է: Մի խորպով, առավելագույն շահույթի սպասումը չի կարող մակրոդրսեալական աճի գլխավոր նպաստակ համարվել:

---

Ռեփրաքար, գնդեսական աճի հիմնական խնդիրը մակրոպնդեսական մակարդակում ամբողջ բնակչության կենսամակարդակի բարձրացումն է: Տնդեսական աճի նպարակների այսպիսի տարրերակումը միկրո- և մակրոպնդեսական մակարդակներում կարող է կարարվել պոզիֆիկվ և նորմադրիվ գնդեսագիրության դեսանկունից եղնելով՝ դրանք ներկայացնելով որպես փաստացի և ցանկայի նպարակներ: Եթե պոզիֆիկվ գնդեսագիրության դեսանկունից գնդեսական աճի նպարակը առավելագույն շահույթի սպացումն է, ապա նորմադրիվային գնդեսագիրության դեսանկունից՝ բնակչության կենսամակարդակի բարձրացումն ու երկրի ազգային անվիրանգության ապահովումը:

Տնդեսական աճի գնահարումը բնակչության մեկ շնչին ընկնող իրական ՇԱՀ-ի շարժնթացով, դրական կողմերով հանդերձ, անթերի ցուցանիշ չէ: Այսպես, օրինակ, եթե երկրի բնակչության մահացությունը գերազանցում է ծնելիությանը, ապա բնակչության թվաքանակը կրճարակում է, և ՇԱՀ-ի՝ անգամ զրոյական աճի դեպքում հասարակական արդյունքը բնակչության մեկ շնչի հաշվով մեծանում է: Նման երևույթ կարող է նկարվել և ՇԱՀ-ի բացասական աճի պարագայում, եթե, իհարկե, բնակչության կրճարման դեմքը գերազանցի իրական ՇԱՀ-ի կրճարման դեմքին: Այդ դեպքում երկրի գնդեսության իրական վիճակն աղավաղվում է:

**Տնդեսական աճի գենապերի** հիմնախնդիրը կարևոր նշանակություն ունի գնդեսագիրության դեսության մեջ: Տնդեսական աճի կայուն գենապերի ապահովումը երկրի գնդեսության շարժնթաց և առաջընթաց զարգացման նախադրյալն է: Տնդեսական աճի բարձր գենապերը, այլ գործոնների անփոփոխ պայմաններում, ենթադրում են երկրի գնդեսական ներուժի մեծացում և բնակչության նյութական բարեկեցության բարձրացում: Տնդեսական աճի գենապերի նվազումը գարենկան 3%-ից ցածրի դեպքում, ըստ առանձին գնդեսագիրների հաշվարկի, կարող է հանգեցնել նրան, որ բնակչության իրական եկամուգների աճը կդանդաղի և էական ազդեցություն չի ունենա կենսամակարդակի բարձրացման վրա, հավլապես թույլ զարգացած երկրներում: Մյուս կողմից է, եթե գնդեսական աճի գենապերը 2,7% է, ապա գործազրկության մակարդակը երկրում չի կրճարվում: Տնդեսական աճի բարձր գենապերը՝ նշանակում է հասարակական արդյունքի, երկրի գնդեսական ներուժի կրկնապարկման ժամանակահարկվածի գլուխության կրճարում: Օրինակ, գնդեսական աճի գենապերի բարձրացումը գարենկան 3%-5%-ի, կնշանակի (համաձայն «70-ի կանոնի»), որ երկրի համախառն ազգային կամ համախառն ներքին արդյունքը կրկնապարկվի ոչ թե 23,3, այլ 14 գարում ( $70 : 3 = 23,3$  գարի,  $70 : 5 = 14$  գարի): Տնդեսական աճի բարձր գենապերի անհրաժեշտությունը կարևորվում է հավլապես այն երկրներում, որին բարձր են բնակչության աճի գենապերը: Տնդեսական աճի նպարակային խնդիրներից եղնելով՝ բնակչության կենսամակարդակի բարձրացումը ենթադրում է, որ երկրի իրական համախառն ազգային արդյունքի աճի գենապերը պեսը է գերազանցեն բնակչության գարենկան աճի գենապերը:

Տնդեսական աճը բնութագրվում է **քանակական և որակական կողմերով**: Տնդեսական աճի քանակին արդարացումը է գնդեսական աճի գարենկան գենապերով, նաև հավելածի յուրաքանչյուր գործությունը «կշռով» կամ քանակական բովանդակությամբ: Տնդեսական աճի քանակական գնահարումը հավելածի յու-

---

բարանչյուր գոկոսի իրական պարունակությամբ, կարևորվում է հավկապես բարձր զարգացած գոնդեսություն ունեցող երկրներում, որպես ցածր են գորեկան հավելածի գումարերը: Օրինակ, ԱՄՆ-ում համախառն ազգային արդյունքի միջին գորեկան հավելածի գումարը նորավորապես 2% է, սակայն հավելածի յուրաքանչյուր գոկոսը «կշռում է» ավելի քան 140 մլրդ դոլար, որը բազմապատիկ անգամ գերազանցում է շատ երկրների համախառն ազգային արդյունքի գորեկան ծավալը, չնայած վերջինիս ունեցած աճի բարձր գումարերին:

Տնտեսական աճի որակը գոնդեսագիրության գումարության մեջ բնութագրվում է երկակի իմաստով. մի կողմից՝ գոնդեսական աճի որակը կապվում է նրա սոցիալական ուղղվածության կամ կողմնորոշման ուժեղացման հետ և. արդահայրվում է բնակչության նյութական բարեկեցության բարեկավմամբ, անհարի ազադ ժամանակի մեծացմամբ, սոցիալական ենթակառուցվածքի ճյուղերի զարգացման մակարդակի բարձրացմամբ, մարդկային կապիֆալում ներդրումների աճով, աշխատանքի ու կյանքի պայմանների անվտանգության ապահովմամբ, գործազուրկների և անշխափունակների սոցիալական պաշտպանվածությամբ: Մյուս կողմից՝ գոնդեսական աճի որակական կողմը բնութագրվում է նրանով, թե ինքենի գործոնների ինչպիսի ծախսումներով է ձեռք բերվում համախառն ազգային արդյունքի հավելածը, և ինչպիսին է վերջինիս կառուցվածքն ու գործառական նշանակվածությունը: Վյու իմաստով գոնդեսական աճի որակը արփահայրվում է արդյունավել գործոնների նշանակության և արփադրանքի որակի ու գեխնիկական մակարդակի բարձրացմամբ, գոնդեսական մեխանիզմի հակածախային ուղղվածության ուժեղացմամբ, վերջնական արդյունքի մեծացմամբ և դրանում սպառնան բաժնի ավելացմամբ:

Տնտեսական աճը հասարակության **գոնդեսական զարգացման** հիմնական, սակայն միակ հագուստիշը չէ. գոնդեսական աճի բարձր կամ ցածր գումարերի առկայությունը դեռևս չի վկայում գոնդեսական զարգացման նույնպիսի գումարերի մասին: Տնտեսական զարգացումը բազմագործության գործընթաց է, որն արփացում է գոնդեսական համակարգի քանակական ու որակական փոփոխությունները:

Տնտեսական զարգացումը հակասական է և դժվար չափելի, քանի որ գումար է ունենում ոչ թե ուղղագորեն, այլ անհավասարաչափ՝ ընդգրկելով անկման ու վերելքի փուլեր, գոնդեսությունում կափարվող դրական ու բացասական միգրումներ: Վյու իմաստով՝ գոնդեսական զարգացումը գոնդեսական աճի համեմատությամբ ավելի լայն հասկացություն է:

Երկրի գոնդեսական զարգացման մակարդակը և նրա շարժընթացը որոշելու համար անհրաժեշտ է կիրառել որոշակի չափանիշներ, որոնց շնորհիվ կրնութագրվեն զարգացման գործընթացի վրա ազդող բազմաբնույթ գործոնները: Տնտեսական զարգացման մակարդակի գնահատման դարբեր չափանիշների առկայությունը հնարավորություն չի պալիս միագրեսակ կարծիք ունենալ երկրների զարգացման ասդիճանը որոշելիս: Շատ երկրներ երբեմն իրենց գոնդեսական զարգացման մակարդակը գնահապում են ԱՄՆ-ի մակարդակի հետ համեմատելով:

Տնտեսական զարգացման մակարդակի գնահապումը կափարվում է հետույալ չափանիշների գումարումով.

---

---

**1. Բնակչության մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքը**, որը հիմք է ծառայում համաշխարհային մասշտաբով զարգացած և զարգացող երկրների խմբերը դասակարգելու համար: Սովորաբար բարձր զարգացած երկրների խմբին են դասվում բնակչության մեկ շնչի հաշվով փարեկան 15 հազ. դոլար և ավելի համախառն եկամուտ ապահովող երկրները:

**2. Ազգային Էկոնոմիկայի ճյուղային կառուցվածքը**, որը բնութագրում է համախառն ներքին արդյունքի մեջ արտադրության առաջադարձ ճյուղերի, մասնավորապես՝ մերենաշինության փեսակարար կշիռը: Զարգացած երկրներում գոյություն ունեն 150-ից ավելի մերենաշինական ճյուղեր և արտադրություններ, իսկ վնասական զարգացման ցածր մակարդակ ունեցող երկրներում դրանց քանակը ընդամենը 10-15 է:

**3. Հիմնական արտադրագեսակների արտադրությունը բնակչության մեկ շնչի հաշվով**, որը բնութագրում է արտադրության առանձին ճյուղերի զարգացման մակարդակը, ինչպես նաև հասարակության պահանջմունքները բավարարելու համար երկրի ոնեցած արտադրական սեփական հնարավորությունները: Վյուցանիշները հաշվարկվում են այնպիսի հիմնական արտադրագեսակների գծով, ինչպիսիք են էլեկտրաէներգիան, պողպատը, ավտոմեքենաները, հիմնական սննդագետակները և երկարաժամկեպ օգտագործման ապրանքագետակները:

**4. Տնտեսական արդյունավելության ցուցանիշները**, որոնք առավել մեծ չափով են բնութագրում երկրի վնասական զարգացման մակարդակը, քանի որ արտահայքում են արտադրական ռեսուրսների որակը և օգտագործման ասդիմանը: Տնտեսական արդյունավելությունն արդահայքվում է աշխատանքի արտադրողականության, կապիտալահարույցի, նյութագրության և արտադրանքի համեմատական մրցունակության ցուցանիշներով:

**5. Բնակչության կենսամակարդակը՝** որպես վնասական զարգացման ամփոփ, համադրական արդյունք ու հեփեանք, բնութագրվում է համախառն ներքին արդյունքի վերջնական անձնական սպառման կառուցվածքով, «սպառողական զամբյուղի», «կենսանվազագույնի» ցուցանիշներով, ինչպես նաև կյանքի միջին դեմքությամբ, բնակչության կրթական մակարդակով, ծառայությունների ու սպասարկումների ոլորտի զարգացման ասդիմանով և այլն:

Բնակչության կենսամակարդակը և կյանքի որակը գնահատելու համար վերջին տարիներին համաշխարհային պրակտիկայում սկսել են կիրառել, այսպես կոչված՝ «հասարակական զարգացման համաթվի» ցուցանիշը, որը միավորում է բազմաթիվ վնասական ու սոցիալական բնույթի ցուցանիշներ: Նաև արտակարգ կամ մարդկային զարգացման համաթիվը իր մեջ արդացում է ոչ միայն մեկ շնչին ընկնող ՌՍԱ-ի ցուցանիշը, այլև բնակչության կյանքի միջին դեմքությունը, կրթության և առողջապահության մակարդակը երկրում: Երկրների հասարակական զարգացման համաթվերը պարբերաբար հրապարակվում են ՄԱԿ-ի կողմից: Հարաբերական զարգացման ասդիմանի՝ աշխարհի վնասական զարգացած երկրների խումբը ներկայացվում է հեփեալ դասակարգմանը.

---

*Հ Շնչառ Շ 18.1.*

**ԵՐԿՐՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԸՍՏ ԴԱՍԱՐԱԿԱՎԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ  
ԴԱՄԱԽԱՉՈՆ ՆԵՐՔԲՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ (ԴՆՁ)**

Երկրներ	Դասարակական զարգացման համարժիվը (ԾԶԾ)	Չքաղեցրած դեղի	
		Ըստ հասարակական զարգացման	Ըստ բնակչության մեկ շնչին ընկնող ԾՆԱ-ի
Ճապոնիա	0.983	1	3
Կանադա	0.982	2	11
Նորվեգիա	0.978	3	6
Շվեյցարիա	0.977	4	1
Շվեյշիա	0.977	5	5
ԱՄՆ	0.976	6	10
Ավստրալիա	0.972	7	20
Ֆրանսիա	0.971	8	13
Նիդերլանդներ	0.970	9	17
Անգլիա	0.964	10	21
Իսլանդիա	0.960	11	9
Գերմանիա	0.957	12	8

Տնտեսական աճը և դրանով պայմանավորված տնտեսական զարգացումը ոչ թե նպարակ, այլ միջոց են հասարակական զարգացման ավելի բարձր ասպիճանի հասնելու համար: Սակայն ժամանակակից տնտեսագիրության մեջ միանշանակ վերաբերմունք գոյություն չունի տնտեսական աճի նկարմամբ: Տնտեսական աճի հակառակորդները, առաջադրելով «տնտեսական զարգացում» առանց աճի» հիմնադրույթը, գրնում են, որ զարգացած երկրներում տնտեսական աճը նպարակառության պեսքը է կանխվի, քանի որ, ըստ նրանց, բարեկեցության հասած հասարակության մեջ հեփազա տնտեսական աճը կարող է նշանակել ոչ էական բնույթ ունեցող պահանջմունքների բավարարում, սակայն, դրան հակառակ, անիմասպ կվարտնվեն ռեսուրսները, և էկոլոգիական վրանգը կմեծանա: Բերվում է նաև այն փաստարկը, թե միայն տնտեսական աճով չէ, որ պեսքը է լուծվեն հասարակության այնպիսի սոցիալ-տնտեսական խնդիրները, ինչպիսիք են աղքաքությունն ու եկամուգների անհավասարությունը, քանի որ դրանք պայմանավորված են ոչ այնքան հասարակական արդյունքի ծավալով, որքան դրա բաշխման սկզբունքներով:

Եթե բարձր զարգացած երկրներում «տնտեսական զարգացում» առանց աճի» հիմնադրույթը առանձին ժամանակահարվածում կարող է իրականացվել, ապա հակառակ դրան զարգացող երկրներում «տնտեսական աճ՝ առանց զարգացման» հիմնադրույթն օբյեկտիվ անհրաժեշտություն է: Զարգացող երկրներից շատերը դեռևս չեն հասել արդարության արդյունաբերական փուլին և բնականաբար ի վիճակի չեն գրեթե նորոգիապես յուրացնել գիրապեխնիկական հեղափոխության նվաճումները: Դրա հետ մեկտեղ, այդ երկրներում բնակչության փարեկան հավելածի գենմերը գերազանցում են տնտեսական աճը, հեփաքարար, նման իրավիճակում ցանկացած եղանակով տնտեսական աճի ապահովումը արդարացվում է:

---

Ընդհանուր առմամբ փնտեսական աճն ինքնանպափակ չէ և երաշխավորված չէ պարզապես բարձր գրեմպեր ապահովելու համար: Այն իմաստավորվում է այն դեպքում, եթե ուղղորդում է երկրի փնտեսական զարգացումը, նրա փնտեսական ներուժի հզորացումը և միաժամանակ սոցիալական ոլորտի զարգացումը: Տնտեսական աճն իր բնույթով ու նպատակներով ի վերջո նաև սոցիալական հիմնախնդիր է, որն ըստ էության բխում է «սոցիալական պետության գրեսության» կարևոր սկզբունքներից, ըստ որի՝ փնտեսության զարգացումը պեսք է ուղղորդված լինի «Մարդու արժանապարփիվ կյանքի և ազատ զարգացման համար պայմանների սպեղծմանը»: Ըստ գերմանացի փնտեսագետ Լ. Էրիարդի՝ «Տնտեսական քաղաքականությունը կարող է նաև սոցիալական անվանվել այն դեպքում, եթե փնտեսական առաջընթացը .... ընթանում է հօգույք սպառողի»: Վյլ Կերպ ասած՝ սոցիալական խնդիրներն են առաջադրում փնտեսական աճի նպարակներն ու որոշում փնտեսական քաղաքականության առաջնությունները: Սոցիալական քաղաքականության արդյունավետությունն իր հերթին զնահարվում է ոչ միայն բուն սոցիալական խնդիրների լուծմամբ, այլև փնտեսական աճին օժանդակող պայմանների սպեղծմամբ: Տնտեսական աճի և սոցիալական զարգացման փոխկապվածությունն արդահայփում է նրանով, որ վերջինս կարևոր չափանիշ է՝ «փնտեսական աճ» և «փնտեսական զարգացում» հասկացությունները սահմանելու համար:

## 18.2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԵՎ ՇԱՐԺԻՉ ՈՒԺԵՐԸ

Տնտեսական աճը հասարակական առաջընթացի կարևոր քաղկացուցիչ մասն է և փնտեսական հիմքը, հեվլսաբար դրա վրա ներգործում են բոլոր այն երևոյթներն ու գործընթացները, որոնք ապահովում են հասարակության սոցիալ-փնտեսական զարգացումը: Տնտեսական աճն իրականացվում է որոշակի գործոնների հիման վրա. դրանք այն ռեսուրսները, պարճառներն ու շարժիչ ուժերն են, որոնք պայմանավորում են արդարության ծավալների մեծացման և կարարելագործման անհրաժեշտությունն ու հնարավորությունները:

Ժամանակակից փնտեսագիրության մեջ փնտեսական աճի գործոնները դասակարգվում են գարքեր չափանիշներից ելնելով, որոնց հիման վրա էլ դրանք ներկայացվում են որոշակի խմբերով: Տնտեսական աճի աղբյուրներն առանձնացվում են գործոնների երեք խմբերով.

Սա նշանակում է, որ լրիվ գրադաժության պայմաններում դրսեսական աճի կայուն փեմպ ապահովելու համար անհրաժեշտ է, որ եկամֆի ներդրվող բաժինը՝ փաստուն ( $G_w \cdot C_r$ )-ը և ( $G_n \cdot C_r$ )-ը, հավասար լինի դրա խնայվող մասին ( $s$ ): Սա, ըստ Էության, Քեյնսի հայդնի  $i=s$  հավասարման փոփոխված ձևն է: Տարբերությունը թերևս այն է, որ ըստ Քեյնսի՝ ներդրումների չափերը որոշվում են կապիֆալի սահմանային արդյունավետությամբ (ըստ Էության, շահույթի նորմայով) և գոկոսի նորմայով, իսկ Նարրոդի առաջադրած մոդելում ներդրումների չափերը կախվածության մեջ են բնակչության աճից, դրսեսական առաջ-

---

---

ընթացից (նա ընդունում է վերջինիս չեզոք փարբերակը) և «կապիվալի պահանջող գործակցից» (կապիվալափարության սահմանային մեծությունից): Ինչպես Քեյնար, Նարրողը նույնպես խնայողության ծավալները կապում է հոգեբանական գործոնի, այն է խնայողության հակվածության հետ:

Նարրողը նկարել է, որ փնտեսության օարգացումը կիասնի առավելագույնի, եթե պեղի ունենա  $G=G_n$  հավասարությունը (փաստացի աճը հավասար լինի բնական աճին): Սակայն նա նկարել է դրանց միջև փարբերության անխուսափելիությունը, և դա վերացնելու կամ մեղմելու նպագակով է, որ կիրառել է **երաշխավորված աճի պեմայ հասկացությունը**: Երաշխավորված աճի պեմայը, նրա բնորոշնամբ, աճի այնպիսի նախադեսված փեման է, որը բավարարում է ձեռներեցներին, և նրանք ծգրում են պահպանել նաև հետագայում: Սակայն, ըստ Նարրողի, երաշխավորված աճը սովորաբար չի հավասարվում բնական աճին, որը պայմանավորված է խրոնիկական գործազրկությամբ: Այսինքն՝  $G_n \cdot C_{r \neq s}$ : Մյուս կողմից է՝ փաստացի աճի պեմայի շեղումը երաշխավորվածից նա բացարձի է արդյունաբերական պարբերաշրջանի առկայությամբ: Այս իմաստով Նարրողը ընդունել է, որ շուկայական փնտեսությունը ինքնին չի կարող ապահովել փնտեսական աճի շարժնթաց հավասարակշռություն և անհրաժեշտ է համարել փնտեսության պերական կարգավորումը:

### 18.5.2. Դոմարի փնտեսական աճի դինամիկ (շարժնթաց) հավասարակշռության մոդելը

Տնտեսական աճի նորբեյնայան ուղղության նշանավոր ներկայացուցիչը ԱՄՆ-ում, ինչպես նշել ենք, Ե.Դոմարն էր: Ծանոթ չինելով Ռ.Նարրողի հայրնի աշխավությանը, նրանից անկախ Դոմարը ինքնուրույն հանգեց հավասարակշռված փնտեսական աճի հավասարմանը, որը նման է Նարրողի երաշխավորած փնտեսական աճի դրույթներին:

**Եվսեյ Նեյվիդ Դոմարը** (Դոմաշևիցի) ծնվել է 1914 թ. Ռուսասփանում: 1936 թվականից ապրել է ԱՄՆ-ում: Ավարտել է Կալիֆորնիայի համալսարանը, դասավանդել ԱՄՆ-ի բազմաթիվ համալսարաններում և ինստիտուտներում, իսկ 1957թ.՝ Մասսաչուսեթսի գելմանողգիական ինստիտուտում: Գրել է փնտեսական աճի հիմնախնդիրներին նվիրված բազմաթիվ հոդվածներ, որոնք 1957 թ. հրապարակել է «Տնտեսական աճի փեսության ակնարկներ» գրքում:

Ե.Դոմարի փնտեսական աճի շարժնթաց հավասարակշռության մոդելը հիմնված է արդարական ֆունկցիայի վրա, որի գործուները փոխադարձ փոխարինելի չեն համարվում: Դոմարի մոդելի հիմնական փարբերությունը Նարրողի մոդելից այն է, որ վերջինս դրա հիմքում դրել է ոչ թե խնայողությունների և ներդրումների հավասարությունը, այլ եկամուտի և արդարական հզորությունների հավասարությունը, որը նա ներկայացնում է պահանջարկի և առաջարկի հավասարության գետքով: Դոմարի մոդելի խնդիրն է որոշել ներդրումների մեծությունը և դրանց աճը, դրանով իսկ եկամուտի հավելածը հավասարեցնել արդարական հզորությունների հավելածին, ըստ որում՝ անփոփոխ գեխնողգիայի դեպքում (այսինքն՝ կարճաժամկետ շարժնթաց կիրավածքում) ներդրումների հավելածը դիրքում է որպես ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի միակ գործոն:

---

Դոմարի գեսության հիմնական գաղափարն այն է, որ ներդրումները երկակի դեր են խաղում գնդեսության մեջ. մի կողմից՝ դրանք արդադրական հզորություններ են սպեղծում, իսկ մյուս կողմից՝ պահանջարկ սպեղծում բազմարկի էֆեկտի միջոցով: Դոմարի մոդելը հիմնված է նաև այն նախադրյալների վրա, որ խնայողությունները և ներդրումները հավասար են միմյանց, իսկ խնայողության սահմանային հակումը կամ խնայողության նորման, կապիտալի սահմանային արդադրողականությունը և կապիտալագինվածությունը անփոփոխ ու հասպատուն են:

Դոմարի մոդելում ամբողջական պահանջարկը փոփոխվում է քեյնսյան մեթոդարանությամբ, այսինքն՝ ներդրումների մեծացման բազմարկչային էֆեկտի հետևանքով, որն արդահայպվում է հետևյալ կերպ.

$$\Delta AD_t = \Delta i_t \cdot K = \Delta i_t \cdot MPS,$$

որպես՝

$\Delta AD_t$  -ն ամբողջական պահանջարկի աճն է ընթացիկ ժամանակահարվածում,

$\Delta i_t$  ն՝ ներդրումների աճը ընթացիկ ժամանակահարվածում,

$K$  -ն բազմարկի գործակիցն է, որը ներկայացվում է (1:MPS) գրառուկ,

MPS-ը՝ խնայողության սահմանային հակումը:

Ամբողջական առաջարկի փոփոխությունը ընթացիկ ժամանակահարվածում Դոմարը ներկայացրել է հետևյալ ձևով.

$$\Delta AS_t = \sigma \cdot \Delta K_t = \sigma \cdot \Delta i_{t-1},$$

որպես՝

$\Delta AS_t$  -ն ամբողջական առաջարկի աճն է ընթացիկ ժամանակահարվածում,

$\sigma$  (սիգմա) -ն՝ կապիտալի սահմանային արդադրողականությունը ( $\Delta Y: \Delta K$ )

կամ կապիտալահարույցը,

$\Delta K_t$  -ն կապիտալի աճն է ընթացիկ ժամանակահարվածում,

$\Delta i_{t-1}$  -ն՝ ներդրումների աճը նախորդ ժամանակահարվածում, որը հանգեցնում է կապիտալի հավելանին ( $\Delta K_t$ ) ընթացիկ ժամանակահարվածի սկզբում:

Ենեկով Դոմարի մոդելի այն դրույթից, որ ամբողջական պահանջարկը հավասար է ամբողջական առաջարկին՝  $AD_t = AS_t$ , կսպանանք հետևյալ հավասարումը.

$$\Delta i_t : MPS = \sigma \Delta i_{t-1} \text{ կամ } \Delta i_t : \Delta i_{t-1} = \sigma \cdot MPS:$$

**Դոմարի և Տարրողի մոդելների նույնությունը** ցույց փալու համար կարաբենք որոշ պարզեցումներ ու ձևափոխություններ: Խնայողության սահմանային հակումը (MPS) երկարաժամկետ կրրվածքում շատ քիչ է փարբերվում խնայողության միջին հակումից (APS), որը ըստ էռթյան խնայողության բաժինն է եկամբի մեջ կամ խնայողության նորման (s): Այսինքն՝ MPS-ը որոշ պայմանականությամբ ներկայացնում է խնայողության նորման: ( $\Delta i_t : \Delta i_{t-1}$ )-ը փասփորեն ներկայացնում է ներդրումների հավելանի գեմայլ (Δ): Հսկ այդմ՝ գնդեսական աճի Դոմարի մոդելը կարելի է ներկայացնել հետևյալ պարզեցված գեսքով՝

$$\Delta i = \sigma \cdot s:$$

---

Ըստ Դոմարի, որպեսզի ամբողջական պահանջարկի հավելածը համապատասխանի արդադրական կարողությունների կամ առաջարկի հավելածին, ներդրումների աճի գենալը պետք է հավասար լինի կապիֆալի սահմանային արդադրողականության և խնայողության նորմայի արդադրյալին: Քանի որ Դոմարը ներդրումների աճը համարել է գնդեսական աճի նախադրյալը հավասարակշռված գնդեսական աճի պայմաններում, իսկ կապիֆալի սահմանային արդադրողականությունը ( $\sigma$ ) կամ կապիֆալահափույցը՝ հակադարձ համեմատական կապիֆալափարության ցուցանիշին ( $\sigma=1:C_r$ ), ապա Դոմարի գնդեսական աճի  $\Delta i = \sigma \cdot s$  մոդելը, ըստ Էության, Հարրոդի գնդեսական աճի մոդելի նմանակն է ( $C_w = s \cdot C_r$ ):

Այս այս իմաստով է, որ գնդեսագիփության մեջ կիրառվում է գնդեսական աճի «Հարրոդ-Դոմարի մոդել» հասկացությունը:

Տնտեսական աճի Դոմարի մոդելը ենթադրում է, որ աշխատանքի առաջարկի հավելածի գենալը ( $\Delta L_t : L_{t-1}$ ) պետք է հավասար լինի կապիֆալի հավելածի գենալին ( $\Delta K_t : K_{t-1}$ ), որն էլ իր հերթին հավասար՝ ներդրումների և հասարակական արդյունքի հավելածի գենալին:

$$\Delta i_t : \Delta i_{t-1} = \Delta Y_t : Y_{t-1} = \Delta K_t : K_{t-1} = \Delta L_t : L_{t-1} = \sigma : MPS:$$

Սա հենց Դոմարի գնդեսական աճի շարժնթաց (դինամիկ) հավասարակշռության մոդելն է: Սակայն այսպիսի շարժնթաց հավասարակշռության պահպանման համար անհրաժեշտ է իրականացնել որոշակի պայման, որը գնդեսագիփական գրականության մեջ սուցել է «**Դոմարի պարադոքս**» անվանումը: Պարադոքսի Էությունն այն է, որ արդադրական կապիֆալի մշղական աճի պայմաններում անբավարար ներդրումը հանգեցնում է արդադրանքի գերարդադրության, թեպետք, ըստ գրամաքանության, ներդրումների կրճագումը պետք է հանգեցներ թերարդադրության: «Դոմարի պարադոքս» բացարձությունը է հետևյալ կերպ:<sup>2</sup> Եթե  $\Delta i_t < \Delta K_t$ , այսինքն՝ ներդրումների աճը հետք է մնում կապիֆալի աճից, ապա դա, ըստ Էության, հանգեցնում է նրան, որ ամբողջական պահանջարկի կազմի մեջ ներդրումները հարաբերականորեն կրճագում են, որն էլ հանգեցնում է ամբողջական պահանջարկի աճի գենալի նվազման կամ, որ նույնն է, արդադրված արդադրանքի ծավալը գերազանցում է պահանջարկը, որը գերարդադրության արդահայփություն է: Սրացվում է, որ գնդեսական աճի կայուն հավասարակշռված գենալը պահպանելու համար անհրաժեշտ է ժամանակ առ ժամանակ մեծացնել ներդրումների հավելածը, որպեսզի ապահովվի աճող արդադրական հզորությունների լրիվ բեռնվածությունը: Այսպիսի գնդեսական աճը, որը ապահովում է կապիֆալի լրիվ գրաղվածությունը, Դոմարի կողմից բնութագրվել է որպես **երաշխավորված գնդեսական աճ**:

Դոմարը, ինչպես և Հարրոդը, նկարել են, որ գործնականում դժվար է հավասարակշռված աճի գենալ ապահովել: Իրականում այդպես է, քանի որ հավասարակշռված աճի գենալը շար անկայուն է և մեծապես կախված է ոչ միայն և ոչ այնքան կառավարության ներդրումային քաղաքականությունից, այլ

---

<sup>2</sup> Տե՛ս Կурс экономической теории, под ред. Чепурине М.Н., Киров, 2004, էջ 614:

ինսայողության նորմայից, որն էլ իր հերթին պայմանավորված է ինսպիրուցիոնալ ու հոգեբանական բազմաթիվ գործուներով, մասնավորապես՝ հասարակության ինսայողության սահմանային հակումով:

## **18.6. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՆՈՐԴԱՍԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒՄՈԴԵԼՆԵՐԸ**

### **18.6.1. Քորք-Դուգլասի արդադրական ֆունկցիայի էռաջունը և հարկանիշները**

**Տնտեսական աճի նորդասական դեսությունները** ձևավորվեցին XX դարի կեսերին: Դրանք հիմնված էին հեպիլայ դեսական նախադրյալների վրա.

1. Արփադրանքի արժեքն սպելծվում է արփադրության բոլոր գործոններով, և յուրաքանչյուր գործոն իր ներդրումն ունի արժեքի կազմավորման մեջ:
  2. Քանակական կախվածություն գոյություն ունի արփադրանքի թողարկման և արփադրության համար անհրաժեշտ ռեսուրսների միջև:
  3. Գոյություն ունի արփադրության գործոնների հարաբերական անկախություն և դրանց փոխադարձ փոխարինելիություն:

Η φωρρεύοντας ημέρα της παραπάνω συζήτησης, οι απόψεις των διαφόρων μέρων της κοινωνίας για την επόμενη περίοδο της Ελληνικής Δημοκρατίας ήταν τα εξής:

Տնտեսական աճի երկզործոնային մոդելն առաջին անգամ կիրառվել է 1928 թ., ամերիկացի մաթեմատիկոս Չ. Ջորժի և դնտեսագետ Պ. Դուզասի կողմից, որը դնտեսազիփության մեջ սպացել է «**Չորր-Դուզասի մոդել**» անվանումը: Մոդելը հնարավորություն է դալիս գնահատել արդադրության դարբեր գործոնների ներդրումը հասարակական արդյունքի աճի մեջ: Այս արդադրական ֆունկցիան ունի հետևյալ տեսքը:

$$Y = AK^\alpha L^\beta$$

nnyntn`

Ե՞րազակին եկամբի ծավալն է,

Ա -ն՝ արդարական ռեսուրսների համամասնականության կամ միացափության բերման գործակիցը,

Կ -ն կապիվայն է,

Լ-ը՝ աշխարհանքը,

α ή β-ν αռածգականության գործակիցներն են, որոնք ցույց են դայիս ազգային եկամուտի արվաղության աճը կապիտալի և աշխատանքի 1%-ով ավելացնելու համար:

---

լացման դեպքում:

Քորբը և Դուգլասը ԱՄՆ-ի վերամշակող արդյունաբերության 1899-1922 թթ. ժամանակաշրջանի փաստացի վիճակագրական դաշտավայրի վերլուծության հիման վրա ձևակերպեցին հետևյալ կոնկրետ արդարական ֆունկցիան.

$$Y=1,01K^{0,25}L^{0,75}.$$

Տիշենք, որ առածզականության հասկացության դնդեսական իմաստը ցույց է տալիս որևէ մեծության (արդարության ծավալի) փոփոխության աստիճանը կամ ռեակցիան՝ մեկ այլ մեծության (կապիտալի, աշխատանքի) փոփոխությունից կախված: Այսդեմք հետևում է, որ կապիտալի ծախսերի 1%-ով ավելացումը ապահովում է արդարության ծավալի 0.25%-ով աճ, իսկ աշխատանքի ծախսերի 1%-ով ավելացումը՝ նպաստում արդարության ծավալի 0.75%-ով աճին:

Քորբ-Դուգլասի արդարական ֆունկցիայից հետևում է, որ հնարավոր են ֆնդեսական աճի երեք դիմումներ:

1. Եթե  $\alpha+\beta=1$ , ապա արդարության ծավալի աճը տեղի է ունենում արդարական նշված երկու գործոնների ծախսերի ավելացմանը համապատասխան՝ առանց դրանց արդյունավետության փոփոխության: Այս դեպքում առկա է երարտենական (դաշտուն) դնդեսական աճ:

2. Եթե  $\alpha+\beta<1$ -ից, ապա արդարության ծավալներն աճում են ավելի դանդաղ, քան արդարության գործոնների ավելացումն է, որը վկայում է դրանց օգբագործման արդյունավետության նվազման մասին:

3. Եթե  $\alpha+\beta>1$ -ից, ապա արդարության ծավալների աճը գերազանցում է արդարության գործոնների ծախսերը, որը վկայում է ինդենսիվ (արդյունավետ) դնդեսական աճի առկայության մասին:

Ընդ որում՝ եթե  $\alpha>\beta$ -ից, ապա առկա է կապիտալախնայողական դնդեսական աճ, իսկ եթե  $\alpha<\beta$ -ից, ապա՝ աշխատախնայողական դնդեսական աճ:

Քորբ-Դուգլասի արդարական ֆունկցիան բնութագրվում է որոշակի հարկանիշներով: Այսպես՝

1. Դիմնված է այն դրույթի վրա, որ արդարության գործոնների ծավալաչափի հարույցը հասպարուն է, այսինքն՝ եթե կապիտալի և աշխատանքի օգբագործումն ավելացնենք ո անգամ, ապա համախառն թողարկման եկամուտի ծավալը նույնպես կավելանա ո անգամ:

2. Աշխատանքի և կապիտալի միջև քանակական համամասնության խախունը նույն դեխնոլոգիայի պայմաններում հանգեցնում է արդարության օպֆիմալ ծավալից շեղմանը և արդարության անարդյունավետությանը: Այսպես, օրինակ, եթե արդարության մեջ ներգրավենք կապիտալի լրացուցիչ քանակություն, իսկ աշխատանքի քանակը թողնենք նախկին ծավալով, ապա այլ հավասար պայմաններում աշխատանքի սահմանային արդարողականությունը (MPL) կբարձրանա, իսկ ավելացված կապիտալի սահմանային արդարողականությունը կնվազի: Աշխատանքի ավելացման և կապիտալի անփոփոխ պայմաններում դեղի կունենա հակառակ երևոյթը՝ աշխատանքի սահմանային արդարողականությունը կնվազի, իսկ կապիտալինը՝ կբարձրանա:

---

3. Աշխարհանքի և կապիտալի մասնակցության բաժինը հասարակական արդյունքի մեջ հասպարուն է, այսինքն՝ (β:α) կայուն է: Նշանակում է աշխարհանքի բաժինը կազմում է մոփավորապես 3/4, իսկ կապիտալինը՝ 1/4, ինչպես որ գրված է ֆունկցիայում:

Գիրարդեիննիկական առաջընթացը գնդեսական աճի գետության բնագավառում նոր հետազոտությունների իրականացման երաշխիք դարձավ: Անցումը գնդեսական աճի առավելապես ինդենսիվ գիպին, անհրաժեշտ դարձրեց գնդեսական աճի գետագերի և որակի մեջ կապարել գիրարդեիննիկական հեղափոխության ունեցած ներդրման գնահապումը: Վյու անհրաժեշտությունից եղնելով՝ 1940-ական թվականներին գնդեսական աճի նորդասական գետության շրջանակներում ծևավորվեցին նոր մոփեցումներ՝ կապված գնդեսական աճի վրա գիրարդեիննիկական առաջընթացի ազդեցության գնահապման հետ: Վյու ուղղության նշանավոր ներկայացուցիչներն են Յ. Թինբերգենը, Ռ. Սոլոուն, Է. Դենիսովը և ուրիշներ, որոնք իրենց հետազոտությունների հիմքում դրեցին Քորդ-Դուգլասի այս հանրահայք արդարական ֆունկցիան:

### **18.6.2. Սոլոուի գնդեսական աճի մոդելը, և Ֆելպսի «կուպակման ուկե կանոնը»**

Տնդեսական աճի նորդասական ուղղության նշանավոր ներկայացուցիչներից է ամերիկացի գնդեսագետ Ռոբերտ Սոլոուն (ծնվ. 1924 թ.), որը մեծ ներդրում է կապարել գնդեսական աճի գետության զարգացման և մոդելավորման գործում: Նա կրթություն է ստացել Նարվարդի համալսարանում և 1950 թվականից դասավանդել է Մասսաչուսեթսի գետինողիական ինստիտուտում: Սոլոուն գնդեսական աճի իր գետությունը հիմնականում ներկայացրել է 1956 թ. հրաբարակած «Ներդրում գնդեսական աճի գետության մեջ» հոդվածում, 1969 թ.: «Աճի գետությունը շարադրանք» մենագրությունում: Տնդեսական աճի գետության զարգացման մեջ ունեցած նշանակալից ներդրման համար Ռ. Սոլոուն 1987 թ. արժանացել է Նորկյան մրցանակի:

Սոլոուն գնդեսական աճի հետազոտության արդյունքում հանգել է այն եզրակացության, որ Նարրոդ-Դոմարի գնդեսական աճի մոդելում գնդեսության անկայունության անխուսափելիության հիմնական պատճառն այն է, որ կապիտալագինվածությունն ընդունվել է որպես հասպարագոված մեծություն, որը հասպարուն փոխհարաբերություն է արքահայքում կապիտալի և աշխարհանքի միջև: Սակայն, ի հակադրություն դրան, Սոլոուն գինում է, որ կապիտալի և աշխարհանքի միջև պեսք է լինի ոչ թե կայուն, այլ փոփոխական հարաբերակցություն: Սոլոուի գնդեսական աճի գետությունը գաղափարապես հիմնական է արքահայքան գործուների նորդասական գետության վրա, որն էլ պայմանավորում է գնդեսական աճի Սոլոուի մոդելի նորդասական բնույթը: Վյու մոդելում ենթադրվում է, որ բնակչությունն աճում է անփոփոխ գետագերով, իսկ ներդրումները կազմում են եկամուտի հասպարուն բաժինը և որոշվում են խնայողության նորմայով (ինչպես Նարրոդ-Դոմարի մոդելում):

Տնդեսական աճի քանակական բնույթագրության համար Սոլոուն մշակել է երկու մոդել.

- 
- ֆնտեսական աճի աղբյուրների գործոնային վերլուծության մոդելը,
  - խնայողությունների, կապիտալի կուրակման և ֆնտեսական աճի փոխկապվածությունը բացահայտող մոդելը:

Տնտեսական աճի **առաջին մոդելի** հիմքում Սոլոուն դրել է Քորբ-Դուզասի արդարական ֆունկցիան և այն ձևափոխելով՝ մրցրել նաև «գեխնոլոգիայի զարգացման գործոնը», որից հետո մոդելը սպացել է հետևյալ դեսքը.

$$Q = F(K, L, T),$$

որպես՝

$Q$  -ն արդարանքի ծավալն է,  
 $K$  –ն՝ հիմնական կապիտալը,  
 $L$  –ը՝ ներդրված աշխատանքը՝ աշխատավարձի ձևով,  
 $T$  –ն՝ գեխնոլոգիայի զարգացման մակարդակը:

Սոլոուն ենթադրում է, որ գեխնոլոգիայի փոփոխությունը հանգեցնում է կապիտալի և աշխատանքի սահմանային արդյունքի միապեսակ ավելացման, որի հետևանքով ֆունկցիան սպանում է հետևյալ դեսքը.

$$Q = TF(K, L);$$

Այս դեպքում, ըստ Սոլոուի, արդարանքի հավելածը ներկայացվում է հետևյալ կերպ.

$$\Delta Q = \Delta T \times F(K, L) + \Delta K \times TF_K + \Delta L \times TF_L;$$

Սա, ըստ Էության, նշանակում է, որ արդարանքի հավելածը ( $\Delta Q$ ) համամասնորեն կախված է գեխնոլոգիայի հավելածից ( $\Delta T$ ), հիմնական կապիտալի հավելածից ( $\Delta K$ ) և ներդրաված աշխատանքի հավելածից ( $\Delta L$ ):  $TF_K$  -ն ցույց է տալիս կապիտալի սահմանային արդյունքը, իսկ  $TF_L$  -ը՝ աշխատանքի սահմանային արդյունքը:  $\Delta K \times TF_K$  -ն կապիտալի բաժինն է ընդհանուր թողարկման մեջ,  $\Delta L \times TF_L$  -ը՝ աշխատանքի բաժինը ընդհանուր թողարկման մեջ:

Ինչ վերաբերում է արդյունքի թողարկման հավելածի գենապերին, ապա, ըստ Սոլոուի, այն որոշվում է հետևյալ կերպ՝

$$\frac{\Delta Q}{Q} = \frac{\Delta T}{T} + S_L \frac{\Delta L}{L} + S_K \frac{\Delta K}{K};$$

Այսինքն՝ արդարանքի թողարկման հավելածը ( $\frac{\Delta Q}{Q}$ ) կախված է գեխնիկական առաջընթացի գենապից ( $\frac{\Delta T}{T}$ ), ներդրաված աշխատանքի հավելածի և թողարկման մեջ աշխատանքի բաժնի ( $S_L$ ) արդարույալից, կապիտալի հավելածի ( $\frac{\Delta K}{K}$ ) և նրա բաժնի ( $S_K$ ) արդարույալից:

Եթե աշխատանքի և կապիտալի բաժինները արդարանքի թողարկման մեջ չափվում են աշխատանքի արդարողականության, կապիտալագինվածու-

---

թյան և կապիտալահափույցի հիման վրա, ապա գեխնիկական առաջընթացի ներդրումը ներկայացվում է որպես մնացորդ, որն առաջանում է աշխարհանքից և կապիտալից սրացված հավելաճը հանելուց հետո: Այլ կերպ ասած՝  $\frac{\Delta T}{T}$ -ն

գնդեսական աճի գեխնիկական առաջընթացի կամ «գիրելիքների մեջ առաջընթացի» բաժնն է, որը գնդեսագիրության մեջ ընդունված է անվանել «**Սոլոտի մնացորդ**»: Առանձին դեպքերում այն ներկայացվում է նաև որպես «**Դենիսոնի մնացորդ**»՝ ի պարիվ ամերիկացի գնդեսագետ է. Դենիսոնի, որը նույնպես զգալի ներդրում է ունեցել նման կարգի արդարական ֆունկցիայի հերազդում և գիրագեխնիկական գործոնի գնահատման բնագավառում:

Ի դեպքում Սոլոտին, գեխնիկական առաջընթացի գործոնի ազդեցությունը գնդեսական աճի վրա քննարկվել է դեռևս հոլանդացի գնդեսագետ Յան Թինբերգենի (1903-1994) կողմից, որին մենք արդեն անդրադարձել ենք:

Սոլոտի **մյուս մոդելը** ցույց է տալիս գործակապվածությունը խնայողությունների, կապիտալի կուրակման և գնդեսական աճի միջև: Չխորանալով մոդելը սրանալու Սոլոտի մաթեմատիկական հնարքների մեջ՝ նշենք, որ այն ունի հետևյալ գեներացիոն առանձնահատկությունը:

$$\Delta K = sf(k) - nk,$$

որպես՝

$\Delta K$  - ն կապիտալագինվածության հավելաճի գենման է,

$s$  - ը՝ խնայողության նորման,


$k$  - ն՝ մեկ աշխատողի կապիտալագինվածությունը,

$n$  - ը՝ բնակչության աճի գենման:

$nk$ -ն ըստ Էության ցույց է տալիս, թե յուրաքանչյուր աշխատող որքան պետք է խնայի իր եկամբից և ներդրումներ կարարի, որպեսզի կապիտալային բարիքներով ապահովի ապագա աշխատողներին (այդ թվում՝ սեփական երեխաներին):

Սա Սոլոտի, այսպես կոչված՝ «հիմնարար հավասարումն» է, որի էությունն արդահայրվում է հետևյալ կերպ. մեկ աշխատողի կապիտալագինվածության հավելաճը, ըստ Էության, այն է, որը մնացել է գենակարար ներդրումներից (խնայողություններից) հետո, երբ կապիտալային բարիքներով ապահովել են բոլոր լրացույցի աշխատողները: Եթե  $sf(k)=nk$ , ապա նշանակում է, որ կապիտալագինվածությունը մնում է նախկին մակարդակին, և գնդեսությունը զարգանում է առանց գործոնների միջև հարաբերակցության որևէ կառուցվածքային փոփոխությունների: Դա հաշվեկշռված գնդեսական աճի արդարականացումն է:

Սոլոտի մոդելում, ի պարբերություն Հարրոդ-Դոմարի մոդելի, հաշվեկշռված աճի հերազիծը կայուն է համարվում: Այն արդարականացում է հետևյալ գծապարկերի գեներացիոն առանձնահատկությունը:



**¶ Ի՞ ա՞ ի Շ»՛ 18.6.1. Հաշվեկշռված աճի հետագիծը Սոլոուի մոդելում:**

ոկ ուղիղը ցույց է տալիս, թե յուրաքանչյուր աշխատող իր եկամֆից որքան պետք է խնայի և ներդրումներ կարարի, որպեսզի կապիտալային բարիքներով ապահովի հաջորդ աշխատողներին, այդ թվում՝ իր երեխաներին:

$sf(k)$  կորը ցույց է տալիս, թե որքան է նրա փաստացի խնայողությունները՝ կախված կապիտալագինվածության ձեռքբերված մակարդակից:  $K_0$  կերպում դրանց փարբերությունը զրո է, և դիպվում է հավասարակշռված աճ:  $K_0$ -ից ծախ կապիտալագինվածությունն աճում է, իսկ դեպի աջ հավասարակշռված աճ: Եթե դիպեսական աճը հավասարակշռվում է, ապա դրա հետագա դեմքը կախված է բնակչության աճից ու փեխնողգիական առաջընթացից: Ըստ Սոլոուի մոդելի՝ կապիտալագինվածության աճը հանգեցնում է մեկ մարդու հաշվով հասարակական արդյունքի աճի, սակայն այն ավելանում է ավելի փոքր չափերով, քանի որ նվազում է կապիտալի սահմանային արգադրողականությունը կամ կապիտալահարույցը:

Սոլոուի մոդելից հետևում է, որ որքան մեծ է խնայողությունների նորման, այնքան բարձր է կապիտալագինվածությունը, հետևաբար բարձր է հաշվեկշռված դիպեսական աճի փեմպը: Ի վերջո, որքան բարձր են խնայողության նորման և ներդրումների ծավալը, այնքան ավելի մեծ է բնակչության մեկ շնչին ընկնող հասարակական արդյունքի ծավալը: Այս դրույթը հիմնավորվում է դիպեսավարման պրակտիկայով: Այսպես, այն երկրներում, որքեղ բնակչության մեկ շնչի հաշվով ՌԱՀ-ի դաշտական ծավալը առավել բարձր է (ԱՄՆ, Գերմանիա, Ճապոնիա և այլն), խնայողությունները կազմում են ՌԱՀ-ի 23%-ից ավելի, միջին եկամուք ունեցող երկրներում՝ 20-22%, ցածր եկամուք ունեցող երկրներում՝ 10-19%<sup>3</sup>:


Տնտեսական աճն ինքնին ինքնանպատկան չէ, հետևաբար խնդիրն այն է, թե ինչպես պետք է որոշել հասարակության համար օպերինալ համարվող դիպեսական աճը: Այս խնայողով Սոլոուի դիպեսական աճի մոդելը հնարավորություն է դաշտական պատմական ինդիկատոր հարցին. Երկրում ինչպես ապահովել սպառման առավելագույն մակարդակ դիպեսական աճի նախագիծակած դեմքերի պայմաններում: Ամբողջական ձևով այս հարցի լուծումը կրվել է ամերի-

<sup>3</sup> Տես Գայլար Ե. Անատոմիա экономического роста. М., 1997, էջ 25:

կացի փնտեսագեր Էդմոնդ Ֆելպսը՝ 1961 թ. հրավարակած «Առաջ նրանց համար, ովքեր զբաղվում են աճով» աշխաբության մեջ: Այն պայմանները, որոնցում ձեռք է բերվում սպառման առավելագույն մակարդակ, ե. Ֆելպսի կողմից բնութագրվել է կապիտալի կուրակման ուսկե կանոն հասկացությամբ:

Ֆելպար հարցադրում է, թե հասարակությունը ի՞նչ մեծության կապիտալ է ցանկանում ունենալ հավասարակշռված գննիքնեական աճի հետազօնի վրա: Եթե այն բավականին մեծ լինի, ապա կերաշխավորի արդադրության բարձր մակարդակ, սակայն նրա մեծ մասը կուղղվի ոչ թե սպառմանը, այլ կուրսակմանը, և «Հասարակությունը չի կարող վայելել գննիքնեական աճի պրոյեկտում»: Իսկ եթե կապիտալի ծավալը չափազանց փոքր լինի, ապա հասարակությունը կսպառի գրեթե ամբողջ արդադրված արդյունքը, բայց արդադրվածն էլ չափազանց քիչ լինի: Պարզ է, որ հասարակության առավելագույն սպառում ապահովելու համար անհրաժեշտ օպերիմալ կերպ պետք է գրնվի այս երկու ծայրահեղությունների միջակայքում:

Հայր «ոսկե կանոնի»՝ սպառման մակարդակը կլինի ամենաբարձրը այն դեպքում, երբ կապիտալագինվածության կայուն մակարդակի պայմաններում մարդիմալացվի հասարակական արդյունքի ծավալի և ներդրումների ծավալների միջև եղած փարբերությունը: Վյլ կերպ ասած՝ «ոսկե կանոնը» կամ սպառման առավելագույն մակարդակը զծապապկերով կարգահայրվի այսպես. երբ բնակչության մեկ շնչին բաժին ընկնող եկամբի կորագծի  $f(k)$  և ներդրումների կորագծի  $[sf(k)]$  միջև ուղղահայաց դիրքերի փարբերությունը հաշվեկշռված դնդեսական աճի պայմաններում կլինի առավելագույնը, այսինքն՝ դեղի կունենա  $f(k) - sf(k) = f(k) - nk$  հավասարակշռությունը՝



**¶І<sup>3</sup> а<sup>3</sup> і І»п 18.6.2.** Նախարարակշռված փնտեսական աճի  
հետագիծը ըստ կապիվալի կուրակման «ոսկե կանոնի»:

---

Նշված կորագծերի միջև հեռավորությունը առավելագույնն է այն ձ կեպում, որքեղ  $f(k)$  կորի շոշափողի անկյունը հավասար է ոչ ուղղի անկյանը: Դրան համապատասխանում է կապիֆալազինվածության  $K_0$  օպտիմալ մակարդակը: «Ուկե կանոնին» հասնելու համար անհրաժեշտ է ընդունել կապիֆալի կուրակման այնպիսի նորմա, որպեսզի  $sf(k)$  կորը ոչ ուղղի հարի  $K_0$ -ին համապատասխանող է կեպում:  $dE$  հարվածը, ըստ Էության, սպառման (C) առավելագույն մակարդակն է հավասարակշռված դիմումական աճի պայմաններում:

«Կապիֆալի կուրակման ուկե կանոնը» կերպարանափոխվում է, եթե Սոլոուի մոդելի մեջ հաջորդաբար ներգրավում ենք բնակչության աճի պայմանը և գլեխնիկական առաջընթացի գործոնը: Դրանցից էլ կախված՝ որոշվում են դիմումական աճի գենմագերը հաշվեկշռված աճի կամ անփոփոխ կապիֆալազինվածության պայմաններում: Եթե նկատի ունենանք, որ գործում է սահմանային արդադրողականության սկզբունքը, ապա  $f(k)$  կորագծի թեքվածության անկյունը, այսինքն՝ կապիֆալի սահմանային արդադրողականությունը պետք է հավասար լինի դոկումենտույթին (r): Այս դեպքում «ուկե կանոնը» կգործի, եթե դոկումենտույթը հավասար լինի բնակչության աճի գենմագին, իսկ հավասարակշռված աճի պայմաններում երկրի դիմումական աճի գենմագին:

### 18.6.3. Դենիսոնի դիմումական աճի գործոնային վերլուծությունը

Տնտեսական աճի նորդասական դեսությունների ընդհանրությունն այն է, որ դրանք գաղափարապես հիմնված են արդադրության գործուների նորդասական դեսության և, մասնավորապես՝ բազմագործունային դեսության վրա: Եթե դիմումական աճի քեյնայան և նորքեյնայան դեսությունները հիմնված են դիմումական աճի միագործուն դեսության վրա և որպես հիմնական գործուն են դիմումական կապիֆալն ու դրա կուրակումը, ապա նորդասական դեսությունները հիմնված են Քորբ-Դուգլասի երկգործունային արդադրական ֆունկցիայի և դրա ձևափոխված բազմագործունային արդադրական ֆունկցիայի կիրառության վրա:

Տնտեսական աճի նորդասական դեսության ներկայացուցիչները (Յ. Թինթերգեն, Յ. Շումանգեր, Ռ. Սոլոու, Է. Դենիսոն), հետազոտելով դիմումական աճի գործուների բնույթը, որոշակի ներդրում են կարարել դրանց դասակարգման և դերի ու նշանակության բացահայրման գործում:

Տնտեսական աճի դեսության հետազոտման և դրա գործունային վերլուծության բնագավառում զգայի ավանդ ունի ամերիկացի նշանավոր դիմումակեպ, Բրութինի ինսիրուտի պրոֆեսոր Էդվարդ Ֆ. Դենիսոն, որը հայրնի է այս հիմնախնդրին նվիրված աշխագություններով («Տնտեսական աճի գենմագերի դաշտագույնը» (1967 թ.), «Տնտեսական աճի միգրումները ԱՄՆ-ում» (1985 թ.)): Գիտնականը դիմումական աճի պայմանը մեջ առաջին անգամ կարարեց դիմումական աճի գործունային ծավալուն վերլուծություն և փորձեց քանակապես գնահատել յուրաքանչյուր գործունի ներդրումը հասարակական արդյունքի դաշտական հավելածի մեջ: Տնտեսական աճի գործունային վերլուծության նպատակով Դենիսոնը աճի հիմնական գործուները՝ աշխագույնքը, կապիֆալը, հողը և արդադրողականությունը (որը պայմանավորված է գիտադիմումի

---

կական առաջընթացով և մյուս գործոնների արդյունավետությամբ), ներկայացրել է որոշակի բաղադրիչների (ազրեգավոնների) փեսքով և հաշվարկել յուրաքանչյուրի բաժինը ազգային եկամֆի հավելածի գենայի մեջ: Նա քննարկել է փնտեսական աճի 23 գործոններ, որոնցից 4-ը վերաբերում են **աշխավանքին** (զբաղվածություն, բանվորական ժամանակ, աշխավուժի սեռագրարիքային կազմ, կրթություն), 4-ը՝ **կապիվալին** (միջազգային ակտիվիտեր, բնակելի դրույթ, ոչ բնակելի շենքեր, կառույցներ և սարքավորումներ, ապրանքանյութական պաշարներ), 1-ը՝ հողային գործոնին մնացած 14-ը՝ գիրավեխնիկական առաջընթացով պայմանավորված արգադրության գործոնների արգադրողականության բարձրացմանը (մասնավորապես՝ գիրելիքների առաջընթացին, դեխնիկայի և փեխնողգիայի փոփոխությանը, ռեսուրսների բաշխմանը և այլն):

Վերլուծելով ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Անգլիայի, Իտալիայի ազգային եկամուտների աճի դրամագիրը (1950-1962 թթ.), Դենիսոնը հաշվարկել է յուրաքանչյուր գործոնի ներդրումը դրա ապահովման գործում: Մասնավորապես նա ցույց է դրել, որ ԱՄՆ-ում 1950-1962 թթ. ազգային եկամֆի հավելածի դրամագիրը կազմել է 3,32%, որի 58%-ը բաժին է ընկնում արգադրության գործոնների ծախսերին կամ քանակական ավելացմանը, 42%-ը՝ արգադրողականության բարձրացմանը, իսկ վերջինիս մեջ 32%-ը՝ գիրավեխնիկական գործոնին:

Տեսքագայում Դենիսոնը «Տնտեսական աճի միջումները ԱՄՆ-ում» աշխավության մեջ վերլուծել է ԱՄՆ-ի ազգային եկամֆի աճի գործոնները 1929-1982 թթ. ժամանակահարվածում և դրանք ներկայացրել մեկ այլ դասակարգմամբ՝ քննարկելով փնտեսական աճի 8 գործոններ: Դրանք են՝ աշխավանքային ծախսերի ավելացումը, աշխավանքի արդարողականության բարձրացումը, փեխնիկական առաջընթացը, կապիվալի ծախսերը, կրթությունը և մասնագիրական պատրաստվածությունը, արգադրության ծավալներով պայմանավորված փնտեսումը, ռեսուրսների բաշխման բարելավումը, օրենսդրա-ինսպիրացիոնալ և այլ գործոններ:

Կարարելով փնտեսական աճի գործոնային վերլուծություն կամ, այսպես կոչված՝ «թվաբանություն», Դենիսոնը ցույց է դրել, որ ԱՄՆ-ում 1929-1982 թթ. փնտեսական աճի հիմնական գործոնը եղել է աշխավանքի արգադրողականության բարձրացումը, որին բաժին է ընկել աճի 68%-ը: Գիրավեխնիկական գործոնների բաժինը փնտեսական աճի ապահովման մեջ, ըստ Դենիսոնի, կազմել է մորավորապես 42%:

Տնտեսական աճի գործոնային վերլուծության մեջ հավելապես կարևորվում ու բարձր է գնահարվում գիրավեխնիկական գործոնի գնահարման Դենիսոնի մոդելումը: Նա կիրառել է **փնտեսական աճի մնացորդային գործոն** հասկացությունը՝ նկատի ունենալով աշխավանքից, կապիվալից և հողից բացի մյուս բոլոր գործոնների ներգործությունը փնտեսական աճի վրա, գլխավորապես գիրավեխնիկական առաջընթացով պայմանավորված գործոնները: Այս իմաստով՝ Դենիսոնի **մնացորդային գործոնը** կարելի է անվանել «Դենիսոնի մնացորդ», որն իր բնույթով նման է «Սոլոուի մնացորդին» և բնութագրում է գիրավեխնիկական գործոնի, գիրելիքների առաջընթացի ներդրումը փնտեսական աճի մեջ:

---

---

Տնտեսական աճի մեջ գիրապեխնիկական գործոնի գնահավաման Դենիսոնի, ինչպես նաև Սոլոուի «մնացորդային մեթոդի» կիրառման անհրաժեշտությունը պայմանավորված է հենց գիրապեխնիկական առաջընթացի բնույթով ու յուրահագություններով: Գիրապեխնիկական առաջընթացը դրսևորվում է նյութականացված և չնյութականացված ձևերով: Նյութականացված տեխնիկական առաջընթացը մարմնավորվում է արտադրության նյութահրային գործոնների մեջ, որը կարելի է գնահապել որպես կապիտալի որակի բարեկավման ասդիմանի, նրա արտադրողականության բարձրացում: Չնյութականացված գիրապեխնիկական առաջընթացն արդահայպվում է գիրելիքների առաջընթացով, կրթության մակարդակի բարձրացմամբ, գիրական հետազոտությունների և մշակումների ծախսերով, աշխատողների որակավորման բարձրացմամբ, արդարական հմտություններով («նոու-հաու») և այլն, որոնք շար դժվար է առանձնացնել և գնահապել այն գործոններից անկախ, որոնք նույնապես նպաստում են միավոր ծախսերի արդարողականության բարձրացմանը: Դեպևարար գիրապեխնիկական գործոնի ազդեցությունը հնարավոր է գնահապել միայն «մնացորդային մեթոդով», որն էլ կիրառվել է նաև Դենիսոնի կողմից: Այս մեթոդը հիմնված է Քորբ-Դուգասի արդարական ֆունկցիայի վրա և ունի հաշվարկման հերքելայալ սկզբունքը. եթե ամբողջական եկամուտի հավելածից հանենք այն մասը, որը առաջացել է կապիտալի և աշխատանքի հավելածից, ապա կսրացվի, որ եկամուտի մնացորդը սրեղծվել է մնացած բոլոր գործոնների հաշվին:

Այս հարցում Դենիսոնի մոդելումը փոքր-ինչ տարրերվում է Սոլոուի մոդելումից. Սոլոուն եկամուտի հավելածի մնացորդն ամբողջովին վերագրում է գենիկական առաջընթացին, իսկ Դենիսոնը՝ «բնագույն աճի մնացորդային գործոնին», որի մեջ ներառում է ոչ միայն գիրապեխնիկական առաջընթացը, այլև գործոնների բաշխումն ու արդյունավետ օգտագործումը, արդարության ծավալից դրսումը, որոնք միասին հանգեցնում են «գործոնների ամբողջական արդարողականության» բարձրացմանը: Այլ կերպ ասած՝ եթե գործոնների բանակական ավելացմամբ ձեռքբերվածը վերագրվում է էքսպենսիվ գնական աճին, ապա «գործոնների ամբողջական արդարողականության» բարձրացման շնորհիվ ձեռքբերվածը՝ ինդենսիվ գնական աճին, որում, ըստ Դենիսոնի գնական աճի «թվաբանության», առավել կարևորվում է գիրապեխնիկական առաջընթացի ներդրումը:

Տնտեսական աճի գործոնային վերլուծության համար սովորաբար կիրառվում է հերքելայալ պարզեցված արդարական ֆունկցիան.

$$Y = W_L \cdot L + W_k \cdot K + W_n \cdot n + a,$$

որպես՝

$Y$  -ը հասարակական արդյունքի հավելածի գենական է,

$W_L$ ,  $W_k$ ,  $W_n$  -ը աշխատանքի, կապիտալի, բնական ռեսուրսների բաժինն են հասարակական արդյունքի միավոր աճի մեջ, այսինքն՝ ( $W_L + W_k + W_n = 1$ ),

$L$ ,  $K$ ,  $n$  – լ՝ աշխատանքի, կապիտալի, բնական ռեսուրսների ծախսերի հավելածի գենական պարագալը,

---

ա –ն՝ գիտապեխնիկական առաջընթացի, գործոնների ամրողական արդարողականության աճի վեմպը կամ «Դենիսոնի մնացորդային գործոնը»:

Դենիսոնի «մնացորդային գործոնը» կամ գնդեսական աճի մեջ գիտապեխնիկական և մնացյալ գործոնների ներդրումը հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$\mathbf{a} = \mathbf{Y} - (\mathbf{W}_L \cdot \mathbf{L} + \mathbf{W}_K \cdot \mathbf{K} + \mathbf{W}_n \cdot \mathbf{n})$$

Դենիսոնի գնդեսական աճի գործոնային վերլուծությունը և նրա մեթոդաբանությունը ներկայում էլ կարևորվում են գնդեսական հիմնավորվածությամբ և գործոնական կիրառման մաքչելիությամբ ու պարզությամբ:

## 18.7. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԱՒՅՑ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 18.7.1. Տնտեսական աճի սահմանների գետությունը և «զրոյական գնդեսական աճի» հայեցակարգը

Տնտեսական աճը հասարակության զարգացման հիմնական, սակայն միակ հագուստիշը չէ: Տնտեսական աճի բարձր կամ ցածր գետային առկայությունը դեռևս չի վկայում գնդեսական զարգացման, առաջընթացի նույնպիսի գետային մասին, քանի որ վերջինս բազմակողմ և բազմազործոնային գործոնաց է և արդարությունը է գնդեսական համակարգի ոչ միայն քանակական, այլև որակական կողմերը: Ժամանակակից գնդեսագիրության մեջ գնդեսական աճի հիմնախնդրի նկարմամբ միակողմ մոդելը ու վերաբերմունք գոյություն չունի: Դրա մասին է վկայում գնդեսական աճի հակառակորդների և կողմնակիցների առկայությունը, որոնք յուրովի են մեկնաբանում այս խնդիրը:

Տնտեսական աճի ինչպես նորբեյնայան, այնպես էլ նորդասական գետություններն ընդհանուր առմանը կողմնորոշված են հասարակական արդյունքի հաշվեկշռված, օպփիմալ գետային ապահովմանը, որոնք միաժամանակ ապահովելու են սպառման առավելագույն նակարդակ ու բարեկեցության բարձրացում: Սակայն գնդեսական աճի հիմնախնդրի առնչությամբ գոյություն ունեն նաև այլ մոդելներ, մասնավորապես՝ **գնդեսական աճի սահմանների գետությունը և զրոյական գնդեսական աճի հայեցակարգը**:

Տնտեսական աճի սահմանների գետությունը ձևավորվել է 1970-ական թվականների սկզբին, երբ որոշ գնդեսագելքներ, հետազորություն գնդեսական աճի շարժընթացը (դինամիկան), հանգեցին այն եզրակացության, որ գնդեսական աճի գոյություն ունեցող գետային պահպանման դեպքում անխուսափելի է «գլոբալ աղեղը»:

1971 թ. ամերիկացի գնդեսագելք Ջ. Ֆորեստերը հրապարակեց «Համաշխարհային դինամիկա» գիրքը, որին նա գնդեսական աճի առկա գետային պայմաններում անխուսափելի է համարում XXI դարի սկզբին գետի ունենալիք համաշխարհային աղեղը՝ կապված շրջակա միջավայրի թունավորման, բնա-

կան ռեսուրսների պաշարների վերացման, գերբնակչության և ժողովրդագրական պայթյունների հետ: Աղեքից խուսափելու համար Ֆորեսքերը մշակել է **գլոբալ համաշխարհակառության** մոդելը, ըստ որի՝ առաջարկվում է արգելակել երկրագնդի բնակչության աճը, որպեսզի այն XX դարի վերջին չգերազանցի 4,5 միլիարդը: 1972 թ. Ֆորեսքերի աշակերտ Դ. Մեդոսը իր տիկնոց հետ «Հռոմի ակումբում», որպես քննարկվում էին համաշխարհային բնորոշության գլոբալ հիմնախնդիրները, զեկուցում կարդաց «Աճի սահմանները» թեմայով, որը 1974 թ. հրապարակվեց առանձին գրքով: Նա մարդկության ուշադրությունը կրկին սևեռու համաշխարհային աղեքի անխոսափելիության վրա: Նշելով արդարության բուռն զարգացման պայմաններում ներդրումային ապրանքների ծավալի մեծացումը, զերարքադրվող բնական ռեսուրսների պաշարների կրճագումը, բնակչության արագ աճը՝ Մեդոսը եզրակացնում է, որ շարունակվող բնորոշության աճի յուրաքանչյուր օրը համաշխարհային բնորոշությունն ավելի է մոփեցնում այդ աճի սահմաններին, և երկրագնդի ֆիզիկական հնարավորություններից ենելով՝ բնորոշության աճը պետք է դադարի, այլապես 2020 թ. վրա կհասնի համաշխարհային աղեքը: Մյուս կողմից, ըստ Մեդոսի, գյություն ունեցող միգրումների պայմաններում հասնելով «աճի սահմաններին», անխոսափելիորեն տեղի կունենա բնակչության թվաքանակի և արդարության ծավալների փարերային կրճագում, որը կուղեկցվի եկոլոգիական ճգնաժամով, պարենային ու ռեսուրսային սովոր: Ենելով այս բոլորից, Մեդոսը համաշխարհային աղեքից խուսափելու միակ ելքը համարեց «զրոյական բնորոշության աճի» պահպանումը և բնակչության թվաքանակի կայունացումը:

«**Զրոյական բնորոշության աճի**» կողմնակիցները պնդում են, որ տեխնիկական առաջընթացը, որը ինքենսիվ (լարված) բնորոշության աճի հիմքն է, ոչ միայն չի լուծում «ռեսուրսային սովոր», այլև հանգեցնում է շրջակա միջավայրի թունավորման ու աղբուրման, էկոլոգիական միջավայրի և կյանքի կենսաբանական պայմանների վարժարացման: Այս հիմքի վրա ձևավորվել է «զիգարգեխնիկական պեսիմիզմի» բնորոշումը, որը պահանջում է հրաժարվել ժամանակակից տեխնիկայի ու վեխնուղղակաների կիրառումից, քանի որ դրանք շրջակա միջավայրի աղեքի վկանգ են պարունակում, և ասդիմանաբար պետք է հետ վերադառնալ դեպի արդարության ավանդական՝ շրջակա միջավայրի պահպանման անվնաս եղանակները:

«Հռոմի ակումբում» Մեդոսը գեկուցումը, որը գորշ գույներով էր նկարագրղրության համաշխարհային բնորոշության և մարդկության ապագան, քննադարորեն ընդունվեց շարերի կողմից: «Զրոյական աճի» հակառակորդներն այդ հայեցակարգը անընդունելի համարեցին՝ ենելով երկու հանգամանքներից.

ա) զարգացող երկրների համար «զրոյական աճը» կամ պարզ վերաբարությունը չէր կարող ընդունելի լինել, քանի որ բնակչության ցածր կենսամակարդակի պայմաններում եկամուտներն ու սպառումը հնարավոր է ավելացնել միայն բնորոշության աճի դեմքերի արագացման հաշվին,

բ) զարգացած երկրների համար «զրոյական աճի» բնորոշությունը նույնպես անընդունելի է, որովհետև հակասում է շուկայական օրենքներին, մասնավորապես նրան, որ առավելագույն շահույթի ծգբումը բնորոշության աճ է ենթադրում,

---

և ազար ձեռներեցության ու մրցակցության պայմաններում դժվար է այն սահմանափակել:

Տաշվի առնելով «գրոյական աճի» վերաբերյալ քննադարությունները և հասարակության արձագանքները՝ «Նոոմի ակումբի» գիտնականները 1974 թ. պարբրասփեցին երկրորդ գեկուցումը՝ ամերիկացի Մ. Մեսարովիչի և գերմանացի է. Պեսպելի հեղինակությամբ, որը կոչվում էր «Մարդկությունը ընդունակի առաջ»: Այս հեղինակները առաջադրեցին **օրգանական դիֆերենցված** (*դրաբերությամբ*) **աճի** գիտությունը: Այս գիտության համաձայն, նրանք համաշխարհային հանրությունը ներկայացրին որպես փոխկապակցված համակարգ, որի վեջ նրա որևէ մասի անցանկայի աճը վլրանգում է ոչ միայն իրեն, այլև մյուսներին: Դրանով իսկ Մեսարովիչը և Պեսպելը ոչ միայն անհուսափելի ու մոփալութ համարեցին համաշխարհային էկոլոգիական, ժողովրդագրական աղեղը, այլև առաջադրեցին այն գիտակենրու, որ դրա դրսնորումը աշխարհի 10 շրջաններից որևէ մեկում (նրանք աշխարհը բաժանել են միմյանց հետ կապված 10 մասերի) շղթայական ռեակցիայով կընդգրկի ամբողջ աշխարհը:

Դ. Մելոուսը իր առաջին աշխարհությունից 20 տարի անց՝ 1992 թ., հրապարակեց «Աճի նոր սահմանները» աշխարհությունը, որին պահպանվում է գրադրության շարժընթացի՝ իր նախկին մոդելի ընդհանուր գրամաբանությունը:

Առաջին հայացքից թվում է, թե **գրոյական գրնորդական աճի** հայեցակարգին բնորոշ է վարպետությունը: Սակայն իրականում դա անհանգստացրեց, մրահոգեց և դրդեց մարդկությանը՝ գորոշակոր և հաշվենկագրորեն վերաբերվել գորապ բնույթի գրնորդական ու էկոլոգիական հիմնախմնդիրներին, որոնց անհաշվեկշռության վիճակի հասցնելը, իրոք, կարող է հանգեցնել անուղղելի աղեղի:

### 18.7.2. Տնտեսական աճի սահմանների գիտությունը

Տնտեսական աճի և զարգացման հիմնախմնդրի հետազոտման խնդիրներում որոշակի գործ է գրադրությունը գրնորդական շարժընթացի վերլուծությունը հասարակության որակական էկուուցիայի երկարաժամկետ հեռանկարում: Վյահիսի մոդելումն այլընդունքային է վերը քննարկված գրնորդական աճի ավանդական գիտությունների նկարմամբ: Տնտեսական աճի գրնորդական վերլուծության փուլային համակարգի կարևոր առանձնահավկությունը հասարակության գործունեությունը բնութագրող գարբերությունների առանձնացումն է նրա զարգացման յուրաքանչյուր փուլում: Հասարակության գրնորդական զարգացման «փուլային» մոդելումների մեջ առանձնանում են ֆորմացիայի և գրնորդական աճի սարադիանների (ընթացաշրջանների) գիտությունները:

Ֆորմացիայի գիտությունը մշակվել է գերմանացի գրնորդագետ Կարլ Մարքսի և նրա հետքնորդների կողմից: Հասարակական-գրնորդական ֆորմացիաների առանձնացման հիմքում դրվել է արդադրողական ուժերի և արդադրական հարաբերությունների փոխկապակածության դիալեկտիկան կամ արդադրաելանակը, սեփականության հարաբերությունները և դասակարգային պայքարի բնույթը: Հասարակության զարգացման հիմքում, ըստ այս գիտության, ընկած է արդադրաելանակի երկու կողմերի հակասությունը, որը հան-

---

գեցնում է տնտեսական զարգացման ցածր ընթացաշրջանից դեպի բարձրը, որը կապարվում է հնի ոչնչացման և նորի սպեղման ուղիով: Նոր տնտեսական ֆորմացիայի առաջացումը (նախնադարյան, սրբկափիրական, ֆեոդալական, կապիտալիստական, կոմունիստական), ըստ Մարքսի, բնութագրվում է հասարակության սոցիալ-տնտեսական առաջընթացով, արբարրական ճյուղերի ավելի բարձր մակարդակով:

Տնտեսական աճի ընթացաշրջանների դեսությունն առաջադրվել է ամերիկացի տնտեսագետ, սոցիոլոգ և պարմարքան Ուոլտ Ռութոնու կողմից: «Տնտեսական աճի սպահիաններ՝ ոչ կոմունիստական մանիֆեստը» աշխափության մեջ (1960 թ.) նա ներկայացնում է տնտեսության պարմական էվոլյուցիան՝ հիմքում դնելով դեխնիկապնդեսական բնութագրիներ, ինչպիսիք են դեխնիկայի զարգացման մակարդակը, տնտեսության ճյուղային կառուցվածքը, կուրակման դեսակարար կշռը ազգային եկամֆի մեջ, ապրանքների ու ծառայությունների սպառման կառուցվածքը և այլն: Ռութոնուն այս կերպ փորձել է ցույց դրա, որ տնտեսական զարգացումը չի սահմանափակվում միայն այն հարաբերություններով (արբարրողների և սպառողների փոխհարաբերությունների, ներդրողների և խնայողների փոխհամաձայնությունները և այլն), որոնք ներկայացված են տնտեսական աճի ավանդական դեսություններում: Նրա կարծիքով հասարակության տնտեսական զարգացման էվոլյուցիան ընթացաշրջանների բաժանելու հիմքում պետք է դրվեն երեք հիմնական բնութագրիներ.

- ա) դեխնիկայի զարգացման մակարդակը,
- բ) գործարար ակիմիկության մակարդակը,
- գ) սպառման մակարդակը և կուրակման նորման:

Այս բնութագրիների որակական փարբերություններին համապատասխան Ռութոնուն առանձնացրել է տնտեսական զարգացման հինգ ընթացաշրջաններ.

- ավանդական հասարակարգ,
- վերելքի նախադրյալների սպեղման,
- վերելքի,
- հասունությանն անցնելու,
- բարձր զանգվածային սպառման հասարակարգ:

**Ավանդական հասարակարգին** բնորոշ էր «մինչյուրոնյան գիրությունն ու դեխնիկան», այսինքն՝ գյուղագնդեսության և պարենային արբարրության գերակշիռ դերը տնտեսության մեջ, կուրակման աննշան նորման և ազգային եկամֆի անարբարրողական օգրագործումը:

**Վերելքի** համար նախադրյալների սպեղման ընթացաշրջանը բնութագրվում է գյուղագնդեսության մեջ, դրանսպորտում, արդարին առևտում կապարվող եկան փոխհամարություններով և տնտեսական աճի դեմքերի որոշակի բարձրացմամբ, որը պայմանավորված է 5% կուրակման նորմայով:

**Վերելքի** կամ «թափավագրի» ընթացաշրջանին բնորոշ է ազգային եկամֆի մեջ կուրակման նորմայի բարձրացումը մինչև 10%, արդյունաբերական հեղաշրջման նվաճումների ներդրումը արբարրության մեջ և արբարրության ավանդական եղանակների հաղթահարումը:

**Նասունության անցնելու ընթացաշրջանում** կուրակման նորման կազմում է 20%, բարձրանում են տնտեսական աճի դեմքերը, որոնք գերազանցում են

---

---

բնակչության թվաքանակի ավելացմանը, և հասարակությունն անցնում է արդյունաբերական զարգացման փուլին:

**Քարձր զանգվածային սպառման հասարակարգում** առաջարկից անցում է կարգավորվում դեպի պահանջարկը, կուլտակման նորման աննշան է դառնում, և երկրի արդարական ներուժը գործում է հանուն ազգի սպառման:

Ըստ Ռուսոսով՝ երկրները այս ուղին անցնում են գործեր գործերով և գրնուում են զարգացման գործեր ընթացաշրջաններում (օրինակ, ԱՄՆ-ը գրնուում է 5-րդ ընթացաշրջանում): Նա գրնուում էր, որ գրնուական աճի փոխարինումը մեկ այլով գեղի է ունենում ոչ թե հեղափոխության, այլ բարեշրջման (Եվլյուցիոն) ուղիով:

Տարունակելով իր հետազոտությունները գրնուական աճի հիմնախնդիրների շուրջ՝ Ռուսոսով գրեց նաև «Զարաքականություն և աճի ընթացաշրջաններ» գիրքը (1971), որտեղ վերը թվարկված 5 ընթացաշրջաններին ավելացրեց ևս մեկը՝ վեցերորդը՝ «Կյանքի որակի փնտրումը», որը մեծ նշանակություն է փայիս մարդու հոգևոր զարգացմանը:

Ռուսոսովի գործությունը հնարավորություն է փայիս պարկերացում կազմել գրնուական զարգացման ընթացքի և հեռանկարների մասին;

## 18.8. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԴԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Տնտեսական աճի գործությունների քննարկումից պարզվում է գրնուական աճի պետական կարգավորման, պետական միջամբության անհրաժեշտությունը: Տնտեսական աճի պետական կարգավորման և խրախուսման ռազմավարությունը զարգացած երկրներում հիմնված է գործեր գործեր գրնուական հիմնադրույթների վրա, որոնք գործություն են քեյնայան ու նորքեյնայան, դասական ու նորդասական ուղղությունները:

Տնտեսական աճի քեյնայան և նորքեյնայան ուղղություններն ընդհանուր առմամբ ուղղակիորեն արդարացնում են այն զարագարք, որ պետությունն ակտիվ միջամբություն պետք է ունենա երկրի գրնուական զարգացման և մակրովնիւրնեսական հավասարակշռության պահովման գործում: Այս դեպքում գրնուական աճի եղակեփ է ընդունվում պահանջարկը: Տեքիւաբար, գրնուական աճի միջոցառումները, որոնք հանգեցնում են ամրողական ծախսերի մեծացման և ապահովում են նաև հասարակական արդյունքի աճ, նրանց կողմից զնահապնում են որպես գրնուական աճի գործուներ:

Տնտեսական աճի նորդասական ուղղություններն իրենց հայացքներում ելակեփ են ընդունում առաջարկի գործուները: Նրանք գրնուում են, որ պետությունը պետք է վարի ցածր հարկային դրույքաչափերի քաղաքականություն՝ այն համարելով խնայողություններն ու ներդրումները խթանող միջոց:

Ըստ արդյունաբերական քաղաքականության կողմնակիցների՝ գրնուական աճը խթանելու նպատակով պետությունը պետք է իրականացնի արդարացնության ճյուղային կառուցվածքի բարեփոխումներ, որպեսզի սպեղծվեն

---

---

բարձրարգադրողական ճյուղեր, սոցիալական ենթակառուցվածքներ, և ապահովեն ներդրումների աճն ու բնակչության եկամուտների ավելացումը:

Վերջին ժամանակաշրջանում զարգացած երկրներում փնտեսական աճի պետական կարգավորման բնագավառում ամբողջական պահանջարկի խթանումից անցում է կարգարվում դեպի առաջարկի քաղաքականությանը: Առաջարկի դեսության կողմնակիցները փնտեսական աճի պետական կարգավորման ժամանակ շեշտը դնում են փնտեսական համակարգի արդարական ներուժը բարձրացնող գործոնների վրա: Ընդհանուր առմամբ նախագրեսվում են փնտեսական աճի վրա պետական ներգործության հետևյալ հիմնական ուղղությունները.

1. Գիտագրեսնիկական առաջընթացի խթանումը և, առհասարակ, գիտության զարգացման համար պետական հովանավորչության ապահովումը:
2. Պետական մակարդակով կրթության, որակյալ կայրերի պարուասման և վերապարասպման համար կարգարվող ծախսերի ավելացումը:
3. Մակրոպնդեսական ծրագրերի մշակումը և հակապարբերաշրջանային պետական քաղաքականության իրականացումը:
4. Հարկային համակարգի վերակառուցումը և փնտեսական աճի վրա հարկային ներգործության ձևուն մեխանիզմի կիրառումը:

Տնտեսական աճի պետական կարգավորման քաղաքականության գիսավոր նպարակը, վերջին հաշվով, արդարության աճի անհրաժեշտ ու կայուն դրվագների ապահովումն է, բնակչության զբաղվածության, սոցիալական հիմնահարցերի լուծումը և եկամուտների մակարդակի բարձրացումը:

---

---

## **Թ<sup>Յ</sup> Ա<sup>Ռ</sup>» Հ<sup>Յ</sup> Ա<sup>Ր</sup> Ե<sup>Ր</sup> Ա<sup>Շ</sup> Ո<sup>Ւ</sup> Ե<sup>Ր</sup> Ա<sup>Ռ</sup> Ա<sup>Ր</sup> Ա<sup>Ռ</sup>**

1. Ի՞նչ է փնտեսական աճը և ինչպե՞ս է այն գնահարվում:
2. Ի՞նչ կապ գոյություն ունի փնտեսական աճ և փնտեսական զարգացում հասկացությունների միջև:
3. Ինչպե՞ս են դասակարգվում փնտեսական աճի գործոնները:
4. Որո՞նք են էքսպենսիվ և ինվենսիվ աճի գործոնները:
5. Ինչպե՞ս է արդահայփում կապը փնտեսական աճի և արդադրական հնարավորությունների սահմանի միջև:
6. Ո՞րն է գիտագիտական առաջընթացի էությունը, և որո՞նք են դրա դրսևումները:
7. Ինչպե՞ս է գնահարվում գիտագիտական գործոնի ներդրումը փնտեսական աճի մեջ:
8. Որո՞նք են փնտեսական աճի նորքեյնսյան և նորդասական գիտությունների հիմնական տարրերությունները:
9. Ինչո՞ւ է կիրառվում Քորբ-Դուգլասի արդադրական ֆունկցիան, և որո՞նք են դրա հարկանիշները:
10. Որո՞նք են փնտեսական աճի Սոլոուի մոդելի հարկանիշները:
11. Ինչպե՞ս է հաշվարկվում Սոլոուի մնացորդը:
12. Ի՞նչ նմանություն կա Դոմարի և Նարրոդի մոդելների միջև:
13. Ո՞րն է փնտեսական աճի ընթացաշրջանների Ըոսթոուի գիտության էությունը:
14. Ի՞նչ դեր է խաղում փնտեսության պերական կարգավորումը ժամանակակից պայմաններում:
15. Որո՞նք են զրոյական փնտեսական աճի հայեցակարգի (կոնցեպցիայի) դրդապարճառները:

## **ԹՎԱԿԱՆ ԽԱՐԱՐՈՒՄ ԵՎ ԱՐԴԱՌԱՋՈՒՅՈՒՆ**

Տնտեսական աճ	Սոլոուի փնտեսական աճի մոդել
Տնտեսական զարգացում	Կուբակման «ոսկե կանոն»
Տնտեսական աճի գինապ	Դոմարի փնտեսական աճի մոդել
Տնտեսական աճի գործոններ	Դոմարի պարադոքս
Էքսպենսիվ փնտեսական աճ	Նարրոդի փնտեսական աճի մոդել
Ինվենսիվ փնտեսական աճ	Երաշխավորված փնտեսական աճ
Տնտեսական աճի շարժիչ ուժեր	Բնական փնտեսական աճ
Գիտագիտական առաջընթաց (ԳՏԱ)	Սոլոուի մնացորդ
Նյութականացված ԳՏԱ	Դենիսոնի փնտեսական աճի թվաբանություն
Չնյութականացված ԳՏԱ	Տնտեսական աճի ընթացաշրջաններ
Քորբ-Դուգլասի արդադրական ֆունկցիա	Տնտեսական աճի սահմաններ

---

---

## Գ Լ ՈՒ Խ 19

### ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

#### 19.1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՒԼԵՐԸ


Հասարակական գնդեսությունը շարժընթաց (դիմամիկ) զարգացող օրգանիզմ է, որին հապուկ են ամբողջական պահանջարկ-ամբողջական առաջարկ հավասարակշռության խախտման երևույթներ: Ուրեմն մակրովնդեսական հավասարակշռությունը գնդեսական կյանքում ավելի շատ ցանկալի վիճակ է, քան իրողություն, որը մեկ անգամ ևս հասպարում է շուկայական գնդեսության անկայուն լինելու փասբը:

Տնտեսության շարժընթաց զարգացումը ակնառու երևում է երկարաժամկեր հարվածում: Դրա գենանելի կողմերն են նոր առաջացող պահանջմունքները, պահանջմունքների բավարարվածության հագեցվածության նոր մակարդակը, գնդեսության մեջ գեղի ունեցող կառուցվածքային փոփոխությունների արագընթաց բնույթը, գոյություն ունեցող համամասնությունների հնացումը, նորերի առաջացումը և այլն:

Տնտեսական զարգացումը երկարաբռն ժամանակահարվածում ունի վերընթաց շարժման միջում, սակայն դրա առանձին հարվածներում զարգացումը կամ աճը կարող է փոխարինվել անկումներով՝ ՆԱԱ-ի ծավալների կրծարարությունում: Նշանակում է՝ արդյունաբերական, ինչպես և գնդեսության համընդհանուր զարգացմանը կարող են հաջորդել անկման շրջաններ՝ առաջացնելով արդարության ծավալների կրծարաբռն գործազրկության աճ և բացասական այլ երևույթներ:

Նամաշխարհային գնդեսության զարգացման պայմությունից հայրենի է, որ բոլոր երկրների ազգային գնդեսությունները չեն կարողացել խուսափել նման երևույթներից, որոնք բացառիկ խորությամբ ու ուժգնությամբ կրկնվել են առանձին շրջաններում: Այդուհանդերձ, երկարաբռն ժամանակահարվածներում բոլոր երկրները ձեռք են բերել զարգացման ավելի բարձր մակարդակ, ինչը հասպարվում է դրանց գնդեսական ցուցանիշների համեմատական արդյունքներով: Ելնելով այդ հանգամանքից՝ գնդեսագիրությունը քննարկում է օրգանապես կապված երկու հասկացություն՝ **պարբերաշրջան** (ցիկլ) և **պրինդ**: Ցիկլ եզրը հունական ծագում ունի, որը թարգմանաբար նշանակում է «շրջան» (այսպեսից է՝ հայերեն «պարբերաշրջան»), ինչը ենթադրում է, որ գնդեսական համակարգերը ժամանակ առ ժամանակ վերադառնում են իրենց նախորդ՝ գնդեսական հավասարակշռության վիճակներին:

Տրենդ եզրը թարգմանաբար նշանակում է «հակում», «միփում», որի բնորոշ հագուանիշներից մեկը երկարաժամկետությունն է: Քանի որ գնդեսական զարգացման արդյունքները երկարաժամկետ առումով ունեն աճի միփում, ապա գնդեսական համակարգերի դրենդը, որի առավել ցայդուն օրինակը ՇԱՀ-ի աճն է, վերընթաց գծի դեսք է սպասում: Եթե պարբերաշրջան և դրենդ հասկացությունների փոփոխությունները ներկայացնենք գծապատկերով, կունենանք հետևյալ դեսքը:



**Գծապատկեր 19.1. Տնտեսության զարգացման պարբերաշրջանը և դրենդը:**

Գծապատկերի ա, ս, է, գ, ի, կ կետերը ցույց են դրական ՇԱՀ-ի մակարդակները հետազոտման  $t_1$  -  $t_n$  ժամանակահարվածում, որոնց միացնող ուղիղը՝  $T$ -ն, կոչվում է իրական ՇԱՀ-ի դրենդ: Յանկացած երկրի զարգացման պարբերը մի քանի դրամյակ դրահմերի կրողվածքով կունենա վերընթաց գծի դրենդի դեսք:

Եթե վերցնենք որևէ կարճաժամկետ հարված՝  $t_1$  -  $t_2$ , ապա գծապատկերի վրա կունենանք ոլորտուն կամ ալիքածու մի գիծ՝ ա, ս, է, գ, ի կետերով, որը ցույց է դրական դրենության պարբերաշրջանային զարգացումը: Դրա առանձին կետերը դրենության յուրահարվող վիճակի պարկերն են: Օրինակ, ս, գ, ի կետերը վերելքի ամենաբարձր վիճակներն են, որոնց անվանում են «րուս», իսկ է, հ և մյուս հնարավոր կետերը ներկայացնում են դրենության անկումների ամենամեծ մակարդակները, որոնց ընդունված է անվանել «հայրակ»: Տնտեսության զարգացման ամենաբարձր (ս և գ) և ամենացածր (է և հ) երկու կետերով որոշվում է այն ժամանակահարվածը, երբ դրենությունը վերադառնում է իր նախկին կարգավիճակին: Ուրեմն վերելքից վերելք կամ անկումից անկում ընկած ժամանակահարվածը կոչվում է պարբերաշրջան, որի վերին ու ներքին կետերի և դրենության միջև եղած հետավորությունով չափվում է պարբերաշրջանային դրամանումների ասդիմանը:

Եթե պրենդի գրքեսագիրական բովանդակությունը գրքեսագեփների շրջանում դարձակարձիքներ չի առաջացնում, ապա պարբերաշրջանի գրքեսագիրական էության սահմանման մոլորդումները դարբեր են: Ներկայացնենք դրանցից մի քանիսը.

- գրքեսական պարբերաշրջանները իրական ՇԱՀ-ի մեջ արդահայրված գործարար ակդիվության մակարդակի պարբերաբար գրքանումներն են,
- պարբերաշրջանները ժամանակի որոշ կրթվածքներում գրքեսության կրկնվող վիճակներն են, որոնք բնութագրվում են մակրոպնդեսական միևնույն չափորոշիչներով,
